ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի	3	0.00%	5	0.00%
ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի	10	0.00%	15	0.00%
Մաքսատուրք և մաքսավճարներ	1,083	0.09%	2,036	0.16%
Այլ	298	0.03%	794	0.06%

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Պետական բյուջե կատարած հաշվարկված վճարումներով առաջատար ընկերությունն էր «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, որին բաժին է ընկել մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից 2016-2017թթ. բոլոր հաշվարկված վճարումների 37.7%-ը: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է ընդամենը 1.7% կամ 19.4 մլրդ դրամ 2016թ., և 2.7% կամ 32.6 մլրդ դրամ՝ 2017թ.:


Պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով երկրորդն է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերություններից

2016թ. և 2017թ. բոլոր հաշվարկված վճարումների 22.9% և 16.4% համապատասխանաբար: «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ հաշվարկված վճարումները կազմում են 9.4 մլրդ դրամ՝ 2016թ., և 13.5 մլրդ դրամ՝ 2017թ.:

2017թ. պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով երրորդն է «Թեղուտ» ՓԲԸ, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերությունների 2016թ. և 2017թ. բոլոր վճարումների 18.5% և 16.4% համապատասխանաբար, իսկ դրամային արտահայտությամբ՝ 0.9 մլրդ դրամ՝ 2016թ., և 14.3 մլրդ դրամ՝ 2017թ.:


Ստորև գծապատկերները ներկայացնում են 2016թ. և 2017թ. մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների կառուցվածքը, ըստ դրամական ծավալի, մասնավորապես՝ առանձնացնելով և դասակարգելով առաջատար 10 ընկերությունների կատարած վճարումները: Տեղեկությունը հիմնված է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրամադրված տեղեկատվությունների վրա:

Գծապատկեր 2.3.4 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2016թ., մլն ՀՀ դրամ



Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Գծապատկեր 2.3.5 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2017 թթ., մլն ՀՀ դրամ




Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

2.3.2 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ¹⁸

Ըստ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար տրամադրած տեղեկությունների, 2016թ. մետաղական հանքարդյունաբերողների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարումների կազմել է 1.2 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 0.9%: 2017թ. համայնքային բյուջեների եկամուտներում հանքարդյունաբերական ընկերությունների հաշվարկված վճարումների մասնաբաժինը փոքր-ինչ աճել է՝ հասնելով մինչև 1.0% կամ 1.3 մլրդ դրամի:

Գծապատկեր 2.3.6 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2016-2017թթ.




Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարումների հիմնական մասը գույքի վարձակալությունից են, որոնք կազմում են սույն կազմակերպությունների հաշվարկված հարկերի 66.1%-ը 2016թ.-ին, և 65.6%-ը 2017թ.-ին: Հաջորդիվ ներկայացվում է 2016-2017թթ. մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարումների կառուցվածքը ըստ վճարների տեսակի:


¹⁸ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում դիտարկվել են այն համայնքները, որոնք ներկայացվել են ընկերությունների և պետական մարմինների կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվություններում:

Գծապատկեր 2.3.7 Համայնքների եկամուտները մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարումներից ըստ հոսքերի կառուցվածքի, 2016թ., հազար ՀՀ դրամ



Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

Գծապատկեր 2.3.8 Համայնքների եկամուտները մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարումներից ըստ հոսքերի կառուցվածքի, 2017թ., հազար ՀՀ դրամ




Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

2016թ. համեմատ, 2017թ. մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված վճարումների բացարձակ արժեքը նկատելիորեն աճել է: Երկու տարիներին էլ վարձակալությունից ստացվող եկամուտը կազմել է ընդհանուր եկամուտների գերակշիռ մասը՝ համապատասխանաբար 66.1% և 65.6%: Այս եկամուտների մեծ մասը գոյանում է հողամասերի վարձակալությունից: Ի տարբերություն 2017թ.-ի, 2016թ.-ին հողի օտարումից ստացած եկամուտը եղել է ծավալով երկրորդ ամենախոշոր եկամտի հոսքը: Սակայն հարկ է նշել, որ այս ծավալուն եկամուտը պայմանավորված է եղել բացառապես մեկ ընկերության՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ կողմից մեկ համայնքին՝ Ջերմուկին կատարված վճարումներով, որոնք համընկել են «Լիդիան Արմենիա» ՓԲԸ՝ այդ համայնքում գործունեության մեկնարկի հետ: Նույն պատճառով հողի օտարումից ստացված եկամուտները նկատելիորեն նվազել են 2017թ.-ին: Ի տարբերություն վերջինիս, զգալիորեն ավելացել է

ընդերքօգտագործողների կողմից համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված եկամուտների մասնաբաժինը՝ 7%-ից հասնելով 26.7%-ի: Մնացած հոսքերը, ընդհանուր առմամբ, պահպանել են եկամուտների կառուցվածքում իրենց մասնաբաժինը:


«Լիդիան Արմենիա» ՓԲԸ գործունեության մեկնարկին առնչվող խոշոր վճարումները տեսանելի են նաև 2016թ.-ին ստացած եկամուտների՝ ըստ համայնքների դասակարգման մեջ: Այսկերպ, 2016թ. Ջերմուկ համայնքը եկամուտների չափով առաջատար համայնքն է՝ ստանալով ընդհանուր եկամուտների մոտ 31% կամ 372.6 մլն ՀՀ դրամ, որը 175.5 մլն ՀՀ դրամով գերազանցում է երկրորդ տեղը զբաղեցրած Կապան համայնքի եկամուտները: Սակայն, 2017թ.-ին ավանդական բաշխումը վերահաստատվել է, և Ջերմուկ համայնքը նահանջել է երրորդ հորիզոնական: Կապանը և Քաջարանը զբաղեցրել են առաջին և երկրորդ հորիզոնականները՝ ստանալով ընդհանուր հաշվարկված վճարների 24.1% և 18.6% համապատասխանաբար: 2016-2017թթ. մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից ստացած եկամուտների ընդհանուր պատկերը ըստ համայնքների դասակարգման, ներկայացված է ստորև:

Գծապատկեր 2.3.9 Համայնքային բյուջեների եկամուտները մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարումներից՝ ըստ առաջատար համայնքների, 2016թ., մլն ՀՀ դրամ



Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

Գծապատկեր 2.3.10 Համայնքային բյուջեների եկամուտները մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարումներից՝ ըստ առաջատար համայնքների, 2017թ., մլն ՀՀ դրամ



Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

Աղյուսակ 2.3.2 Հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված վճարումները ըստ համայնքների, 2016-2017թթ., հազար ՀՀ դրամ

	2016	2017
Ընկերությունների կողմից հաշվարկված վճարումները	1,199,898	1,318,823
Ախթալա	9,871	10,992
Արջուտ	1,147	1,147
Լոռի Բերդ	-	48
Գեղամասար	68,116	70,059
Գորայք	128,480	128,480
Երևան	2,762	13,328
Զարիթափ	128,782	128,781
Կապան	197,058	17,527
Մելիք	3,635	35
Մեղրաձոր	30,976	31,000
Մեղրի	69,318	154,483
Շնող	39,289	38,647
Ջերմուկ	372,607	164,543
Սիսիան	4	4
Ստեփանավան	4,947	11,255
Վայք	1,155	-
Քաջարան	141,092	245,984
Օձուն	-	2,509

Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿՀՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

Աղյուսակ 2.3.3 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների չափաբաժինը համայնքների բյուջեներում, 2016-2017թթ.

Համայնք	2016թ.			2017 թ.		
	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության հաշվարկված վճարումները	Բյուջեի %-ը	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության հաշվարկված վճարումները	Բյուջեի %-ը
Ախթալա	474,597 ¹⁹	9,871	2.1%	167,669	10,992	6.4%
Արջուտ	29,850	1,147	3.8%	29,786	1,147	3.9%
Գեղամասար	122,990	68,116	55.4%	307,737	70,059	21.7%
Գորայք	166,353,5	128,480	7.7%	170,300	128,480	7.5%
Երևան	80,512,096	2,762	0.0%	72,479,070	13,328	0.0%
Զարիթափ	244,308	128,782	52.7%	241,387	128,781	53.1%

¹⁹ա) 2016թ. ՏԿՀՆ՝ որոշ մարզերի բյուջեների վերաբերյալ հաշվետվություններում համայնքների ցանկը թարմացված չէր՝ պայմանավորված 2016թ. իրականացված համայնքների խոշորացմամբ: Այս պարագայում, խոշորացման գործընթացի արդյունքում ձևավորված համայնքների բոլոր մասնակից բնակավայրերի եկամուտները գումարվել են:

բ) Համաձայն ՀՀ բյուջեի կազմման ներկա ձևաչափի, հիմնական միջոցներից և հողի իրացումից մուտքերը գրանցվում են ոչ թե որպես եկամուտներ, այլ որպես բացասական ծախսեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից կատարված վճարումների զգալի մասը կատարվել է հողի օտարման համար՝ այս աղյուսակի մեջ ներկայացված համայնքների իրական եկամուտները կազմվել են ընդհանուր եկամուտների և բացասական ծախսերի գումարով, որը արտացոլում է բյուջեների մուտքերի իրական պատկերը:


Համայնք	2016թ.			2017 թ.		
	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության հաշվարկած վճարումները	Բյուջեի %-ը	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության հաշվարկած վճարումները	Բյուջեի %-ը
Լոռի Բերդ	13,751	տեղեկություն չկա	տեղեկություն չկա	140,742	48	0.0%
Մելիք	33,044	3,635	11.0%	26,805	35	0.1%
Մեղրաձոր	87,151	30,976	35.5%	160,936	31,000	0.0%
Շնող	133,308	39,289	29.5%	156,504	38,647	23.2%
Ջերմուկ	614,194	372,607	60.7%	436,402	164,543	36.9%
Ստեփանավան	3,524,054	4,947	1.4%	426,941	11,255	2.5%
Վայք	182,829	1,155	0.6%	218,473	0	0.0%
Ք. Կապան	1,359,181	197,058	14.5%	1,541,268	317,527	19.6%
Ք. Մեղրի	566,331	69,318	12.2%	638,743	154,483	23.1%
Ք. Սիսիան	407,163	4	0.0%	826,560	4	0.0%
Ք. Քաջարան	419,944	141,092	33.6%	466,002	245,984	51.0%
Օձուն	162,456	տեղեկություն չկա	տեղեկություն չկա	232,822	2,509	1.1%

Համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկած վճարումներով առաջատար ընկերություն է հանդիսանում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ, որին բաժին է ընկնում 2016թ. և 2017թ. մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների համապատասխանաբար 52.5 % և 32.1%:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշվարկած վճարումների բաժինը մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումներում կազմում է 18.4%՝ 2016թ., և 23.8%՝ 2017թ.:


«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ հաշվարկած վճարումների մասնաբաժինը համայնքային բյուջեների՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից ստացած եկամուտներում 2016-2017թթ. համար կազմում է համապատասխանաբար 9.6% և 18.7%:

Գծապատկեր 2.3.11 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված բոլոր վճարումները, 2016թ., մլն ՀՀ դրամ



Աղբյուր՝ Տեղեկատվությունը պրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

Գծապատկեր 2.3.12 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված բոլոր վճարումները, 2017թ., մլն ՀՀ դրամ



Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար

2.3.3 Հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված եկամուտներ (պահանջ 5.1,5.2,5.3)

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի²⁰, բնապահպանական վճարներից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար:

Համաձայն նույն օրենքի Հոդված 3-ի, ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության հաստատված փաստաթղթերի հիման վրա:

Համաձայն «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման²¹, ծրագիրը մշակվում է նախապես հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա, որը ներառում է կառուցվածքային նշված ենթաբաժինները՝

1. ծրագրի նպատակը,
2. ծրագրի իրավական հիմքերը,
3. պետական մարմնի լիազորությունները ծրագրի իրականացման հարցում,
4. ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները,
5. ծրագրի խնդիրները և դրանց կապը ծրագրի նպատակի հետ,
6. ծրագրի կառուցվածքը (միջոցառումները),
7. ծրագրի իրականացման եղանակը (միջոցները և իրականացնող կազմակերպությունների շրջանակը),
8. ծրագրի կատարողական ցուցանիշները (ծավալային ցուցանիշները բնափրեղեն ծավալներով՝ ըստ առանձին միջոցառումների կամ ենթածրագրերի)՝
 - ա) վերջնական արդյունքը,
 - բ) ուղղակի արդյունքները.
9. ծրագրի իրականացման նկարագրությունը՝
 - ա) ծրագրի ներկա վիճակի նկարագրությունը,
 - բ) ծրագրի վերջնական արդյունքների պլանավորումը/կանխատեսումը՝ ըստ իրականացման փուլերի (ժամանակահատվածների):

Նույն որոշման համաձայն, ծրագրի ֆինանսական արժեքը գնահատվում է ծրագրի նախահաշվային արժեքի հաշվարկման միջոցով: Նախահաշվային ծախսերը հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նորմերի հիման վրա, իսկ ՀՀ կառավարության կողմից հաստատված նորմատիվների բացակայության դեպքերում ծրագրերի նախահաշվային արժեքը հաշվարկվում է տվյալ տարվա բյուջետային ծախսերի հաշվարկման համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաստատված

²⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55110>

²¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=88963>

պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումներին համապատասխան:

Թեմատիկ բնույթի բնապահպանական ծրագրերի գծով ծախսերը հաշվարկվում են համապատասխան բանաձևով, որը հաշվի է առնում և գնահատում համապատասխան մասնագետների աշխատավարձի դրույքը, վերջիններիս աշխատանքի աշխատատարությունը և կիրառում որոշակի գործակիցներ՝ նյութաձախսի, ծառայությունների ծախսի, վերադիր ծախսերի և շահութաբերության մակարդակի գծով, ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ օրենքով սահմանված հարկերը՝ հաշվարկված նույն օրենքով սահմանված կարգով:

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի²², ծրագիրը հրապարակում է համայնքի ղեկավարը (յուրաքանչյուր համայնք համապատասխան ծրագիրը հրապարակում է իր կայք-էջում, որը հասարակայնորեն հասանելի է):

Համաձայն «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման²³, մինչև ծրագրի նախագծային փաստաթղթերի հաստատումը՝ բնապահպանական ծրագրեր իրականացնող պետական մարմինը²⁴ 15 օրվա ընթացքում իրազեկում է հասարակությանը զանգվածային լրատվության (այդ թվում՝ էլեկտրոնային) միջոցներով (տեղական և պետական ռադիո, հեռուստատեսություն, լրագիր), ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, ինտերնետային կայքերում տեղադրմամբ և հասարակական քննարկումներով: Բնապահպանական ծրագրեր իրականացնող պետական մարմիններն այդ ծրագրերի և դրանց իրականացման մասին հասարակությանն իրազեկում են՝ համապատասխան համայնքների ղեկավարներին տրամադրելով նշված ծրագրերին վերաբերող փաստաթղթերը:

Բոլոր դեպքերում ծրագիրն իրականացնողը պարտավոր է մինչև ծրագրի իրականացման սկիզբը, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքում համաձայնության գալ ծրագրի իրականացման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:

Ծրագրի նախագծային փաստաթղթերը հաստատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի համար՝ ծրագիրն իրականացնող Առողջապահության և/կամ Բնապահպանության նախարարությունների կողմից.

2) համայնքային բյուջեներից ֆինանսավորվող ծրագրերի համար՝ ծրագիրն իրականացնող համապատասխան համայնքի ղեկավարի կողմից:

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի²⁵, ընկերությունները, ինչպես նաև իրավաբանական և

²²Տե՛ս հղում 20

²³Տե՛ս հղում 21

²⁴<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=91223>

²⁵Տե՛ս հղում 20

Ֆիզիկական այլ անձինք ծրագրի նախագծի վերաբերյալ կարող են համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր առաջարկություններ դրա հրապարակումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

Ծրագիրը ներառում է՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողային, ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումներ, ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ և ծրագրային միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները:

Ներկայացվող ծրագիրը պետք է կազմված լինի տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման մեթոդական ցուցումներին համապատասխան և ներառի նաև իրականացման ենթակա միջոցառումների խնդիրները, նպատակները և կենսագործման անհրաժեշտությունը, համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, իրագործման փուլերը (ժամանակացույցը), իրականացման համար անհրաժեշտ ծախսերը և ակնկալվող արդյունքները: Լիազորված մարմինները ծրագիրը քննարկում են ներկայացվելու օրվանից՝ տասնօրյա ժամկետում: Համայնքի ավագանին իրավասու է ծրագիրը վերադարձնել համայնքի ղեկավարին՝ ավագանու սահմանած ժամկետում այն լրամշակելու նպատակով:

Լիազորված մարմինները ներկայացված ծրագրի լրամշակված հավելվածը քննարկում են ներկայացվելու օրվանից եռօրյա ժամկետում, և եթե ծրագրի հավելվածում ամբողջապես հաշվի են առնված լինում դրան համաձայնություն չտալու համար պատճառ հանդիսացած՝ լիազորված մարմինների կողմից կատարված բոլոր դիտողությունները և առաջարկությունները, ապա համաձայնություն են տալիս, իսկ եթե նշված բոլոր դիտողություններն ու առաջարկություններն ամբողջապես հաշվի առնված չեն լինում, վերադարձնում են լրամշակված ծրագրի հավելվածը:

Համաձայնություն չի տրվում, եթե՝

ա) ծրագրի համաձայն իրականացման ենթակա բնապահպանական միջոցառումները հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային բնապահպանական ու առողջապահական կոնվենցիաներին և այլ իրավական ակտերին,

բ) ծրագրի փաթեթում բացակայում են համապատասխան փաստաթղթերը (տեղեկանքներ, հաշվարկներ), կամ դրանցում ներկայացված տեղեկությունները (հաշվարկները) չեն համապատասխանում իրականությանը:


Համաձայնություն տալու ժամկետը խախտելը, ինչպես նաև համաձայնություն տալը մերժելը կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

Նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները, մինչև ծրագրի հաստատումը, համաձայնեցվում են բնապահպանության և առողջապահության բնագավառներում լիազորված պետական մարմինների հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով²⁶:

²⁶Տե՛ս հղում 20

Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության լիազոր պետական մարմինը, ստացված ծրագրերի հիման վրա, հաշվի առնելով այդ ծրագրերի ֆինանսավորման համար առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում նախատեսվելիք հատկացումների ընդհանուր գումարները, կազմում է առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեից ծրագրերի ֆինանսավորման համար մասհանումներ ստացող համայնքների ցանկի նախագիծը:

Գծապատկեր 2.3.13 Բնապահպանական վճարների վճարման և ազդակիր համայնքներին ֆինանսավորման տրամադրման գործընթացը՝



Աղյուսակ 2.3.4 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքները, 2016-2017թթ.

	2016թ.		2017թ.	
Ընկերությունների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը
Շրջակա միջավայր (ջրային ավազան) վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարների գծով				
«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	50%	ք. Քաջարան	50%	ք. Քաջարան
	30%	ք. Կապան	30%	ք. Կապան
	10%	գ.Սյունիք	10%	գ.Սյունիք
	10%	գ.Լեռնաձոր	10%-	գ.Լեռնաձոր
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	100%	գ.Սոթք	100%	գ.Սոթք
Շրջակա միջավայր (օդային ավազան) վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարների գծով				
«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	70%	ք. Քաջարան	70%	ք. Քաջարան
	10%	գ.Լեռնաձոր	10%	գ.Լեռնաձոր
	20%	գ.Քաջարան	20%	գ.Քաջարան
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	15%	ք.Արարատ	15%	ք.Արարատ
	85%	գ.Սոթք	85%	գ.Սոթք
Շրջակա միջավայր արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման գծով				
«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	40%	ք. Քաջարան	30%	ք. Քաջարան
	10%	գ. Աճանան	10%	գ. Աճանան
	20%	գ. Սյունիք	20%	գ. Սյունիք
	20%	գ. Արծվանիկ	20%	գ. Արծվանիկ
	10%	գ. Սևաքար	10%/10%	գ. Սևաքար/գ. Չափնի

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման շրջանակներում

Աղյուսակ 2.3.5 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2016թ. ընթացքում ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաներ և համապատասխան բնապահպանական ծրագրեր

2016թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումներ²⁷	
Անվանումը	գումարը /հազ. դրամ/
Ընդամենը	89,748
Ընդամենը ք.Կապան	6,276.1
Կապան քաղաքային համայնքի Ա.Մանուկյան փողոցի մայթերի ծառատնկման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	6,276.1

²⁷http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2016_t_tarekan

2016թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումներ²⁷

Ընդամենը ք.Քաջարան	15,618.8
Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	12,368.8
Վակուումային ավլող-մաքրող «փոշեկուլ» մեքենայի ձեռք բերում	11,000.0
Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն	1,368.8
Առողջապահական միջոցառումներ	3,250
Ընդամենը ք.Ագարակ	3,340.0
Առողջապահական միջոցառումներ	3,340.0

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման համար

Աղյուսակ 2.3.6 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2017թ. ընթացքում ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաներ և համապատասխան բնապահպանական ծրագրեր.

2017թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումներ²⁸

Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
Ընդամենը	137,644
Ընդամենը ք.Կապան	8,875.0
Կապան քաղաքային համայնքի Ա.Մանուկյան փողոցի մայթերի ծառատնկման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	8,875.0
Ընդամենը ք.Քաջարան	8,400.0
Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	7,820.0
Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում	3,300.0
Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն	1,430.0
Մթնոլորտային օդի պահպանություն	2,016.0
Կենցաղային թափոնների կառավարման բարելավում	1,074.0
Առողջապահական միջոցառումներ	580.0
Ընդամենը ք.Ագարակ	1,036.0
Առողջապահական միջոցառումներ	1,036.0

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման շրջանակներում

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2016-2017թթ. ընթացքում համապատասխան բնապահպանական ծրագրեր իրականացվել են նաև Ալավերդի, Ախթալա, Ագարակ և Արարատ քաղաքներում, ինչպես նաև Աքրի, Հաղպատ, Օծուն, Հագվի և այլ գյուղերում: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ օրենքի շրջանակներում 2016թ. համայնքներին հատկացվել է 89,748,000 դրամ, իսկ 2017թ.՝ 137,644,000 դրամ: Առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 4-ում:

Համաձայն ՇՄԱԳ օրենքի 4-րդ հոդվածի 20-րդ կետի, «ազդակիր համայնք» տերմինը սահմանվում է որպես շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործողության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք: Նույն օրենքի նույն հոդվածում «հիմնադրությամբ փաստաթուղթ» հասկացությունը սահմանվում է որպես շրջակա միջավայրի վրա ազդեցություն

²⁸http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2017_t_tarekan

ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:

Համաձայն ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից պատրաստված ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության, ՀՀ օրենսդրությամբ տարբերակված չեն ազդակիր և ոչ ազդակիր համայնքները: Ըստ էության, որոշիչ գործոն է հանդիսանում ՇՄԱԳ հիմնադրությամբ փաստաթղթում համայնքի՝ որպես «ազդակիր» նշված լինելու հանգամանքը:

Ելնելով ներկայիս ծրագրային ներկայացման և իրականացման գործընթացի կարգավորումներից՝ առկա է անհրաժեշտություն սույն գործընթացի փուլային զարգացումները (ծրագրերի ներկայացում, վերջիններիս մերժման կամ հաստատման և հաստատված ծրագրերի իրականացման գործընթացներ) դարձնել հնարավորինս հրապարակային:

Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին»²⁹ օրենքի, մետաղական հանքաքար արդյունահանող 27 ընկերություններից միայն 4-ի կողմից վճարվող բնապահպանական հարկից են մասհանումներ կատարվում և առանձին տողով արտացոլվում այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն:

Օրենսդրական կարգավորումների շրջանակներում առկա են որոշակի թերացումներ, որոնք վերաբերում են ներքոշարադրյալ փաստերին.

- ▶ առկա չէ օրենսդրական հստակ կարգավորում «ազդակիր համայնք»-ի որոշման կանոնների և ուղենիշների վերաբերյալ,
- ▶ առկա չէ կարգավորում հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող գործունեության հետևանքով համայնքին հասցված վնասի գնահատման և համապատասխան ծրագրերի և վերջիններիս ուղղված հաշվետվությունների ներկայացման պարտադրության վերաբերյալ,
- ▶ առկա չէ օրենսդրական կարգավորում օրենքով նախատեսված բնապահպանական վճարների գումարի բնապահպանական ծրագրերին հասցեագրվող գումարների նվազագույն և առավելագույն սահմանափակումների արդյունավետության վերաբերյալ,
- ▶ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում նշվում են մետաղական հանքաքար արդյունահանող ընդամենը 4 ընկերություն,
- ▶ առկա չէ որևէ հանրամատչելի չափանիշ՝ կապված յուրաքանչյուր համայնքին տրվող դոտացիաների չափի հետ,
- ▶ առկա չէ պարտավորություն ծրագրերի կատարման հաշվետվությունների հրապարակման վերաբերյալ:

²⁹<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118700>

2.4 Արդարությունը, պաշարները, արտահանումը և ներքին իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Հայաստանում արդյունահանվող հիմնական մետաղական օգտակար հանածոներն են պղինձը, մոլիբդենն ու ոսկին: ԷԲՊՆ տրամադրած տվյալներով, օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է հաստատված պաշարով օգտակար հանածոների ավելի քան 850 հանքավայր, ներառյալ՝ 42 մետաղական հանքավայր: Դրանցից ներկայում շահագործվում է շուրջ 400, այդ թվում՝ 28 մետաղական հանքավայր:³⁰ 2016-2017թթ. մետաղական հանքաքար արդյունահանող յուրաքանչյուր ընկերության շահագործած հանքավայրերի մասին տեղեկությունը ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 2.4.1 2016-2017թթ. մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների շահագործած հանքավայրերը


N	Ընկերության անվանումը	Շահագործած հանքավայրը	Օգտակար հանածոյի անվանումը
1.	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Ագարակի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
2.	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Շամլուղի պղնձի հանքավայր, Լոռի	պղինձ
3.	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
4.	«Ասսաթ» ՍՊԸ	Քարաբերդի ոսկու հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ
5.	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Մեղրասար ոսկու հանքավայր, Սյունիք	ոսկի
6.	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	Արջուտի ոսկու հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ, պղինձ
7.	«Գեղի Գուլբ ՍՊԸ»	Ոսկեծորի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի-բազմամետաղ
8.	«Գեոպրոմայինգ Գուլբ» ՍՊԸ	Սոթքի ոսկու հանքավայր, Գեղարքունիք	ոսկի
9.	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարանի պղնձ-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
10.	«Թաթսթոուն» ՍՊԸ	Լիճքի պղնձի հանքավայր, Սյունիք	պղինձ
11.	«Թաթսթոուն» ՍՊԸ	Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թղկուտի տեղամաս, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
12.	«Թեղուտ» ՓԲԸ	Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Լոռի	պղինձ, մոլիբդեն
13.	«ԼԵՈՒ-ԷՔՍ» ՍՊԸ	Հանքասարի պղնձ-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ - մոլիբդեն
14.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Ամուլսար ոսկեբեր քվարցիտների, Վայոց Ձոր	ոսկեբեր քվարցիտներ
15.	«Լիճքվազ» ՓԲԸ	Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ

³⁰Տեղեկատվությունը տրամադրվել է ԷԲՊՆ կողմից՝ ԱՃԹՆ հարցման շրջանակներում: Սակայն, ԷԲՊՆ կայքի «Բնական պաշարներ - Ընդհանուր տեղեկություններ» էջում նշված տեղեկատվությունը 2018թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ թարմացված չէ (հղում՝ www.minenergy.am/page/472): Տրամադրված թույլտվությունների և պայմանագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է <http://www.minenergy.am/page/569> էջում:

N	Ընկերության անվանումը	Շահագործած հանքավայրը	Օգտակար հանածոյի անվանումը
16.	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի - բազմամետաղ
17.	«Հրաշք Մետաղ» ՍՊԸ	Բարձրադիրի (Մազրայի) ոսկու հանքավայր, Սյունիք	ոսկի
18.	«Ղարազյուլյաններ» ՓԲԸ	Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կենտրոնական տեղամաս, Սյունիք	ոսկի-բազմամետաղ
19.	«Մարջան Մայնինգ Քոնփանի» ՍՊԸ	Մարջանի ոսկի- բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի-բազմամետաղ
20.	«Մեզո Գոլդ» ՍՊԸ	Թուխմանուկի ոսկու հանքավայր, Արագածոտն	ոսկի
21.	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Մեդրաձորի ոսկու հանքավայր, Կոտայք	ոսկի
22.	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Դաստակերտի պղծա-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
23.	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Մղարթի ոսկու հանքավայր, Լոռի	ոսկի
24.	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Մեդրաձորի ոսկու հանքավայր, Կոտայք	ոսկի, արծաթ, թելուր, բիսմութ
25.	«Սագամար» ՓԲԸ	Արմանիսի ոսկու բազմամետաղային հանքավայր, Լոռի	ոսկի - բազմամետաղ
26.	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Վայոց ձոր	ոսկի-բազմամետաղ
27.	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Սոֆի Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Վայոց ձոր	ոսկի - բազմամետաղ
28.	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Հրազդանի երկաթի հանքավայր, Կոտայք	երկաթի հանքաքար

ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված տվյալներով, 2016-2017թթ. հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի արտադրանքի ծավալը կազմել է համապատասխանաբար 256,481 և 339,973 մլն ՀՀ դրամ, որը կազմել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի արժեքի 17.9% և 20.4%-ը: Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի արդյունքի մեծ մասը ստեղծվել է Սյունիքի մարզում, որն, ավանդաբար, հանդիսանում է հանքարդյունաբերական ոլորտում առաջատար՝ 2017թ.-ին շուրջ 70% մասնաբաժնով: Հաջորդը Լոռու մարզն է, որին 2017թ.-ին բաժին է ընկել ամբողջ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի արտադրանքի 23.3%-ը: Այս մարզի ներդրումը հանքարդյունաբերության ոլորտում զգալի աճել է 2015թ.-ից ի վեր, ինչը նույն թվականին Թեղուտի հանքի շահագործման շրջանակների ընդլայնման արդյունք է:

Գծապատկեր 2.4.1 Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի տարածքային արտադրանքի ծավալներ



Աղբյուրը՝ armstat.am

Աղյուսակ 2.4.2 Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի արտադրանքի ծավալը ըստ մարզերի, մլն ՀՀ դրամ


Մարզ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Երևան	1,481	1,190	2,154	1,636	1,907	1,987	2,551	2,501
Արագածոտն	531	744	615	256	172	177	113	155
Արարատ	1,043	1,076	1,002	870	809	862	714	920
Արմավիր	-	240	187	410	358	178	269	417
Գեղարքունիք	2,639	6,575	8,930	9,170	8,307	12,877	14,877	15,098
Լոռի	5,705	7,141	9,780	8,761	10,820	55,013	66,672	72,220
Կոտայք	673	443	1,117	4,514	1,938	2,657	2,787	2,801
Շիրակ	107	124	112	101	72	54	54	109
Սյունիք	132,583	152,147	168,853	169,935	168,344	146,387	167,275	236,940
Վայոց Ձոր	208	174	123	151	97	96	207	398
Տավուշ	569	314	454	975	320	378	960	1,414
Ընդհանուր	145,537	170,169	193,326	196,779	193,143	220,667	256,481	339,973

Աղբյուրը՝ armstat.am

2.4.1 Արտադրությունը մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)

Հայաստանի մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի հիմնական արտադրատեսակը պղնձի հանքաքարը և խտանյութն³¹ է: Բացի պղնձից, զգալի չափերով արտադրվում է նաև մոլիբդենի խտանյութ, ֆերոմոլիբդեն, ցինկի հանքաքար և խտանյութ: Թանկարժեք մետաղներից Հայաստանում արտադրվում է ոսկու հանքաքար, ինչպես նաև ոսկու և արծաթի համաձուլվածք: Ստորև ներկայացված գծապատկերը ամփոփում է 2016-2017թթ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի հիմնական արտադրատեսակների ծավալը և իրացման արժեքը:

Գծապատկեր 2.4.2 2016-2017թթ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակների մասնաբաժինը դրամական համամասնությամբ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ զեկույցի համար

³¹Օգտագործվել է ՀՀ ՎԿ տերմինաբանությունը, որը հիմնված է CPA 2008 վիճակագրական դասակարգիչների վրա: Առավել մանրամասն տեղեկատվության համար տե՛ս <https://ec.europa.eu/eurostat/documents/1995700/1995914/CPA2008structureexplanatorynotesEN.pdf/79e7f2e5-4e8c-493b-8684-bafaf75801d3>, էջ 19

Աղյուսակ 2.4.3 2016-2017թթ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և իրացման արժեքը

	Ծավալի չափման միավորը	Ծավալը		Արժեքը, մլն ՀՀ դրամ	
		2016	2017	2016	2017
Պղինձի հանքաքար և խտանյութ	թմտ	428,743	459,273	124,540	134,788
Մոլիբդենի խտանյութ	թմտ	638	2,303	1,388	4,378
Ֆերոմոլիբդեն	տոննա	6,519	6,557	32,798	29,585
Ցինկի հանքաքար և խտանյութ	տոննա	8,901	10,869	2,534	4,104
Ոսկու հանքաքար	տոննա	-	14,257	-	279
Ոսկու և արծաթի համաձուլվածք	գրամ	195,864	26,010	1,722	153
	ունցիա	122,322	139,839	52,327	55,152
Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	-	1,446	-	968

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար


Պղինձի հանքաքար և խտանյութ³²

Պղինձը Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի հիմնական հանքային տեսակն է: Ներկայումս Հայաստանում ընկերությունների կողմից շահագործվում է 7 պղինձ-մոլիբդենային և 1 պղինձի հանքավայր: Համաձայն ՀՀ ՎԿ-ի տրամադրած հրապարակումների, 2010-2017թթ. ընթացքում պղինձի խտանյութի արտադրությունը նշանակալիորեն աճել է և 2017թ.-ին հասել 428,500 տոննայի: 2010-2017թթ. տարեկան միջին աճը կազմել է 20.2%. աճը հատկապես նշանակալի էր 2015թ.-ին (+64.1%):

2015թ.-ին պղինձի արդյունահանման ծավալների արձանագրված կտրուկ աճը հիմնականում բաժին է ընկնում Լոռու մարզին և պայմանավորված է, մասնավորապես, Թեղուտի հանքի գործարկմամբ: 2015թ. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացված պղինձի խտանյութի վաճառքի արժեքային ծավալը կազմել է 51,425,617 հազար ՀՀ դրամ, որը կազմում է Լոռու մարզի հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի արտադրանքի ծավալի 93.5%-ը:

³²ՎԿ-ի և ընկերությունների կողմից տրամադրված տեղեկությունները 2016-2017թթ. Հայաստանում պղինձի և մոլիբդենի հանքաքարի և խտանյութի արտադրության ծավալների վերաբերյալ արտացոլել են տարբերվող ցուցանիշներ: ՎԿ-ից և մետաղական արդյունահանող ընկերություններին ուղարկված հարցումների արդյունքները թույլ են տալիս պարզաբանել, որ ծավալների ցուցանիշների միջև տարբերությունը պայմանավորված է բնաիրային չափիչների կիրառման մեթոդաբանական և փորձագիտական տարբեր մոտեցումներով:

Փճապատկեր 2.4.3 Պղնձի հանքաքարի և խտանյութի արտադրություն, 2010–2017թթ., տոննա



Աղբյուրը՝ *armstat.am*

Աղյուսակ 2.4.4 Պղնձի հանքաքարի և խտանյութի արտադրությունը ըստ ընկերությունների, 2016-2017թթ.

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը, թմտ		Ծավալների տոկոսային աճը կամ նվազումը	Արժեքը, մլն ՀՀ դրամ		Արժեքի տոկոսային աճը կամ նվազումը
		2016թ.	2017թ.		2016թ.	2017թ.	
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	146,718	122,320	-17%	38,046	36,397	-4%
«Ախթալայի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Ախթալա	8,262	13,306	+61%	3,031	3,935	+30%
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	237,578	286,674	+21%	62,802	68,958	+10%
«Կապանի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան	5,649	7,994	+42%	8,621	12,797	+48%
«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	30,536	28,979	-5%	12,040	12,701	+5%
Ընդհանուր		428,743	459,273	+7%	124,540	134,788	+8%

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մեդիական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Պղնձի արդյունահանման առաջատարը «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն է: Այս ընկերությունը 2016-2017թթ. արտադրել է Հայաստանում պղնձի խտանյութի մոտ 55-62%: Շուկայի այլ մեծ դերակատարներից են «Թեղուտ» ՓԲԸ-ն (պղնձի խտանյութի արտադրության մոտ 27-34%) և «Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն (պղնձի խտանյութի արտադրության 6-7%): Հարկ է նշել, որ այս երկու ընկերությունների արտադրության ծավալները 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ նվազել են:


ՀՀ ՎԿ-ի և Statista վիճակագրական ընկերության տրամադրած տեղեկություններով, պղնձի միջազգային գինը նվազման միտում է ցուցաբերել 2011թ-ից (8 871 ԱՄՆ դոլար/տ) մինչև 2016թ.-ը (4.863 դոլար/տ), և 2016թ-ից դիտարկվել է զգալի աճի միտում՝ 2017թ.-ին հասնելով մինչև 6.166 դոլար/տ: Անկախ վերոշարադրյալից՝ պղնձի հանքաքարը և խտանյութը, չզիջելով դիրքը հայաստանյան տնտեսությունում, շարունակում են պահպանել իրենց ռազմավարական նշանակությունը: Սույն մետաղի արդյունահանումը 2010-2017թթ. գրանցել է հաստատուն աճ՝ արձանագրելով 20.2% աճի միջին տարեկան տեմպ: Պղնձի միջազգային գների նվազման համատեքստում, ծավալային աճը հիմնականում իրականացվում է ծախսաճանձման նպատակով:

ՀՀ ՎԿ-ի տրամադրած տեղեկություններով, պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման ծավալի տեմպը նույնպես շարունակական աճ է գրանցել, և 2010-2016թթ. դրա մասով աճի միջին տարեկան տեմպը կազմել է 24.5%: Թեպետ պղնձի միջազգային գնի նվազման հանգամանքը վերջինիս արդյունահանման և արտահանման ծավալների վրա էական ազդեցություն չի թողնում, սակայն իր ազդեցությունն է թողնում արտահանման ընդհանուր արժեքի վրա: Պղնձի արտահանման ընդհանուր արժեքը տատանողական բնույթ է կրել 2010-2017թթ.՝ թեթև անկումներ արձանագրելով 2012թ.-ին և 2014թ.-ին: Սույն մետաղի արտահանման արժեքը հաստատուն կերպով աճ է գրանցել 2014թ.-ից հետո, բայց առավել դանդաղ կերպով, քան ծավալային աճը: 2017թ.-ին պղնձի միջազգային գնի աճը պղնձի արտահանման ընդհանուր արժեքին առավել արագ աճի տեմպ է հաղորդում, որի հետևանքով աճում է նաև արտահանված պղնձի մասնաբաժինը Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալում՝ կազմելով 25.6%:

Ինչպես արձանագրված է ստորև ներկայացված աղյուսակում, պղնձի միջազգային գնի անկման պրոցեսը դադարել է 2016թ., և գրանցվել է վերջինիս կտրուկ աճ 2017թ. ընթացքում: Սույն հանգամանքը իր համապատասխան հետևանքն է թողնում ընկերությունների կողմից պղնձի հանքաքարի և խտանյութի արտադրական ծավալների փոփոխության վրա: Մասնավորապես, պղնձի խտանյութի արտադրությունը և՛ ծավալային, և՛ արժեքային աճ է գրանցում «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, «Ախթալայի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ և «Կապանի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից, իսկ «Թեղուտ» ՓԲԸ և «Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ նվազեցնում են իրենց կողմից պղնձի հանքաքարի և խտանյութի արտադրության ծավալը: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ գների նվազումը առհասարակ բերում է արդյունահանման ծավալների աճի՝ նպատակ ունենալով տվյալ կերպով իրականացնել ինքնարժեքի նվազեցում: Ուսումնասիրելով ընկերությունների կողմից ներկայացված տվյալները՝ նկատելի է, որ 2017թ. տեղի ունեցած միջազգային գների աճը հնարավորություն է տվել ընկերություններին ծավալային նվազման պայմաններում արձանագրել արժեքային առավել քիչ անկում, իսկ, մասնավորապես, «Ագարակի Պղնձամոլիբդենային

Կոմբինատ» ՓԲԸ դեպքում պղնձի հանքաքարի և խտանյութի արդյունահանման ծավալի կրճատումը չի խոչընդոտել, որ վերջինս արձանագրի պղնձի հանքաքարի և խտանյութի արդյունահանման արժեքային աճ, իսկ ծավալային աճի դեպքում առկա է առավել մեծ համամասնությամբ արժեքային աճ:

Գծապատկեր 2.4.4 2012-2017թթ. պղնձի միջազգային միջին տարեկան գինը




Աղբյուրը՝ armstat.am, <https://www.statista.com/statistics/533292/average-price-of-copper/>

Մոլիբդենի խտանյութ

Հայաստանում մոլիբդենը արդյունահանվում է հիմնականում որպես պղնձի հավելանյութ: Վերջին 8 տարիների ընթացքում մոլիբդենի արտադրության տարբեր դինամիկայի երկու ժամանակահատված է եղել: Մինչև 2014թ.-ը տարեկան աճը կազմել է 8.3%: Սակայն, 2015թ.-ին (պղնձի արտադրության ծավալի ռեկորդային աճի տարին) մոլիբդենի արտադրությունը նվազեց 11.6%-ի: 2016-2017թթ. մոլիբդենի արտադրությունը աճեց, բայց զգալիորեն ցածր տոկոսով:

Գծապատկեր 2.4.5 Մոլիբդենի խտանյութի արտադրությունը, 2010–2017թթ., տոննա



Աղբյուրը՝ armstat.am

Աղյուսակ 2.4.5 Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությունը ըստ ընկերությունների, 2016-2017թթ.


Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը		Ծավալի տոկոսային աճը կամ նվազումը	Արժեքը, մլն ՀՀ դրամ		Արժեքի տոկոսային աճը կամ նվազումը
		2016	2017		2016	2017	
Մոլիբդենի խտանյութ, թմպ							
«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	452	449	-0.7%	1,097	1,063	-3%
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	186	1,854	+897%	291	3,314	+1,039%
Ֆերոմոլիբդեն, պոննա							
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	6,519	6,557	+0.6%	32,798	29,585	-9.8%
Ընդհանուր	-	-	-	-	34,186	33,962	-

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մետադական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

2012-2017թթ. մոլիբդենի միջազգային գինը, ընդհանուր առմամբ, ցուցաբերել է նվազման միտում: 2013թ. մոլիբդենի միջազգային գինը մոտ 20% անկում ապրեց, որին հաջորդեց մոտ 12% աճ 2014թ.-ին, սակայն 2015թ.-ից վերջինս կրկին անկում ապրեց: 2017թ.-ին մոլիբդենի միջազգային գինը

փոքր-ինչ վերականգնվեց, սակայն դեռ շարունակում է մնալ բավական ցածր՝ պատմական միջին ցուցանիշի հետ համեմատած: Մոլիբդենի արտահանման ծավալները փոփոխվել են վերջինիս միջազգային գների փոփոխմանը համապատասխան՝ 2014թ.-ին ցուցաբերելով փոքր-ինչ վերելք և անկում 2015-2016թթ.: 2017թ.-ին արտահանված մոլիբդենի ընդհանուր արժեքը գրանցել է շեշտակի աճ՝ 0.9 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 8.6 մլն ԱՄՆ դոլարի, ինչը մասամբ հիմնավորվում է միջազգային գների աճով:

Գծապատկեր 2.4.6 2012-2017թթ. մոլիբդենի օքսիդի միջազգային միջին տարեկան գինը




Աղբյուրը՝ armstat.am, https://www.quandl.com/data/LME/PR_MO-Molybdenum-Prices

Ցինկի հանքաքար և խտանյութ

«Կապանի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն Հայաստանում ցինկ արտադրող միակ ընկերությունն է: Ցինկի խտանյութի արտադրության գրեթե 100%-ը արտահանվում է այլ երկրներ: Ցինկի արտադրությունը աճել է մինչև 2012թ.-ը, սակայն 2013թ.-ից ի վեր բացասական միտումներ են գրանցվել, ինչը, հատկապես նկատելի էր 2015-2016թթ., երբ արդյունաբերությունը հասավ իր ամենացածր մակարդակին (8,901 տոննա) և սկսեց աճել (+22.3%, 2017թ.):

Գծապատկեր 2.4.7 Ցինկի խտանյութի արտադրությունը, 2010 – 2017թթ., տոննա




Աղբյուր՝ armstat.am

Աղյուսակ 2.4.6 Ցինկի խտանյութի արտադրությունը՝ ըստ ընկերությունների, 2016-2017թթ.

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը, տոննա		Ծավալի տոկոսային աճը կամ նվազումը	Արժեքը, մլն ՀՀ դրամ		Արժեքի տոկոսային աճը կամ նվազումը
		2016	2017		2016	2017	
«Կապանի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան	8,901	10,869	22.3%	2,534	4,104	62.0%

Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մեխաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից 'ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Գծապատկեր 2.4.8 2010-2017թթ. ցինկի միջազգային միջին տարեկան գինը




Աղբյուրը՝ armstat.am

Ոսկու հանքաքար

2010-2012թթ. ոսկու միջազգային գնի աճին և մինչև 1,669 ԱՄՆ դոլար/տրոյական ունցիա հասնելուն հաջորդեց շարունակական անկում՝ 2015թ.-ին հասնելով մինչև 1,160 ԱՄՆ դոլարի: 2016թ.-ին ոսկու գները սկսեցին դանդաղորեն վերականգնվել՝ 2017թ.-ին հասնելով 1,257 ԱՄՆ դոլար/տրոյական ունցիա: Ոսկու շուկայում նկատված միտումներից անկախ, 2014-2016թթ. Հայաստանից արտահանված թանկարժեք մետաղների հանքաքարի և խտանյութի ծավալները զգալիորեն աճել են: Վերջինս հիմնավորվում և պայմանավորվում է միջազգային գների համապատասխան անկմամբ, որի պարագայում ծախսաձածկման նպատակով իրականացվում է ծավալային աճ:

ՀՀ ՎԿ-ն չի հրապարակում թանկարժեք մետաղների տարանջատման առավել ցածր դեզագրեզացիայի աստիճանի տվյալները (օրձ ոսկի, արծաթ և այլն), քանի որ համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետի, այդ տվյալները դասվում են պետական և ծառայողական գաղտնիքների շարքին: Այս պատճառով, հասանելի են միայն ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում ընկերությունների կողմից բացահայտված 2016-2017թթ. ոսկու արտադրմանը վերաբերող տվյալները, որոնք ներկայացված են ստորև ոսկու միջազգային գնի 2010-2017թթ. դինամիկայի հետ համատեղ:

Գծապատկեր 2.4.9 2010-2017թթ. ոսկու միջազգային միջին տարեկան գինը



Աղբյուրը՝ armstat.am

Աղյուսակ 2.4.7 2016-2017 թթ. ոսկու արտադրությունը Հայաստանում՝ ըստ ծավալի և դրամական արժեքի

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Արտադրատեսակը	Ծավալի չափման միավորը	Ծավալը		Ծավալի տոկոսային աճը կամ նվազումը	Արժեքը, մլն ՀՀ դրամ		Արժեքի տոկոսային աճը կամ նվազումը
				2016	2017		2016	2017	
«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրասար	Ոսկու հանքաքար	տոննա	-	14,257	-	-	279	-
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սոթք	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	ունցիա	122,322	139,839	+14.3%	52,327	55,152	+5.4%
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրաձոր	Ոսկու և արծաթի համաձուլվածք	գրամ	195,864	26,010	-86.7%	1,722	153	-91.1%
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրաձոր	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	-	1,419	-	-	961	-
Վայք Գոլդ ՍՊԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզ, Ագատեկ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	-	26.7	-	-	7	-
Ընդհանուր	-	-	-	-	-	-	54,049	56,552	

Աղբյուր՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մեքսիկական հանքաքար ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար


2.4.2 Մետաղական օգտակար հանածոների պաշարները հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.1)

2010-2017թթ. ընթացում ՀՀ տարածքում հաստատվել են մետաղական օգտակար հանածոների զգալի պաշարներ: Պաշարների ամենամեծ ծավալը բաժին է ընկնում երկաթին, այնուհետև ոսկուն, մագնեզիումին, պղնձին և քրոմիտին: Առկա են այնպիսի մետաղների հաշվեկշռային պաշարներ, ինչպիսիք են ցինկը, արծիճը և մոլիբդենը: ՀՀ տարածքում 2010-2017թթ. հաշվառվել են նաև ուղեկից բաղադրիչներ (թելուր, բիսմութ, ռենիում, պլատին, պալադիում, ծծումբ, սելեն):

Տարածքային առումով Լոռու մարզը՝ ի համեմատ այլ մարզերի, ունի օգտակար հանածոների ամենամեծ պաշարները, որոնց հիմնական բաղադրիչը երկաթն է (երկաթի հաշվեկշռային պաշարների 100%) և համեմատաբար փոքր քանակով՝ ոսկին (ոսկու հաշվեկշռային պաշարների 7%): Մետաղական օգտակար հանածոների պաշարներով երկրորդ ամենամեծ մարզը Սյունիքն է, որտեղ տեղակայված են ոսկու հաշվեկշռային պաշարների 42%-ը և պղնձի պաշարների 100%-ը: Սյունիքի մարզում են գտնվում նաև ցինկի հաշվեկշռային պաշարներ 99%-ը և մոլիբդենի ողջ պաշարները: Մետաղական օգտակար հանածոների պաշարներով երրորդ ամենամեծ մարզը Վայոց Ձորն է, որտեղ գտնվում է ոսկու պաշարների 11%-ը: Մագնեզիումի և քրոմիտի օգտակար հանածոների բոլոր պաշարները տեղակայված են Գեղարքունիքի մարզում, մինչդեռ Արագածոտնի մարզում գտնվում է ոսկու պաշարների ամենափոքր մասնաբաժինը՝ ընդհանուր հաշվեկշռային պահուստների 3%-ը:


Ստորև ներկայացված է 2010-2017թթ. ՀՀ տարածքում հաստատված մետաղական հանքարի պաշարների տեղաբաշխումը ըստ մարզերի:

Գծապատկեր 2.4.10 2010 – 2017թթ. մետաղական հանքարի հաստատված քանակը ըստ մարզերի, հազար տոննա³³




³³Սույն բաժնում «պահուստներ» եզրույթը նշանակում է պաշարների ընդհանուր պահուստ, որտեղ տարբեր հանքային ռեսուրսների պաշարները հաստատվել են տարբեր տարիների ընթացքում՝ 2010-2017թթ. ընկած ժամանակահատվածում:

Գծապատկեր 2.4.11 2010–2017թթ. մետաղական օգտակար հանածոների հաստատված պաշարները ըստ մարզերի, հազար տոննա



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ԷԲՊՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Գծապատկեր 2.4.12 2010–2017թթ. ոսկու և արծաթի հաստատված պաշարները, ըստ մարզերի, հազար տոննա



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ԷԲՊՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար


2.4.3 Արտահանումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը Հայաստանի Հանրապետության ընդհանուր արտահանման մեջ 2016-2017թթ.-ին կազմել է համապատասխանաբար 23% և 28%՝ արձանագրելով 5% աճ: Հանքաքարի արտահանման ծավալները 2010թ.-ից ցուցաբերել են հստակ աճի միտում՝ 133.4 հազար տոննայից 2017թ.-ին հասնելով 488 հազար տոննայի: 2017թ. արտահանված ընդհանուր հանքանյութի արժեքը 2010թ.-ի համեմատ զգալիորեն աճել է՝ 230.2 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 598.7 մլն ԱՄՆ դոլարի: Չնայած ընդհանուր աճի միտմանը, ցուցանիշը 2012-2014թթ. նվազել է, ինչը պայմանավորված է եղել պղնձի արտահանման արժեքի անկմամբ:

Արդյունահանման և արտահանման ընդհանուր ծավալներում պղնձի հանքաքարի և խտանյութի զգալի տեսակարար կշիռը փաստում է Հայաստանի տնտեսության համար վերջինիս կարևորության մասին: Պղնձի արտահանումը 2017թ.-ին կազմել է Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալի 26.6%-ը: 2010–2016թթ. պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման ծավալների տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ հստակ աճի կամ նվազման միտում չի ցուցաբերել, այլ տատանվել է՝ գրանցելով իր նվազագույն արժեքները 2012-2014թթ.՝ համապատասխանաբար 16.5% և 15.2%:

Պղնձի խտանյութի՝ տոննաներով արտահայտված արտահանման ծավալի աճի տեմպերը գերազանցել են նույն ցուցանիշի՝ ԱՄՆ դոլարով արտահայտված աճի տեմպերը, ինչը, մասնավորապես, կարող է բացատրվել հիմնական արտահանվող մետաղների միջազգային գների անկայունությամբ, որոնք 2011-2016թթ. գրանցել են նվազման միտում: Երևույթը առավել տեսանելի է պղնձի հանքաքարի և խտանյութի դեպքում, երբ վերջիններիս արտահանման ծավալները 2010-2017թթ. աճել են, սակայն 2012-2014թթ. պղնձի գնի անկումը ազդել է արտահանման արժեքի վրա:


Գծապատկեր 2.4.13 Պղնձի հանքաքարի և խտանյութի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ armstat.am


Պղնձի հանքաքարը և խտանյութը կազմում են հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալի գերակշիռ մասը՝ 2017թ.-ի ցուցանիշը կազմել է 97.2%: 2017թ.-ին ցինկի հանքաքարը և խտանյութը կազմել են խտանյութերի արտահանման ծավալի 2%, իսկ մոլիբդենի խտանյութը՝ 1.4%: 2010–2017թթ. թանկարժեք մետաղների հանքաքարերի և խտանյութերի արտահանումը կայուն չի եղել, զգալիորեն տատանվել է՝ հասնելով իր առավելագույն արժեքներին 2012 (8.9%), 2014 (11.2%), 2015 (8.6%), և 2016 (8.3%) թթ.:

Գծապատկեր 2.4.14 Խտանյութի արտահանում, հազար տոննա



Աղբյուրը՝ armstat.am

Գծապատկեր 2.4.15 Պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման տոկոսային բաշխումը ըստ երկրների, 2010-2017թթ.



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

Աղյուսակ 2.4.8 2016-2017թթ. պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման բաշխումը ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը		Ծավալը, թմտ		Արժեքը, մլն ՀՀ դրամ		Արժեքը, մլն ԱՄՆ դոլար ³⁴	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան	Չինաստան	31,118	28,237	105,156	13,537	218.9	28.2
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ»	Բուլղարիա	Բուլղարիա	8,176	18,050	2,960	8,741	6.2	18.2
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան, Ռումինիա, Բուլղարիա	Չինաստան, Ռումինիա, Բուլղարիա	235,725	281,299	93,842	143,766	195.4	299.1
«Թեղուտ» ՓԲԸ	Վրաստան	Վրաստան	103,293	80,408	47,024	45,964	97.9	95.6
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան	Բուլղարիա, Շվեյցարիա	5,962	7,448	15,649	21,709	32.6	45.2
Ընդհանուր	-	-	384,274	415,442	264,631	233,717	550.9	484.3

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մեքսիկական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

³⁴Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2016թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 480.324 ՀՀ դրամ, իսկ 2017թ.՝ 480.629 ՀՀ դրամ:

Չնայած որ Բուլղարիան հանդիսանում է պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման հիմնական երկիրը, դրա մասնաբաժինը պղնձի ընդհանուր արտահանման մեջ 2017թ.-ից ի վեր նվազել է 8.3%-ով՝ 2016թ.-ի համեմատ: Պղնձի արտահանումը բավականաչափ դիվերսիֆիկացված է, և առևտուրը իրականացվում է հինգ երկրների հետ: Հաջորդ պետությունը Չինաստանն է, որի մասնաբաժինը պղնձի արտահանման մեջ 2010-2017թթ. աճել է 9.1%-ով: Պղնձի արտահանման մեջ երրորդ գործընկերը՝ Վրաստանը, որը 2017թ.-ին ունեցել է 19% մասնաբաժին: 2015թ.-ին, Վրաստանը դարձել է պղինձ ներմուծող գործընկեր՝ պղնձի արտահանման մեջ մեծ մասնաբաժնով:

Մոլիբդենի խտանյութն իր արտահանման ծավալով երկրորդ հորիզոնականում է, սակայն քանակով և արժեքով զիջում է պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանմանը: Ինչպես պղնձի դեպքում, շուկայի առաջատարը «Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ է, որին 2016թ.-ին բաժին է ընկել արտահանման 97%-ը: Մոլիբդենի խտանյութի արտահանման ծավալները 2017թ.-ին կտրուկ նվազել են: Սա պայմանավորված է եղել «Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ կողմից մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի իրացման կտրուկ կառուցվածքային փոփոխությամբ՝ 2017թ.-ին արտահանման ծավալները համարյա զրոյացել և փոխարինվել են ներքին իրացմամբ:


2011-2017թթ. ժամանակահատվածում մոլիբդենի խտանյութն արտահանվել է մեծապես Նիդերլանդներ: Այլ գործընկեր երկրներից են Բելգիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ավստրիան և Սինգապուրը:

Աղյուսակ 2.4.9 2016-2017թթ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտահանման բաշխումը ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը		Արժեքը, մլն ՀՀ դրամ		Արժեքը, մլն ԱՄՆ դոլար	
		2016	2017	2016	2017	2016	2017
«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ (մոլիբդեն, թմտ)	Ավստրիա	166	448	339	1,510	0.7	3.1
«Թեղուտ» ՓԲԸ (մոլիբդեն, թմտ)	Նիդերլանդներ	0	877	0	2,851	0	5.9
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ (Եռակցված մոլիբդեն, տոննա)	Նիդերլանդներ	399	0	3,002	0	6.2	0
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ (ֆերոմոլիբդեն, տոննա)	Նիդերլանդներ	5,280	0	24,284	0	50.6	0
Ընդհանուր	-	-	-	27,625	4,361	57.5	9.0

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար


Գծապատկեր 2.4.16 Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի՝ անմիջապես արդյունահանողի կողմից արտահանումն ըստ երկրների, 2016-2017թթ., ՀՀ դրամ



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

Ցինկի արտահանումը պղնձի արտահանման համեմատությամբ ավելի քիչ դիվերսիֆիկացված է, և 2017թ.-ին արտահանվող երկրները եղել են Բելգիան և Կորեայի Հանրապետությունը, իսկ 2016թ.-ին միայն Բելգիան: 2010-2017թթ., ի տարբերություն այլ գործընկեր երկրների, Բելգիան եղել է բավական կայուն ներմուծող երկիր: Բացի նշված երկրներից, ցինկը նաև արտահանվել է Չինաստան, Ղազախստան, Նիդերլանդներ և Շվեյցարիա:

Գծապատկեր 2.4.17 2016-2017թթ. ցինկի հանքաքարի և խտանյութի արտահանումը, ըստ երկրների



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

Աղյուսակ 2.4.10 2016-2017թթ. արտահանված ցինկի հանքաքարի և խտանյութի ծավալը և դրամային արժեքը


Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը, թմտ		Արժեքը			
				2016		2017	
		2016	2017	մլն ՀՀ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլն ՀՀ դրամ	մլն ԱՄՆ դոլար
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Բելգիա	9,256	10,193	4,613	9,6	8,000	16,6

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մեքսիկական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

2017թ.-ին թանկարժեք մետաղների արտահանման հիմնական գործընկերը եղել է Շվեյցարիան: Իրանի Իսլամական Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը ստացել են թանկարժեք մետաղների փոքրակշիռ մասը: 2014-2016թթ. թանկարժեք մետաղների առևտրին մասնակցել է նաև Չինաստանը, որը այդ ժամանակահատվածում եղել է նպատակային երկրների առաջատարը:

Տիտանի հանքաքարը և խտանյութը 2010-2012թթ. ընթացքում արտահանվել է Նիդերլանդներ, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա և Միացյալ Թագավորություն: 2012թ.-ին արճիճի հանքաքարի և խտանյութի արտահանումը ավարտվել է դեպի միակ առևտրային գործընկերներ՝ Իրան և Սինգապուր:

Գծապատկեր 2.4.18 2016-2017թթ. թանկարժեք մետաղների հանքաքարի և խտանյութի արտահանումը ըստ երկրների



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

Աղյուսակ 2.4.11 Արտահանված ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի ծավալը և արժեքը 2016-2017թթ.

Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը, տոննա		Արժեքը			
		2016թ.	2017թ.	2016թ.		2017թ.	
				մլն ՀՀ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլն ՀՀ դրամ	մլն ԱՄՆ դոլար
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ	Բելգիա	100	-	272	0.57	-	-
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Շվեյցարիա	-	1,419	-	-	794	1.7
«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	Շվեյցարիա	-	80	-	-	125	0.26
«Գեոարոմայնինգ Գոլդ» ՍՊԸ (ոսկու և արծաթի դորե համաձուլվածք)	Շվեյցարիա	127,054 (ունցիա)	142,533 (ունցիա)	62,857	131	70,775	147
Ընդհանուր	-	-	-	63,129	131.57	71,694	148.96

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է մեքսիկական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացած տեղեկատվության համեմատություն

Ընկերություններից ստացված արտահանման վերաբերյալ տվյալները նկատելիորեն տարբերվում են ՎԿ-ից և ITC Comtrade-ից ստացված համապատասխան տվյալներից (ի դեպ՝ սույն երկու ծառայությունների կողմից արտացոլված տեղեկատվությունը համընկնում է): Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է 2017թ. Հայաստանից արտահանված պղնձի, ցինկի և մոլիբդենի խտանյութի ծավալային արժեքը դրամական արտահայտությամբ՝ համաձայն ՎԿ-ի և մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկատվության:

Աղյուսակ 2.4.12 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացած տեղեկատվության համեմատություն

Արտադրատեսակը	Արտահանման ընդհանուր արժեքը 2017թ. ըստ ՀՀ ՎԿ-ի, մլն ԱՄՆ դոլար	Արտահանման ընդհանուր արժեքը 2017թ. ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների, մլն ԱՄՆ դոլար
Պղնձի հանքաքար և խտանյութ	571.5	484.3
Ցինկի հանքաքար և խտանյութ	16.6	16.6
Մոլիբդենի խտանյութ	8.6	9.0

Վերը նշված երկու աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման արդյունքում, առկա է էական տարբերություն պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման ծավալների միջև արտահայտված դրամային համարժեքով: Սույն տարբերությունը կազմում է 15.2%: Ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացված մեկնաբանությունները թույլ են տալիս եզրակացնել, որ այս ցուցանիշների միջև առկա տարբերությունը կապված է մեթոդաբանական տարբեր լուծումների հետ, որոնք կիրառվում են ընկերությունների և ՎԿ-ի

կողմից: Տարբերությունը մասամբ պայմանավորված է այն փաստով, որ ընկերությունների ներքին շուկայում իրացրած արտադրատեսակների մի մասը նույնպես արտահանվում է այլ ընկերությունների կողմից՝ ուղղակիորեն կամ որոշ վերամշակումից հետո: Այսինքն, արտահանման ընդհանուր ծավալի մի որոշակի մաս մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների հաշվետվություններում գրանցվում է որպես ներքին իրացում չնայած նրան, որ ներքին շուկայում վաճառված այդ արտադրատեսակի գերակշիռ մասը ի վերջո արտահանվում է: Ի լրացում վերը շարադրվածի, պետք է հաշվի առնել այն փաստը, որ վերավաճառք իրականացնող ընկերությունների կողմից արտահանման տվյալների բացակայության և վերջիններիս ներքին իրացման գնային ցուցանիշներին անհամապատասխանության արդյունքում անհնարին է դառնում տվյալների միջև համադրելիության ապահովումը:

Եվս մեկ պատճառ կարող է հանդիսանալ այն, որ որոշ ընկերություններ արտահանման վաճառքի վերաբերյալ գործարքը արձանագրում են այն պահին, երբ արտադրատեսակը լքում է իրենց պահեստը, սակայն կախված արտահանմանը վերաբերող մի շարք գործոններից՝ ապրանքը կարող է որոշ ժամանակ մնալ Հայաստանում գտնվող այլ պահեստներում մինչև իրական արտահանման փաստի արձանագրումը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր տարում արտացոլված ընդհանուր արտահանման որոշակի հատվածը կարող է ընկերությունների կողմից արձանագրվել նախորդող կամ հաջորդող տարիների հաշվետու տվյալներում:

2.4.4 Ներքին իրացում

Հետևյալ երկու աղյուսակները ներկայացնում են 2016թ. և 2017թ. ներքին շուկայում վաճառք իրականացրած ընկերությունների և իրացված մետաղական արտադրանքի վերաբերյալ համապարփակ և ամփոփ տեղեկատվություն:

Աղյուսակ 2.4.13 2016թ.-ին ներքին շուկայում վաճառք իրականացրած ընկերությունների, դրանց իրացրած մետաղական արտադրանքը, ծավալը և դրամային արժեքը

Ներքին իրացում, 2016թ.									
Արտադրատեսակը	Հանքաքար արդյունահանող ընկերությունը	Չափման միավորը	Ծավալը	Ընդամենը իրացման արժեքը, ՀՀ դրամ	Գնորդ կազմակերպություն	ԱՃԹՆ հաշվետու	ՀՎՀՀ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ	Գործունեության տեսակ
Պղնձի հանքաքար և խտանյութ	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	թմտ	40,840	20,003,339,597	"Արմենիան Քափըր Փրոգրամ" ՓԲԸ	Ոչ	06605968	C24.44.0	Պղնձի արտադրություն
Պղնձի հանքաքար և խտանյութ	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵ ՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	թմտ	245	97,514,230	«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Այո	06602309	B07.29.1	Պղնձի հանքաքարի արդյունահանում
Ֆերոմոլիբդեն	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵ ՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	տոննա	1,140	5,243,040,709	"ՋիԱռիՓիՍիՕ"ՓԲԸ	Ոչ	01254965	G46.72.3	Գունավոր մետաղների և դրանց ձուլվածքների մեծածախ առևտուր
Մոլիբդենի խտանյութ	«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	տոննա	251	707,673,860	"Ալափմետ" ՓԲԸ	Ոչ	02801437	C24.10.0	Թուջի արտադրություն
					Մաքուր երկաթի գործարան	Ոչ	0404207	C24.45.0	Այլ գունավոր մետաղների արտադրություն
Ոսկու և արծաթի համաձուլվածք	«ՄԵՂՐԱՋՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	գրամ	195,864	1,966,853,392	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	Այո	10530525	C24.41.1	Թանկարժեք մետաղների արտադրություն




Աղյուսակ 2.4.14 2017թ. ներքին շուկայում վաճառք իրականացրած ընկերությունները, դրանց իրացրած մետաղական արտադրանքը, ծավալը և դրամային արժեքը

Ներքին իրացում, 2017 թ.									
Արտադրատեսակը	Հանքաքար արդյունահանող ընկերությունը	Չափման միավորը	Ծավալը	Ընդամենը իրացման արժեքը, ՀՀ դրամ	Գնորդ կազմակերպություն	ԱՃԹՆ հաշվետու	ՀՎՀՀ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ	Գործունեության տեսակ
Պղնձի հանքաքար և խտանյուլթ	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	թմտ	43,203	23,108,704,617	"Արմենիան Քափըր Փրոգրամ" ՓԲԸ	Ոչ	06605968	C24.44.0	Պղնձի արտադրություն
Մոլիբդենի խտանյուլթ	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	թմտ	622	2,026,289,512	"Ալափմետ" ՓԲԸ	Ոչ	02801437	C24.10.0	Թուջի արտադրություն
Պղնձի հանքաքար և խտանյուլթ	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՂՁԱՄՈԼԻԲԴԵՆ ԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	թմտ	6,177	3,279,435,955	«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Ոչ	06602309	B07.29.1	Պղնձի հանքաքարի արդյունահանում
					"Արմենիան Քափըր Փրոգրամ" ՓԲԸ	Ոչ	06605968	C24.44.0	Պղնձի արտադրություն
Ֆերոմոլիբդեն	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՂՁԱՄՈԼԻԲԴԵՆ ԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	տոննա	6,520	40,251,723,876	"ՋիԱռիՓիՍիՕ" ՓԲԸ	Ոչ	01254965	G46.72.3	Գունավոր մետաղների և դրանց ձուլվածքների մեծածախ առևտուր
Ոսկու և արծաթի համաձուլվածք	«ՄԵՂՐԱՁՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	գրամ	26,010	478,074,534	«ԳԵՈՊՐՈՍԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	Այո	10530525	C24.41.1	Թանկարժեք մետաղների արտադրություն
Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյուլթ	«ՎԱՅՔ ԳՈԼԴ» ՍՊԸ	կգ	26,700	6,675,000	Ասսաթ ՍՊԸ	Այո	03807664	C24.41.1	Թանկարժեք մետաղների արտադրություն
Ոսկու հանքաքար	«ԱՏ-ՄԵՏԱԼԱ» ՍՊԸ	տոննա	10,855	493,428,248	Թոմ ընդ Միր ՍՊԸ	Ոչ	03313431	G46.77.1	Սև և գունավոր մետաղների ջարդոնի մեծածախ առևտուր

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը պրամադրվել է մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Գծապատկեր 2.4.19 2016-2017թթ. ներքին շուկայում իրացվող հիմնական հանքաքարերի մասնաբաժինը դրամական համամասնությամբ



Աղյուսակ 2.4.15 2016-2017թթ. պղնձի հանքաքարի և խտանյութի ներքին իրացման ծավալները և դրամական արժեքը

Ընկերության անվանումը	Ծավալը, թմտ		Արժեքը, մլն ՀՀ դրամ	
	2016	2017	2016	2017
«Թեղուտ» ՓԲԸ	40,840	43,203	20,003	23,109
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	245	6,177	98	3,279
Ընդհանուր	41,085	49,380	20,101	26,388

Աղբյուրը՝ Ներքին իրացման մասին տեղեկությունները տրամադրվել են մեքսիկական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Պղնձի հանքաքարի և խտանյութի ներքին իրացումը 2016թ. և 2017թ. կազմել է համապատասխանաբար 20.1 մլրդ և 26.3 մլրդ ՀՀ դրամ կամ 41.9 մլն և 54.7 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման շուկայի ծավալների համեմատությամբ (համապատասխանաբար 352 մլն և 484 մլն ԱՄՆ դոլար՝ 2016թ. և 2017թ.), ներքին իրացման շուկան գաճաճ է: Արտահանող հինգ ընկերություններից միայն երկուսն են իրականացնում ներքին վաճառք:

Պղնձի ներքին իրացման շուկայի առաջատարն է «Թեղուտ» ՓԲԸ, որը 2016թ.-ին և 2017թ.-ին զբաղեցրել է շուկայի 99.5%-ը և 87.5%-ը համապատասխանաբար: «Թեղուտ» ՓԲԸ-ի միակ շուկայական մրցակիցը «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ է, որը սակայն ունի փոքր կշիռ:

Ինչպես արտահանման մեջ, այնպես էլ ներքին շուկայում պղնձի իրացումը ավանդաբար զբաղեցրել է շուկայի գերակշիռ մասը: Սակայն 2017թ.-ին գրանցվել է ֆերոմոլիբդենի իրացման կտրուկ աճ, որը պայմանավորված է եղել «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ կողմից ֆերոմոլիբդենի իրացման ծավալների կտրուկ աճով՝ 524 մլն ՀՀ դրամից հասնելով 40.2 մլրդ ՀՀ դրամ: Արդյունքում, ներքին շուկայում ֆերոմոլիբդենի իրացման դրամային ծավալը գերազանցել է պղնձի դրամային ծավալը: Ինչպես արդեն նշվել է՝ ֆերոմոլիբդենի ներքին իրացման կտրուկ աճը պայմանավորված է եղել 2017թ.-ի «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ վաճառքի կառուցվածքի փոփոխությամբ, երբ արտահանման ծավալները համարյա զրոյացել և փոխարինվել են ներքին իրացմամբ: Ստորև ներկայացված է 2016թ. և 2017թ. ներքին շուկայում իրացված հիմնական հանքաքարերի համեմատական մասնաբաժինը ըստ ընդհանուր արժեքի:

Աղյուսակ 2.4.16 2016-2017թթ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի ներքին իրացման ծավալները և դրամական արժեքը

Ընկերության անվանումը	Ծավալը		Արժեքը, մլն ՀՀ դրամ	
	2016	2017	2016	2017
«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ (Մոլիբդեն, թմտ)	251	-	708	-
«Թեղուտ» ՓԲԸ (Մոլիբդեն, թմտ)	-	622	-	2,026
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ (Ֆերոմոլիբդեն, տոննա)	1,140	6,520	5,243	40,252
Ընդհանուր	-	-	5,951	42,278

Աղբյուրը՝ Ներքին իրացման մասին տեղեկությունները տրամադրվել են մետադական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

Աղյուսակ 2.4.17 2016-2017թթ. ոսկու ներքին իրացման ծավալները և դրամական արժեքը

Ընկերության անվանումը	Ոսկու հանքաքարի ծավալի չափման միավորը	Ծավալը		Արժեքը, մլն ՀՀ դրամ	
		2016	2017	2016	2017
«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	տոննա	10,855	-	493	-
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ (ոսկու և արծաթի համաձուլվածք)	գրամ	195,864	26,010	1,967	478
«Վայք Գոլդ» ՍՊԸ	կգ	-	26,700	-	6.7
Ընդհանուր	-	-	-	493	545

Աղբյուրը՝ Ներքին իրացման մասին տեղեկությունները տրամադրվել են մետադական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


2.5 Ընդերքի հետախուզում (պահանջ 3.1)

«ՀՀ ընդերքի մասին» օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) տալիս է երկրաբանական ուսումնասիրության հետևյալ ձևակերպումը՝

«Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտադին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները»:

Երկրաբանական ուսումնասիրության արդյունքում՝ գնահատված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկությունների արժանահավատությունը գնահատելուց հետո, լիազոր մարմինը իրավունք չունի բացահայտելու, եթե, օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ընդերքօգտագործողը լիազոր մարմնին է դիմում երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետը 1 տարի ժամկետով երկարաձգելու համար օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծ կազմելու և օրենսգրքով սահմանված կարգով արդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով: Երկրաբանական ուսումնասիրություններ կատարելուն ուղղված ներդրումները հանդիսանում են հանքարդյունաբերության ոլորտի զարգացման կարևոր նախապայման:

Գծապատկեր 2.5.1 Երկրաբանական աշխատանքների ծավալը 2010–2017թթ., մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ armstat.am

Երկրաբանական աշխատանքների իրականացման համար ներդրումները ծավալային կտրուկ աճ են գրանցել 2014թ.-ին, որը, մասնավորապես, կապված է ուսումնասիրությունների քանակի, ուսումնասիրությունների ծրագրերով նախատեսված և անցկացված լեռնային փորվածքների քանակի, ինչպես նաև ուսումնասիրությունների մանրակրկիտ հետախուզական փուլի ավարտի հետ: 2017թ.-ին նկատվել է սույն աշխատանքների ծավալային նվազում 2016թ.-ի համապատասխան տվյալի նկատմամբ 35%-ով:

Ըստ ԷԲՊՆ ամփոփ տեղեկատվության, 2017թ.-ին կատարված երկրաբանական ուսումնասիրությունների ճշգրտված ընդհանուր ծավալը կազմել է 353.4 մլն ՀՀ դրամ և 543.4 մլն ՀՀ դրամ՝ 2016թ.: Այդ աշխատանքները կատարվել են ընդերքօգտագործողների ֆինանսական միջոցների հաշվին: Առավել մանրամասն տեղեկատվություն ըստ ուսումնասիրությունների բնագավառների և աշխատափուլերի ներկայացված է ստորև:

Աղյուսակ 2.5.1 Երկրաբանական ուսումնասիրություններն ըստ բնագավառների և աշխատափուլերի, 2016թ., մլն ՀՀ դրամ³⁵

Բնագավառը	2016					
	Ընդամենը	Որոնողական	Որոնողա-գնահատողական	Նախնական հետախուզական	Մանրակրկիտ հետախուզական	Այլ աշխատանքներ
Գունավոր մետաղներ	21.3	21.3	-	-	-	-
Ազնիվ մետաղներ	472.8	225.9	-	247.0	-	-
Ոչ մետաղներ	4.2	-	-	-	1.9	2.3
Տարածաշրջանային երկրաբանական, երկրաֆիզիկական, հիդրոերկրաբանական աշխատանքներ	4.5	4.5	-	-	-	-
Հիդրոերկրաբանական և ինժեներա-երկրաբանական աշխատանքներ	0.3	-	-	-	0.3	-
Այլ աշխատանքներ	40.2	20.8	-	-	0.7	18.8
Երկրաբանական ուսումնասիրությունների ընդհանուր ծավալը	543.4	272.5	-	247.0	2.9	21.0

³⁵ **Որոնողական աշխատանքներ**՝ Այս փուլի նպատակը հանքանյութերի կանխատեսման համար բավարար երկրաբանական հիմք ձևավորելն է: Այս փուլի արդյունքում որոշվում են կառուցներ, ձևավորումներ և տարածքներ, որոնք նպաստավոր են հանքանյութերի հայտնաբերման համար, ստեղծվում են 1:1 500 000 – 1:50 000 մասշտաբի երկրաբանական քարտեզներ, գնահատվում են P2 և P3 դասերին պատկանող հանքանյութերը:

Որոնողա-գնահատողական՝ Այս փուլում իրականացվում է տարածքի երկրաբանական ուսումնասիրությունը՝ հայտնաբերվում են հանքանյութերի դրսևորումները: Այս փուլի արդյունքը տեղանքի երկրաբանական կառուցվածքի, հեռանկարային տարածքների և P₁ և P₂ դասի ռեսուրսների համապարփակ ուսումնասիրությունն է:

Նախնական հետախուզական՝ Այս փուլում իրականացվում է հանքավայրի արդյունաբերական արժեքի գնահատում: Այս փուլի արդյունքն է հանդիսանում հանքավայրի արդյունաբերական արժեքի, պահուստների գնահատման և C₁, C₂ և P₁ դասերին պատկանող ռեսուրսների վերաբերյալ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն է:

Մանրակրկիտ հետախուզական՝ Այս փուլում իրականացվում է հանքավայրի երկրաբանական կառուցվածքի, հանքանյութերի որակական և տեխնոլոգիական հատկությունների և տեղանքի հիդրոերկրաբանական ու ճարտարագիտա-երկրաբանական պայմանների ուսումնասիրություն: Արդյունքում ստանում ենք հանքավայրերի զարգացման և ըստ A, B, C₁, C₂ կատեգորիաների հանքանյութերի պաշարների պայմաններ և տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:

Աղյուսակ 2.5.2 Երկրաբանական ուսումնասիրություններն ըստ բնագավառների և աշխատափուլերի, 2017թ., մլն ՀՀ դրամ

Բնագավառը	2017			
	Ընդամենը	Որոնողական	Նախնական հետախուզական	Մանրակրկիտ հետախուզական
Ազնիվ մետաղներ	242,7	242,7	-	-
Ոչ մետաղներ	48,6	48,6	-	-
Տարածաշրջանային երկրաբանական, երկրաֆիզիկական, հիդրոերկրաբանական աշխատանքներ	56,4	56,4	-	-
Այլ աշխատանքներ	5,7	5,7	-	-
Երկրաբանական ուսումնասիրությունների ընդհանուր ծավալը	353,4	353,4	-	-

Աղբյուրը՝ *armstat.am*

2010–2017թթ. ընթացքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների կարևոր ծրագրերի նկարագրություն

2010-2017թթ. ընթացքում ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերում իրականացվող երկրաբանական ուսումնասիրության ծրագրերից կարևորվում են հետախուզական աշխատանքների վերջին փուլի ծրագրերը, քանի որ մեծ է իրականացված աշխատանքների դրական արդյունքների (օգտակար հանածոների պաշարների գնահատման և հաստատման) ստացման հավանականությունը: Այդ աշխատանքներն իրականացվել են ներքոշարադրյալ հանքավայրերում՝

- ▶ ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայր՝ պաշարները գնահատվել են 2015թ.-ին,
- ▶ ՀՀ Արագածոտնի մարզի Ցիցքարի ոսկու հանքավայր՝ պաշարները գնահատվել են 2016թ.-ին,
- ▶ ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքավայր՝ պաշարները գնահատվել են 2014թ.-ին:

Կարևորվում է նաև ընդերքօգտագործման ոլորտում միջազգային լավագույն փորձ ունեցող կազմակերպությունների ՀՀ-ում ներգրավվածությունը, դրանք են.

- ▶ «Լիդիան Ինթերնեյշնլ» ԲԲԸ (Կանադա)՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայր,
- ▶ «Գեոմայնինգ» ՍՊԸ (որի մասնակիցն է «Դանդի Փրիշվ Մեթալզ ԻՆՔ» ընկերությունը՝ Կանադա)՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղի հանքերում:

Երկրաբանական ուսումնասիրությունների շրջանակներում իրականացվող այն աշխատանքները, որոնք օրենքով սահմանված կարգով, երկարաձգվել են համապատասխանաբար երեք անգամ (յուրաքանչյուր անգամ երկուական տարով), գտնվում են հետախուզման աշխատանքների վերջին փուլում: Հետևաբար, այդ աշխատանքները ունեն կարևորագույն նշանակություն, քանի որ առկա է մեծ հավանականություն, որ որպես վերջնական արդյունք կհաստատվեն համապատասխան պաշարներ:

Հավելված 13-ում ներկայացված աղյուսակում արտացոլված է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Սույն տեղեկատվությունը տրամադրվել է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման շրջանակներում և հասանելի է <http://minenergy.am/page/569> կայքում: Ըստ այդ տեղեկատվության, աշխատանքների հետախուզման փուլում են գտնվում «Գեռոեյդ» ՓԲԸ-ի, «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի, «Գեոմայնինգ» ՍՊԸ-ի և «Գի Մետալզ Ինվեսթմենթ Լիմիտեդ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող ուսումնասիրությունները:

2.6 Հիմնադրամներին հատկացվող նվիրատվություններ (պահանջ 5.1)

2016-2017թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հիմնադրամներին հատկացվող նվիրատվությունները

2017թ.-ի հոկտեմբերի 10-ին³⁶ կայացած նիստի ժամանակ քննարկվել է ԱՃԹՆ-ի զեկույցում հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից հիմնադրված (դրանց փոխկապակցված) հիմնադրամների ընդգրկման և հաշվետվությունների ներկայացման հարցը: Նշվեց, որ հիմնադրամների ընդգրկման պարագայում պետք է իրականացվեն օրենսդրական փոփոխություններ, պետք է սահմանվեն այդ հիմնադրամների ընտրության հստակ չափանիշները: Առաջարկվեց բավարարվել ընկերությունների կողմից հիմնադրամներին կատարված վճարումների բացահայտմամբ: Որոշվեց, որ ընկերությունները կամավորության սկզբունքով տեղեկատվություն ներկայացնեն իրենց կողմից կատարած վճարումների մասին՝ ըստ հիմնադրամների, ըստ հասարակական կազմակերպությունների և ըստ ֆիզիկական անձանց, վերջինի դեպքում ազրեգացված, ոչ անվանական կերպով (Հավելված 5): Ընկերությունների պայմանագրային պարտավորությունները առավել մանրամասն նկարագրված են 3.3 բաժնում:

Համաձայն ընկերությունների կողմից ստացված ԱՃԹՆ հաշվետվությունների, ընդհանուր առմամբ, ընդերքօգտագործողի կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները կազմել են 2,420,935,190 ՀՀ դրամ 2016թ. և 3,433,107,421 ՀՀ դրամ՝ 2017թ.-ին, որից ֆիզիկական անձանց նվիրատվությունը կազմել է 87,941,278 ՀՀ դրամ 2016թ.-ին և 63,698,998 ՀՀ դրամ 2017թ.-ին, իսկ հիմնադրամներին տրամադրված նվիրատվությունը կազմել է 1,626,277,500 ՀՀ դրամ 2016թ.-ին և 2,336,848,968 ՀՀ դրամ 2017թ.-ին:

Ելնելով ԱՃԹՆ-ի շրջանակներում հաշվետու հանքարդյունահանող ընկերությունների³⁷ կողմից ստացված հաշվետվությունների տվյալներից՝ առանձնացվել են այն բոլոր հանքարդյունահանող ընկերությունները, որոնց կողմից հիմնադրամներին կատարվել են բարեգործական հատկացումներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամներին նվիրատվություններ կատարած ընկերություններն այնքան էլ շատ չէին (6 ընկերություն՝ 2016թ.-ին, 5 ընկերություն՝ 2017թ.-ին)՝ Անկախ ադմինիստրատորի կողմից որոշում է կայացվել վերլուծությունն իրականացնել ԱՃԹՆ-ի հաշվետվություններում նշված բոլոր հիմնադրամների կտրվածքով, բացառությամբ այն ընկերությունները, որոնց նվիրատվությունների չափը չի գերազանցել համադրման նպատակներով սահմանված 1 մլն ՀՀ դրամ էականության շեմը (1 ընկերություն՝ 2016թ.-ին, 0՝ 2017թ.-ին): Ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության պատշաճության հաստատման նպատակով իրականացվել է ԱՃԹՆ-ի հաշվետու ընկերության կողմից նվիրատվություն ստացած հիմնադրամների հրապարակային հաշվետվությունների ուսումնասիրություն:

³⁶https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_10_10_%202017.pdf

³⁷2016թ. համար հաշվետվություն ներկայացրած ընկերությունները 22 են եղել, իսկ 2017թ. համար՝ 26-ը: Մանրամասն տվյալների համար խնդրում ենք դիտարկել Աղյուսակներ 4.1.1 և 4.1.2: Ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվությունները հրապարակված են ՀՀ ԱՃԹՆ պաշտոնական կայքում՝ www.eiti.am:

Համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի, յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, հիմնադրամը <http://www.azdarar.am> հղմամբ՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվող անձի (աուդիտորի) եզրակացությունը: Աուդիտորական եզրակացության հրապարակումը պարտադիր է, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 մլն ՀՀ դրամը: Հիմնադրամի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե հաշվետու տարվա ընթացքում նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից: Հիմնադրամները «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը: Սահմանված ժամկետում հաշվետվությունը չհրապարակելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն այդ մասին չծանուցելու կամ հաշվետվությունը թերի հրապարակելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ: «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաշվետվության հրապարակման և ծանուցման պահանջը պատշաճ չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը դիմում է դատարան՝ հիմնադրամը լուծարելու պահանջով:

Անկախ ադմինիստրատորը <http://www.azdarar.am> կայքում իրականացրել է հիմնադրամների կողմից 2016թ.-ին և 2017թ.-ին հրապարակված հաշվետվությունների որոնում և որոնման արդյունքում գտնված բոլոր հաշվետվություններում ստուգել է հանքարդյունահանող նվիրատու ընկերությունների ու նրանց կողմից նվիրաբերված գումարների առկայությունը: Գտնված բոլոր հաշվետվությունների հղումները ներկայացված են ստորև աղյուսակում: Ընկերությունների կողմից ԱՃԹՆ հաշվետվություններում ներկայացված և հիմնադրամների կողմից իրենց հրապարակային հաշվետվություններում ներկայացված տվյալները համադրվել են: Այն դեպքերում, երբ հնարավոր չի եղել գտնել ընկերության անվանումը և նվիրաբերված գումարի չափը հիմնադրամի հաշվետվության մեջ՝ պայմանավորված հիմնադրամի կողմից ոչ մանրամասն ներկայացված նվիրատուների ցանկով (մի քանի հիմնական նվիրատուներից հետո, մնացածը ներկայացվել են «այլ նվիրատուներ» հոդվածով), աղյուսակում կատարվել է «Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված» նշում: Նվիրատուների ցանկի ներկայացումը որևէ կերպ չի կարգավորվում օրենքով (արդյոք անհրաժեշտ է՝ հրապարակել բոլոր նվիրատուների տվյալներն առանց բացառության, թե միայն էականները՝ մնացածը հոդվածում ներկայացնելով որպես «այլ

նվիրատուներ», ո՞րն է էականության սահմանումը և այլն), ինչը մեր կողմից կատարվող վերլուծության տեսանկյունից որոշակի սահմանափակումներ է առաջացրել: Հիմնադրամի և ընկերության կողմից ներկայացված տվյալների միջև տարբերությունները լրացուցիչ պարզաբանվել են՝ ելնելով նպատակահարմարության սկզբունքից:

Նկարագրված աշխատանքների ամփոփ արդյունքները ստորև ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 2.6.1 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կատարած վճարումները հիմնադրամներին 2016թ.

Ընկերություններ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության, 2016թ.	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության 2016թ.	Տարբերություններ, 2016թ.	Հիմնադրամների կողմից հրապարակված հաշվետվության հղում 2016 թ. .,	Մեկնաբանություն աուդիտի վերաբերյալ	Այլ մեկնաբանություններ
«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	«Նվիրիր կյանք» բարեգործական հիմնադրամ	1,000,000	Հասանելի չէ	կիրառելի չէ	https://www.azdar.am/announcements/org/45/00254601/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Հայաստան համահայկական հիմնադրամ	1,000,000	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված	կիրառելի չէ	https://www.azdar.am/announcements/org/45/00288142/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Լույս մշակության, գիտակրթական հիմնադրամ	600,000,000	600,000,000	-	https://www.azdar.am/announcements/org/131/00257041/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	-
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Հայաստան համահայկական հիմնադրամ	168,000,000	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված	կիրառելի չէ	https://www.azdar.am/announcements/org/45/00288142/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Սահմանամերձ համայնքների զարգացման հիմնադրամ	150,000,000	Հասանելի չէ	կիրառելի չէ	կիրառելի չէ		Հիմնադրամը գրանցված է ԱՀ-ում, հաշվետվություն առկա չէ
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Սուրիկ Խաչատրյան բարեգործական հիմնադրամ	5,000,000	5,000,000	-	https://www.azdar.am/announcements/cat/131/00258434/	Եզրակացությունը բացակայում է	-
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Կապան բարեգործական հիմնադրամ	2,119,000	2,119,000	-	https://www.azdar.am/announcements/org/131/00256015/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	-
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ԲՀ	659,800,000	679,045,000	19,245,000	https://www.azdar.am/announcements/org/131/00300517/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Ոչ էական Ըստ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ մեկնաբանության, փոխանցումն իր էությամբ նվիրատվություն չի եղել, այլ հանդիսանում է

Ընկերություններ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության, 2016թ.	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության 2016թ.	Տարբերություններ, 2016թ.	Հիմնադրամների կողմից հրապարակված հաշվետվության հղում 2016 թ. ,	Մեկնաբանություն անուղիտի վերաբերյալ	Այլ մեկնաբանություններ
							ԶՊՄԿ աշխատակիցների կամահայտնությամբ վերջիններիս աշխատատեղից պահված և իրենց անունից բարեգործական նպատակով այլ հիմնադրամի նկատմամբ հաշվեգրված գումար, հետևապես, քննարկվող իրավիճակում ԶՊՄԿ-ն Նվիրատու չի հանդիսանում:
«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ	ՀՀ անտառների վերականգման և զարգացման հիմնադրամ	10,000,000	10,000,000	-	https://www.azdar.am/announcements/org/131/00258284/	Անուղիտորական եզրակացություն ըստ ՀՀ օրենսդրության հաշվետվությունների	
«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Հայաստանի զարգացման հիմնադրամ	11,858,500	11,858,500	-	https://www.azdar.am/announcements/org/131/00304480/	Անուղիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	
«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Առողջ համայնքներ հիմնադրամ	4,000,000	4,000,000	-	https://www.azdar.am/announcements/cat/45/00255728/	Եզրակացությունը բացակայում է	Ոչ էական
«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ	1,500,000	1,500,000	-	https://www.azdar.am/announcements/org/131/00259122/	Անուղիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Հիմնադրամը հաշվետվության մեջ նշել է ԳԵՈԹԻՄ ՓԲԸ
«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ	12,000,000	12,000,000	-	https://www.azdar.am/announcements/org/131/00259122/	Անուղիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	

Աղյուսակ 2.6.2 Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կատարած վճարումները հիմնադրամներին 2017թ.

Դոնորներ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության 2017 թ.	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության 2017 թ.	Տարբերություններ 2017 թ.	Հիմնադրամների կողմից հրապարակված հաշվետվության հղում 2017 թ.	Մեկնաբանություն աուդիտի վերաբերյալ	Այլ մեկնաբանություններ
«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	«Նվիրիլ կյանք» բարեգործական հիմնադրամ	1,000,000	Հասանելի չէ	կիրառելի չէ	https://www.azdarar.am/announcements/org/131/00359230/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	Գարի Քեսայան Մշակութային հիմնադրամ	3,500,000	3,500,000	-	https://www.azdarar.am/announcements/org/131/00364344/	Եզրակացությունը բացակայում է	-
«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	Արագիլ վերարտադրողական բժշկության աջակցություն	2,000,000	2,000,000	-	https://www.azdarar.am/announcements/org/131/00360146/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	-
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Լույս մշակութային, գիտակրթական հիմնադրամ	650,000,000	650,000,000	-	https://www.azdarar.am/announcements/org/131/00361579/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	-
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Հայաստան համահայկական հիմնադրամ	168,071,750	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված	կիրառելի չէ	https://www.azdarar.am/announcements/cat/133/00383980/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Հայաստանի զարգացման նախաձեռնություններ Հիմնադրամ	24,329 500	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված	կիրառելի չէ	https://www.azdarar.am/announcements/cat/115/00361728/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ	335,000,000	349,369,944	14,369,944	https://www.azdarar.am/announcements/org/131/00362438/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Ոչ էական Ըստ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ մեկնաբանության, 14,369,944 հանդիսացել է ոչ նյութական արժեքների տեսքով նվիրատվություն, այդ պատճառով չի արտացոլվել հիմնադրամի հաշվետվությունում:

Դոնորներ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության 2017 թ.	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության 2017 թ.	Տարբերություններ 2017 թ.	Հիմնադրամների կողմից հրապարակված հաշվետվության հղում 2017 թ.	Մեկնաբանություն աուդիտի վերաբերյալ	Այլ մեկնաբանություններ
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Քրոնիմետ բարեգործական հիմնադրամ	145,000,000	145,000,000	-	https://www.azdarar.am/announcements/org/131/0360718/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	-
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ԲՀ	945,000,000	945,000,000	-	https://www.azdarar.am/announcements/org/131/0389008/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Ոչ էական
«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	«Նվիրիր կյանք» բարեգործական հիմնադրամ	1,000,000	Հասանելի չէ	կիրառելի չէ	https://www.azdarar.am/announcements/org/131/0359230/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Առողջ համայնքներ հիմնադրամ	16,941,990	13,000,000	(3,941,990)	https://www.azdarar.am/announcements/org/131/0361150/	Եզրակացությունը բացակայում է	Ոչ էական
«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ	1,500,000	1,500,000	-	https://www.azdarar.am/announcements/org/131/0361953/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Հիմնադրամը հաշվետվության մեջ նշել է ԳԵՈԹԻՄ ՓԲԸ
«ԿԱՊԱՆԻ ԼԵՆԻՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	«Նվիրիր կյանք» բարեգործական հիմնադրամ	1,000,000	Հասանելի չէ	կիրառելի չէ	https://www.azdarar.am/announcements/org/131/0359230/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Տվյալները մանրամասնությամբ չեն ներկայացված
«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆ ՍՊԸ	Գագիկ Ծառուկյան Բարեգործական հիմնադրամ	42,505,728	133,000	42,372,728	https://www.azdarar.am/announcements/org/131/0360305/	Աուդիտորական եզրակացություն ըստ ՖՀՄՍ հաշվետվությունների	Հիմնադրամը նվիրաբերությունը իր հաշվետվության մեջ դասակարգել է որպես ֆիզիկական անձից ստացված

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի համաձայն, եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում

հրապարակել հաշվետվությունը: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն, եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է 5 մլն և ավելի ՀՀ դրամի չափով, ապա, օրենքով սահմանված կարգով, պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան մինչև հաջորդող տարվա մայիսի 15-ը, հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության ժողովի ընտրած Անկախ ադմինիստրատորի կողմից: Սույն օրենքն ուժի մեջ է մտել 2017թ.-ի հունիսի 1-ից. հետևաբար, հասարակական կազմակերպությունների 2016-2017թթ. հաշվետվությունները հասանելի չեն վերլուծության և հաշվետու ընդերքօգտագործողների կողմից ներկայացված հաշվետվությունների տվյալների հետ համադրման համար: Անկախ ադմինիստրատորը սահմանափակել է վերլուծությունը՝ դիտարկելով հիմնադրամներին տրամադրված նվիրատվությունները:

Ստորև աղյուսակում ներկայացվում է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ ներկայացված ըստ ընկերությունների ագրեգացված մակարդակի:

Աղյուսակ 2.6.3 Ընդերքօգտագործողի կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ՝ ներկայացված ըստ ընկերությունների (համաձայն ընկերությունների ԱՃԹՆ հաշվետվությունների), ՀՀ դրամ

	2016		2017	
	Ֆինանսական	ոչ ֆինանսական	Ֆինանսական	ոչ ֆինանսական
«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	5,512,682	-	6,135,000	1,530,664
«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	100,000	-	367,000	-
«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	450,000	-	241,429,000	-
«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	10,614,345	968,833	23,451,143	1,859,300
«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	9,774,802	-	31,007,615	-
«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ	5,000,000	-	-	-
«ՄԵՂՐԱՁՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	1,680,000	-	400,000	-
«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	30,000	-	16,493,500	-
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	669,920,000	2,665,750	693,194,302	16,626,921
«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ	-	-	-	65,010
Ընդհանուր	703,081,829	3,634,583	1,012,477,560	20,081,895

3

ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԵՐԸ

3. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

3.1 Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրությունը և ֆիսկալ ռեժիմը (պահանջ 2.1)

Ա. Իրավական դաշտը և իրավական ակտերի նկարագրություն

ՀՀ-ում ընդերքը պատկանում է պետությանը և համարվում վերջինիս բացառիկ սեփականությունը: Պետության այս իրավունքն ամրագրված է սահմանադրական մակարդակով. այն տեղ է գտել ՀՀ Սահմանադրության վերջին խմբագրության (գործում է 2015թ. դեկտեմբերի 22-ից) 10-րդ հոդվածի 2-րդ մասում³⁸: Այս դրույթն արտացոլված է նաև ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող կենտրոնական փաստաթղթում՝ Ընդերքի մասին օրենսգրքում³⁹ (այսուհետ՝ «Օրենսգիրք»):

Ընդերքօգտագործողներին ընդերքը տրամադրվում է միայն օգտագործման իրավունքով՝ երկրաբանական ուսումնասիրությունների (ներառյալ՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների) կամ օգտակար հանածոների արդյունահանման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակներով:

2012թ. հունվարի 1-ից (Օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո) Հայաստանում ընդերքօգտագործման և կոնցեսիոն պայմանագրերի ռեժիմից անցում է կատարվել միայն ընդերքօգտագործման պայմանագրերի ռեժիմի: Չնայած դրան, մի շարք օրենսդրական ակտեր դեռ խոսում են կոնցեսիոն պայմանագրերի մասին: Մասնավորապես, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի համաձայն «[օ]տարերկրյա ներդրողներին վերարտադրվող և չվերարտադրվող բնական ռեսուրսների շահագործման իրավունքի վերապահումն իրականացվում է կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա, որոնք օտարերկրյա ներդրողների հետ կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ դրա համար լիազորված պետական այլ մարմնի կողմից՝ կոնցեսիաների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»⁴⁰:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման և/կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման իրավունքները ընդերքօգտագործողներին տրամադրվում են համապատասխանաբար՝ (i) օգտակար հանածոների արդյունահանման

³⁸ՀՀ Սահմանադրություն՝ փոփոխություններով (ընդունված 2015թ. դեկտեմբերի 6-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

³⁹Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք, թիվ ՀՕ-280-Ն (ընդունված 2011թ. նոյեմբերի 28-ին), հոդ. 11(2), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126310>

⁴⁰«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-115 (1994թ. հուլիսի 31), հոդ. 21, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>

նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությամբ, ընդերքօգտագործման պայմանագրերով և (ii) օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերանշակման թույլտվությամբ, ընդերքօգտագործման պայմանագրերով ու լեռնահատկացման ակտով (օրենսդրությունը սահմանում է նաև ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների ռեժիմը, որի շրջանակներում իրականացվող ուսումնասիրությունները չեն կապվում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակների հետ. համապատասխան իրավունքը տրամադրվում է ԷԲՊՆ-ի կողմից տրվող ընդերքօգտագործման համաձայնությամբ և պայմանագրով): Օգտակար հանածոյի արդյունահանման դիմաց ընդերքօգտագործողների կողմից վճարվում է ռոյալթի, որը համարվում է բնօգտագործման վճար:

Այս իրավահարաբերություններն իրենց էությամբ մասնավոր իրավական (*jure gestionis*) հարաբերություններ են, ինչը հաստատվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից⁴¹: Չնայած վերոգրյալին, ռոյալթիների հաշվարկման և հարկադրման առնչությամբ կիրառական պրակտիկան մինչ օրս բացառապես հանրային-իրավական է:

Ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման իրավունքի դիմաց վճարվում է նաև բնապահպանական հարկ (մինչև Հարկային օրենսգիրքը՝ բնապահպանական վճար), շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար, պետական տուրք և մշտադիտարկումների իրականացման վճար, որոնք ռոյալթիի հետ միասին համարվում են ընդերքօգտագործման վճարներ:

Ընդերքօգտագործման թույլտվությունները տրամադրվում են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ ԷԲՊՆ) կողմից՝ դիմումների հիման վրա: ԷԲՊՆ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ բնապահպանության նախարարության փորձագիտական եզրակացությունների հիման վրա տրամադրում է ընդերքօգտագործման իրավունք՝ ՀՀ անունից մասնավոր սուբյեկտների հետ կնքելով համապատասխան պայմանագրերը:

Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը (օտարումը) երրորդ անձանց հնարավոր է միայն ԷԲՊՆ համաձայնությամբ, իսկ իրավունքի տրամադրումը երրորդ անձանց արգելվում է: Չնայած վերոգրյալի, ԷԲՊՆ կողմից որևէ վերահսկողության չի ենթարկվում ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների բաժնեմասերի կամ բաժնետոմսերի օտարումը երրորդ անձանց, ինչի արդյունքում փաստացի ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը հնարավոր է իրավաբանական անձի մասնակիցների/բաժնետերերի փոփոխության արդյունքում:

Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումն ինքնին չի երաշխավորում օգտակար հանածո պարունակող հողամասերի հասանելիությունը իրավունքը ձեռք բերած սուբյեկտների համար, այն չի երաշխավորում նաև ջրօգտագործման թույլտվության ձեռքբերումը: Օգտակար հանածո պարունակող ընդերքի մակերեսին գտնվող հողամասեր մուտքն ընդերքօգտագործող սուբյեկտը

⁴¹«Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի և «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի դիմումների հիման վրա «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7 և 19 հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում», թիվ ՍԴՈ-816 (2009թ. հուլիսի 18), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52844>:

ձեռք է բերում անձամբ՝ համապատասխան հողամասերի սեփականատերերի հետ բանակցությունների միջոցով՝ դրանք գնելու, վարձակալելու, սերվիտուտի իրավունքի միջոցով: Նմանապես, ընդերքօգտագործողն առանձին դիմում է ջրօգտագործման իրավունքի ձեռքբերման համար: Զեկույցի պատրաստման ընթացքում ընդերքօգտագործողների կողմից հնչեցվել են մտահոգություններ առ այն, որ ընդերքօգտագործման համար կենսական նշանակություն ունեցող այս հարցերի տարանջատված կարգավորումը և կախումը երրորդ անձանց գործողություններից պրակտիկ խնդիրներ է ներկայացնում թույլտվություն ստացած ընկերությունների կողմից իրենց իրավունքների արդյունավետ իրականացման համար:

Ընդերքօգտագործողներն իրենց գործունեության առնչությամբ հաշվետու են մի շարք պետական մարմինների և գերատեսչությունների:

Մասնավորապես, 2018թ.-ից ի վեր մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողներն՝ իրենց գործունեության առնչությամբ, ԷԲՊՆ և ՀՀ կառավարության աշխատակազմ տարեկան հրապարակային հաշվետվություն են ներկայացնում, որը ներառում է տեղեկատվություն արդյունահանման և արտահանման տարեկան ծավալների, վճարված պետական և տեղական հարկերի և վճարների, համայնքային արտաբյուջեներ կատարած վճարների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ, շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին կատարված հատկացումների և մշտադիտարկումների իրականացման վճարների վերաբերյալ, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկների վերաբերյալ, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում պարտավորությունների վերաբերյալ:⁴²

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած բոլոր անձինք ԷԲՊՆ են ներկայացնում օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվություններ⁴³: Նշված հաշվետվությունների (ինչպես նաև հաստատված պաշարների) հիման վրա կազմվում է օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռը:⁴⁴ Հաշվետվությունները և պաշարների պետական հաշվեկշիռը հրապարակային չեն:

Սկսած 2018թ. հունվարի 1-ից⁴⁵, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձինք ընդերքի օգտագործման հետ կապված, Բնապահպանության նախարարության են ներկայացնում ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների

⁴²Օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 9(3): «Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողի և պետական մարմինների կողմից հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու վերաբերյալ» կարգ, ՀՀ կառավարության որոշում N 666-Ն (2018թ. հունիսի 8), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123259>:

⁴³*Ibid.*, հոդ. 15(2)(7)

⁴⁴*Ibid.*, հոդ. 63(9)

⁴⁵«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-214-Ն (2017թ. նոյեմբերի 17):

նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ *եռամսյակային կտրվածքով հաղորդում*, իսկ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը՝ *ամփոփ տարեկան հաշվետվություն*⁴⁶: Կայքի առկայության դեպքում ամփոփ տարեկան հաշվետվությունը պետք է տեղադրվի նաև կայքում⁴⁷: Հաշվետվությունները հրապարակվում են նաև Բնապահպանական նախարարության կայքում⁴⁸:

Ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին վճարված և ընդերքօգտագործողներին վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը, Օրենսգրքի համաձայն ենթակա է հրապարակման Բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվա ավարտին հաջորդող ամսվա 30-ը⁴⁹:

Այդուհանդերձ, չնայած հաշվետվողականության հետ կապված օրենսդրական կարգավորումներին, վերջիններս չեն տարածվում ոլորտում ներառված բոլոր ընկերությունների վրա: Մասնավորապես, ոլորտում ներառված են և ռոյալթի վճարող են նաև խտանյութ արտադրողները (ծովարանները)⁵⁰՝ անկախ ընդերքօգտագործող լինելու հանգամանքից: Սակայն, Օրենսգրքի կարգավորումները չեն կիրառվում նման գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ (այդ ընկերությունները դուրս են Օրենսգրքի կարգավորման սիրույթից)⁵⁰: Հաշվի առնելով ծովարանների գործունեությունը կարգավորող առանձին օրենքի բացակայության հանգամանքը՝ նպատակահարմար է ոլորտում ներգրավված սուբյեկտների հաշվետվողականության հետ կապված հարցերը կարգավորել առանձին օրենքով՝ սահմանելով հաշվետու սուբյեկտների շրջանակը, հաշվետվողականության ծավալները և ընթացակարգերը (կամ սահմանել ընթացակարգերն ընդունող սուբյեկտները), ինչպես նաև լիազոր մարմինների իրավասության ծավալները: Այդ նպատակով առաջարկվում է ծովարանների հետևյալ սահմանումը.

⁴⁶ *Ibid.*, հոդ. 59(3)(19): ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի 437-Ն որոշմամբ հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևի համաձայն, տարեկան հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը (պայմանագրային) տարածվում է օգտակար հանածոների արդյունահանման մեջ ներգրավված բոլոր ընկերությունների վրա (հոդ. 3.4.27 և 5.4), ինչն անմիջականորեն չի բխում Օրենսգրքի տեքստից:

⁴⁷ *Ibid.*

⁴⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.mnp.am/am/pages/233>

⁴⁹ *Ibid.*, հոդ. 69(6)

⁵⁰ Օրենսգրքը, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 1(1): Վերջինս սահմանում է՝

«Սույն օրենսգրքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները»:

«Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրերից արդյունահանված հումքից մետաղի խտանյութ կամ ծուլվածք արտադրող կազմակերպություններ»:

Վերաբերելի իրավական դաշտն իր մեջ ներառում է մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, որոնք մանրամասն նկարագրված են հաջորդ բաժնում: Ելակետային փաստաթղթերի համառոտ նկարագիրը ներկայացված է ստորև:

ՀՀ Սահմանադրության գործող խմբագրությունը, ինչպես նշվեց վերը, արձանագրում է պետության բացառիկ սեփականությունն ընդերքի նկատմամբ⁵¹:

Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքը ոլորտը կարգավորող առաջնային նորմատիվ իրավական ակտն է: Վերջինս կարգավորում է ընդերքօգտագործման թույլտվությունների ստացման, պայմանագրերի կնքման, ոլորտի վերահսկողության առնչությամբ ելակետային հարցերը, սահմանում լիազոր մարմինների իրավասությունների շրջանակները: Օրենսգիրքն է կարգավորում նաև ընդերքօգտագործման իրավունքի դիմաց կատարվող վճարումների (ընդերքօգտագործման վճարների) հաշվարկման, կիրառման և կիրարկման առնչությամբ առաջացող իրավահարաբերությունների ելակետային հարցերը:

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգիրքը⁵² հարկային իրավահարաբերությունները կարգավորող համալիր իրավական ակտ է, որը կարգավորում է հարկերի տեսակները, դրույքաչափերը, հարկման բազաները, հարկային արտոնությունները և այլ հարցեր: Այն կարգավորում է նաև բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների (ռոյալթիների) առնչությամբ առաջացող հարաբերությունները:

Մինչև վերջինիս ուժի մեջ մտնելը հարկային իրավահարաբերությունները կարգավորվել են ոլորտային օրենքներով («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը⁵³, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը⁵⁴, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը⁵⁵ և այլն), իսկ բնապահպանական և բնօգտագործման վճարների առնչությամբ իրավահարաբերությունները կարգավորվել են նաև «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով⁵⁶ և «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով⁵⁷ (գործում է մասամբ):

⁵¹ՀՀ Սահմանադրություն՝ փոփոխություններով, հղում՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>, հոդ. 10(2):

⁵²ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՕ-165-Ն (ընդունված 2016թ. հոկտեմբերի 4-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126329>:

⁵³«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-246-Ն (ընդունված 2010թ. դեկտեմբերի 22-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118444>:

⁵⁴«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-155 (ընդունված 1997թ. սեպտեմբերի 30-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118416>:

⁵⁵«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-118 (ընդունված 1997թ. մայիսի 14-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118406>:

⁵⁶«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-270 (ընդունված 1998թ. դեկտեմբերի 28-ին) հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87833>:

⁵⁷«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-245-Ն (ընդունված 2006թ. դեկտեմբերի 20-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118446>:

Ընդերքօգտագործման գործունեության հետ առնչվող բնապահպանական հարցերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով⁵⁸, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով⁵⁹, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով⁶⁰ և այլն:

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման դիմաց վճարվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով⁶¹:

ՀՀ ջրային օրենսգիրքը⁶² կարգավորում է ջրօգտագործման առնչությամբ առաջացող իրավահարաբերությունները, մասնավորապես, ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար հայտերի ներկայացման կարգը, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման, վավերության, ստանալու գործընթացի հետ կապված իրավահարաբերությունները, մերժման հիմքերը, ստորերկրյա քաղցրահամ ջրերի ջրօգտագործման առանձնահատկությունները և այլն:

Իսկ ՀՀ հողային օրենսգիրքը⁶³ կարգավորում է հողօգտագործման առնչությամբ առաջացող իրավահարաբերությունները, ինչպես նաև արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի ռեժիմը, որը ներառում է նաև ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերը: Հողային օրենսգիրքն ամրագրում է նաև ընդհանուր արգելք, որի համաձայն «*[ընդերքօգտագործողներին նոր հողամասեր չեն կարող տրամադրվել, եթե նրանց գործունեության արդյունքում նախկինում խախտված հողերը վերականգնման նախագծերին համապատասխան չեն վերականգնվել]*»⁶⁴:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը⁶⁵ սահմանում է ընդհանուր իրավական համատեքստը, որի շրջանակներում գործում են ընդերքօգտագործման պայմանագրերը (ինչպես նշվեց, դրանց շրջանակներում ձևավորվող իրավահարաբերություններն իրենց էությամբ մասնավոր իրավահարաբերություններ են):

Վերաբերելի օրենսդրության շրջանակների մեջ ներառված են նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը⁶⁶ և «Բաժնետիրական

⁵⁸«Թափոնների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-159-Ն (ընդունված 2004թ. նոյեմբերի 24-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122729>:

⁵⁹«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-110-Ն (ընդունված 2014թ. հունիսի 21-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93148>:

⁶⁰«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-82-Ն (ընդունված 2005թ. ապրիլի 11-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120771>:

⁶¹«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-186 (ընդունված 1997թ. դեկտեմբերի 27-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123571>:

⁶²ՀՀ ջրային օրենսգիրք, ՀՕ-373-Ն (ընդունված 2002թ. հունիսի 4-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121550>:

⁶³ՀՀ հողային օրենսգիրք, թիվ ՀՕ-185 (ընդունված 2001թ. մայիսի 2-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126320>:

⁶⁴*Ibid.*, հոդված 13(6):


⁶⁵ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239 (ընդունված 1998. մայիսի 5-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126332>:

⁶⁶«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-252 (ընդունված 2001թ. հոկտեմբերի 24-ին), հասանելի է հետևյալ հղումով՝

ընկերությունների մասին» ՀՀ օրենքը⁶⁷, քանի որ ՀՀ-ում գրանցված ընդերքօգտագործողներն իրենց կազմակերպահրավական ձևով բացառապես ՍՊԸ-ներ և ՓԲԸ-ներ են:

Վերջնական շահառուների վերաբերյալ առկա կարգավորումները բխում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի⁶⁸ և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի⁶⁹, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի⁷⁰:

Բ. Ֆիսկալ ռեժիմը. հարկային և ոչ հարկային հոսքերը, դրույքաչափերը



<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100223>:

⁶⁷«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-232 (ընդունված 2001թ. սեպտեմբերի 25-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122471>:

⁶⁸«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-169 (ընդունված 2001թ. ապրիլի 3-ին), հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121691>:

⁶⁹«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-80-Ն (ընդունված 2008թ. մայիսի 26-ին), հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126311>:

⁷⁰«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-172-Ն (ընդունված 2011թ. մայիսի 26-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121573>:

(i) Ընդերքօգտագործման վճարներ

«Ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 61-րդ հոդվածի համաձայն ընդերքօգտագործման վճարներն են՝ (i) բնապահպանական հարկը (մինչև Հարկային օրենսգրքի փոփոխությունը 2018թ.-ին՝ բնապահպանական վճար), (ii) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարը, (iii) մշտադիտարկումների իրականացման վճարը, (iv) բնօգտագործման վճարները, այդ թվում՝ ռոյալթին, և (v) ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրքը:

ա) Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար

Ընդերքօգտագործողների կողմից վճարվող ընդերքօգտագործման վճարների թվին է դասվում ռեկուլտիվացիոն վճարը, որի միջոցով համալրվում է կենտրոնական գանձապետարանում «Ընդերքօգտագործման նախարարության արտաբյուջետային հաշվում պահվող շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխը (այսուհետ՝ «Դրամագլուխ»): Այս առումով ռեկուլտիվացիոն վճարները ֆիսկալ ռեժիմի բաղկացուցիչ մաս չեն բառի բուն իմաստով, քանի որ չեն հանդիսանում բյուջետային վճարներ: Դրամագլխի գումարները օգտագործվում են հետևյալ նպատակներով՝

- ▶ ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարում.
- ▶ ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնված, բայց իր կողմից չիրականացված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարում.
- ▶ ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով բնությանը և շրջակա միջավայրին հասցված և նրա կողմից չհատուցված վնասների վերականգնում⁷¹:

Ընդերքօգտագործողին՝ իր կողմից կատարված հատկացումների չափով (սակայն ոչ ավել, քան կատարված հատկացումները)⁷², Դրամագլխից տրամադրվում են դրամական միջոցներ՝ նախագծով սահմանված ժամկետներում և կարգով՝ բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով⁷³: Ըստ ԱՃԹՆ-ի շրջանակներում ստացված հաշվետվությունների, հաշվետու ժամանակաշրջանում Բնապահպանության նախարարության կողմից Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից ընկերություններին հատկացումներ չեն կատարվել: Ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնված բնապահպանական աշխատանքների կատարման, ստանձնած և չիրականացված աշխատանքների կատարման, ինչպես նաև ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով բնությանը և շրջակա միջավայրին հասցված և նրա կողմից չհատուցված վնասների վերականգնման միջոցառումների կատարումից հետո Դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին⁷⁴:

⁷¹Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 69(3)

⁷²Ibid., հոդ. 69(4)

⁷³Ibid., հոդ. 70(1)

⁷⁴Ibid., հոդ. 69(5)

Հատկանշական է, որ Օրենսգիրքը որևէ կերպ չի սահմանում ո՛չ բնապահպանական աշխատանքների ծավալների, ո՛չ ընդերքօգտագործողի կողմից դրանք իրականացված լինելու որոշման չափանիշներ, ո՛չ շրջակա միջավայրին պատճառված վնասների գնահատման չափանիշներ, և ո՛չ էլ սահմանում է, թե որ սուբյեկտն է իրականացնում բնապահպանական աշխատանքների կատարման կամ շրջակա միջավայրին պատճառված վնասի գնահատում (գնահատող սուբյեկտի մասով տրամաբանական է ենթադրել, որ սուբյեկտը ԷԲՊՆ է, քանի որ ռեկուլտիվացիոն աշխատանքներ չկատարելու դեպքում հենց ԷԲՊՆ է ծանուցում ընդերքօգտագործողին և պահանջում իր կողմից սահմանված ժամկետում իրականացնել միջոցառումները⁷⁵):

Թեև առկա են կառավարության մի շարք որոշումներ, որոնք սահմանում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կարգեր⁷⁶, վերջիններս ընդունված են այլ օրենքների շրջանակներում, և դրանց կիրառելիությունը Օրենսգրքի շրջանակներում առաջացող իրավահարաբերությունների համատեքստում իրավական առումով վիճելի է:

Ըստ Օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի, ռեկուլտիվացիոն վճարը վճարվում է Օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված դեպքում և կարգով: 69-րդ հոդվածը, սակայն, չի քննարկում «դեպքեր» (օրենսդրական տեխնիկայի առումով շարադրանքը թերի է), այլ արձանագրում է.

«Օգտակար հանածո արդյունահանողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ»:

Ստացվում է՝ 69-րդ հոդվածով սահմանված «դեպքը» փաստացի «օգտակար հանածո արդյունահանող» լինելն է, նույնը՝ արդյունահանման իրավունք ունենալը և այն իրացնելը (ի տարբերակումն ընդերքօգտագործման մյուս՝ երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունենալուն և այն իրացնելուն):

Օրենսդիրը դրամագլխի համալրման վճարների չափի որոշման և դրամագլխի հետ կապված այլ իրավահարաբերությունների որոշակիացման իրավասությունը պատվիրակել է Կառավարությանը. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ հոդվածը սահմանում է.

«Դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը»:

⁷⁵Ibid., հոդ. 70(3)

⁷⁶Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգ», ՀՀ կառավարության որոշում N 764-Ն (ընդունված 2015թ. մայիսի 27-ին), Հավելված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99202>: «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ», ՀՀ կառավարության որոշում N 91-Ն (ընդունված 2005թ. փետրվարի 14-ին), Հավելված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13400>: «Զրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ», ՀՀ կառավարության որոշում 1110 (ընդունված 2003թ. օգոստոսի 14-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84631>: «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների», ՀՀ կառավարության որոշում N 1643-Ն (ընդունված 2017թ. դեկտեմբերի 14-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118387>:

Կառավարության համապատասխան՝ 2012թ. օգոստոսի 23-ի թիվ 1079-Ն որոշումը, որը հաստատում է «Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը» (այսուհետ՝ «Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգ»), սահմանում է, որ դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափը որոշվում է «նախագծով և (կամ) ծրագրով և (կամ) ընդերքօգտագործման պայմանագրով»⁷⁷: Իսկ բազային չափը, ըստ Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգի, «ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեք[ն]» է⁷⁸: Ստացվում է, որ բազային չափի որոշման օրենսդրական (ենթաօրենսդրական) կարգավորումները բացակայում են, և որ յուրաքանչյուր դեպքում բազային չափը որոշվում է կոնկրետ հանգամանքներից ելնելով՝ ծրագրով կամ նախագծով ներկայացված նախահաշվի հիման վրա:

Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգը սահմանում է նաև «նախնական հատկացման» պարտականություն, որը կատարվում է «համապատասխան պայմանագրի ստորագրման օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում»⁷⁹ և որի չափը «սահմանվում է համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրով», սակայն «չպետք է պակաս լինի դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափի 15 տոկոսից»⁸⁰:

Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգը սահմանում է նաև հատկացումների նվազագույն չափը հաշվարկելու բանաձև և արձանագրում, որ ընթացիկ հատկացումները չեն կարող պակաս լինել այդ նվազագույն չափից⁸¹: Նվազագույն չափը (ԴՎ) հաշվարկվում է բազային չափի (ՀԲ) և նախնական հատկացման չափի (ՆՎ) տարբերությունը բաժանելով ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման ժամկետի (Ժ) վրա՝ $ԴՎ = (ՀԲ - ՆՎ) / Ժ$:

Այսպիսով, ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկն ամբողջությամբ կախված է ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված նախնական հատկացման չափից և նախագծով, ծրագրով կամ ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված բազային չափից:

Գործող ընդերքօգտագործման պայմանագրերից միայն 6-ն են ամրագրում ռեկուլտիվացիոն վճարների վերաբերյալ թվային տվյալներ: Դրանցում նշված բազային չափերը, նախնական հատկացման և տարեկան հատկացման չափերը ներկայացված են ստորև⁸².

⁷⁷ ՀՀ կառավարության որոշում թիվ 1079-Ն որոշում (2012թ. օգոստոսի 23), Հավելված 1, կետ 2(3):

⁷⁸ *Ibid*

⁷⁹ *Ibid.*, կետ 5

⁸⁰ *Ibid.*, կետ 12

⁸¹ *Ibid.*, կետ 13

⁸² Տեղեկատվությունը վերցված է ԷԲՊՆ կայքում հրապարակված պայմանագրերի տեքստերից: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.minenergy.am/page/571>: Ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված ռեկուլտիվացիոն վճարների բազային չափերը, նախնական հատկացման և տարեկան հատկացման չափերը՝ ըստ հանքարդյունահանող ընկերությունների կողմից լրացված հաշվետվությունների, ներառվել են Հավելված 3-ում:

Աղյուսակ 3.1.1 Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված ռեկուլտիվացիոն վճարների բազային չափը, նախնական և տարեկան հատկացումները

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Բազային չափ (հազար դրամ)	Նախնական հատկացում (հազար դրամ)	Տարեկան հատկացումներ, (հազար դրամ)
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	X	X	307.74
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	X	4,174.35	1,028.46
«Վարդանի գարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	X	392.5	171.1
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26՝ ըստ 2016թ. մայիսի 23-ի փոփոխության	1,864,926	279,740	121,940
«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	X	3,126.2	2,952.54
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	X	947.25	233.381

Ինչպես երևում է վերը շարադրված աղյուսակից, չնայած Օրենսգրքի և Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգի պահանջներին, ռեկուլտիվացիոն վճարների բազային չափ գործող ընդերքօգտագործման պայմանագրերի ճնշող մեծամասնությամբ սահմանված չէ (դրանք առկա են 28 պայմանագրերից միայն 6-ում):

Դրանցում, որպես կանոն, օգտագործվում է հետևյալ ձևակերպումը Հավելված 1-ի (ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները) 3.1 կետում.

3. Բնության և շրջակա միջավայրի դրամագլխի և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ,

3.1 Ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից բնության և շրջակա միջավայրի դրամագլխի վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով.

Շարադրանքը տառացի կրկնում է ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի 437-ն որոշմամբ հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևը (այսուհետ՝ «Պայմանագրի օրինակելի ձև»): Ակնհայտ է, սակայն, որ Պայմանագրի օրինակելի ձևում 3,3.1 (ինչպես նաև 3.2) կետերը սահմանված են որպես վերտառություններ (բաժիններ) և ենթադրվում է, որ 3.1 բաժնին պետք է հաջորդեն հստակ հաշվարկները, ինչը բխում է նաև Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգի պահանջներից, ըստ որի, ռեկուլտիվացիոն վճարների բազային չափը սահմանվում է ընդերքօգտագործման պայմանագրով:

Պրակտիկայում, սակայն, ընդերքօգտագործման պայմանագրերի զգալի մասը պարզապես տառացի կրկնում է Պայմանագրի օրինակելի ձևի վերտառությունները՝ առանց սահմանելու

բազային չափերը, ինչը խնդրահարույց է նաև լեզվատրամաբանական առումով, քանի որ որպես վերտառություն նախատեսված ձևակերպումներն օգտագործվում են որպես բուն պարտավորություն սահմանող դրույթներ՝ չարտահայտելով ավարտուն միտք:

Արդյունքում, առաջանում է իրավական անորոշություն. օրենսդրությունը հղում է կատարում պայմանագրերին (ինչպես նաև նախագծերում/ծրագրերում), իսկ պայմանագրերով որևէ պարտավորություն փաստացի արձանագրված չէ, այլ միայն հղում է կատարվում «օրենսդրությամբ սահմանված չափ»-ին և «վճարման կարգ»-ին:

Կարծում ենք՝ իրավական տեսանկյունից խնդրին պետք է նայել հետևյալի հարցերի շրջանակներում.

- արդյո՞ք պայմանագրերում (ինչպես նաև նախագծերում/ծրագրերում) դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափ չսահմանելը վերացնում է նման հատկացումներ անելու պարտականությունը,
- եթե ոչ, արդյո՞ք պայմանագրերում (ինչպես նաև նախագծերում/ծրագրում) դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափ չսահմանելը հետաձգում/տարաժամկետում է նման հատկացումներ անելու պարտականությունը:

Առաջին հարցի պատասխանը միանշանակ բացասական է: Օրենսգրքի տեքստի վերլուծությանը ակնհայտ հետևում է վճարի պարտադիր բնույթը: Օրենսգրքը որևէ բացառություն այս առումով չի նախատեսում (Օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված ընդերքօգտագործման վճարներից ազատելու հիմքերը վերաբերելի չեն):

Երկրորդ հարցի պատասխանը նույնպես բացասական է, քանի որ վճարների հետաձգման/տարաժամկետման հնարավորություն Օրենսգրքը նույնպես չի սահմանում:

Ըստ ԱՃԹՆ-ի շրջանակներում Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված հաշվետվության, 2016թ. 27 մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից 22-ը ներկայացրել են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման հաշվարկված գումար, սակայն, այդ ընկերություններից 15-ը փաստացի վճարում չեն կատարել: 2017թ. հաշվարկված գումար ներկայացրած 25 մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից փաստացի վճարում չեն կատարել 20-ը: Ընդհանրական դիտարկմամբ, ըստ Բնապահպանության նախարարության տրամադրած հաշվետվության, 2016թ. հաշվարկվել է 261,335,348 ՀՀ դրամ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման գումար, որից փաստացի վճարվել է 194,196,907 ՀՀ դրամ, իսկ 2017թ., համապատասխանաբար, հաշվարկվել է 368,484,242 ՀՀ դրամ և վճարվել 288,185,535 ՀՀ դրամ: Հաշվի առնելով հաշվարկված և փաստացի վճարված գումարները՝ վճարումներ չեն կատարվել որոշ ընկերությունների կողմից, և չվճարված գումարային արժեքը կազմում է 67,138,441 ՀՀ դրամ 2016թ. համար և 80,298,707 ՀՀ դրամ՝ 2017թ. համար: 2015թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ, հաշվետու տարվա համար դրամագլխին հատկացման ենթակա հաշվարկված գումարը կազմել է 697 մլն ՀՀ դրամ, իսկ փաստացի վճարված գումարը կազմել է 474 մլն ՀՀ դրամ: Հետևաբար, չվճարված գումարը կազմել է 223 մլն ՀՀ դրամ: Հանքարդյունահանող ընկերությունների և

Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված տվյալների հիման վրա կազմված ամփոփ աղյուսակը ներկայացված է Հավելված 3-ում:

Համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի, ԷԲՊՆ ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե վերջինս չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում: Եթե իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում, չի վերացրել նշված հիմքերը, նախարարությունը կարող է հարուցել վարչական վարույթ:

Համաձայն ԷԲՊՆ ստացված տեղեկատվության, արդեն իսկ մի քանի հանքարդյունահանող ընկերությունների նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ:

Ստորև 3.1.2 աղյուսակում ներկայացված է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2016-2017թթ. ընթացքում փաստացի կատարված դրամագլխի հատկացման վճարների չափը և բազային չափերը որոշելու մոտեցումները՝ Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված հաշվետվությունների և հավելյալ հարցման միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա: Բազային չափերը որոշելու մոտեցումները ներառված են ընդերքօգտագործման պայմանագրերում, որոնք, ԱՃԹՆ-ի արդյունքում նախաձեռնած օրենսդրական փոփոխության արդյունքում, հրապարակվել են ԷԲՊՆ կայքում⁸³:

Աղյուսակ 3.1.2 Ընդերքօգտագործողների կողմից 2016-2017թթ. ընթացքում փաստացի կատարված դրամագլխի հատկացման վճարների չափը և բազային չափերը որոշելու մոտեցումները՝

Ընդերքօգտագործող	Բազային չափերը որոշելու ընդերքօգտագործողի մոտեցում	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2016թ. ⁸⁴ , ՀՀ դրամ, ըստ Բնապահպանության նախարարության ԱՃԹՆ հաշվետվության	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2017թ., ՀՀ դրամ, ըստ Բնապահպանության նախարարության ԱՃԹՆ հաշվետվության
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Նախագծի բնապահպանական մասի էջ 27 -ի 9,7 աղյուսակ	-	-
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	13.12.2010թ. ՈԲՓ -128 փորձաքննական եզրակացություն	-	-
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի պահպանում	-	-
«Ասսաթ» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության 66-67 էջ	-	-
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	Նախագծի էջ 94 աղյուսակ 9,1-ում նշված է խախտված հոդերի	-	-

⁸³<http://minenergy.am/page/571>

⁸⁴2016թ. վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը եղել է կամավոր հիմունքներով՝ համաձայն ՀՀ Կառավարության N 666-Ն որոշման

Ընդերքօգտագործող	Բազային չափերը որոշելու ընդերքօգտագործողի մոտեցում	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2016թ. ⁸⁴ , ՀՀ դրամ, ըստ Բնապահպանության նախարարության ԱՃԹՆ հաշվետվության	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2017թ., ՀՀ դրամ, ըստ Բնապահպանության նախարարության ԱՃԹՆ հաշվետվության
	մակերեսները (հա-ով), իսկ էջ 112-ում նշված է տեխնիկական ռեկուլտիվացիա		
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի պահպանում 30 էջ	-	-
«Գեղի Գօլդ» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 2-ի աղյուսակի 1-ին կետ - բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախս	-	-
«ԳեոՊրո Մայնիգ Գոլդ» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 2-ի աղյուսակի 1-ին կետ -խախտված հողատարածությունների վերականգնում	58,957,300	58,957,300
«Ձանգեզուրի պղնձամոլիբդե նային կոմբինատ» ՓԲԸ	Նախագծով և ժամանակացույցով	5,489,400	101,747,623
«Թաթսթոուն» ՍՊԸ	Լիճքի նախագծի շրջակա միջավայրի պահպանություն մասի էջ 47 Այգեձորի նախագծի շրջակա միջավայրի պահպանություն մասի էջ 21	1,839,595	-
«Թաթսթոուն» ՍՊԸ	Լիճքի նախագծի շրջակա միջավայրի պահպանություն մասի էջ 47 Այգեձորի նախագծի շրջակա միջավայրի պահպանություն մասի էջ 21	2,953,000	2,953,000
«Թեղուտ» ՓԲԸ	Պայմանագրի Հավելված 1-ի 3-րդ կետի 3.1.1 և 3.1.2 կետեր	-	-
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-ի աղյուսակի 16-րդ կետ - հանքի տարածքի ուղղաձիգ հարթեցում և բարեկարգում	121,938,000	121,938,000
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	2016թ. փոփոխված պայմանագրի Հավելված 2-ի 2 և 3-րդ կետեր, ժամանակացույց	-	-
«Լիճքվազ» ՓԲԸ	29.06.2017թ ՌՔՓ -60 փորձաքննական եզրակացություն	-	-
«Կապանի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	-	-	-

Ընդերքօգտագործող	Բազային չափերը որոշելու ընդերքօգտագործողի մոտեցում	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2016թ. ⁸⁴ , ՀՀ դրամ, ըստ Բնապահպանության նախարարության ԱՃԹՆ հաշվետվության	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2017թ., ՀՀ դրամ, ըստ Բնապահպանության նախարարության ԱՃԹՆ հաշվետվության
«Հրաշք Մետաղ» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 2-ի աղյուսակի 1-ին կետ - խախտված հողերի լեռնամեխանիկական վերականգնում	-	-
«Ղարագույլան ներ» ՓԲԸ	Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության 102 էջ	-	-
«Մարջան Մայնինգ Քոնֆանի» ՍՊԸ	19.08.2008թ. ՌԲՓ -86 փորձաքննական եզրակացություն	-	-
«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Նախագծով	430,000	-
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	Համաձայն հանքի փակման ծրագրի 22-րդ էջ-ի	1,561,152	1,561,152
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	-	-	-
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-ի աղյուսակի 3-րդ կետի ժ) ենթակետ - բուսահողի կուտակում, ռեկուլտիվացիա	-	-
«Պարամունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	23.12.2010թ. ՌԲՓ -137 փորձաքննական եզրակացություն	-	-
«Սագամար» ՓԲԸ ⁸⁵	Նախագծի էջ 80 - վնասված հողերի վերականգնմանն ուղղվող ծախսեր	-	-
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի պահպանում	-	-
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-ի 3-րդ կետի 3.1.2 և 3.1.3 կետեր	1,028,460	1,028,460
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-ի 3-րդ կետի 3.1.2 և 3.1.3 կետեր	-	-

Այսպիսով, Օրենսդիրը նախատեսել է ոչ միայն ընդերքօգտագործման պայմանագրում դրամազլխին հատկացումներ կատարելու ընդերքօգտագործողի պարտականության ամրագրման անհրաժեշտություն, այլև որոշակի հանգամանքներում դրանց վերահաշվարկման և

⁸⁵«Սագամար» ՓԲԸ-ի հետ 2012թ. հոկտեմբերի 20-ին կնքված թիվ ՊՎ-093 պայմանագրի գործող խմբագրությամբ (2015թ. հունիսի 8-ի խմբագրությամբ) ռեկուլտիվացիոն վճարներ նախատեսված չեն: Նախնական խմբագրությունը խոսում էր նախքան պայմանագրի վերաձևակերպումը (2008-2011թթ. ժամանակահատվածում) տարեկան 1,619,463 ՀՀ դրամ պարտավորության մասին:

պայմանագրում փոփոխություններ կատարելու հնարավորություն: Այսպես, Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ կատարելու ընդերքօգտագործողի պարտականությունը ներառվում է ընդերքօգտագործման պայմանագրում»:

Իսկ Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Նախագծի փոփոխության, ընդերքի տեղամասի ընդլայնման, ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունքից հրաժարվելու դեպքում ընդերքօգտագործման պայմանագրում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումների չափի վերաբերյալ դրույթները համապատասխանաբար ենթակա են փոփոխության»:

Հատկանշական է, որ Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը խոսում է ընդերքօգտագործման պայմանագրում դրամագլխին հատկացումներ կատարելու ընդերքօգտագործողի պարտականությունը «ներառելու» մասին. Օրենսգրքում չի խոսվում այն մասին, որ ներառումը պետք է և կարող է արվել ընդերքօգտագործման պայմանագիրը կնքելու պահին միայն:

Առաջնորդվելով իրավական ակտերի տառացի մեկնաբանման և իմաստի փոփոխումը բացառելու մեկնաբանման կանոններով՝ կնքման պահից ներառելու վերաբերյալ ենթադրյալ փաստարկը պետք է բացառվի: Այն է՝ պարտավորությունները տեսականորեն կարող են ներառվել նաև պայմանագիրը կնքելուց հետո՝ ավելի ուշ փուլում, օրենսդրության զարգացմանը զուգընթաց:

Ավելին՝ հաշվի առնելով, որ 70-րդ հոդվածի 2-րդ մասը խոսում է դրամագլխին հատկացումների չափի վերաբերյալ դրույթների փոփոխության հնարավորության մասին՝ ակնհայտ է, որ ընդերքօգտագործման պայմանագրերում փոփոխություններ կատարելը ենթադրվել է Օրենսդրի կողմից:

բ) Մշտադիտարկումների իրականացման վճար

Օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման վճարների թվին է դասվում նաև մշտադիտարկումների իրականացման վճարը, որը վճարվում է «*օգտակար հանածոյի արդյունահանված փարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման [մշտադիտարկումների իրականացման] համար*»⁸⁶: Իսկ ահա Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետի համաձայն, «*[օ]գտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է ... ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված փարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և*

⁸⁶Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., 61-րդ հոդված, 2-րդ մաս, (3)-րդ կետ և 15-րդ հոդված, 2-րդ մաս, (10)-րդ կետ

առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը»:

Օրենսդիրը մշտադիտարկումների իրականացման համար վճարների «չափերի հաշվարկման և վճարման կարգ[ի]», ինչպես նաև «մշտադիտարկումների իրականացման կարգի» սահմանումը նույնպես պատվիրակվել է ՀՀ կառավարությանը⁸⁷: ՀՀ կառավարությունն իր 2013թ. հունվարի 10-ի թիվ 22-Ն որոշմամբ⁸⁸ հաստատել է «Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգը» (այսուհետ՝ «Մշտադիտարկումների իրականացման կարգ») և «Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը» (այսուհետ՝ «Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգ»):

Մշտադիտարկումների իրականացման կարգի համաձայն, մշտադիտարկումներն իրականացվում են «հեղափոխ աղբյուրների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման», ինչպես նաև «փակված հանքի, արդյունահանման արդյունքում առաջացած արտադրական լցակույտերի տարածքի երկրաբանական միջավայրի, հիդրոերկրաբանական և ինժեներատեխնիկական պայմանների փոփոխության մասին» տեղեկատվություն ստանալու նպատակով⁸⁹:

Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգը սահմանում է.

«Մշտադիտարկումների իրականացման հաշվարկային բազային չափ է համարվում հանքի փակման ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող մշտադիտարկումների ծրագրով նախատեսված օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով իրականացվող մշտադիտարկումների նախահաշվային արժեքը»⁹⁰:

Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգը սահմանում է նախնական հատկացման և ընթացիկ հատկացումների պարտականություն⁹¹: Նախնական հատկացումը կատարվում է ընդերքօգտագործման պայմանագրի ստորագրումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում⁹² և չպետք է պակաս լինի հաշվարկման բազային չափի 15 տոկոսից: Ընթացիկ հատկացումները կատարվում են տարեկան կտրվածքով և դրանց նվազագույն չափը (ՄՎ) հաշվարկվում է բազային չափի (<Բ) և

⁸⁷ *Ibid.*, 61-րդ հոդված, 5-րդ մաս

⁸⁸ ՀՀ կառավարության որոշում թիվ 22-Ն (ընդունված 2013թ. հունվարի 10-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80784>

⁸⁹ *Ibid.*, Հավելված N 1, կետեր 4 և 5

⁹⁰ *Ibid.*, Հավելված N 2, կետ 2

⁹¹ *Ibid.*, Հավելված N 2, կետ 4

⁹² *Ibid.*, Հավելված N 2, կետ 5

նախնական հատկացման չափի (ՆՎ) տարբերությունը բաժանելով մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարումների կատարման ժամկետի (Ժ) վրա՝ ՄՎ = (ՀԲ-ՆՎ)/Ժ⁹³:

Այսպիսով, մշտադիտարկումների իրականացման հաշվարկային չափը անմիջական կախվածության մեջ է հանքի փականան ծրագրով նախատեսված մշտադիտարկումների նախահաշվային արժեքից:

Հանքի փականան ծրագիրն, ըստ Օրենսգրքի, ներկայացվում է դեռևս օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումին կից⁹⁴: Այս առումով, սակայն, խնդրահարույց են այն ընդերքօգտագործման պայմանագրերը, որոնք կնքվել են ոչ թե նման դիմումների արդյունքում տրված ընդերքօգտագործման թույլտվության հիման վրա, այլ ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաների վերաձևակերպման արդյունքում: Հաշվի առնելով, որ 2002-2012թթ. գործած նախորդ Ընդերքի մասին օրենսգիրքը⁹⁵ չէր նախատեսում հանքի փականան ծրագիր ներկայացնելու օրենսդրական անհրաժեշտություն, վերաձևակերպված թույլտվություններից շատերի պարագայում հանքի փականան ծրագրերը բացակայում են: Ուստի բացակայում է նաև մշտադիտարկումների նախահաշվային արժեքը:

Գործող ընդերքօգտագործման պայմանագրերի շրջանակներում արձանագրված հանքի փականան ծրագրերով ստանձնած պարտավորությունները համառոտ ներկայացված են ստորև (ըստ «Հանքի փականան ծրագրով նախատեսված պարտավորություններ» հավելված 2-ի)⁹⁶: Հանքի փականան ծրագրերի առանձին ուսումնասիրություն չի իրականացվել, քանի որ դրանք հրապարակային չեն:

Աղյուսակ 3.1.3 Ընդերքօգտագործման պայմանագրերի շրջանակներում արձանագրված հանքի փականան ծրագրերով ստանձնած պարտավորությունները

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Հանքի փականան ծրագրով նախատեսված մշտադիտարկումների համար տարեկան վճար
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	Հանքի փականան ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12	Հանքի փականան ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Սազամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20	11,780,000 ՀՀ դրամ
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	Հանքի փականան ծրագրով նախատեսված

⁹³ Ibid., Հավելված N 2, կետ 10

⁹⁴ Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 49(2)

⁹⁵ Ընդերքի մասին օրենսգիրք, ՀՕ-456-Ն (ընդունված 2002թ. նոյեմբերի 6-ին, չի գործում 2012թ. հունվարի 1-ից), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72894>

⁹⁶ Տեղեկատվությունը վերցված է ԷԲՊՆ կայքում հրապարակված պայմանագրերի տեքստերից: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.minenergy.am/page/571>

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Հանքի փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների համար տարեկան վճար
		պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	Պայմանագրով նախատեսված են բացառապես աշխատուժի սոցիալական վիճակի մեղմացման միջոցառումներ: Սահմանված է նաև (հավելված 2, կետ 1.3) ընկերության պարտականությունը «շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին»:
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20՝ ըստ 2014թ. հոկտեմբերի 22-ի փոփոխության	6,000,000 ՀՀ դրամ
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26՝ ըստ 2016թ. մայիսի 23-ի փոփոխության	16,610,000 ՀՀ դրամ
«Լիճքվազ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5՝ ըստ 2013թ. հուլիսի 1-ի փոփոխության	25,000,000 ՀՀ դրամ
«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	Պայմանագրում արձանագրված հանքի փակման ծրագրից բխող պարտավորությունների շրջանակներում

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Հանքի փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների համար տարեկան վճար
		մշտադիտարկումներ նախատեսված չեն
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	Պայմանագրում արձանագրված հանքի փակման ծրագրից բխող պարտավորությունների շրջանակներում մշտադիտարկումներ նախատեսված չեն
«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Մարջան Մայնինգ Քոնփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Թաթսթոուն» ՍՊԸ (Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի «Թղկուտ տեղամաս») ՍՊԸ	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11	2,500,000 ՀՀ դրամ
«Թաթսթոուն» ՍՊԸ (Լիճքի պղինձի հանքավայր)	Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11՝ ըստ 2016թ. փետրվարի 10-ի փոփոխություններով	375,000 ՀՀ դրամ
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	5,000,000 ՀՀ դրամ
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	150,000 ՀՀ դրամ
«Հրաշք Մետալ» ՍՊԸ	Թիվ Պ-542,2016թ. հունիսի 15	400,000 ՀՀ դրամ
«Գեդի Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	2,200,000 ՀՀ դրամ
«Մուլտի Գրուպ» Կոնցենն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ղարագույաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	4,895,000 ՀՀ դրամ

Այսպիսով, խնդրո առարկա 28 պայմանագրերից 14-ի դեպքում «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» հավելվածը բացակայում է: Նման պարտավորությունների արձանագրմամբ 14 պայմանագրերից մեկի («Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ-ի հետ 2012թ. նոյեմբերի 7-ի կնքված թիվ ՊՎ-174 պայմանագիր) պարագայում «Հանքի փակման ծրագիր» վերտառությամբ

հավելված 2-ը սահմանում է բացառապես աշխատուժի սոցիալական վիճակի մեղմացման և հանքի ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական միջոցառումներ իրականացնելու պարտականություն (առանց դրանց էության հստակեցման): Սահմանված է նաև ընկերության պարտականությունը «շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին»: Եվս երկու պայմանագրերի պարագայում («Ասսաթ» ՍՊԸ-ի հետ 2013թ. հունիսի 6-ի կնքված թիվ ՊՎ-366 պայմանագիր և «Վայք Գոլդ» ՍՊԸ-ի հետ 2012թ. նոյեմբերի 30-ի կնքված թիվ Պ-371 պայմանագիր) «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» հավելվածն առկա է, սակայն դրանում բացակայում են մշտադիտարկումների հետ կապված հաշվարկները:

«Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» վերտառությամբ հավելված ունեցող 14 պայմանագրերից մնացած 11-ից միայն «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրում է օգտագործվում Օրենսգրքի և Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգի եզրութաբանությունը:

Մյուս 10 պայմանագրերի պարագայում «հանքի փակման ծրագիր» վերտառությամբ 2-րդ հավելվածում, որտեղ խոսվում է սոցիալական վիճակի մեղմացման միջոցառումների մասին, հավելվածի վերջում ներկայացված է նաև միջոցառումների ցանկ՝ աղյուսակի տեսքով, որոնք բովանդակային առումով սոցիալական չեն, այլ էկոլոգիական (ներառում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են խախտված հողատարածքների վերականգնումը, արտադրական հրապարակների ապամոնտաժումը, սարքավորումների տեղափոխումը, մոնիթորինգի իրականացումը («մշտադիտարկում» եզրույթի փոխարեն գրեթե ամեն տեղ օգտագործվում է լատիներեն «մոնիթորինգ» եզրույթը), նախազգուշացնող միջոցների տեղադրումը, ջրահեռացնող առուների սպասարկումը, դրենաժային համակարգի ստեղծումը և այլն) և, ըստ էության, հանդիսանում են նախահաշիվ, որը սահմանում է միջոցառումների համար նախատեսված «ներդրումների չափը»:

Նման շարադրանքով պայմանագրերում աղյուսակները, սակայն, բովանդակային առումով կապված չեն տեքստի հետ և չեն օգտագործում Օրենսգրքի և Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգի ձևակերպումները, ինչը կարող է ստեղծել որոշակի իրավական անորոշություն:

Ինդրահարույց են այն ընկերությունների պայմանագրերը, որոնք չեն սահմանում «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» (առանձին հավելվածի տեսքով) և/կամ չունեն համապատասխան հաշվարկներ հանքի փակման ծրագրերում. արդյո՞ք վերջիններս ազատված են համապատասխան վճար կատարելու պարտականությունից միայն այն պատճառով, որ Կառավարության կողմից հաստատված Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգը վճարների հաշվարկը կապում է փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների նախահաշվային արժեքի հետ:

Օրենսգիրքը սահմանում է ընդերքօգտագործման վճարներից ազատվելու հիմքերի սպառիչ ցանկ.⁹⁷

«Ընդերքօգտագործման վճար չեն վճարում այն ընդերքօգտագործողները, որոնք՝

- 1) սեփական կարիքների համար իրենց հատկացված հողամասի (անկախ սեփականության ձևից) սահմաններում [...] կատարում են ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում.
- 2) իրականացնում են ռեզիոնալ երկրաբանական ուսումնասիրություններ (հրաբխային, սեյսմաբանական և արտածին երկրաբանական երևույթների մշտադիտարկում, այդ թվում՝ ինժեներատրակաբանական, հիդրոերկրաբանական հետազոտություններ և այլն).
- 3) ստեղծում են միներալոգիական, հնէաբանական և այլ հավաքածուներ.
- 4) իրականացնում են եզակի երկրաբանական գոյացությունների, բնության հուշարձանների ուսումնասիրություն, նկարագրում և պահպանում»:

Նշված հիմքերից և ոչ մեկը կիրառելի չէ խնդրո առարկա ընկերությունների պարագայում: Բացի այդ, Օրենսգիրքը Կառավարությանն է պատվիրակել միայն մշտադիտարկումների իրականացման կարգի և մշտադիտարկումների համար վճարների չափի և վճարման կարգի սահմանումը. Կառավարությունը չունի իրավասություն՝ որոշելու, թե որ սուբյեկտներն են պարտավոր կատարել նման վճարումներ, իսկ որոնք՝ ոչ:

Ավելին, Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգի 3-րդ կետի համաձայն «մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարներ կատարողներ են Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործողները» (առկա չէ տարբերակում Օրենսգրքի գործողության ժամանակահատվածում օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցած և առկա ընդերքօգտագործման իրավունքը վերաձևակերպած սուբյեկտների միջև):

Հետևաբար, Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգը չի կարող որևէ դեպքում մեկնաբանվել որպես որոշ սուբյեկտների մշտադիտարկումների իրականացման համար վճարներից ազատելու հիմք:

Ուստի, կրկին առկա է իրավական անորոշություն, երբ ընդերքօգտագործողը փաստացի ունի վճարային պարտավորություն, սակայն պարտավորությունը ենթակա չէ հաշվարկի:

գ) Բնապահպանական վճարներ

Հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործողների կողմից վճարվել են բնապահպանական վճարներ, որոնց 2018թ. հունվարի 1-ից փոխարինել են բնապահպանական հարկերը: Բնապահպանական վճարները կարգավորվել են «Բնապահպանական և

⁹⁷Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 62(1)

բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով⁹⁸ (այսուհետ՝ «Բնապահպանական վճարների մասին օրենք»): 2018թ.-ից ի վեր բնապահպանական հարկերը կարգավորվում են Հարկային օրենսգրքով:

Բնապահպանական վճարների մասին օրենքը սահմանել է «բնապահպանական վճարներ» հասկացությունը, դրանց վճարման նպատակները և հաշվարկման և վճարման ռեժիմը: Նշված օրենքի համաձայն բնապահպանական վճարը պետական բյուջե (օրենքով նախատեսված առանձին դեպքերում՝ համայնքի բյուջե) վճարվող վճար է, որը ծառայում է «բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման» նպատակին⁹⁹: Օրենսդրությունը տարանջատել է բնապահպանական վճարների երեք տեսակ՝ դասակարգելով դրանք ըստ վճարման նպատակների.

- ▶ վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար կատարվող վճար.
- ▶ արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար կատարվող վճար,
- ▶ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար կատարվող վճար¹⁰⁰:

Վնասակար նյութերի՝ շրջակա միջավայր արտանետման համար, ինչպես նաև արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար կատարվող վճարների դրույքաչափերը Օրենսդիրը նախատեսել է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով¹⁰¹:

Վերջինս ամրակայված աղբյուրներից օդային ավազան փոշու, ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների, ծծմբային անհիդրիդի, քլորի և քլորոպրենի արտանետման յուրաքանչյուր տոննայի դիմաց նախատեսել է ֆիքսված դրույքաչափեր¹⁰²:

Բոլոր մյուս նյութերի համար, որոնց մասով արտանետումների փաստացի ծավալները գերազանցում են օրենսդրությամբ սահմանված կարգով օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու թույլտվություններով նախատեսված արտանետումների ծավալը, կամ որոնց մասով հաշվառման ենթակա օբյեկտներ ունեցող կազմակերպությունների գծով բացակայում են օրենսդրությամբ սահմանված կարգով օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու թույլտվությունները, կիրառվող դրույքաչափը մեկ տոննայի դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\Gamma_{\text{օդ}} = 900 \text{ դրամ} / \text{ՍԹԿ}$$

⁹⁸«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-270 (ընդունված 1998թ. դեկտեմբերի 28-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87833>:

⁹⁹*Ibid.*, հոդ. 2

¹⁰⁰*Ibid.*, հոդ. 4

¹⁰¹«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-245-Ն (ընդունված 2006թ. դեկտեմբերի 20-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118446>

¹⁰²*Ibid.*, հոդ. 2(1)(ա): Դրույքաչափերը տե՛ս հավելված 12-ում

որտեղ՝ «Դօդ»-ն դրույքաչափն է, «ՍԹԿ»-ն օդում տվյալ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է (կոնցենտրացիա)¹⁰³:

Երևանի և ազգային պարկերի տարածքներում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ամրակայված աղբյուրներ ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար դրույքաչափերն ավելացվում են 1.5 անգամ¹⁰⁴:

«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը ֆիքսված դրույքաչափեր է նախատեսում նաև ջրային ավազան կախյալ նյութերի, ամոնիակային ազոտի, նավթամթերքի, պղնձի, ցինկի, սուլֆատների, քլորիդների, նիտրիտների, նիտրատների, ընդհանուր ֆոսֆորի, դետերգենտների, ծանր մետաղների աղերի, ինչպես նաև ցիանիդի և ցիանիդի միացությունների մեկ տոննա արտանետման դեպքում:¹⁰⁵

Բոլոր մյուս վնասակար նյութերի և միացությունների համար, որոնց մասով արտահոսքի փաստացի ծավալները գերազանցում են ջրօգտագործման թույլտվություններով սահմանված՝ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի ծավալները, կամ բացակայում են արտահոսքի գծով ջրօգտագործման թույլտվությունները կամ ջրօգտագործման թույլտվություններով սահմանված չեն թույլատրելի սահմանային արտահոսքի ծավալներ, կիրառվող դրույքաչափը մեկ տոննայի դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Դջուր} = 10\ 000 \text{ դրամ/ՍԹԿձկն}$$

որտեղ՝ «Դջուր»-ը դրույքաչափն է, «ՍԹԿձկն»-ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է¹⁰⁶:

Սևանա լճի ջրահավաք ավազան, Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան և Գետառ գետեր վնասակար նյութերի և միացությունների արտանետումներ իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար դրույքաչափերը կրկնապատկվում են:¹⁰⁷

«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը սահմանել է նաև հատուկ հատկացված տեղերում (բացառությամբ արդյունաբերական հրապարակների) շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի՝ սահմանված կարգով տեղադրման (պահման) համար բնապահպանական վճարի դրույքաչափերը¹⁰⁸, ինչպես նաև արդյունաբերական հրապարակներում արտադրության և սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի՝ սահմանված կարգով տեղադրման (պահման) համար վճարի դրույքաչափերը¹⁰⁹:

¹⁰³ *Ibid.*, հոդ. 2(1)(բ)

¹⁰⁴ *Ibid.*, հոդ. 2(1)(գ)

¹⁰⁵ *Ibid.*, հոդ. 2(2)(ա): Դրույքաչափերը տե՛ս հավելված 12-ում

¹⁰⁶ *Ibid.*, հոդ. 2(2)(բ)

¹⁰⁷ *Ibid.*, հոդ. 2(2)(գ)

¹⁰⁸ *Ibid.*, հոդ. 3(ա): Դրույքաչափերը տե՛ս հավելված 12-ում

¹⁰⁹ *Ibid.*, հոդ. 3(բ): Դրույքաչափերը տե՛ս հավելված 12-ում

դ) Ռոյալթի

Կարգավորումը մինչև 2018թ. հունվարի 1-ը. Հաշվետու ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև 2018թ. հունվարի 1-ը, ռոյալթի հասկացության, վճարողների շրջանակի, հաշվարկման բազայի, դրույքաչափի և այլ հարցերը կարգավորվել են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով (թիվ ՀՕ-270, ընդունված 1998թ. դեկտեմբերի 28-ին) (այսուհետ՝ «Բնապահպանական վճարների մասին օրենք»):

Բնապահպանական վճարների մասին օրենքը տալիս է ռոյալթիի հետևյալ սահմանումը.

Ռոյալթին մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացումից ստացվող բարձր շահութաբերության համար սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

ՀՀ սահմանադրական դատարանի համաձայն, բնօգտագործման վճարների առնչությամբ առաջացող հարաբերություններն իրենց էությանը մասնավոր իրավական հարաբերություններ են: Մասնավորապես, 2009թ. հուլիսի 18-ի ՍԴՈ-816 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է.

«[Բ]նօգտագործման վճարը, հանդիսանալով գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր, և որպես այդպիսին նման գումարի գանձման համար իրավական հիմք է հանդիսանում ընդերքի սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է լիազորված մարմնի միջոցով, և ընդերքն օգտագործողի միջև կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը»¹¹⁰:

Սահմանված կարգի համաձայն, ռոյալթի վճարողներ են Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և (կամ) մետաղի խտանյութ արտադրող հանդիսացող Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունները և ֆիզիկական անձինք¹¹¹: Այն է, ռոյալթի վճարվում են նաև խտանյութ արտադրողները (ձուլարանները)¹¹²՝ անկախ ընդերքօգտագործող լինելու հանգամանքից:

Ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր տարին է¹¹²:

Դրույքաչափ և հաշվարկման բազա. Ռոյալթին հաշվարկվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ելնելով ռոյալթիի հաշվարկման բազայից և օրենքով սահմանված

¹¹⁰««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի և «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի դիմումների հիման վրա՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7 և 19 հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ «ՀՀ սահմանադրական դատարանի որոշում թիվ ՍԴՈ-816 (18 հուլիսի 2009թ.):

¹¹¹«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, հղում Error! Bookmark not defined., հոդված 13.2


¹¹²*Ibid.*, հոդ. 13.6

դրույքաչափի¹¹³: Ռոյալթի հաշվարկման բազայի (ավելի մանրամասն ներկայացված է հաջորդիվ) նկատմամբ կիրառվում է արժեքային (տոկոսային) դրույքաչափ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

Ռոյալթի դրույքաչափ
$R = 4 + [\text{Շ}/(\text{Հ}\times 8)] \times 100$

Վերոնշյալ բանաձևում R-ը ռոյալթի դրույքաչափն է, Շ-ն՝ շահույթը նախքան հարկումը դրամով¹¹⁴, Հ-ն՝ արտադրանքի իրացումից հասույթն է՝ առանց ԱԱՀ-ի՝ դրամով:

Բնապահպանական վճարների մասին օրենքի 13.3-րդ հոդվածը սահմանում է ռոյալթի հաշվարկման բազան, որը տարբեր է մետաղի խտանյութի իրացման դեպքում և ձուլվածքի կամ խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացման դեպքում: Կարգավորումը ներկայացված է ստորև.



Նույն հոդվածի համաձայն իրացումից հասույթի հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ինդրո առարկա «Ռոյալթի հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման» կարգը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1901-Ն որոշմամբ (այսուհետ՝ «Ռոյալթի հաշվարկման կարգ»):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Ռոյալթի հաշվարկման կարգի ընդունման իրավաչափությունը խիստ վիճելի է: Այսպես, 13.3 հոդվածը (որը կառավարությանն է պատվիրակել ռոյալթի հաշվարկման նպատակով իրացումից հասույթի հաշվարկման կարգը սահմանելու իրավասությունը), ինչպես և ռոյալթիները կարգավորող 2.1 գլուխը ինկորպորացվել է 2011թ. նոյեմբերի 28-ին ընդունված ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին թիվ ՀՕ-284-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 2012թ. հունվարի 1-ին, մինչդեռ ՀՀ կառավարության թիվ 1901-Ն որոշումն ընդունվել է

¹¹³ Ibid., հոդ. 13.5

¹¹⁴ Ռոյալթի հաշվարկման բազայի և «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն

2011թ. դեկտեմբերի 29-ին, երբ Կառավարությանը նման լիազորություն պատվիրակող նորմը փաստացի դեռ ուժի մեջ չէր:

Ռոյալթիի հաշվարկման կարգի համաձայն, իրացումից հասույթը որոշվում է հաշվեգրման եղանակով, այն է՝ մատակարարված արտադրանքը համարվում է իրացված և եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռքբերված, եթե համապատասխան գումարը ենթակա է ռոյալթի վճարողին անվերապահ վճարման (հատուցման), կամ ռոյալթի վճարողը կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս (կետ 3):

Ռոյալթիի հաշվարկման կարգը սահմանում է ռոյալթիի բազայի հաշվարկման չորս տարբեր դեպքեր՝

- (i) խտանյութի իրացում,
- (ii) ծուլվածքի իրացում,
- (iii) խտանյութի, ծուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացում,
- (iv) առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանքի իրացում:

Խտանյութ. Մատակարարված խտանյութի իրացումից հասույթ է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ֆիզիկական ծավալի համար պայմանագրով որոշված (վերջնահաշվարկի արդյունքներով) պայմանագրի գինը:

		Մատակարարումը և վերջնահաշվարկը կատարվում են տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում
Խտանյութի ֆիզիկական ծավալ	Պայմանագրին համապատասխան որոշված (վերջնահաշվարկի արդյունքներով) մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով)	Հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով (ըստ մատակարարի կողմից տրվող որակի նախնական հավաստագրերի և հաշվարկային փաստաթղթերի) մետաղների պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով)
Խտանյութի ֆիզիկական ծավալի գին	Պայմանագրին համապատասխան՝ ըստ գնորոշման ժամանակահատվածի և գնանշումների (վերջնահաշվարկի արդյունքներով) որոշված պայմանագրի գինը	Հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով որոշված պայմանագրի գինը՝ առանց ավելացված արժեքի հարկի

Ընդ որում, վերջնահաշվարկի արդյունքներով որոշված ֆիզիկական ծավալից մատակարարման պահին որոշված ծավալի բացասական շեղման առավելագույն չափ է համարվում մատակարարման պահին որոշված ծավալի երկու տոկոսը: Բացի այդ, խտանյութի մատակարարման պահին կամ դրանից հետո արձանագրված՝ պայմանագրով նախատեսված ցուցանիշներից ավելի շեղումներով պայմանավորված իրացումից հասույթի նվազեցումները հաշվի

չեն առնվում: Դա վերաբերվում է նաև մատակարարված խտանյութում տեխնոլոգիական բարդություններ առաջացնող քիմիական տարրերի (տուգանային տարրերի) համար պայմանագրով նախատեսված չափից ավելի գների նվազեցումներին, խոնավության համար պայմանագրով նախատեսված թույլատրելի ցուցանիշի խախտման դեպքում պայմանագրի գնի նվազեցումներին:

Ձուլվածք. Ձուլվածքի պարագայում իրացումից հասույթը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված ձուլվածքին [ձուլվածքի ֆիզիկական ծավալ] համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութի միջազգային միջին գները՝ հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա մատակարարման ամսվա համար հայտարարված գինը:

Ձուլվածքի ֆիզիկական ծավալ	Պայմանագրին համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի տոննաներով
խտանյութի ֆիզիկական ծավալ ¹¹⁵	Ձուլվածքի մեկ տոննայի արտադրության համար փաստացի օգտագործված՝ տեխնոլոգիապես հիմնավորված խտանյութի ֆիզիկական ծավալ

խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանք (այսուհետ՝ վերջնական արտադրանք). Վերջնական արտադրանքի իրացումից հասույթը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված վերջնական արտադրանքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութի միջազգային միջին գները՝ հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա մատակարարման ամսվա համար հայտարարված գինը:

Վերջնական արտադրանքի ֆիզիկական ծավալ	Պայմանագրին համապատասխան մատակարարված արտադրանքի արտադրության համար ծախսված բոլոր մետաղների կշիռը՝ գրամներով կամ տոննաներով
Վերջնական արտադրանքում յուրաքանչյուր մետաղի խտանյութի ֆիզիկական ծավալ	Տվյալ մետաղի խտանյութի ֆիզիկական ծավալի տեխնոլոգիապես հիմնավորված հաշվարկային մեծություն, որը ծախսվել է հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված արտադրանքում պարունակվող տվյալ ծավալի մետաղի ստացման համար.

Առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանք (այսուհետ՝ «ցանկացած արտադրանք»). Ցանկացած այլ արտադրանքի իրացումից հասույթը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված արտադրանքի կամ դրանում պարունակվող մետաղի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութի միջազգային միջին գները՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա մատակարարման ամսվա համար հայտարարված գինը:

Ցանկացած արտադրանքի ֆիզիկական ծավալ	Այդ արտադրանքի կամ դրանում պարունակվող մետաղի փաստացի քանակությունը՝ գրամներով կամ տոննաներով
-------------------------------------	---

¹¹⁵Ձուլվածքի համար օգտագործված խտանյութի հաշվարկային մեծություն
124

Մատակարարված խտանյութի իրացումից հասույթը (հետևաբար և ռոյալթիի հաշվարկը), ինչպես տեսնում ենք, էականորեն կախված է գնորդի և մատակարարի միջև կնքված պայմանագրի պայմաններից:

Բնապահպանական վճարների մասին օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությունը, սակայն, սահմանում է.

«Եթե հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում պարզվում է, որ ռոյալթի վճարողների կողմից հաշվեկուտ փարին ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով արտադրանքի իրացումից հասույթը 10 փոկոս և ավելի չափով ցածր է նույն ամսվա արդյունքներով խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից, ապա հարկային մարմինները վերահաշվարկում են իրացումից հասույթի մեծությունը՝ այդ ամսվա համար կիրառելով խտանյութի միջազգային միջին գների 90 փոկոսը՝ հիմք ընդունելով ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Լոնդոնի մեքսիկացի բորսայի փոխալների հիման վրա փոխալ ամսվա համար հայտարարված գինը»¹¹⁶:

Խնդրո առարկա ձևակերպումը պատճառ է դարձել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացված ստուգումների արդյունքներով արձանագրված մի շարք ենթադրյալ խախտումների առնչությամբ վարչական և/կամ դատական վեճերի համար: Այսպես, միջազգային միջին գները չեն հիշատակվում Բնապահպանական վճարների մասին օրենքի 13.1-13.9 հոդվածներում, այլ միայն 18-րդ հոդվածում, ուր խոսվում է խտանյութի արտադրանքի իրացումից հասույթի՝ խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից փոքր լինելու մասին:

Ռոյալթիի հաշվարկման կարգն իր հերթին հիշատակում է միջազգային միջին գները միայն (i) ձուլվածքի իրացումից հասույթի հաշվարկման կարգը, (ii) խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացումից հասույթի հաշվարկման կարգը և (iii) առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանքի իրացումից հաշվարկման կարգը նկարագրելիս, սակայն չի հիշատակում այդ գները խտանյութի իրացումից հասույթի հաշվարկման կարգ սահմանելիս: Այս

¹¹⁶Դրույթը վերաշարադրվել է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-78-Ն օրենքի (ընդունված 2017թ. մարտի 1-ին) միջոցով և ստացել է հետևյալ ձևակերպումը.

«Եթե ռոյալթիի հաշվեկուտ ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ռոյալթիի իրացման շրջանառությունը 20 փոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում՝ մեքսիկացիների վերջնական պարունակության և նույն մեքսիկացիների՝ փոխալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում պարունակվող մեքսիկացիների վերջնական պարունակության և նույն մեքսիկացիների՝ փոխալ ամսվա միջազգային միջին գների 80 փոկոսի արտադրյալը:

Սույն օրենքի կիրառության իմաստով մեքսիկացի միջազգային միջին գին է համարվում ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից Լոնդոնի մեքսիկացի բորսայի, իսկ նշված աղբյուրի կողմից որևէ մեքսիկացի վերաբերյալ փոխալներ չհրապարակվելու դեպքում՝ համանման միջազգային այլ հեղինակավոր աղբյուրի փոխալների հիման վրա յուրաքանչյուր ամսվա համար հրապարակված գինը (հրապարակելով նաև աղբյուրի վերաբերյալ տեղեկությունները):»:

հանգամանքը հիմք է ծառայել մի շարք հանքարդյունաբերողների՝ պնդելու, որ 18-րդ հոդվածի 2-րդ մասը չի վերաբերվում խտանյութի իրացմանը:

Ավելին, 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությունը խոսում է «միջազգային միջին գների» մասին, երբ խոսքը վերաբերվում է արտադրանքի իրացումից հասույթի գնահատման մասին, սակայն հիշատակում է «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա տվյալ ամսվա համար հայտարարված գին» մասին, երբ խոսքը գնում է վերահաշվարկի մասին: Համանման կերպ ուղալթի հաշվարկման կարգը, խոսելով խտանյութի միջազգային գների մասին, նշում է, որ խտանյութի միջազգային գին են համարվում խտանյութում պարունակվող մետաղների համար Ֆինանսների նախարարության կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա մատակարարման ամսվա համար հայտարարված գները:

Խնդրո առարկա հիմնահարցը քննարկվել է ՀՀ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովի կողմից 2015թ. դեկտեմբերի 8-ի թիվ 53/1 որոշման (ըստ «Սագամար» ՓԲԸ-ի գանգատի), 2017թ. մարտի 28-ի թիվ 17/2 որոշման (ըստ «Թեղուտ» ՓԲԸ-ի գանգատի) շրջանակներում, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի կողմից 2016թ. հուլիսի 8-ի «Սագամար» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ ՊԵԿ-ի թիվ ՎԴ/0653/05/16 գործով կայացրած վճռում, 2016թ. հունիսի 20-ի «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ ՊԵԿ-ի թիվ Դ/5550/05/14 գործով կայացրած վճռում և 2016թ. փետրվարի 29-ի «Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ ՎԴ/3089/05/15 գործով կայացրած վճռում:

Հանքարդյունահանող ընկերությունների կողմից, մասնավորապես, բարձրացվել են հետևյալ հարցերը՝

- (i) Խտանյութի իրացման մասով Ռոյալթիի հաշվարկման կարգը չի սահմանում միջազգային միջին գին որոշելու պայման. արդյունքում, առկա է հակասություն Բնապահպանական վճարների մասին օրենքի 13.3-րդ հոդվածի (որը կառավարությանն է պատվիրակել ուղալթի հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը սահմանելու իրավասությունը) և 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության (որը նախատեսում է հարկային մարմնի կողմից իրացումից հասույթի վերահաշվարկման հնարավորություն) միջև,
- (ii) Բնապահպանական վճարների մասին օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությունը նախատեսում է պատասխանատվություն առանց պարտականության, ո՛չ Բնապահպանական վճարների մասին օրենքը, ո՛չ Ռոյալթիի հաշվարկման կարգը չեն նախատեսում ուղալթի հաշվարկման բազան որոշել՝ հիմք ընդունելով խտանյութի միջազգային միջին գինը,
- (iii) ՀՀ ՊԵԿ-ը պրակտիկայում սխալ է կիրառում «արտադրանքի իրացումից հասույթ» հասկացությունը՝ նույնականացնելով այն «խտանյութի միջազգային գին» հասկացության հետ,
- (iv) Բազմամետաղային հանքերում արտադրության ընթացքում խտանյութում կողմնակի մետաղների հայտնվելն անխուսափելի է. քանի որ դրանց հեռացման ժամանակ ձուլարանը ծախսեր է կատարելու, միջազգային պրակտիկայի համաձայն, կատարվում

են համապատասխան շտկումներ (նվազեցումներ) խտանյութի վաճառքի գնի մեջ: Հետևաբար, 18-րդ հոդվածի համաձայն, իրացումից հասույթի վերահաշվարկը միջազգային միջին գների հիման վրա անթույլատրելի է,

- (v) Կարգավորված չէ 18-րդ հոդվածի կիրառման դեպքում վերահաշվարկի կարգը,
- (vi) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խտանյութի միջազգային միջին գներ երբեք չեն հրապարակվել:

Վարչական և դատական պրակտիկայում հանքարդյունահանող ընկերությունների պահանջները չեն բավարարվել: Հատկանշական է, որ ոչ մի ընկերություն ռոյալթիի հաշվարկման հետ կապված հարցերը չի բողոքարկել վերաքննության կարգով: Ուստի, հարցի շուրջ բացակայում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան:

Կարգավորումը 2018թ. հունվարի 1-ից հետո. 2018թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված նոր Հարկային օրենսգիրքն, ըստ էության, Բնապահպանական վճարների մասին օրենքի՝ ռոյալթիի մասով կարգավորումները և Ռոյալթիի հաշվարկման կարգի դրույթները ինկորպորացնում է մի շարք լրացումներով և շտկումներով, որոնք փաստացի լուծում են վերոնշյալ դատական գործերի և վարչական վարույթների ընթացքում վերհանված խնդիրները:

Այսպես, որպես ռոյալթիի բազա հիշատակվում է արտադրանքի իրացման շրջանառությունը (այլ ոչ թե հասույթը) (202-րդ հոդված, 1-ին մաս): Խտանյութի իրացման շրջանառության հաշվարկը նույնական է նախկինում կիրառված՝ խտանյութի իրացումից հասույթի հաշվարկի հետ (նույնը վերաբերվում է ձուլվածքի իրացումից շրջանառությանը, ինչպես նաև խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունը): Օրենսգիրքն առանձնացնում է, սակայն, խտանյութի առանձին տեսակների համար վճարվող մետաղների ցանկը, որոնք հաշվի են առնվում խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս.

Խտանյութ	Մետաղներ
Պղնձի խտանյութ	պղինձ, ոսկի, արծաթ, խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ
Մոլիբդենի խտանյութ	մոլիբդեն, խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ
Ցինկի խտանյութ	ցինկ, ոսկի, արծաթ, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ
Այլ խտանյութեր	խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող մետաղներ

Օրենսգիրքը Կառավարությանն է պատվիրակում նաև վճարվող մետաղների համար գնորդի կողմից չվճարվող (նվազեցումների ենթակա) մասի առավելագույն սահմանաչափերը, ինչպես նաև մատակարարման պայմանագրով որոշված՝ վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ՝ տրանսպորտային) առավելագույն սահմանաչափերը սահմանելու իրավասությունը¹¹⁷: Վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի սահմանաչափերը, սակայն, պետք է

¹¹⁷Կառավարության կողմից սահմանված չլինելու դեպքում չվճարվող (նվազեցումների ենթակա) մասի առավելագույն սահմանաչափերը և վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ՝ տրանսպորտային) առավելագույն սահմանաչափերը ընդունվում են պայմանագրով սահմանված չափով:

հրապարակվեն՝ հիմնվելով մասնագիտացված միջազգային պարբերականների, այդ թվում՝ Վուդ Մակենզի (Wood Mackenzie), Մետալ Բյուլետին (Metal Bulletin) կամ համանման հեղինակությամբ միջազգային այլ պարբերականների կողմից մետաղական խտանյութերի վերամշակման և զտման ծախսերի վերաբերյալ հրապարակվող տվյալների վրա՝ հղում կատարելով համապատասխան աղբյուրին:

Նույն 202-րդ հոդվածն ինկորպորացնում է նաև միջազգային գների հետ համեմատության պահանջը՝ փոխելով թույլատրելի տատանումների շեմը մինչև 20% և լուծելով նախկինում առկա օրենսդրական անորոշությունները (փաստացի ձևակերպումը ստացել է ամբողջական վարքագծի կանոնի՝ իրացման շրջանառության վերահաշվարկի կանոնի տեսք, այլ ոչ թե միայն պատժամիջոցի):

«[Ե]թե ոռյալթի հաշվետու ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ոռյալթի իրացման շրջանառությունը 20 տոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում՝ սույն օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում՝ սույն օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային միջին գների 80 տոկոսի արտադրյալը»:

Հարկային օրենսգիրքը հստակեցրել է նաև ոռյալթի վճարող սուբյեկտների շրջանակը՝ ներառելով երեք խումբ սուբյեկտների՝

- ▶ ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և մետաղի խտանյութ կամ ձուլվածք կամ հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները.
- ▶ ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և այդ հանքավայրերից արդյունահանված մետաղական օգտակար հանածոներից առանց խտանյութի ստացման ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները.
- ▶ ընդերքօգտագործման թափոններից և (կամ) հանքաքարից մետաղի խտանյութ և (կամ) ձուլվածք կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները՝ անկախ մետաղական օգտակար հանածոյի հանքավայր շահագործող հանդիսանալուց¹¹⁸:

¹¹⁸ՀՀ հարկային օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 198(2)

ե) Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման դիմաց վճարվում է պետական տուրք, որի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով¹¹⁹: Վերջինս օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար և ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրման համար սահմանում է ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման տուրքի տարեկան դրույքաչափեր, որոնք ներկայացված են աղյուսակ 3.1.4-ում:

Աղյուսակ 3.1.4 Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման տուրքի տարեկան դրույքաչափերը

Թույլտվության տեսակ	Տարեկան պետական տուրք ՀՀ դրամով
Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար	50,000
Ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրման համար ¹²⁰	10,000,000
Շինանյութերի արտադրության հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	500,000

Ընդերքօգտագործողը պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան թույլտվության տրման դիմումը բավարարելու մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

(ii) Հարկեր

2016-2017թթ. ընթացքում հարկերի և պարտադիր վճարների մասով հարաբերությունները կարգավորվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, առանձին հարկատեսակների մասին օրենքներով, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների» մասին ՀՀ օրենքով, «Գույքահարկի» մասին ՀՀ օրենքով, «Հողի հարկի» մասին ՀՀ օրենքով:

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել նոր Հարկային օրենսգիրք, որն իր մեջ համախմբում է բոլոր հարկերի մասով կարգավորումները մեկ փաստաթղթում:

Ստորև ներկայացվում են առանձին հարկատեսակներով հարկման և պարտադիր վճարների կիրառման հիմնական առանձնահատկությունները:

¹¹⁹«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 19.4

¹²⁰Սև մետաղների յուրաքանչյուր հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրման համար օրենքը պետական տուրք չի նախատեսում:

Շահութահարկ. ՀՀ-ում գործունեություն իրականացնող հանքարդյունաբերական ոլորտի բոլոր ընկերությունների շահույթը ենթակա է շահութահարկով հարկման: Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20% դրույքաչափով:

Բացի վերոնշյալից, ընկերությունները ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներ վճարելիս, որպես հարկային գործակալ, պետք է գանձեն ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ համաձայն աղյուսակ 3.1.5-ում նշված դրույքաչափերի:

Աղյուսակ 3.1.5 Ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափեր

Եկամտի տեսակ	Դրույքաչափ
Ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5%
Շահաբաժիններ, տոկոսներ, ույալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ, գույքի արժեքի հավելված և այլ պասիվ եկամուտներ	10%
Այլ ծառայություններ	20%

Եկամտային հարկ. ՀՀ-ում գործունեություն իրականացնող հանքարդյունաբերական ոլորտի բոլոր կազմակերպությունները, որպես հարկային գործակալ, ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքի վարձատրության տեսքով, հաշվարկում և պահում են եկամտային հարկ: Եկամտային հարկը հաշվարկվում և ՀՀ պետական բյուջե է վճարվում ամսական կտրվածքով: 2016-2017թթ. ընթացքում ընկերությունները եկամտային հարկը հաշվարկել և վճարել են, համաձայն հետևյալ դրույքաչափերի.

Աղյուսակ 3.1.6 2016-2017թթ. ընթացքում ընկերությունների կողմից հաշվարկած և վճարած եկամտային հարկի դրույքաչափերը

Հարկվող եկամտի չափ	Հարկման դրույքաչափ	Հարկի գումարը	Հարկի ընդհանուր գումար
ՀՀ դրամ	%	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Մինչև 120,000	24,4	29,280	29,280
Հաջորդ 1,880,000	26	488,800	518,080
2,000,000 և ավել	36	-	-

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Հարկային օրենսգրքով հարկվող եկամտի ստորին շեմը փոխվել է 150,000 ՀՀ դրամի, ինչպես նաև ստորին և միջին շեմերի հարկվող եկամուտների մասով դրույքաչափերը փոխվել են համապատասխանաբար 23% և 28%:

Ավելացված արժեքի հարկ. Ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) հարկվում են հետևյալ գործարքները՝

- ▶ ՀՀ տարածքում ապրանքների մատակարարումը,
- ▶ Աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը,
- ▶ Անհատույց սպառումը,
- ▶ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծումը,
- ▶ ԵՏՄ անդամ երկրներից ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԱԱՀ-ի դրույքաչափերն են՝ 0% և 20%:

20% դրույքաչափը կիրառվում է ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: 0% դրույքաչափը հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների համար կիրառվում է ՀՀ տարածքից ապրանքների արտահանման, ինչպես նաև այն ծառայությունների նկատմամբ, որոնց մատուցման վայրը չի գտնվում ՀՀ տարածքում:

Գույքահարկ և հողի հարկ (2018թ.-ից միասին՝ անշարժ գույքի հարկ). Գույքահարկը հաշվարկվում է կազմակերպությանը լրիվ կամ մասնակի սեփականության իրավունքով պատկանող գույքի համար: Գույքահարկ վճարողների հաշվառող մարմին են հանդիսանում ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ գույքի գրանցումը կատարվում է ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

Հողի հարկը հաշվարկվում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող և պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործման համար:

Շենքերի և շինությունների գույքահարկի և հողի հարկի հաշվարկման հիմք է հանդիսանում դրանց կադաստրային արժեքը: Շենքերի և շինությունների գույքահարկի դրույքաչափերը կազմում են 0%-ից մինչև 1%, իսկ հողի հարկինը՝ 0,5%-ից մինչև 1%:

Տրանսպորտային միջոցների գույքահարկի հաշվարկման հիմք է հանդիսանում շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ):

Համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացրած հարցադրումների շրջանակներում ստորև ներկայացված է գույքահարկի գծով առկա հետևյալ մոտեցումը:

Համաձայն Շնող համայնքի ղեկավարության և Թեղուտ ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ քննարկման, Թեղուտ ՓԲԸ-ի տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի նշանակալի մասը, որի կառուցապատման աշխատանքները ավարտվել են 2014-2015թթ. և վերջին տարիների ընթացքում շահագործվել է ընկերության կողմից, հաշվառված չէ ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեում: Կողմերը նշում են, որ տարբեր տեխնիկական խնդիրների պատճառով գույքի գրանցման գործընթացը պարբերաբար հետաձգվել է և չի իրականացվել, սակայն ընկերությունը կատարում է որոշ վճարումներ համայնքի բյուջե, որոնք ուղղված են համապատասխանաբար փոխհատուցելու նշված գույքի կադաստրային գրանցման և սեփականության իրավունքի արդյունքում առաջացող գույքահարկը: Սույն դեպքում, համաձայն ընկերության կողմից լրացված հաշվետվության, նշված վճարը դասակարգվել է որպես բարեգործական հատկացում «օգնություն գույքահարկի գծով» անվանման տակ, այնինչ համայնքի կողմից լրացված հաշվետվությունում վճարը ներկայացված է որպես գույքահարկ:

Ողջունելի է, որ գրանցման բացի պարագայում ընկերությունը պատրաստակամորեն վճարումներ է կատարել համայնքի բյուջե, սակայն թե՛ վճարման չափերի որոշման և թե՛ սահմանված կանոնակարգերի պահպանման տեսանկյունից անհրաժեշտ է խնդրին տալ ինստիտուցիոնալ լուծում: ԱՃԹՆ-ի տեսանկյունից սա հատկապես կարևոր է այն առումով, որ գույքահարկի մասով այդ դեպքում առկա է շեղում ֆինանսական հոսքերի սահմանված գործընթացից:

Այս ենթատեքստում Անկախ ադմինիստրատորը առաջարկում է իրականացնել համապատասխան հարցումներ կամ վերլուծություն պարզելու՝ արդյո՞ք վերը նշված խնդիրը, ինչպես նաև կիրառված համապատասխան մոտեցումները առկա են մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող այլ ընկերությունների մոտ և ինչպես են արձագանքում նման խնդիրներին համապատասխան համայնքների ղեկավարները և ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները:

(iii) Մաքսային վճարներ

ՀՀ-ում գործող մաքսային վճարները հետևյալն են¹²¹.

- ▶ ներմուծման մաքսատուրքը.
- ▶ արտահանման մաքսատուրքը.
- ▶ ավելացված արժեքի հարկը, որը գանձվում է Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման ժամանակ.
- ▶ ակցիզային հարկը, որը գանձվում է Մաքսային միության մաքսային տարածք ենթաակցիզային ապրանքների ներմուծման ժամանակ.
- ▶ մաքսավճարները:

Հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունները, արտադրանքը արտահանելիս, վերոնշյալից վճարում են, մասնավորապես, արտահանման մաքսատուրք և մաքսավճարներ. ընդ որում, ապրանքների արտահանման մաքսատուրքերի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս¹²²:

Մաքսավճարը Մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է¹²³, որը հաշվարկվում և գանձվում է հետևյալ դրույքաչափերով¹²⁴.

- ▶ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների (ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի) մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ ապրանքների զննման և հաշվառման) համար գանձվում է 3,500 դրամ մաքսավճար:
- ▶ Ապրանքների զննման և հաշվառման համար, բացառությամբ խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների, մաքսավճար գանձվում է՝
 - միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա կշիռ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար՝ 1,000 դրամ.
 - միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մեկ տոննայից ավելի կշիռ ունեցող ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար՝ 300 դրամ:

¹²¹«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-241-Ն (ընդունված 2014թ. դեկտեմբերի 17), հոդ. 89(1), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121889>

¹²²*Ibid.*, հոդ. 89(3)

¹²³*Ibid.*, հոդ. 95

¹²⁴*Ibid.*, հոդ. 97

(iv) Տեղական ինքնակառավարման մարմիններին վճարվող վարձակալության վճար

Համայնքային բյուջեներ ուղղվող ֆինանսական հոսքերի բաղկացուցիչ մասն են կազմում տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ «ՏԻՄ») վճարվող վարձակալության վճարները¹²⁵, որոնք փոխանցվում են ՏԻՄ-երի բյուջեներ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող հողի, շինությունների և մեքենաների վարձակալության դիմաց:

Այս հարաբերություններն իրենց էությամբ քաղաքացիաիրավական հարաբերություններ են, որոնք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով¹²⁶, իսկ հողի վարձակալության դեպքում նաև՝ ՀՀ հողային օրենսգրքով:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող ու պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով¹²⁷ վարձակալության (կամ կառուցապատման) իրավունքով տրամադրում են համայնքների ղեկավարները¹²⁸ (հրապարակային սակարկությունների միջոցով)¹²⁹: Մրցույթների անցկացման ձևը (մրցութային հանձնաժողովների միջոցով)¹³⁰ և կարգը¹³¹ կարգավորվում են օրենսդրությամբ (օրենսդրությունը լեռնահատակացման սահմաններում ընդգրկված հողամասերի նկատմամբ նախատեսում է նաև առանց մրցույթ հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրում¹³²):

Հողային օրենսգիրքը որոշակի սահմանափակումներ է նախատեսում պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալության ժամկետների և այլ էական պայմանների առնչությամբ: Այսպես, նման հողամասերի վարձակալությունը չի կարող գերազանցել 99 տարին¹³³, իսկ տարեկան վարձավճարի (կամ կառուցապատման իրավունքի վճարի) չափը չի կարող պակաս

¹²⁵«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-337 (ընդունված 2002թ. մայիսի 7), հոդ. 86(1)(3)(ա)-(բ): Վերջինս սահմանում է՝

«Համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքների բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերից, այդ թվում՝

3) այլ եկամուտներ, այդ թվում՝

ա. համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ,

բ. համայնքի սեփականություն համարվող հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից առաջացած եկամուտներ»:

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125341>

¹²⁶ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 606-628, 645-659

¹²⁷Հողային օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 48(4) և 76(3)

¹²⁸*Ibid.*, հոդ. 76(2)

¹²⁹*Ibid.*, հոդ. 48(4)

¹³⁰*Ibid.*, հոդ. 77

¹³¹*Ibid.*, հոդ. 78

¹³²ՀՀ կառավարության որոշում թիվ N 286 (ընդունված 2001թ. ապրիլի 12-ին), Հավելված, հոդ. 46.2(թ), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72502>

¹³³*Ibid.*, հոդ. 48(3)

լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից¹³⁴: ՀՀ կառավարությունը սահմանել է նաև պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալության պայմանագրերի օրինակելի ձևերը¹³⁵:

Պետական սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարների, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների մուտքագրումը համայնքի բյուջե ինքնուրույն ապահովում են համայնքների համապատասխան ստորաբաժանումները¹³⁶՝ համայնքի ղեկավարի ղեկավարության և վերահսկողության ներքո¹³⁷: Գործընթացն առավել բարձր մակարդակում վերահսկում են մարզպետները¹³⁸:

(v) Զրոգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք

Զրոգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար սահմանված է 10,000 ՀՀ դրամ պետական տուրք¹³⁹, որը ենթակա է վճարման ոչ ուշ, քան ՀՀ բնապահպանության նախարարության կողմից թույլտվության տրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման հայտը բավարարելու մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում¹⁴⁰:

¹³⁴*ibid.*, հոդ. 81(3)

¹³⁵ՀՀ կառավարության որոշում թիվ N 286 (ընդունված 2001թ. ապրիլի 12-ին), Հավելված, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72502>

¹³⁶«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 93(1)


¹³⁷*ibid.*, հոդ.38(1)(3)

¹³⁸Հողային օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 42(1)(3)

¹³⁹«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 19.4(7)

¹⁴⁰Զրային օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 78


Գ. Ոլորտում իրավասություն ունեցող պետական և համայնքային մարմինները, դրանց լիազորությունները



(i) ԷԲՊՆ

Օրենսգրքի տեսանկյունից հանդիսանալով ընդերքօգտագործման ոլորտում ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմին՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ «ԷԲՊՆ») կենտրոնական դեր է խաղում ընդերքօգտագործման ոլորտի կարգավորման հարցում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը մասնավոր սուբյեկտների հետ ընդերքօգտագործման առնչությամբ հարաբերություններում: Հաշվետու ժամանակաշրջանի տարբեր հատվածներում այն անվանվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն (մինչև 2016թ. սեպտեմբերի 30-ը) և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն:

Հանքարդյունաբերության ոլորտում ԷԲՊՆ իրավասությունները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ (i) քաղաքականությունների և իրավական ակտերի մշակմանն առնչվող իրավասություններ, (ii) ընդերքօգտագործման հարաբերությունների առնչությամբ իրականացվող իրավասություններ, (iii) տեղեկատվության հավաքման, պահպանման, տարածմանն առնչվող իրավասություններ, (iv) փորձաքննություններին առնչվող իրավասություններ:



Քաղաքականությունների և իրավական ակտերի մշակում. ԷԲՊՆ մշակում է ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականությունը, ինչպես նաև ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման և պահպանության պետական ծրագրերը և իրականացնում դրանց ապահովումը¹⁴¹: ԷԲՊՆ մշակում է ոլորտային իրավական ակտեր¹⁴² և իր իրավասությունների սահմաններում մշակում և ընդունում է նորմատիվ իրավական ակտեր, որոնք կարգավորում են ընդերքի օգտագործման գործընթացը և ապահովում ընդերքի պետական կառավարումը, ինչպես

¹⁴¹Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդված 17(1)(1)-(3)
¹⁴²*ibid.*, հոդված 17(1)(4)

նաև մշակում և ընդունում է նորմեր և կանոններ, որոնք անհրաժեշտ են ընդերքի օգտագործման համար¹⁴³: ԷԲՊՆ է սահմանում նաև լեռնահատկացման ակտի օրինակելի ձևը¹⁴⁴:

Ընդերքօգտագործման իրավահարաբերություններ. Որպես ՀՀ անունից գործող և այն ներկայացնող գերատեսչություն՝ ԷԲՊՆ կազմում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային փաթեթ¹⁴⁵, տալիս է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար համաձայնություն¹⁴⁶, մասնավոր սուբյեկտներին տրամադրում է ընդերքօգտագործման իրավունք¹⁴⁷, ապահովում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման սահմանված պահանջները, նպաստում է ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը, և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ ճշգրտում է ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերը¹⁴⁸, կնքում է ընդերքօգտագործման պայմանագրեր¹⁴⁹: ԷԲՊՆ՝ իր իրավասությունների սահմաններում, տրամադրում է նաև ընդերքօգտագործման համար անհրաժեշտ թույլտվությունները և համաձայնությունները¹⁵⁰, կիրառում ընդերքօգտագործման բնագավառում օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները¹⁵¹:

ԷԲՊՆ է տալիս համաձայնություն արդյունահանման համար ընդերքօգտագործման իրավունքով արդեն ծանրաբեռնված ընդերքի տեղամասերում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ¹⁵² և իրավասու է ինքնուրույն մուտք գործել ընդերքի ցանկացած տեղամաս՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար¹⁵³: Երկու դեպքում էլ ԷԲՊՆ այդ մասին առնվազն 14 օր առաջ գրավոր իրազեկում է ընդերքօգտագործման իրավունք կրողին:

Տեղեկատվության տնօրինում. ԷԲՊՆ վարում է օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռը, իրականացնում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառում, վարում է հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրը¹⁵⁴, ստեղծում, վարում և տնօրինում է երկրաբանական տեղեկության միասնական համակարգ¹⁵⁵, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում է երկրաբանական տեղեկություն¹⁵⁶: Մասնավորապես,

¹⁴³ *ibid.*, հոդված 17(1)(10)

¹⁴⁴ *ibid.*, հոդված 17(1)(6)

¹⁴⁵ *ibid.*, հոդված 17(1)(20)

¹⁴⁶ *ibid.*, հոդված 17(1)(18)

¹⁴⁷ *ibid.*, հոդված 17(1)(5)

¹⁴⁸ *ibid.*, հոդված 17(1)(12)

¹⁴⁹ *ibid.*, հոդված 17(1)(11)

¹⁵⁰ *ibid.*, հոդված 17(1)(9)

¹⁵¹ *ibid.*, հոդված 17(1)(14)

¹⁵² *ibid.*, հոդված 17(1)(18)

¹⁵³ *ibid.*, հոդված 17(1)(19)

¹⁵⁴ *ibid.*, հոդված 17(1)(8)

¹⁵⁵ *ibid.*, հոդված 17(1)(13)

¹⁵⁶ *ibid.*, հոդված 17(1)(15)

հրապարակում է «ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը» և ընդունում է հրապարակային հաշվետվություններ:

Փորձաքննություններ. ԷԲՊՆ՝ իր իրավասության սահմաններում, ընդերքօգտագործման ոլորտում նաև իրականացնում է պետական փորձաքննություն¹⁵⁷: Մասնավորապես, ըստ Կանոնադրության, ԷԲՊՆ ապահովում է «ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննությունը»:

Հաշվետու ժամանակահատվածում՝ մինչև 2018թ. մարտի 21-ը ԷԲՊՆ լիազորությունների մեջ է մտել նաև ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը¹⁵⁸. ընդերքի օգտագործման և պահպանության վերահսկողության պետական տեսչության աշխատանքների համակարգում¹⁵⁹, ինչպես նաև ընդերքի վերահսկողության պետական տեսչության աշխատանքային ծրագրերի հաստատումը և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը¹⁶⁰:

ԷԲՊՆ առանձնացված ստորաբաժանումներից է Ընդերքի գործակալությունը (այսուհետ՝ «Գործակալություն»), որի կանոնադրությունը և կառուցվածքը սահմանվել են ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 7-ի թիվ 1108-Ն որոշմամբ¹⁶¹:

Որոշման համաձայն, ընդերքի գործակալությունը մատուցում է ծառայություններ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման և ընդերքաբանական փորձաքննության բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Գործակալության նպատակներն ու խնդիրներն են՝

- 1) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների ապահովումը.
- 2) ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը նպաստելը.
- 3) ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական ծրագրերի իրագործմանը նպաստելը.
- 4) իր իրավասության սահմաններում ընդերքօգտագործման և պահպանության ոլորտում պետական նորմավորման իրականացման ապահովումը:

Որոշմամբ մանրամասն սահմանվում են նաև Գործակալության նպատակների և խնդիրների իրականացման համար վերջինիս գործառույթները:

¹⁵⁷ *Ibid.*, հոդված 17(1)(7)

¹⁵⁸ *Ibid.*, հոդված 17(1)(2): Դրույթն ուժը կորցրել է «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-186-Ն (ընդունված 2018թ. մարտի 21-ին) ՀՀ օրենքի ուժով: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120746>

¹⁵⁹ *Ibid.*, հոդված 17(1)(16)

¹⁶⁰ *Ibid.*, հոդված 17(1)(17)

¹⁶¹ ՀՀ կառավարության որոշում թիվ 1108-Ն (ընդունված 2017թ. սեպտեմբերի 7-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115896>

Գործակալությունը կառավարում է նախարարը: Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որին պաշտոնում նշանակում և ազատում է նախարարը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ:

Գործակալությունն ունի հետևյալ բաժինները.

Ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման բաժին,

Ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի քննարկման և պայմանագրային բաժին,

Ընդերքաբանական փորձաքննության և պաշարների հաստատման բաժին,

Երկրաբանության, նորմատիվամեթոդական և վերլուծության բաժին:

(ii) «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ

ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1758-Ն որոշմամբ ստեղծվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Նույն որոշմամբ, ՊՈԱԿ-ի համար սահմանվել են գործունեության հետևյալ առարկան և նպատակները.

- ▶ ՀՀ տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, ինչպես նաև ընդերքօգտագործման փաստաթղթերի և օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ընդունումը և տնօրինումը.
- ▶ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տրամադրված ընդերքի տեղամասերի հաշվառման մատյանի, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի և հանքավայրերի ու օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում ստացած տեղեկությունների ընդունումը և պահպանումը.
- ▶ երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծումը, վարումը և տնօրինումը, պահպանությունը և Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով երկրաբանական տեղեկության տրամադրումը.
- ▶ միասնական կոորդինատային համակարգով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատների համադրումը ֆոնդային նյութերի հետ, ֆոնդային նյութերում փոփոխությունների կատարումը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն.
- ▶ օգտակար հանածոների պաշարների, հանքավայրերի, երևակումների և երկրաբանական ուսումնասիրությունների պետական հաշվառման տվյալների հիման վրա ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծումը և վարումը:


2016թ. երկրորդ կիսամյակից ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ և ՀՀ կառավարության որոշմամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի

թափանցիկության բարելավում» ծրագրի շրջանակներում 2016-2017թթ. իրականացվեց ֆոնդային նյութերի (շուրջ 12,000 հաշվետվություն և այլ նյութեր) թվայնացում և հանրայնացում:

Ստեղծված www.geo-fund.am կայքում զետեղված է թվայնացված տվյալների ողջ շտեմարանը, որը հասանելի է անվճար: Այն պարունակում է ՀՀ բնական պաշարների ինտերակտիվ քարտեզ՝ յուրաքանչյուր հանքավայրի կամ երևակման վերաբերյալ կցված հաշվետվություններով և համապատասխան քարտեզագրական նյութերով, տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների շտեմարան, հանքերի և հանքերակումների անձնագրերի շտեմարան և այլ տեղեկատվություն և գրադարան, որը պարունակում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի կողմից տրամադրված և ծրագրի շրջանակներում լրացուցիչ թվայնացված նյութեր:

(iii) ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀՀ բնապահպանության նախարարությունը նույնպես ելակետային դերակատարություն ունի ընդերքօգտագործման ոլորտում: Բնապահպանության նախարարության ոլորտին առնչվող իրավասությունները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ (i) քաղաքականությունների և իրավական ակտերի մշակման, (ii) տեխնիկական պահանջների, չափորոշիչների, սահմանաչափերի որոշման, (iii) փորձաքննությունների և վերահսկողության, (iv) տեղեկատվության տնօրինման և (v) դրամագլխի տնօրինման հետ առնչվող իրավասություններ:



Քաղաքականությունների և իրավական ակտերի մշակում. ՀՀ Բնապահպանության նախարարությունը մասնակցում է ընդերքօգտագործման բնագավառում շրջակա միջավայրի

պահպանության պետական քաղաքականության ձևավորմանը¹⁶², մշակում է օգտակար հանաճոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգ¹⁶³, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգ¹⁶⁴. ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգ¹⁶⁵, ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու կարգ¹⁶⁶, հաստատում է ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը¹⁶⁷:

Տեխնիկական պահանջների, չափորոշիչների, սահմանաչափերի որոշում. Օրենսգրքի համաձայն ՀՀ բնապահպանության նախարարությունը մշակում է ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարմանը և վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջներ և չափանիշներ¹⁶⁸, լավագույն հնարավոր տեխնոլոգիաների ներկայացվող չափորոշիչներ¹⁶⁹, հաստատում է օգտակար հանաճոյի մշակման համար անհրաժեշտ վտանգավոր նյութերի օգտագործման առավելագույն սահմանաչափերի որոշման ընթացակարգը¹⁷⁰:

Փորձաքննություններ և վերահսկողություն. ՀՀ բնապահպանության նախարարությունը իրականացնում է ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի, հանքարդյունահանման համալիրի ապամոնիտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն¹⁷¹, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում հաստատում է շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումների պլանը կամ ծրագիրը¹⁷², կիրառում է ընդերքօգտագործմանն առնչվող՝ շրջակա միջավայրի պահպանության ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ¹⁷³:

Տեղեկատվություն. Բնապահպանության նախարարությունն ընդունում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ

¹⁶² Օրենսգրք, հղում Error! Bookmark not defined., հոդված 17(2)(1)

¹⁶³ *Ibid.*, հոդված 17(2)(5)

¹⁶⁴ *Ibid.*, հոդված 17(2)(7)

¹⁶⁵ *Ibid.*, հոդված 17(2)(8)

¹⁶⁶ *Ibid.*, հոդված 17(2)(12)

¹⁶⁷ *Ibid.*, հոդված 17(2)(14)

¹⁶⁸ *Ibid.*, հոդված 17(2)(9)

¹⁶⁹ *Ibid.*, հոդված 17(2)(10)

¹⁷⁰ *Ibid.*, հոդված 17(2)(11)

¹⁷¹ *Ibid.*, հոդված 17(2)(3)

¹⁷² *Ibid.*, հոդված 17(2)(6)

¹⁷³ *Ibid.*, հոդված 17(2)(2)

ներկայացված հաշվետվություններ, դրանց վերաբերյալ ստեղծում, վարում և տնօրինում է միասնական համակարգ, ինչպես նաև հրապարակայնացնում է այն¹⁷⁴:

Դրամագլխի տնօրինում. ՀՀ բնապահպանության նախարարությունն է որոշումներ ընդունում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ¹⁷⁵:

Համայնքների տարածքներում իրականացվող բնապահպանական ծրագրերի համաձայնեցում. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է մի շարք ընկերությունների (ներառյալ ընդերքօգտագործման մեջ ներգրավված ընկերությունների) կողմից վճարվող բնապահպանական վճարներից մասհանումներ իրականացնելու և դրանք ազդակիր համայնքների բյուջեների վարչական մասում արտացոլելու ընթացակարգ¹⁷⁶, որի համաձայն, բնապահպանական վճարներից համայնքների վարչական բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար¹⁷⁷: Նման ծրագրերը, որոնք մշակվում են համայնքի ղեկավարների կողմից, համաձայնեցվում են ՀՀ բնապահպանության նախարարության (ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության) հետ¹⁷⁸:

ՀՀ կառավարության 2002թ. 8 օգոստոսի թիվ 1237-Ն որոշմամբ¹⁷⁹ հաստատված նախարարության կանոնադրության 7-րդ հոդվածով սահմանվում են նախարարության նպատակներն ու խնդիրները.

ա) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը.

բ) շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման և վերարտադրության պետական կառավարման ապահովումը:

Իսկ վերոնշյալ կանոնադրության 8-րդ հոդվածի համաձայն իրականացնում է

¹⁷⁴ *Ibid.*, հոդված 17(2)(13)

¹⁷⁵ *Ibid.*, հոդված 17(2)(4)

¹⁷⁶ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-188 (ընդունված 2001թ. մայիսի 15-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=25676>

¹⁷⁷ *Ibid.*, հոդ. 2

¹⁷⁸ *Ibid.*, հոդ. 3

¹⁷⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95812>

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման ու վերարտադրության բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

բ) ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի, հանքարդյունահանման համալիրի ապամոնիտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացում,

գ) ընդերքի օգտագործման հետ կապված՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառում:

ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018թ. թիվ 745-Լ որոշմամբ¹⁸⁰ հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարության նոր կանոնադրությունը:

(iv) Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարության **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը** ստեղծվել է ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշմամբ¹⁸¹, որով սահմանվել է նաև տեսչական մարմնի կանոնադրությունը (այն փոխարինել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը և ԷԲՊՆ աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունը): Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի կանոնադրության 9-րդ հոդվածի համաձայն, տեսչական մարմնի նպատակն է շրջակա միջավայրի պահպանումը և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումը: Տեսչական մարմինների խնդիրները սահմանվում են 10-րդ հոդվածով, որոնք են.

1) բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և այդ ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

2) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը,

¹⁸⁰<https://www.e-gov.am/decrees/item/18843/>

¹⁸¹ՀՀ կառավարության որոշում թիվ 445-Ն (ընդունված 2017թ.ապրիլի 27-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/28550/>

3) երկրաբանական լիակատար և համալիր ուսումնասիրության հիման վրա ընդերքի կառուցվածքի, դրանում պարունակվող օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ապահովումը:

Կանոնադրության 11-րդ հոդվածով սահմանվում են տեսչական մարմնի գործառույթները, այդ թվում և ընդերքօգտագործման և պահպանության ոլորտում:

ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11 թիվ 733-Լ որոշմամբ¹⁸² հաստատվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի նոր կանոնադրությունը: Տեսչությունն այժմ գործում է ՀՀ կառավարության ենթակայության ներքո: Այն կառավարվում է վարչապետի և 10 անդամից բաղկացած խորհրդի կողմից: Նոր կանոնադրության համաձայն, տեսչության խնդիրներն են՝ բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բնական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

(v) «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՀ բնապահպանության նախարարության կառավարման ներքո գործող «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ «ՇՄՄՏԿ ՊՈԱԿ»)՝¹⁸³ գործունեության առարկան և նպատակներն են.

- ▶ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) պահպանության բարձր մակարդակի ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով.
- ▶ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի մասին տեղեկատվությունը բնապահպանական միասնական տեղեկատվական շտեմարանում ներբեռնումն ու շտեմարանի վարումը.
- ▶ թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ու թափոնների դասակարգչի կազմման համար ուսումնասիրության իրականացումը, ինչպես նաև թափոնների օգտագործման ու վնասազերծման սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների մասին տվյալների հավաքումն ու վերլուծումը.
- ▶ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների մասին տվյալների հավաքագրման ու վերլուծության հիման վրա համապատասխան համակարգչային

¹⁸²<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124383>

¹⁸³ՇՄՄՏԿ ՊՈԱԿ-ի կայքը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://armmonitoring.am/#home>

շտեմարանների (բազա) ստեղծումը և վարումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանն այդ շտեմարաններում պարունակվող տեղեկությունների տրամադրումը և ստացումը:

ՇՄՄՏԿ ՊՈԱԿ-ը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի N 1277-Ն որոշման¹⁸⁴ համաձայն, «Թափոնների ուսումնասիրության կենտրոն, «Հիդրոէկոլոգիայի մոնիթորինգի կենտրոն», «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» և «Տեղեկատվական-վերլուծական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման արդյունքում և հանդիսանում է դրանց իրավահաջորդը՝ համաձայն փոխանցման ակտերի:

ՇՄՄՏԿ ՊՈԱԿ-ի խնդիրներն, ըստ ՀՀ կառավարության N 1277-Ն որոշման, հետևյալն են.

- ▶ պլանավորված ու միասնական ցուցանիշների կիրառմամբ դիտարկումների իրականացումը.
- ▶ բնածին ու մարդածին ազդեցությունների հետևանքով շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի փոփոխությունների բացահայտումն ու կանխատեսումը.
- ▶ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի, որակի ու քանակի վերաբերյալ բնութագրական համադրելի տեղեկատվության ստացումը, վերլուծությունը, ամփոփումն ու տրամադրումը.
- ▶ մթնոլորտային օդի աղտոտվածության, մթնոլորտային օդի վրա ֆիզիկական ներգործությունների, մթնոլորտում տեղի ունեցող բնական երևույթների, ինչպես նաև կլիմայի փոփոխությունների, օզոնային շերտը քայքայող նյութերի և մարդածին այլ ազդեցությունների ու երևույթների դիտարկումները.
- ▶ մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսների, ջրաէկոհամակարգերի, ջրային ռեսուրսների ծախսի, որակական ու քանակական հատկությունների, բաղադրության, քիմիական ու ռադիոակտիվ նյութերով և թափոններով աղտոտվածության, ինչպես նաև ջրային ռեսուրսների վիճակը վատթարացնող այլ ազդեցությունների ու երևույթների դիտարկումները և ուսումնասիրությունների իրականացումը.
- ▶ հողերի աղտոտվածության վիճակի ու որակական փոփոխությունների և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների ու երևույթների դիտարկումները և ուսումնասիրությունների իրականացումը.
- ▶ թափոնների և դրանց հեռացման վայրերի դիտարկումները և ուսումնասիրությունների իրականացումը, բացասական ազդեցությունները ներկայացնելը.
- ▶ բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների տեսակների ու դրանց պոպուլյացիաների, համակեցությունների բազմազանության, ինչպես նաև դրանց տարածվածության, աճելավայրերի ու բնակության վայրերի և տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերի դիտարկումները և ուսումնասիրությունների իրականացումը:

¹⁸⁴<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110145>

(vi) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 21-ի թիվ 1846-Ն որոշմամբ, որի գործունեության առարկան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության բնագավառում լիազոր մարմնի գործունեության ապահովումն ու փորձաքննական կենտրոնի լիազորությունների կատարումն է: Որոշման 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում են ՊՈԱԿ-ի լիազորությունները, որոնք են.

- ա. փորձաքննական գործընթացին վերաբերող քաղաքականության մշակմանը մասնակցելը,
- բ. փորձաքննական գործընթացը կարգավորող իրավական ակտերի մշակմանը մասնակցելը,
- գ. իր իրավասության սահմաններում փորձաքննության իրականացումը, փորձաքննական եզրակացության կազմումն ու տրամադրումը,
- դ. փորձաքննական գործընթացում պայմանագրային հիմունքներով փորձագետների ներգրավումը,
- ե. առնչվող մարմինների հետ անհրաժեշտության դեպքում հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության համաձայնեցումը,
- զ. հանրային լսումներում իր ներկայացուցչի մասնակցության ապահովումը,
- է. տեխնիկական առաջադրանքի կազմումն ու ձեռնարկողին տրամադրումը:

ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարի 2015 թ. . թիվ 14-Ա որոշմամբ:

(vii) ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»

ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը ստեղծվել է 2010թ. ՀՀ կառավարության N°1191-Ն որոշմամբ¹⁸⁵ նախկինում գործած «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի բազայի վրա, որն էլ «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման» ԾԻԳ պետական հիմնարկի իրավահաջորդն ու գործունեության շարունակողն էր: Վերջինիս կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 13 հունվարի 2011թ. թիվ 9-Ն որոշմամբ¹⁸⁶:

Հիմնարկի գործունեության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումն է: Հիմնարկի գործունեության հիմնական ոլորտներն են Հայաստանի Հանրապետության կառավարության

¹⁸⁵<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=93665>

¹⁸⁶<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67015>

կողմից հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և տարածքային կառավարման մարմինների բնապահպանության ոլորտի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու և դրամաշնորհային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին մշակված ծրագրերը և աշխատանքները, այդ թվում՝

- 1) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերարտադրության բնագավառի պետական ծրագրերի իրականացման ապահովումը.
- 2) բնական ռեսուրսների կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի և պետական պատվերի իրականացումը.
- 3) բնապահպանության ոլորտում նախապատրաստական և ներդրումային միջազգային ծրագրերի իրականացումը:

Հիմնարկի խնդիրներն են՝

- 1) ծրագրի իրականացման շրջանակներում աշխատանքների կատարման ընթացիկ ժամանակացույցի և ծրագրի նախահաշիվների կազմումը, եթե ծրագրի կամ դրա բաղադրիչներից մեկի իրականացումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված չէ երրորդ անձի,
- 2) ծրագրի իրականացման նպատակով մրցույթների անցկացումը, առաջարկների գնահատումն ու վերլուծումը,
- 3) ծրագրով նախատեսված աշխատանքների որակի, ժամկետների և կատարման նկատմամբ հսկողությունը,
- 4) ծրագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների (այդ թվում՝ նաև խորհրդատվական) ձեռքբերումը, եթե ծրագրի իրականացման պլանի համաձայն ծրագրի որևէ բաղադրիչի իրականացումը վերապահված չէ երրորդ անձի,
- 5) գործունեության համար անհրաժեշտ նախագծային աշխատանքների, փորձագիտական գնահատումների պատվիրումը,
- 6) ծրագրի իրականացման հետ կապված վճարումների ղեկավարումը,
- 7) Հայաստանի Հանրապետության կառավարության անունից համապատասխան ծրագրում (ծրագրերում) նշված աշխատանքների պատվիրատուի գործառույթների իրականացումը,

- 8) ծրագրի շրջանակներում ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման նպատակով տեխնիկական առաջադրանքների պատրաստումը, մրցույթների անցկացումը, առաջարկների գնահատումն ու վերլուծումը, եթե դրանք ՀԳՄ-ի (Հանրապետական գործադիր մարմին) բացառիկ իրավասությունը չեն, կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ, կամ ծրագրի իրականացման պլանի համաձայն ծրագրի որևէ բաղադրիչի իրականացումը վերապահված չէ երրորդ անձի,
- 9) ծրագրի իրականացման հետ կապված պայմանագրերի նախագծերի նախապատրաստումն ու կնքումը՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ համաձայն վարկատուի կանոնակարգի,
- 10) ծրագրի իրականացման մոնիթորինգը՝ ներառյալ համապատասխան միջազգային կամ օտարերկրյա վարկատու կազմակերպության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ձևով հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը,
- 11) վարկային և դրամաշնորհային ծրագրով նախատեսված մասհանումների համար անհրաժեշտ դիմումներ կազմելը և ներկայացնելը: Վարկառուի (ենթավարկառուի) կամ դրամաշնորհ ստացողի և հիմնարկի միջև կնքված պայմանագիրը կարող է առաջադրել այլ լրացուցիչ խնդիրներ և գործառույթներ,
- 12) երրորդ անձի հետ միասին ծրագիրը կամ դրա որևէ բաղադրիչն իրականացնելիս՝ սույն կետի 11-րդ ենթակետով նախատեսված գործառույթները երրորդ անձի հետ համատեղ իրականացնելը կամ այդ գործառույթների իրականացման նպատակով ներկայացուցիչ նշանակելը:

(viii) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն (այսուհետ՝ «ԱԻՆ») արտակարգ իրավիճակների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն է: Օրենսգրքի համաձայն այն օժտված է մի շարք լիազորություններով, որոնք վերաբերվում են օգտակար հանածոյի արդյունահանման նախագծերի տեխնիկական անվտանգության փորձաքննություններին, ինչպես նաև, այսպես կոչված, արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման գործընթացին:

Այսպես, Օրենսգրքի համաձայն օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումին կից օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության, որը կազմակերպվում է ԱԻՆ-ի կողմից՝ ԷԲՊՆ կողմից նախագիծը ստանալուց հետո 60-օրյա ժամկետում: Նախագծի առնչությամբ ԱԻՆ-ը տրամադրում է փորձաքննական եզրակացություն¹⁸⁷:

¹⁸⁷Օրենսգրք, հղում Error! Bookmark not defined., հոդված 51(2)(1)

Ինքնին փորձաքննություն իրականացնում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և ԱԻՆ-ի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը¹⁸⁸ ՀՀ կառավարության կողմից հաստատված «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգի» համաձայն¹⁸⁹: ԱԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, դրանց ցանկը հետևյալն է՝

1. «Դամի» տեխնիկական անվտանգության ծառայություն ՍՊԸ
2. «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
3. «Պրոմէքսպերտ գրուպ» ՍՊԸ
4. ՀՀ ԱԱՊ «Արմէքսպերտիզա» ՍՊԸ
5. «Արիաս էքսպերտ գրուպ» ՍՊԸ, որի գործունեությունը դադարեցվել է իր դիմումի համաձայն:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը գործում է ԱԻՆ ենթակայության ներքո, որը ՊՈԱԿ-ի կառավարման լիազոր մարմինն է: ՊՈԱԿ-ի գործունեության հիմնական առարկան և նպատակը արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման գործառնություններ կազմակերպելն ու իրականացնելն է: Վերջինիս գործառնությունները և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների անցկացման կարգը կարգավորվում են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով:

Բացի այդ, Օրենսգրքի համաձայն բոլոր ընդերքօգտագործողները, նախքան ընդերքօգտագործման գործունեության մեկնարկը, պարտավոր են մշակել արտակարգ իրավիճակներում գործելու պլան՝ նշելով այն միջոցառումները, որոնք ուղղված են լինելու վթարների կանխարգելմանը, հետևանքների նվազեցմանը, իրենց աշխատակիցների և հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության պաշտպանությանը¹⁹⁰: Պլանի նպատակներն են՝

- ▶ վթարների և այլ միջադեպերի սահմանում, նկարագրում ու հսկողություն՝ դրանց հետևանքները նվազեցնելու, մասնավորապես մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող վնասները հնարավորինս չեզոքացնելու կամ նվազեցնելու համար,
- ▶ վթարների և այլ միջադեպերի ազդեցություններից մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում,
- ▶ տվյալ տարածաշրջանում հանրությանը և համապատասխան ծառայություններին կամ մարմիններին անհրաժեշտ տեղեկությունների հաղորդում,
- ▶ վթարներից հետո շրջակա միջավայրի վերականգնման ու մաքրման աշխատանքների նախատեսում:

¹⁸⁸Տե՛ս «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-204-Ն (2005թ. հոկտեմբերի 24), հոդված 11(1)

¹⁸⁹ՀՀ կառավարության որոշում թիվ 1359-Ն (ընդունված 2011թ. սեպտեմբերի 22-ին)

¹⁹⁰Օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդված 60.6(3)(2)

Խնդրո առարկա՝ արտակարգ իրավիճակներում գործելու պլանի բովանդակության և դրա մշակման մեթոդական ուղեցույցը սահմանում է ԱԻՆ-ը¹⁹¹: Օրենսգիրքը նախատեսում է նաև ազդակիր համայնքի բնակչության իրավունքը՝ մասնակցելու արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակմանն ու վերանայմանը և ԱԻՆ-ի պարտականությունը՝ համապատասխան աշխատանքների մասին տեղեկացնելու ազդակիր համայնքին¹⁹²: ԱԻՆ-ն է սահմանում նաև ազդակիր համայնքի բնակչությանը տեղեկացնելու, ազդակիր համայնքի բնակչության կողմից առաջարկություններ ներկայացնելու և այդ առաջարկությունների քննարկման կարգը:

Արտակարգ իրավիճակներում գործելու պլանի բովանդակության և դրա մշակման մեթոդական ուղեցույցը սահմանվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2018թ. ապրիլի 3-ի թիվ 316-Ա որոշմամբ, իսկ արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման և վերանայման գործընթացներին բնակչության մասնակցությունն ապահովելու նպատակով՝ ազդակիր համայնքի բնակչությանը տեղեկացնելու, ազդակիր համայնքի բնակչության կողմից առաջարկություններ ներկայացնելու և այդ առաջարկությունները քննարկելու կարգը սահմանվել է նախարարի 2018թ. մարտի 30-ի թիվ 302-Ն հրամանով:

(ix) Առողջապահության նախարարություն

ՀՀ առողջապահության նախարարությունը, որպես առողջապահության ոլորտի լիազոր մարմին, ունի որոշակի իրավասություններ, որոնք առնչվում են արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակմանը ու վերանայմանը: Այսպես, Օրենսգրքի համաձայն Առողջապահության նախարարությունը կարող է մասնակցել արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակմանն ու վերանայման գործընթացին¹⁹³: Այս նպատակով ԱԻՆ Առողջապահության նախարարությանը տեղեկացնում է համապատասխան աշխատանքների իրականացման մասին՝ տրամադրելով տեղեկություններ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու ընթացակարգի և այն լիազոր մարմինների մասին, որոնք պետք է ներգրավվեն գործընթացին:

Վթարների պարագայում ընդերքօգտագործողները պարտավոր են անհապաղ Առողջապահության նախարարությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մարդու առողջության համար նման վթարների հետևանքները նվազեցնելու նպատակով¹⁹⁴:

(x) Պետական եկամուտների կոմիտե

Հաշվետու ժամանակաշրջանում պետական եկամուտները վերահսկող մարմինն անվանվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (առանձնացվել է ՀՀ ֆինանսների նախարարությունից ՀՀ նախագահի 2016թ. մարտի 1-ի ՆՀ-213-Ն հրամանագրի հիման վրա): Մինչ այդ (սկսած 2014թ.-ից) վերջինիս գործառույթներն իրականացրել է ՀՀ ֆինանսների նախարարությունը: 2018թ.-ի ապրիլի 9-ից խնդրո առարկա կառույցը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» անվան ներքո (այսուհետ միասին՝ «ՊԵԿ»):

¹⁹¹Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 60.6(5)

¹⁹²*Ibid.*, հոդ. 60.6(10)

¹⁹³*Ibid.*, հոդ. 60.6(9)

¹⁹⁴*Ibid.*, հոդ. 60.6(7)

ՊԵԿ-ը «Հարկային ծառայության մասին», «Մաքսային կարգավորման մասին» և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված հարկային և մաքսային մարմին է¹⁹⁵: Վերջինիս գործառույթների մեջ, ի թիվս այլոց, մտնում է ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ու կիրառման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը, ՀՀ հարկային օրենսդրության պահանջների խախտումների (հարկային հանցագործությունների) կանխումը, խափանումը, այդ խախտումների բացահայտումը, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների իրականացումը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում պետական տուրքերի, ոչ հարկային եկամուտների և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը:

Իրավական առումով խնդրահարույց է բնօգտագործման վճարների (ռոյալթիների) վճարման մասով ՊԵԿ-ի կողմից իրականացվող ստուգումների և վարչական ակտերի միջոցով դրանց գանձման պրակտիկան: Ինչպես արդեն նշվել է վերը, ընդերքի օգտագործման և ընդերքօգտագործման իրավունքի դիմաց պետությանը բնօգտագործման վճար՝ ռոյալթի վճարելու առնչությամբ ձևավորված հարաբերություններն իրենց էությամբ հանդիսանում են մասնավոր իրավական հարաբերություններ, ինչը հաստատվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից¹⁹⁶: 2009թ. հուլիսի 18-ի իր ՍԴՈ-816 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև օրենսդրությունում առկա բացերը, որոնք կապված են բնօգտագործման վճարների նկատմամբ կիրառելի ռեժիմի հետ.

«Չնայած նրան, որ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում այդ վճարի իրավական բովանդակությունը հստակ է, սակայն [...] «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «...Թեմայիկ են [...]բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները ...»: Միաժամանակ, «ՀՀ բյուջեային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետի «թ» ենթակետը բնօգտագործման վճարը դիտում է որպես հարկային եկամուտ: Նման իրավիճակի բացառման և օրենսդրական հստակ կանոնակարգման խնդիրը պետք է լուծվի ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական քաղաքականության շրջանակներում»:

Չնայած վերոգրյալ որոշմամբ արտահայտած դիրքորոշմանը, Օրենսդիրն այդպես էլ չի շտկել նշված խնդիրները: Արդյունքում, ընդերքօգտագործողների կողմից սխալ հաշվարկված


¹⁹⁵ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրություն, ՀՀ կառավարության թիվ 224-Ն որոշում (ընդունված 2016թ. մարտի 10-ին), Հավելված 1

¹⁹⁶«Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի և «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի դիմումների հիման վրա՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7 և 19 հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում, թիվ ՍԴՈ-816 (18 հուլիսի 2009թ.):

ռոյալթիների առնչությամբ ՊԵԿ-ն ընդունում է վարչական ակտեր: Մինչդեռ վարչական ակտերը անհատական ներգործության իրավական ակտեր են, որոնք ընդունվում են հանրային իրավունքի բնագավառում¹⁹⁷: Ինչպես առարկա ակտերն իրենց հերթին ենթակա են հարկադիր կատարման և դրանց առնչությամբ կարող են կիրառվել արգելանքներ, բացի այդ ակտերը բողոքարկվում են ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովում կամ վեճի առարկա են դառնում վարչական դատավարության շրջանակներում (բայց ոչ քաղաքացիական դատավարության), ինչն էականորեն հակասում է բնօգտագործման հարաբերությունների մասնավոր բնույթին և էությանը:

(xi) *Տեղական ինքնակառավարման մարմիններ*

Ընդերքի օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության և ֆինանսական բնագավառներում որոշակի իրավասություններով են օժտված նաև տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետ՝ «ՏԻ մարմիններ»): Վերջիններիս իրավասությունները պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի՝ ըստ ստորև ներկայացված աղյուսակի:



Բնապահպանական հարցեր. Օրենսգրքի համաձայն ռեկուլտիվացիայի՝ ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների) ծրագիրը, որը պետք է ներառվի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից, պետք է ներկայացվի համայնքի ղեկավարի համաձայնությամբ¹⁹⁸:

Տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված են իրավասություններ նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները:

¹⁹⁷«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-41-Ն (ընդունված 2004թ. փետրվարի 18-ին), հոդված 53(1)՝ «[վ]արչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»:

¹⁹⁸Օրենսգրք, *supra* հղում **Error! Bookmark not defined.**, հոդված 17(3)(2)

- 1) համայնքին առնչվող հիմնադրությային փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության վերաբերյալ տրամադրում են կարծիք, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,
- 2) իրենց լիազորության սահմաններում ապահովում են օրենքով սահմանված կարգով հիմնադրությային փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ ծանուցումները, հանրային լուսմների կազմակերպումը և հանրության մասնակցության ապահովումը,
- 3) ձեռնարկողի պահանջով տարածքին առնչվող գործող հիմնադրությային փաստաթղթերի վերաբերյալ տրամադրում են տեղեկատվություն,
- 4) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում ձեռնարկողին տրամադրում են համապատասխան խորհրդատվություն, ինչպես նաև ազդեցության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվություն¹⁹⁹:

Հողօգտագործման իրավունքի տրամադրում. Ընդերքի օգտագործման իրավունք ստացած անձը հանքարդյունահանման աշխատանքները չի կարող սկսել առանց տվյալ տարածքի համապատասխան սեփականատիրոջ համաձայնության կամ հողատարածքի օգտագործման պայմանագրի: Եթե հողատարածքը պատկանում է համայնքին, ապա համայնքի ավագանու որոշմամբ, համայնքի ղեկավարը ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ կնքում է հողօգտագործման պայմանագիր²⁰⁰:

Ֆինանսական հարցեր. ՏԻ մարմիններն օժտված են նաև որոշակի իրավասություններով ֆինանսական բնագավառում: Մասնավորապես, համայնքի ղեկավարը կազմակերպում է տեղական հարկերի (անշարժ գույքի հարկ, փոխադրամիջոցների գույքահարկ²⁰¹), տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը, ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը (օրենսդրի կողմից նախատեսված թույլատրելի սահմաններում), չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ²⁰²:

Սոցիալ-տնտեսական հարցեր. Թեև ընդերքօգտագործողների կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների առաջնային շահառուներն են հանդիսանում տեղական համայնքները (հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքը), սակայն օրենսդրությունը որևէ հստակ մեխանիզմ չի արձանագրում ընդերքօգտագործողների սոցիալ-տնտեսական պարտավորությունների շրջանակի ձևավորման և հստակեցման գործընթացում համայնքը ներկայացնող ՏԻ մարմինների մասնակցության համար:

¹⁹⁹«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-110-Ն (2014թ. հունիսի 21), հոդ. 13

²⁰⁰Օրենսգիրք, *supra* հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 17(3)(1)

²⁰¹Հարկային օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 6(1)(2)

²⁰²«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-337 (2002թ. մայիսի 7), հոդ. 38(1)(3)-(4)

Գ. Պետության կողմից հանքարդյունաբերական կազմակերպություններին տրվող արտոնություններ

ՀՀ օրենսդրությամբ հենց հատուկ հանքարդյունաբերական ընկերություններին տրվող արտոնություններ սահմանված չեն: Ավելին, օրենսդրությամբ սահմանված մի շարք հարկային արտոնությունների կիրառումը մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) վերամշակման ոլորտում ներգրավված ընկերությունների պարագայում բացառվում է օրենքի ուժով²⁰³: Օրենսդրությունը, սակայն, նախատեսում է մի շարք հարկային և մաքսային արտոնություններ, որոնցից կարող են օգտվել ներդրումային ծրագրեր իրականացնող ձեռնարկատերերը, այդ թվում՝ ընդերքօգտագործողները: Նման արտոնությունների տրամադրման իրավասությունը, որպես կանոն, գտնվում է ՀՀ կառավարության իրավազորության տիրույթում: Հիշատակման արժանի են, մասնավորապես, ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման և գերակա ճանաչված ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումները մաքսատուրքից ազատելու արտոնությունները, որոնք յուրաքանչյուրը հաշվետու ժամանակահատվածում մեկական անգամ կիրառվել են ընդերքօգտագործման ոլորտում:

Ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգում. Հարկային օրենսգիրքը սահմանում է ներդրումային ծրագրերի շրջանակներում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի հետաձգելու ընթացակարգ՝ Կառավարությանը պատվիրակելով ներդրողների ընտրության կարգը սահմանելու լիազորությունը: Հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասում.

«[ՀՀ] կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում [...] ապրանքների ներմուծման մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարի ժամկետով: Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Վերոգրյալ դրույթի հիման վրա ՀՀ կառավարությունը 2017թ. հոկտեմբերի 5-ին ընդունել է թիվ 1225-Ն որոշումը, որով սահմանել է «Ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը»²⁰⁴:

Նախորդ կարգավորման համաձայն, փոփոխության են ենթարկվել գնահատման ընթացքում կիրառվող չափանիշները, որոնք ներկայացված են 3.1.7 աղյուսակում:

²⁰³Օրինակ, 2018թ. հունվարի 1-ից գործող Հարկային օրենսգիրքը, սահմանելով նվազեցված դրույքաչափով շահութահարկի արտոնություն, որը կիրառվում է ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագրերի պարագայում, հստակ բացառում է դրա կիրառումը (ի թիվս այլոց) մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) վերամշակման ոլորտներում գործունեություն իրականացնող ընկերությունների պարագայում (128-րդ հոդված, 1-ին մաս 1-ին կետ) :

²⁰⁴ՀՀ կառավարության որոշում թիվ 1225-Ն (2017թ. հոկտեմբերի 5-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119820>

Աղյուսակ 3.1.7 Ներդրումային ծրագրերի գնահատման չափանիշներն ըստ թիվ 1225-Ն որոշման

Ներդրումային ծրագրերի գնահատման չափանիշներն ըստ թիվ 1225-Ն որոշման	Միավոր
Տնտեսության վրա մուտիպլիկատիվ ազդեցություն	7
Զբաղվածության ընդլայնում	10
Նորարարություն և արտադրողականության բարձրացում	10
Արտահանման ուղղվածություն	10
Ծրագրի իրականացման շրջանակներում տրվող միջին աշխատավարձ	10
Անձի համապատասխանությունը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասակարգմանը	3

Գնահատումն իրականացնող գերատեսչություններն են՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՊԵԿ-ը և ոլորտի լիազոր պետական մարմինը, որոնք գնահատականը՝ ծրագրի վերաբերյալ կարծիքների հետ միասին, ներկայացնում են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ամփոփելով կարծիքներն ու գնահատականները, մշակում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ և ներկայացնում ՀՀ կառավարության աշխատակազմ:

Հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործող ընկերություններից միայն «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն է օգտվել խնդրո առարկա արտոնությունից. ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 20-ի թիվ 417-Ա որոշմամբ վերջինիս տրամադրվել է 2017թ. ապրիլի 14-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը, ներառյալ՝ ներմուծվող 27,677,784,604 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 155 անուն ապրանքների մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգելու արտոնություն՝ ներմուծման հայտարարագրման օրվանից հաշված 3 տարի ժամկետով²⁰⁵:

Գերակա ճանաչված ոլորտներում ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ազատում մաքսատուրքից. 2015թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ կառավարությունը, օգտվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրի՝ Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին թիվ 6 հավելվածով տրամադրված հնարավորությունից, ընդունեց թիվ 1118-Ն որոշումը՝ սահմանելով գերակա ճանաչված ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում Հայաստանի ներմուծվող և բացառապես Հայաստանի տարածքում օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը (այսուհետ՝ «սարքավորումներ և նյութեր») օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսատուրքից ազատելու ընթացակարգ²⁰⁶:

Նման սարքավորումները և նյութերը ազատվում են մաքսատուրքից, եթե դրանք չեն արտադրվում ԵԱՏՄ անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ

²⁰⁵ՀՀ կառավարության որոշում թիվ 417-Ա (2017թ. ապրիլի 20), Հավելված 1
²⁰⁶ՀՀ կառավարության որոշում թիվ 1118-Ն (2015թ. սեպտեմբերի 17), Հավելված 1

բավարար քանակով) կամ չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին:

Մաքսատուրքից ազատվելու վերաբերյալ հայտերը ներկայացվում են Կառավարություն՝ հայտի մեջ ներառելով ներդրումային ծրագիրը, սարքավորումների և նյութերի ցանկը և տեխնոլոգիական բնութագիրը և հայտարարություն՝ ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված կամ ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները և նյութերը բացառապես ՀՀ տարածքում օգտագործելու վերաբերյալ²⁰⁷:

Հայտի առնչությամբ կարծիք են տրամադրում ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՊԵԿ-ը և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան ոլորտային նախարարությունը²⁰⁸: Ներկայացված կարծիքներն ամփոփվում են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից, որը պատրաստում է եզրակացություն և ներկայացնում այն ՀՀ կառավարության աշխատակազմ²⁰⁹ (Արդարադատության նախարարությունն, իր հերթին, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության եզրակացության առնչությամբ տալիս է կարծիք²¹⁰):

Հայտի վերաբերյալ գերատեսչությունների կարծիքները և եզրակացությունը կազմվում են 3.1.8 աղյուսակում ներկայացված չափանիշների հիման վրա²¹¹:

Աղյուսակ 3.1.8 Ներդրումային ծրագրերի գնահատման չափանիշներն ըստ Կառավարության թիվ 1118-Ն որոշման

Ներդրումային ծրագրերի գնահատման չափանիշներն ըստ Կառավարության թիվ 1118-Ն որոշման	
1	Ներդրումային ծրագիրն իրականացվում է գերակա ոլորտում
2	Ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը և (կամ) հումքն ու նյութերը կկիրառվեն բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում
3	Ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը չեն արտադրվում ԵՏՄ անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով) կամ չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին
4	Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում փաստացի իրականացված կամ կանխատեսվող ներդրումների ծավալը

²⁰⁷ Ibid., կետեր 4 և 5

²⁰⁸ Որոշում թիվ 1118-Ն, հղում **Error! Bookmark not defined.**, Հավելված 1, կետ 7: Որոշումը հիշատակում է նաև ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը, որը, սակայն, այլևս գոյություն չունի. 2018թ. մարտի 23-ին ընդունված և 2018թ. ապրիլի 9-ից գործող «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի (թիվ ՀՕ-253-Ն) համաձայն, այս նախարարությունն այլևս գոյություն չունի և դադարել է գործել ՀՀ վարչապետի աշխատակազմի ստեղծման ուժով: Սակայն Կառավարության որոշումը դեռևս չի վերախմբագրվել: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում նշված գերատեսչության լուծարմամբ առաջացող բոլոր հարցերը՝ այն միայն նշում է, որ «Վարչապետի աշխատակազմը միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության իրավահաջորդն է միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու մասով» (20-րդ հոդված, 5-րդ մաս):

²⁰⁹ Ibid., կետ 9

²¹⁰ Ibid., կետ 11

²¹¹ Ibid., կետ 10

5	Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում արտադրված (արտադրվող) արտադրատեսակը, իրացման ծավալները (փաստացի կամ կանխատեսվող) և իրացման ուղղությունները
6	Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ստեղծված (ստեղծվող) նոր աշխատատեղերը

Հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործող ընկերություններից միայն «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն է օգտվել խնդրո առարկա արտոնությունից. ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 23-ի թիվ 698-Ա որոշմամբ վերջինիս տրամադրվել է ընդհանուր առմամբ 2,489,000,000 ՀՀ դրամ արժողությամբ ներմուծված (ներմուծվող) թվով 5 անուն սարքավորումները և նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնություն²¹²:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հարկային արտոնություններից ընդերքօգտագործող ընկերությունները չեն օգտվել:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված են նաև «ստաբիլիզացիոն դրույթներ» ընդերքօգտագործողների, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների համար (ընդերքօգտագործող կազմակերպությունների մի մասի մասնակցությունը փաստացի ուղղակի օտարերկրյա ներդրում է): Այսպես, Օրենսգրքի 25-րդ հոդվածը («Ընդերքօգտագործման իրավունքի երաշխիքներ») սահմանում է.

«Ընդերքօգտագործողի իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պահից սկսած՝ 3 տարվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունք ստացած անձի նկատմամբ, վերջինիս կողմից լիազոր մարմնին ուղղված դիմումի հիման վրա կիրառվում են օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման պահին գործող բնօգտագործման վճարների (այդ թվում՝ ռոյալթիի), ռեզիդենտների շահութահարկի, ոչ ռեզիդենտների շահութահարկի, տոկոսադրույքների, ռոյալթիների հարկման դրույքաչափերը»:

Սույն կարգավորումն իրավունք է տալիս ընդերքօգտագործողներին, որոնք ընդերքօգտագործման իրավունքը ստացել են վերջին երեք տարիների ընթացքում, անբարենպաստ օրենսդրական փոփոխությունների դեպքում պահանջել էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունից, որպեսզի իրենց նկատմամբ կիրառվեն օրենքի նախկին առավել բարենպաստ կարգավորումները, եթե այդ փոփոխությունները վերաբերում են բնօգտագործման վճարների, ռեզիդենտների շահութահարկի, ոչ ռեզիդենտների շահութահարկի, տոկոսադրույքների, ռոյալթիների հարկման դրույքաչափերին:

Հատկանշական է, սակայն, որ նշված վճարները գտնվում են ՊԵԿ-ի վերահսկողության, այլ ոչ թե ԷԲՊՆ վերահսկողության տիրույթում: Ուստի անգամ համապատասխան դիմումը ներկայացնելու պայմաններում՝ անհասկանալի է արտոնության կիրարկման իրական ընթացակարգը: Այս իրավական անորոշությունը կարող է լրացվել Կառավարության որոշման ընդունման պարագայում, սակայն դրա համար անհրաժեշտ է նաև համապատասխան օրենսդրական փոփոխություն

²¹² ՀՀ կառավարության որոշում 698-Ա (2017թ. հունիսի 23), Հավելված 1: Ներմուծված ապրանքներն են՝ անվավոր բուլդոզեր, փոխակրիչներ և փոխակրիչների ժապավեններ:

(հողվածը պետք է սահմանի Կառավարությանը նման իրավասություն պատվիրակելու մասին դրույթ):

Համանման «ստաբիլիզացիոն դրույթ» սահմանված է նաև «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում, որի 7-րդ հոդվածն («Երաշխիքներ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում») արձանագրում է.

«Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությանը, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը»:

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նշված կարգավորման կիրարկման հստակ ընթացակարգեր, որի արդյունքում այն դարձել է դատական վեճերի առարկա: Մասնավորապես, «Դինո Գոլդ Մայնինգ Քամինի» ՓԲԸ-ն²¹³ ընդդեմ ՊԵԿ-ի թիվ ՎԴ/0724/05/10 գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր 2011թ. ապրիլի 29-ի որոշմամբ սահմանել է.

«[Ն]շված իրավանորմի կիրառման միակ պայման է օտարերկրյա ներդրողի ցանկությունը, որը օտարերկրյա ներդրողը պետք է արտահայտի որևէ ձևով՝ իր գործունեության դրսևորմամբ, հայտարարություն տարածելով և այլ ցանկացած եղանակով, որպեսզի ընկերության գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին պարզ լինի, որ ՀՀ որևէ օրենսդրական փոփոխության դեպքում այդ ընկերությունը շարունակում է կիրառել հին օրենսդրությունը: Այդ ցանկությունը պետք է արտահայտվի ՀՀ օրենսդրության փոփոխության ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, կամ առնվազն ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում»:

Այսպիսով, ֆորմալ իրավական ընթացակարգերի բացակայության պայմաններում ներդրողներից ակնկալվում է առնվազն որոշակի ակտիվ գործողությունների կատարում, որի շնորհիվ կոնկրետ ոլորտի համար պատասխանատու պետական մարմինը կարող է ընկալել ներդրողի ցանկության փաստը:

²¹³«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի անվանումը նախկին բաժնետերերի օրոք
158


3.2 Թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման ընթացակարգեր, դրանց հաշվառումը (պահանջ 2.2 և 2.3)

Ա. Թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման գործընթաց

(i) Ընդհանուր նկարագիր

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում ընդերքը պատկանում է պետությանը և համարվում վերջինիս բացառիկ սեփականությունը: Ընդերքօգտագործողներին ընդերքը տրամադրվում է միայն օգտագործման իրավունքով՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է ընդերքօգտագործման երկու առևտրային ռեժիմ և այդ ռեժիմներին համապատասխան թույլտվությունների երկու տեսակ՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն (օրենսդրությամբ կարգավորված է նաև առանձին՝ երկրաբանական ուսումնասիրությունների համար համաձայնությունների տրամադրման ռեժիմը):


Առաջինը իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման համար, երկրորդն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ:



Օրենսդրությունը կարգավորում է նաև ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը. իրավունքի օտարումը երրորդ անձանց կամ փոխանցումը թույլտվություն ունեցող իրավաբանական անձի վերակազմակերպման արդյունքում բաժանման կամ առանձնացման ճանապարհով ստեղծված նոր իրավաբանական անձին, իրականացվում է բացառապես ԷԲՊՆ համաձայնությամբ:

Ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց

բաժնեմասերի/բաժնետոմսերի առուվաճառքը, սակայն, որևէ կարգավորման և վերահսկողության չի ենթարկվում (բացառությամբ, իհարկե, տնտեսական մրցակցությունը կանոնակարգող կիրառելի նորմերի):



(ii) *Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման ընթացակարգը*

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունների ստացման (ուսումնասիրության իրավունքի հայցման) ընթացակարգը կարգավորվում է Օրենսգրքով: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու դիմումը ներկայացվում է ԷԲՊՆ: Դիմումն իր մեջ պարունակում է ստորև աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը²¹⁴:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով դիմումում ներառվող տեղեկատվություն և կից փաստաթղթեր	
1	դիմումատուի կորպորատիվ տվյալները (դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը) ¹ իրավաբանական անձի դեպքում
2	աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը
3	երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածո(ները)
4	ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, և հատակագիծը՝ ծայրակետային կողորհնատներով
5	երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը (որը ներկայացվում է ԷԲՊՆ հետ համաձայնեցման նպատակով), որը ներառում է և դրան կցվում են՝ ²¹⁵
	i. կատարվելիք աշխատանքների նպատակներն ու ենթադրվող ժամկետները
	ii. աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, և մոտավոր ծավալները
	iii. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրին կցվում են
	(a) անհրաժեշտ քարտեզագրական նյութերը (c) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների ծրագիրը, (d) ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները:
6	տվյալներ դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի վերաբերյալ
7	դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան
8	ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը
9	Ներկայացված փաստաթղթերի ցանկը:

²¹⁴Օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 38

²¹⁵Օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդ. 39

Վերը՝ 8-րդ կետով սահմանված՝ դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն գնահատվում են բավարար, եթե.

- ▶ ֆինանսական միջոցների առկայության մասով՝
 - դիմումատուի սեփական ֆինանսական միջոցները բավարար են ծրագրի կամ նախագծի իրականացման համար,
 - որպես այլընտրանք, դիմումատուն ունի ֆինանսական կազմակերպության (բանկի) հետ կնքված վարկային գծի տրամադրման կամ բանկային երաշխիքի կամ ներգրավված ֆինանսական միջոցների փոխառության մասին պայմանագիր, որով նախատեսված ֆինանսական միջոցները բավարար են ծրագրի կամ նախագծի իրականացման համար,
 - դիմումատուն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ.
- ▶ տեխնիկական միջոցների առկայության մասով՝
 - դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող տեխնիկական միջոցների քանակը բավարար է ծրագրի կամ նախագծի իրականացման համար,
 - որպես այլընտրանք, դիմումատուն ունի տեխնիկական միջոցների օգտագործման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված համապատասխան պայմանագիր, որով նախատեսված տեխնիկական միջոցների քանակը բավարար է ծրագրի կամ նախագծի իրականացման համար²¹⁶:

Կառավարության կողմից հաստատվել է նաև ֆինանսական և տեխնիկական կարողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու ընթացակարգը²¹⁷ և համապատասխան ձևերը (ընդերքօգտագործման ոլորտում ունեցած մասնագիտական աշխատանքի փորձի մասին տեղեկանք, պահանջվող ինժեներատեխնիկական կազմի առկայության մասին տեղեկանք, անհրաժեշտ տեխնիկական կարողությունների ու միջոցների առկայության մասին տեղեկանք, անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին տեղեկանք, ՀՀ հարկային մարմինների կողմից տրված՝ հարկային պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք):

Ինչպես երևում է վերը սահմանված աղյուսակից, դիմումին կից ներկայացվում է նաև Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը, որը պետք է ներառի կատարվելիք աշխատանքների նպատակներն ու ենթադրվող ժամկետները, ինչպես նաև աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, և մոտավոր ծավալները: Ծրագրին կցվում են քարտեզագրական նյութեր, ՇՄԱԳ հայտը (բնապահպանական միջոցառումների ծրագրի հետ միասին) և ընդերքօգտագործման թափոնների կառավարման

²¹⁶«Ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությանը ներկայացվող որակական չափանիշների գնահատման կարգ», ՀՀ կառավարության որոշում 368-Ն (ընդունված 2013թ. մարտի 28-ին), Հավելված, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82723>:

²¹⁷«Ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների բովանդակությունը և դրանց ներկայացվող պահանջները», ՀՀ կառավարության որոշում 367-Ն (ընդունված 2013թ. մարտի 28-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82720>:

պլանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, իսկ այն դիմումատուների դեպքում, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոնները՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը համաձայնեցվում է ԷԲՊՆ հետ: Առանց ծրագրի համաձայնեցման երկրաբանական ուսումնասիրությունների իրականացում չի թույլատրվում:

Դիմումների քննարկումը. Դիմումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, ԷԲՊՆ դիմումատուին ծանուցում է դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ամբողջականության և դիմումի գրանցման մասին: Դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, ԷԲՊՆ քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը և դիմումի հետ ներկայացված ՇՄԱԳ հայտի, քարտեզագրական նյութերի և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ֆինանսական երաշխիքների հետ միասին ներկայացնում է նախնական ՇՄԱԳ-ի:

Բնապահպանության նախարարությունը, ծրագիրը ստանալուց հետո՝ մինչև 30-օրյա ժամկետում, տրամադրում է եզրակացություն ծրագրի վերաբերյալ: Նախնական ՇՄԱԳ-ի վերաբերյալ համապատասխան եզրակացությունը մինչև 30-օրյա ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական:

Նախնական ՇՄԱԳ-ի դրական եզրակացությունը ստանալուց հետո ԷԲՊՆ դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչև 60-օրյա ժամկետում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Նշված ժամկետում դիմումի վերաբերյալ որոշում չընդունելու դեպքում այն համարվում է բավարարված:

Եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար, ապա նախապատվություն է տրվում այն դիմումատուին, ում դիմումն առաջինն է գրանցվել:

Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են կամ ներկայացված ուսումնասիրության ծրագիրը, ինչպես նաև դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա ԷԲՊՆ 10-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

Վարչական վարույթի (դիմումի քննարկման) արդյունքներով տրվում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն և հրավիրվում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրն իր կողմից վավերացվելու համար:

Թույլտվությունը ներառում է թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և գործողության ժամկետը, ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով, երկրաբանական ուսումնասիրության նպատակը, օգտակար հանածոյի անվանումը: Ուսումնասիրության ծրագիրը և երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը կցվում են թույլտվությանը և դրա անքակտելի մասերն են²¹⁸:

Դիմումի մերժումը. ԷԲՊՆ կողմից Օրենսգրքով սահմանված դիմումը մերժելու հիմքերը շարադրված են ստորև:

Աղյուսակ 3.2.1 Երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով դիմումի մերժման հիմքեր

Երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով դիմումի մերժման հիմքեր	դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են
	դիմումում նշված ընդերքի տեղամասը կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման առանձին օբյեկտ է
	ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք, չի կարող լինել ընդերքօգտագործման իրավունքի առանձին օբյեկտ
	ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ երկրաբանական ուսումնասիրության իրավունք, գերազանցում է դիմումատուի կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային համառոտ ծրագրով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահանջվող տարածքը
	դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցներ մասին տեղեկությունները չեն բավարարում օրենսդրությամբ սահմանված պահանջներին
	դիմումատուի ներկայացրած ֆինանսական երաշխիքը բավարար չէ ապահովելու ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ (կիրառելիության դեպքում) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը
	ֆինանսական երաշխիքը տվել է իրավաբանական անձ, որը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշներին
	Երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրումը կհակասի ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջներին.
	դադարեցվել է դիմումատուի՝ նախկինում ունեցած ընդերքօգտագործման որևէ իրավունք հետևյալ հիմքերից որևէ մեկով. <ul style="list-style-type: none"> ▶ ընդերքօգտագործողը ստացել է զգուշացում և ԷԲՊՆ սահմանած ժամկետում չի վերացրել զգուշացման հիմքերը, ▶ ընդերքն օգտագործվել է ոչ այն նպատակով, որի համար տրամադրվել է, ▶ ընդերքօգտագործողը հայտնաբերել և լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում չի տեղեկացրել ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման կամ հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների առկայության կամ չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու մասին,
	հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան (i) գերեզմաններ, (ii) բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, (iii) ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև, եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ,
ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուն դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երևակման տեղամաս:	

²¹⁸Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 37
164

Ըստ ԷԲՊՆ տրամադրած տեղեկատվության, 2016թ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության համար դիմել է 15 կազմակերպություն, որից 10-ը ստացել է մերժում: 2017թ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության համար դիմել է 36 կազմակերպություն, որից 28-ն է ստացել մերժում²¹⁹: Դիմումները հիմնականում մերժվել են ՇՄԱԳ բացասական եզրակացության պատճառով: Արտոնյալ դիմումներ չեն եղել: Դիմումներից միայն երկուսն են եղել նույն տեղամասի համար, սակայն երկուսն էլ մերժվել են վերոհիշյալ պատճառով: Նույն նախարարության աշխատակիցների ներկայացրած տեղեկատվության համաձայն, 2016թ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրություն իրականացման համար թույլտվություն ստացած 5 կազմակերպություններից 4-ին թույլտվությունները տրամադրվել են Օրենսգրքով սահմանված ժամկետների խախտումներով, իսկ 2017թ. ընթացքում՝ նման խախտումներ արձանագրվել են 8 թույլտվություններից 7-ի դեպքում: Ըստ ԷԲՊՆ ներկայացուցիչների, ժամկետների խախտումները պայմանավորված են եղել Օրենսգրքով ամրագրված թույլտվությունների տրամադրման համար «մեկ պատուհանի» սկզբունքի դրույթների անկատարությամբ, ինչպես նաև Օրենսգրքի և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի միջև հակասություններով. մասնավորապես փաստաթղթերում առկա թերությունների վերացման համար սահմանված ժամկետների անհամապատասխանություններով:

(iii) Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվությունների տրամադրման ընթացակարգը

Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվությունների ստացման (արդյունահանման իրավունքի հայցման) ընթացակարգը կարգավորվում է Օրենսգրքով: Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով իրավաբանական անձինք դիմում են ներկայացնում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (այսուհետ՝ «ԷԲՊՆ»): Դիմումն իր մեջ պարունակում է ստորև աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը.

Աղյուսակ 3.2.2 Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմումում ներառվող տեղեկատվություն

1	դիմումատուի կորպորատիվ տվյալները (դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը, նշում դիմումատուի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին),		
2	հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետը՝ հաշվարկված առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա,		
3	ընդերքի այն տեղամասի երկրաբանական նկարագրությունը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք,		
4	հաստատված օգտակար հանածոների ցանկը,		
5	օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը.		
	<table border="1"> <tr> <td>i.</td> <td>օգտակար հանածոների հանքավայրերի բացման այնպիսի եղանակներ և շահագործման համակարգեր, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և ապահովում են հիմնական և դրանց ուղեկից օգտակար հանածոների պաշարների ողջամիտ և համալիր, տնտեսապես նպատակահարմար և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող արդյունահանումը, ինչպես նաև կառույցների անվտանգ և երկարատև շահագործումը,</td> </tr> </table>	i.	օգտակար հանածոների հանքավայրերի բացման այնպիսի եղանակներ և շահագործման համակարգեր, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և ապահովում են հիմնական և դրանց ուղեկից օգտակար հանածոների պաշարների ողջամիտ և համալիր, տնտեսապես նպատակահարմար և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող արդյունահանումը, ինչպես նաև կառույցների անվտանգ և երկարատև շահագործումը,
i.	օգտակար հանածոների հանքավայրերի բացման այնպիսի եղանակներ և շահագործման համակարգեր, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և ապահովում են հիմնական և դրանց ուղեկից օգտակար հանածոների պաշարների ողջամիտ և համալիր, տնտեսապես նպատակահարմար և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող արդյունահանումը, ինչպես նաև կառույցների անվտանգ և երկարատև շահագործումը,		

²¹⁹Տեղեկատվությունը ստացվել է պետական մարմիններից արված հարցումների արդյունքում. այն հրապարակված չէ:

	ii.	նախատեսվող ենթակառուցվածքների ձևավորման վերաբերյալ մանրամասներ,
	iii.	առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետի հաշվարկը,
	iv.	շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը, այդ թվում՝ բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերը,
	v.	սոցիալական ազդեցության գնահատականը
	(a)	վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում բնակչության սոցիալական պայմանների բարելավման դրույթներ,
	(c)	բնակչության կենսամակարդակի բարելավման դրույթներ,
	(d)	համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի մասնակցության ապահովման երաշխիքներ,
	(e)	հեռացվող հողաշերտի և զուգընթաց արդյունահանվող աղքատ հանքաքարի պահեստավորումը և պահպանությունը,
	(f)	աշխատանքի անվտանգության, աշխատակիցների առողջության պահպանության և շրջակա միջավայրի պահպանության սահմանված կանոնների և նորմերի ապահովումը,
	(g)	խախտված հողերի վերականգնումը,
	հանքի փակման ծրագիրը	
	i.	հանքի ֆիզիկական փակման ծրագիրը, որում ներառվում է ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,
	ii.	օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի, ներառյալ՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը հանքի գոյության ընթացքում (ելնելով հանքավայրի շահագործման եղանակից),
6	iii.	աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
	iv.	օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը,
	v.	հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հավաստումը,
7	տվյալներ դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի վերաբերյալ,	
8	դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան,	
9	ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը,	
10	ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ,	
11	ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները,	
12	շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար սահմանված պետական տուրքի անդորրագիրը:	

Վերը աղյուսակի 11-րդ կետում հիշատակվող ֆինանսական երաշխիք²²⁰ տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշները ՀՀ կառավարությունը սահմանել է 2017թ. հուլիսի 20-ի «Ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշները սահմանելու»²²¹ մասին թիվ 885-Ն որոշմամբ:

Վերջինիս համաձայն, իրավաբանական անձը՝ բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը պետք է լինի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»²²² Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձ, իսկ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը պետք է լինի Standard & Poor’s, Moody’s, A.M. Best կամ Fitch միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից վարկանշված անձ՝ ցածր չլինելով հետևյալ վարկանշային դասակարգումից՝

Երաշխիք տրամադրող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի նվազագույն դասակարգումը	
Standard & Poor’s	A-
Moody’s	A3
A.M. Best	A-
Fitch	A-

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է որոշակի տեղամասերում ընդերքօգտագործման արգելք: Այսպես, Օրենսգրքի համաձայն ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է ազգային անվտանգության ապահովման, կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների կամ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան գերեզմաններ, բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև, եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

Դիմումների քննարկումը. Դիմումների քննարկման գործընթացին մասնակից են դառնում մի շարք գերատեսչություններ՝ ԷԲՊՆ, ԱԻՆ-ը, Բնապահպանության նախարարությունը:

ԷԲՊՆ՝ դիմումի գրանցելուց հետո 10-օրյա ժամկետում քննարկում է դիմումին կից նախագիծը և ներկայացնում այն ԱԻՆ՝ տեխնիկական անվտանգության փորձաքննության, իսկ ՇՄԱԳ հաշվետվությունը՝ կից փաստաթղթերով ներկայացնում է փորձաքննության՝ Բնապահպանության նախարարություն:

²²⁰Ֆինանսական երաշխիքները տրամադրվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների մշակման օբյեկտների շահագործման, փակման, փակումից հետո օրենքով նախատեսված միջոցառումների իրականացման համար:

²²¹<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115056>

²²²<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=64633>

ԱԻՆ-ն իրականացնում է փորձաքննությունը նախագիծը ստանալուց հետո 60-օրյա ժամկետում: Նախագծի առնչությամբ ԱԻՆ-ը տրամադրում է փորձաքննական եզրակացություն²²³: Ինչպես արդեն նշվել է, ինքնին փորձաքննությունն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և ԱԻՆ-ի կողմից հաշվառված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից²²⁴ ՀՀ կառավարության կողմից հաստատված «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգի» համաձայն²²⁵: Եզրակացությունը սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում այն համարվում է դրական:

Նախագծի թերի լինելու դեպքում ԱԻՆ-ն այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, տեղեկացնում է ԷԲՊՆ՝ նշելով թերությունները, վերջինս իր հերթին 5-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին: Դիմումատուն իրավունք ունի ծանուցվելուց հետո 10-օրյա ժամկետում շտկել դրանք, հակառակ պարագայում՝ ԷԲՊՆ մերժում է դիմումը:

Նախագծի շտկված տարբերակ ստանալու դեպքում ԷԲՊՆ 5-օրյա ժամկետում այն ներկայացնում է ԱԻՆ տեխնիկական անվտանգության փորձաքննության:

Իր հերթին Բնապահպանության նախարարությունը ՇՄԱԳ հաշվետվությունը ստանալուց հետո 100-օրյա ժամկետում տրամադրում է փորձաքննության եզրակացություն: 100-օրյա ժամկետում չտրամադրելու դեպքում այն համարվում է դրական:

Եթե ՇՄԱԳ հաշվետվությունը կազմված է թերի, ապա Բնապահպանության նախարարությունն այն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին՝ նշելով թերությունները: Դիմումատուն կարող է վերացնել թերությունները 10-օրյա ժամկետում: Հակառակ պարագայում՝ ԷԲՊՆ մերժում է դիմումը:

ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակը ստանալուց հետո ԷԲՊՆ այն կրկին ներկայացնում է փորձաքննության Բնապահպանության նախարարություն:

Դրական փորձաքննական եզրակացություններ ստանալուց հետո ԷԲՊՆ՝ դիմումի գրանցման օրվանից մինչև 180-օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ և ծանուցում դիմումատուին: 180-օրյա ժամկետում որոշում չկայացնելու դեպքում դիմումը համարվում է բավարարված:

Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի թերի լինելու կամ ներկայացված ֆինանսական, տեխնիկական տեղեկատվությունը օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու դեպքում ԷԲՊՆ՝ դիմումը գրանցելուց հետո 10-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին, որն ունի 10-օրյա ժամկետ թերությունները վերացնելու համար: Հակառակ պարագայում ԷԲՊՆ մերժում է դիմումը:

²²³Օրենսգիրք, հղում **Error! Bookmark not defined.**, հոդված 51(2)(1)

²²⁴Տե՛ս «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-204-Ն (2005թ. հոկտեմբերի 24), հոդված 11(1)

²²⁵ՀՀ կառավարության որոշում թիվ 1359-Ն (ընդունված 2011թ. սեպտեմբերի 22-ին)

Դիմումի մերժումը. ԷԲՊՆ կողմից Օրենսգրքով սահմանված դիմումը մերժելու հիմքերը շարադրված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 3.2.3 Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմումի մերժման հիմքերը

Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմումի մերժման հիմքեր	դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են,
	դիմումում նշված ընդերքի տեղամասը կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ է,
	ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք, գերազանցում է դիմումատուի կողմից օգտակար հանածոյի արդյունահանման՝ համառոտ նախագծով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահանջվող տարածքը,
	օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին,
	դիմումատուի՝ նախկինում ունեցած ընդերքօգտագործման որևէ իրավունք դադարեցվել է հետևյալ հիմքերով՝ (i) ստացել է զգուշացում և ԷԲՊՆ սահմանած ժամկետում (90 օր) չի վերացրել զգուշացման հիմքերը, (ii) ընդերքն օգտագործվել է ոչ այն նպատակով, որի համար տրամադրվել է, (iii) ընդերքօգտագործողը հայտնաբերել և լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում չի տեղեկացրել՝ ա) ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին, բ) հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների առկայության մասին, գ) չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու մասին (Օրենսգրքի 30-րդ հոդված),
	խախտվել են ժամկետները,
	հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան (i) գերեզմաններ, (ii) բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, (iii) ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև, եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ,
դիմումատուի ներկայացրած ֆինանսական երաշխիքը բավարար չէ ապահովելու ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ (երբ կիրառելի է)՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը,	
ֆինանսական երաշխիքը տվել է այն իրավաբանական անձը, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության սահմանած՝ ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշներին:	

2016թ. ընթացքում օգտակար հանածոյի արդյունահանման համար դիմել է 6 կազմակերպություն, որից 3-ը ստացել է մերժում: Արտոնյալ դիմումներ չեն եղել: 3 դիմումներն էլ մերժվել են ՇՄԱԳ բացասական եզրակացության պատճառով: 2017թ. ընթացքում օգտակար հանածոյի արդյունահանման համար դիմում չի ներկայացվել:²²⁶

Դիմումի մեջ առկա հավանական թերությունների շտկումը. ՀՀ օրենսդրությունը նախատեսում է դիմումի մեջ առկա թերությունները շտկելու հնարավորություն: Այսպես՝ ըստ Օրենսգրքի 51-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է .

Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են կամ ներկայացված արդյունահանման նախագիծը, ինչպես նաև դիմումատուի ֆինանսական և տեխնիկական

²²⁶Տեղեկատվությունը ստացվել է պետական մարմիններից արված հարցումների արդյունքում. այն հրապարակված չէ: 169

կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

Ընդերքի միևնույն տեղամասի կամ ընդերքի այնպիսի տեղամասերի համար, որոնք ունեն ընդհանուր մաս, երկու կամ ավելի անձանց կողմից դիմումի ներկայացման պարագայում նախապատվություն է տրվում արտոնյալ դիմումատուին (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու ընդերքօգտագործման իրավունք կրող), իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ այն անձին, որի դիմումն առաջինն է գրանցվել (Օրենսգրքի 51-րդ հոդված, մաս 10):

(iv) Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կապակցությամբ տրվող ԷԲՊՆ համաձայնությունը

Ինչպես արդեն նշվել է, օրենսդրությունը կարգավորում է նաև ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը. այն է՝ իրավունքի օտարումը երրորդ անձանց կամ փոխանցումը թույլտվություն ունեցող իրավաբանական անձի վերակազմակերպման արդյունքում բաժանման կամ առանձնացման ճանապարհով ստեղծված նոր իրավաբանական անձին: Փոխանցումը հնարավոր է միայն ԷԲՊՆ համաձայնությամբ: Հատկանշական է սակայն, որ Օրենսգրքը միայն սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և դիմումը ԷԲՊՆ կողմից քննելու ժամկետները (30 օր): Դիմումի մերժման հիմքեր նախատեսված չեն: ԷԲՊՆ աշխատակիցների հայտնած դիրքորոշման համաձայն, ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնություն տալը լիազոր մարմնի կողմից մերժվում է նույն հիմքերով, ինչ հիմքերով մերժվում են ընդերքօգտագործման իրավունքի հայցերը:

Դիմում պետք է ներառի՝

- ▶ իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը,
- ▶ նշում՝ փոխանցվող ընդերքօգտագործման իրավունքի մասին,
- ▶ ընդերքօգտագործման իրավունք հայցելու համար Օրենսգրքով նախատեսված տեղեկությունները,
- ▶ հաշվետվություն ծրագրով կամ նախագծով նախատեսված աշխատանքների կատարման մասին, այդ թվում՝ նաև բնապահպանական միջոցառումների մասին,
- ▶ հաշվետվություն ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ:²²⁷

²²⁷Օրենսգրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 23(2)

ԷԲՊՆ աշխատակիցների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, 2016-2017թթ. ընթացքում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման նպատակով դիմումներ նախարարությանը չեն ներկայացվել:

Ինչպես արդեն նշվել է վերը, ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերության բաժնեմասերի/բաժնետոմսերի վաճառքը որևէ կերպ չի վերահսկվում ԷԲՊՆ կողմից:

(v) Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնության տրամադրման ընթացակարգը

Օրենսգրքով կարգավորվում է նաև ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման համար համաձայնությունների տրամադրման ռեժիմը: Երկրաբանական ուսումնասիրության իրավունքը, որը տրամադրվում է ԷԲՊՆ-ի կողմից, սուբյեկտին տալիս է հետևյալ իրավունքները՝

- ▶ ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրությունների իրականացում՝ ռեգիոնալ երկրաբանա-երկրաֆիզիկական աշխատանքներ, երկրաբանական հանույթ (քարտեզագրում), երկրաքիմիական, սեյսմաբանական, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հետազոտություններ, գիտահետազոտական, հնէաբանական և այլ աշխատանքներ՝ ուղղված ընդերքի ընդհանուր երկրաբանական ուսումնասիրությանը,
- ▶ հրաբխային գործունեության ուսումնասիրության երկրաբանական աշխատանքներ, արտաձին երկրաբանական պրոցեսների մշտադիտարկումներ,
- ▶ միներալոգիական, հնէաբանական և երկրաբանական այլ հավաքածուների ստեղծում, գեղագիտական և կիսաթանկարժեք քարերի հավաքում,
- ▶ գիտական, մշակութային, գեղագիտական և այլ նշանակություն ունեցող երկրաբանական օբյեկտների (եզակի երկրաբանական առաջացումներ, բնության հուշարձաններ, քարանձավներ և այլն) նկարագրում ու պահպանում:

Իրավունք (համաձայնություն) հայցող սուբյեկտները ԷԲՊՆ են ներկայացնում դիմում, որում նշվում է հետևյալ տեղեկատվությունը²²⁸:

Երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով դիմումում ներառվող տեղեկատվություն	
1	դիմումատուի կորպորատիվ տվյալները (անվանում, հասցե),
2	դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճեն,
3	աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը,
4	ընդերքի այն տեղամասի նկարագրությունը, որտեղ ուսումնասիրություն իրականացնելու համար ներկայացվել է դիմումը, և ընդերքի այդ տեղամասի հատակագիծը՝ ծայրակետային կոորդինատներով,
5	երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը,
6	դիմումատուի ՀՀ-ում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալները,
7	Կառավարության կողմից սահմանված պահանջների համապատասխան՝ ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն,
8	Ներկայացված փաստաթղթերի ցանկը:

²²⁸Օրենսգիրք, հղում Error! Bookmark not defined., հոդ. 33

Հատկանշական է, որ օրենսդրությունը չի ամրագրում ԷԲՊՆ-ի կողմից երկրաբանական ուսումնասիրությունների համաձայնություն չտրամադրելու հիմքերը:

Բ. Ընդերքօգտագործման թույլտվություններ ստացած (օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրեր կնքած) ընկերություններ

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություն ունեցող ընկերությունների ցանկը հասանելի է ԷԲՊՆ կայքում²²⁹. ԷԲՊՆ կայքում հրապարակված են թույլտվություն ստացած ընկերությունների անունները, թույլտվություն տալու ամսաթիվը և համարը, թույլտվության ժամկետը, պայմանագրի ամսաթիվը և համարը, պայմանագրի փոփոխությունների համարները և ամսաթվերը, օգտակար հանածոյի երևակման կամ օբյեկտի անվանումը, ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը, օգտակար հանածոյի անվանումը, իրավունքի դադարեցված լինելու վերաբերյալ նշումներ:

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունների ցանկը նույնպես հասանելի է ԷԲՊՆ կայքում:²³⁰ ԷԲՊՆ կայքում հրապարակված են թույլտվություն ստացած ընկերությունների անունները, թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումների ամսաթվերը, թույլտվություններ տալու ամսաթվերը և համարները, թույլտվությունների ժամկետները, պայմանագրերի ամսաթվերը և համարները, պայմանագրերի փոփոխությունների համարները և ամսաթվերը, հանքավայրերի (տեղամասերի) անվանումները, ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը, օգտակար հանածոների անվանումները, հիմնական բաղադրիչներն ու դրանց քանակը, ուղեկից բաղադրիչներն ու դրանց քանակը, հանքի տարեկան արտադրողականությունը, իրավունքի դադարեցված լինելու վերաբերյալ նշումներ: ԷԲՊՆ կայքում տեղադրված են նաև օգտակար հանածոյի արդյունահանման բոլոր պայմանագրերը՝ հավելվածներով և փոփոխություններով:²³¹ Հավելված 14-ում ներկայացված է ընկերությունների ցանկը:

²²⁹Տե՛ս <http://www.minenergy.am/page/569>

²³⁰*Ibid.*

²³¹Տե՛ս <http://www.minenergy.am/page/569>

3.3 Տեղեկատվություն ընդերքօգտագործման պայմանագրերի վերաբերյալ (պահանջ 2.4)

Ա. Պայմանագրերի հրապարակման վերաբերյալ պետական քաղաքականությունը

Ընդհուպ մինչև 2018թ. ապրիլի 7-ը ընդերքօգտագործման պայմանագրերը չեն եղել հրապարակայնորեն հասանելի: 2017թ. ընթացքում պայմանագրերի հրապարակայնության հարցը քննարկվել է ԱՃԹՆ բազմաշահառու խմբի կողմից և կատարվել են աշխատանքներ դրանց հրապարակմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների ուղղությամբ: Մասնավորապես, 2017թ. հոկտեմբերի 10-ի ԱՃԹՆ ԲՇԽ նիստի ընթացքում որոշվել է ուսումնասիրել, թե արդյոք «*ընդերքօգտագործման*» պայմանագրերում ներկայացված տեղեկությունը իր մեջ առևտրային գաղտնիք չի պարունակում» և որոշվել է, որ առևտրային գաղտնիքի և իրավական խոչընդոտների բացակայության պայմաններում «*պայմանագրերը կարող են բացահայտվել*»²³²: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում տրվել է գնահատական առ այն, որ ընդերքօգտագործման պայմանագրերը չեն պարունակում առևտրային գաղտնիք²³³ և նախաձեռնվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթը:

2017թ. դեկտեմբեր 6-ի ԱՃԹՆ ԲՇԽ նիստի ընթացքում արդեն ներկայացվեց օրենսդրական լրամշակված նախագծերի փաթեթը, որն ուղղված էր ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակմանը: Օրենսդրական նախագծերի փաթեթը հաստատվեց ԲՇԽ-ի կողմից և ընդունվեց ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով)²³⁴:

Արդյունքում՝ շահագրգիռ պետական մարմինների միջև շրջանառումից և որոշակի լրամշակումից հետո 2018թ. մարտի 21-ի ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-191-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 7-ին), որով վերաշարադրվեց Ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածը՝ մասնավորապես ընդգրկելով հետևյալ խմբագրությամբ 2-րդ մասը.

«Լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը»:

Վերոգրյալ օրենսդրական բարեփոխման արդյունքում այսօր բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման

²³²ԱՃԹՆ բազմաշահառու խմբի 2017թ. հոկտեմբերի 10-ի նիստի արձանագրություն (թիվ 6), էջ 6, հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_10_10_%202017.pdf

²³³Ուսումնասիրության արդյունքներն արտացոլված են 2018թ. մարտի 15-ին հրապարակված «ՀՀ 2018թ. ԱՃԹՆ զեկույցի համար նախնական ուսումնասիրության» մեջ, էջեր 35-38

²³⁴ԱՃԹՆ բազմաշահառու խմբի 2017թ. դեկտեմբերի 6-ի նիստի արձանագրություն (թիվ 8), էջեր 6 և 7, հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_12_06_%202017.pdf

պայմանագրերը (փոփոխություններով և հավելվածներով հանդերձ) հասանելի են ԷԲՊՆ կայքում՝ հետևյալ հղումով՝ <http://www.minenergy.am/page/571>:

3.3.1 աղյուսակում, համաձայն ԷԲՊՆ կայքից վերցված տվյալների, ներկայացված են օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություն ունեցող ընկերությունները և պայմանագրերի համարներն ու կնքման ամսաթվերը, ինչպես նաև ընկերությունների գրանցման համարները և ՀՎՀՀ-ները:

Աղյուսակ 3.3.1 Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություն ունեցող ընկերությունների պայմանագրերի համարները, կնքման ամսաթվերը, ընկերությունների գրանցման համարները և ՀՎՀՀ-ները

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«ԳԵՈՈՒԵՅԴ» ՓԲԸ	264.120.08798	00258804	Թիվ ՊՎ-066,13.07.2012թ.
«ԳԵՈՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	271.110.119888	01253043	Թիվ Պ-098,30.08.2012թ.
«ԳԻ ՄԵՏԱԼԶ ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԼԻՄԻՏԵԴ» ՍՊԸ	88.110.01068	09811529	Թիվ ՊՎ-114,20.10.2012թ.
«ԷՔՈՒՎԵՍ ԱԼԼԻԱՆՍ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ» ՍՊԸ	264.110.847218	00140736	Թիվ Պ-212,03.08.2015թ.
«ՌԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	273.110.856629	02637888	Թիվ Պ-213,22.07.2015թ.
«ՍԵՆՏԵՐՐԱ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	286.120.840310	02633612	Թիվ Պ-224,25.12.2015թ.
«ՆԱՐԻՊՐՈՖ» ՍՊԸ	271.110.58684	01250852	Թիվ Պ-219, 02.04.16թ.
«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ ²³⁵	264.110.06348	00079433	Թիվ Պ-112, 12.10.2012թ. Թիվ Պ-225,11.06.2016թ.
«ՄԱՅՆԻՆԳ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ	273.110.846143	02635264	Թիվ Պ-228,02.11.2016թ.
«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	286.120.929505	02583292	Թիվ Պ-229,25.10.2016թ.
«ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	286.110.929307	02653565	Թիվ Պ-236,25.03.2017թ.
«ՊՐԵՄԻՈՒՄ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	273.110.925468	02652485	Թիվ Պ-237,25.02.2017թ.
«ԷՆԵՐԳՈ ԻՆՎԵՍՏ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ	85.120.879763	03021382	Թիվ Պ-238,13.03.2017թ.
«ՄԱՅՆ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	264.110.922496	00156261	Թիվ Պ-243,23.05.2017թ.
«ԳՈՒԴԵՆ ԼԵՆԴ» ՍՊԸ	273.110.912900	02649955	Թիվ Պ-245,17.07.2017թ.
«ՄԵՏԱԼՍ ՄԱՅՆԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	273.110.912899	02649947	Թիվ Պ-246,17.07.2017թ.
«ՀԱՐՈՒՍՏ ՄԵՏԱՂ» ՍՊԸ	278.110.927638	00470677	Թիվ Պ-247,20.10.2017թ.

²³⁵Իրավունքը դադարեցվել է 2018թ. նոյեմբերի 20-ի դրությամբ՝ ընդերքօգտագործողի հրաժարման հիմքով:

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«ԿԱՊՊԵՐ ՊԼԱՍ» ՍՊԸ	286.110.944106	02657454	Թիվ Պ-251,13.11.2017թ. Թիվ Պ-252,13.11.2017թ.
«ԳԵՎԼԵՌ» ՍՊԸ	72.110.955975	09425628	Թիվ Պ-255,14.12.2017թ.
«ՊՈԼԻՄԵՏԱԼ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ	264.110.849028	00141145	Թիվ Պ-259,31.01.2018թ.
«ՆԻԳ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	273.110.965994	02662823	Թիվ Պ-263,04.04.2018թ.
«ԻՆՏԵՐ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	282.110.997805	00908544	Թիվ Պ-266,28.03.2018թ.
«ՉՈՒԴՈ ՄԵՏԱԼ» ՍՊԸ	51.110.891426	04228339	Թիվ Պ-269,25.04.2018թ.

3.3.2 աղյուսակում, համաձայն էԲՊՆ կայքից վերցված տվյալների, ներկայացված են օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունները և պայմանագրերի համարներն ու կնքման ամսաթվերը, ինչպես նաև ընկերությունների գրանցման համարները և ՀՎՀՀ-ները:

Աղյուսակ 3.3.2 Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունների պայմանագրերի համարները, կնքման ամսաթվերը, ընկերությունների գրանցման համարները և ՀՎՀՀ-ները

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	286.110.07682	02709666	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22
«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	286.120.58034	04219371	Թիվ 089,2012թ. հունիսի 12
«Սագամար» ՓԲԸ	278.120.03167	00410036	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20
«Լեռ-Էքս» ՍՊԸ	27.110.00893	09412188	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	96.120.00632	06602309	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	39.110.01312	02806526	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	286.110.05872	02580107	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	27.120.01216	09416902	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27
«Մեգո Գոլդ» ՍՊԸ	77.110.00610	04213127	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28
«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	273.110.02424	01530525	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	79.110.00234	09414399	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	264.120.07314	00091919	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26
«Լիճքվազ» ՓԲԸ	286.120.07744	02710054	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	79.140.00036	09700039	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5
«Ասսաթ» ՍՊԸ	77.110.00569	03807664	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6
«Վայք Գոլդ» ՍՊԸ	264.110.111245	00114369	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30
«Թեղուտ» ՓԲԸ	286.120.06078	02700773	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	273.110.05412	01569837	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7
«Թաթարոուն» ՍՊԸ	264.110.06348	00079433	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11
			Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	271.110.738775	00118721	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	282.110.06759	00870494	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22
«Հրաշք Մետաղ» ՍՊԸ	51.110.844405	04226807	Թիվ Պ-542,2016թ. հունիսի 15
«Գեդի Գոլդ» ՍՊԸ	72.110.121815	09423012	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22
«Մուլտի Գրուպ» Կոնցենոն ՍՊԸ	42.110.01460	03516447	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	27.140.00009	09400818	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	273.110.03365	01544838	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28
«Ղարազուլյաններ» ՓԲԸ	286.120.929505	02583292	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25

Բ. Ընկերությունների հետ կնքված պայմանագրերում ամրագրված սոցիալական պարտավորությունները

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքն արձանագրում է ընդերքօգտագործողների մի շարք սոցիալական պարտավորություններ: Դրանք են՝ հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական պարտավորությունները (աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը) և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները:

(i) Հանքի փակման ծրագրով նախատեսվող սոցիալական պարտավորություններ (աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր)

Օրենսգրքի համաձայն օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով ԷԲՊՆ դիմող ընկերությունները դիմումին կից պետք է ներկայացնեն նաև հանքի փակման ծրագիր, որը, ի թիվս այլոց, ներառում է նաև «աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը» (49-րդ հոդված, 2-րդ մաս, 6)-րդ կետ գ) ենթակետ):

Վերոնշյալ պարտավորության առնչությամբ անհրաժեշտ է արձանագրել մի քանի նկատառում: Առաջին, թեև Օրենսգիրքն արձանագրում է, որ աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը կազմվում է «օրենսդրությամբ սահմանված կարգով», սակայն փաստացի աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի իրականացման կարգ, միջոցառումների ծավալի որոշակիացման ընթացակարգեր, ինչպես նաև նման միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողություն և արդյունավետության գնահատման չափանիշներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն:

Աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը հիշատակվում է Օրենսգրքում ևս մեկ անգամ՝ 58-րդ հոդվածում, որը կարգավորում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման գործընթացը:

Վերջինիս համաձայն, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը, որը ցանկանում է հրաժարվել ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից, լիազոր մարմին է ներկայացնում դիմում, որն, ի թիվս այլոց, պարունակում է աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը, ներառյալ՝ հանքի փակումից հետո աշխատատեղերի ստեղծման, մասնագիտական վերաորակավորման և ուսուցման դրույթներ (58-րդ հոդված 2-րդ մաս 3)-րդ կետ գ) ենթակետ): Խնդրո առարկա դրույթն, ինչպես երևում է վերը նշվածից, փոքր-ինչ բացում է աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի հասկացության շրջանակները: Օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից, սակայն, առկա է թերացում: Հատկանշական է, որ Պայմանագրի օրինակելի ձևը խոսում է նաև «*փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների իրականացումին*» ապահովելու պարտականության մասին (դրույթ 3.4.18): Մինչդեռ այս պարտավորության մասին Օրենսգրքում խոսք չի գնում, Պայմանագրի օրինակելի ձևի Հավելված 2-ի («Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ») կառուցվածքից պարզ է դառնում, որ այն նույնպես հանդիսանում է հանքի փակման ծրագրի բաղկացուցիչ սոցիալական պարտավորություն: Հավելված 2-ը բացում է նաև այս պարտավորության շրջանակները՝ «*համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն*,

փորք և միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն և այլն»: Կրկին իրավական տեխնիկայի առումով պարտավորության վերաբերյալ դրույթների բացակայությունը Օրենսգրքում, խնդրահարույց է:

Երկրորդ, ինչպես արդեն նշվել է, խնդիրներ են առաջանում այն ընդերքօգտագործման պայմանագրերի պարագայում, որոնք կնքվել են ոչ թե օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով ներկայացված դիմումների արդյունքում տրված ընդերքօգտագործման թույլտվության հիման վրա, այլ ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաների վերաձևակերպման արդյունքում: Հաշվի առնելով, որ 2002-2012թթ. գործած նախորդ Ընդերքի մասին օրենսգրքը չէր նախատեսում հանքի փակման ծրագիր ներկայացնելու օրենսդրական անհրաժեշտություն, վերաձևակերպված թույլտվություններից շատերի պարագայում հանքի փակման ծրագրերը բացակայում են: Ուստի, բացակայում է նաև աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը (ինչպես նաև փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների ծրագիրը):

Այս պարագայում վիճելի է դառնում հանքի փակման հետ կապված պարտավորությունների և աշխատուժի սոցիալական մեղմացման հետ կապված պարտավորությունների առկայության հարցը պայմանագրերի այս խմբի (վերաձևակերպված պայմանագրերի) դեպքում:

Հանքի փակման ծրագրի, այդ թվում հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների իրականացման ապահովումը հիշատակվում է Պայմանագրի օրինակելի ձևում՝ ընդերքօգտագործողի պարտավորությունների շարքում (դրույթ 3.4.17).

«Ընդերքօգտագործողը պարտավոր է [...] ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների իրականացումը»:

Խնդրո առարկա ձևակերպումն առկա է եղել Պայմանագրի օրինակելի ձևի հենց առաջին խմբագրության մեջ և փաստացի ինկորպորացվել է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերում: Ստացվում է, որ պայմանագրային պարտավորությունն առկա է, սակայն դրա բովանդակությունն անորոշ է (քանի որ սահմանված չէ պայմանագրում կամ դրա հավելվածներում):

Հանքի փակման ծրագրի բացակայության փաստը մեղմացվում է Պայմանագրի օրինակելի ձևի Հավելված 2-ի 1.3 կետի հաշվին, որն արձանագրում է.

«1. Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ՝

1.3 հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին»:

Սույն ձևակերպումը, բացի շարահյուսական առումով թերի լինելուց, խնդրահարույց է այն առումով, որ Օրենսգրքի համաձայն *«հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հավաստումը»* ինքնին հանքի փակման

ծրագրի բաղկացուցիչ մասն է²³⁶, այլ ոչ թե ինքնուրույն գործող պարտավորություն: Նույնը բխում է նաև Պայմանագրի օրինակելի ձևից. բուն տեքստում նման պարտավորություն արձանագրված չէ, իսկ Հավելված 2-ում այն հիշատակվում է հենց որպես հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություն:

Ուստի հանքի փակման ծրագիր չներկայացրած կազմակերպությունների պարագայում իրավական առումով աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի առնչությամբ պարտավորությունների հարցը մնում է բաց:

(ii) Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ

Օրենսգրքի համաձայն օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը պետք է նախատեսի, ի թիվս այլոց, նաև դրույթներ՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ²³⁷: Բացի այդ, օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով ԷԲՊՆ ուղղված դիմումին կից պետք է ներկայացվի նաև օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը²³⁸, որն, ի թիվս այլոց, պետք է պարունակի սոցիալական ազդեցության գնահատականը. Վերջինը ներառում է.

- ▶ վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում բնակչության սոցիալական պայմանների բարելավման դրույթներ,
- ▶ բնակչության կենսամակարդակի բարելավման դրույթներ,
- ▶ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի մասնակցության ապահովման երաշխիքներ:

Պայմանագրի օրինակելի ձևի 3-րդ հավելվածը սահմանում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների ցանկը²³⁹:

Կրկին, ինչպես և հանքի փակման ծրագրով նախատեսվող սոցիալական միջոցառումների պարագայում, այստեղ նույնպես օրենսդրորեն որևէ կերպ սահմանված չեն խնդրո առարկա պարտավորությունների ծավալի և բովանդակության գոյացման չափանիշներ: Պարտավորությունների հարկադրման միակ գործող մեխանիզմը փաստացի Օրենսգրքի 30-րդ հոդվածով սահմանված զգուշացման և ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգն է:

²³⁶Օրենսգիրք, 49-րդ հոդված, 2-րդ մաս, (6)-րդ կետ, ե) ենթակետ

²³⁷*Ibid.*, 54-րդ հոդված, 4-րդ մաս, (9)-րդ կետ

²³⁸*Ibid.*, 49-րդ հոդված, 2-րդ մաս, 5)-րդ կետ

²³⁹Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119993>

Ընդերքօգտագործողների հետ պայմանագրերում շարադրված սոցիալական պարտավորությունները համառոտ ներկայացված են 3.3.3 աղյուսակում:

Աղյուսակ 3.3.3 Ընդերքօգտագործողների հետ պայմանագրերում շարադրված սոցիալական պարտավորությունները և 2016-2017թթ. համար փաստացի ներդրման չափը

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները	2016թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ ²⁴⁰	2017թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 3 300 000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 500 000 ՀՀ դրամի բժշկական կենտրոնի ֆինանսական օգնություն և, ընդհանուր առմամբ, 6 500 000 դրամի չափով Ագարակ քաղաքի զարգացման ծրագրերին մասնակցություն	6.5	6.5
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 800,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 200,000 ՀՀ դրամ մասնակցություն ավտոճանապարհների վերանորոգմանը	Տեղեկատվություն չկա	0

²⁴⁰ Հաշվարկված է՝ ներառելով ընկերությունների կողմից լրացվող ԱՃԹՆ հաշվետվությունների «Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ» դաշտի տեղեկատվությունը:

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները	2016թ՞ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ ²⁴⁰	2017թ՞ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 3,600,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում	0	0
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 650,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում	Տեղեկատվություն չկա	0
«Գեղի Գօլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 650,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում	0	0
«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 12,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 1,200,000 ՀՀ դրամ՝ ազդակիր համայնքներից 2-3 ուսանողների ուսման վարձի տրամադրման նպատակով	0	0
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում	0	3

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները	2016թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ ²⁴⁰	2017թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ
		Տարեկան 3,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում		
«Թաթարոն» ՍՊԸ	Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում: Տարեկան 2,030,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության 850,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն ընկերության աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծման ֆոնդեր ստեղծելու նպատակով	0	2
«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 61,500,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում	7.3	0
«Լիճքվազ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	Բացակայում է, սակայն 2015թթ օգոստոսի 25-ի փոփոխություններով պայմանագրում ավելացվել է Հավելված 3-ը, որի համաձայն ընկերությունը պարտավորվել է վեցամսյա ժամկետում ներկայացնել սոցիալական ազդեցության գնահատականը:	0	0
«Հրաշք Մետաղ» ՍՊԸ	Թիվ Պ-542,2016թ. հունիսի 15	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում	Տեղեկատվություն չկա	Տեղեկատվություն չկա

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները	2016թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ ²⁴⁰	2017թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ
		Տարեկան 550,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում		
«Ղարագույաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 1,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում և 250,000 ՀՀ դրամ ուսանողի կիսամյակային ուսման վճարի տրամադրում	0	1.3
«Մարջան Մայնինգ Քոնֆանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	Բացակայում են	Կիրառելի չէ ²⁴¹	Կիրառելի չէ
«Մոլիբդենի Աշխարի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 12,800,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում	0	0
«Մուլտի Գրուպ» Կոնցենո ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Սագամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում	0	0

²⁴¹«Կիրառելի չէ»՝ օգտագործված է այն դեպքում, երբ պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները բացակայում են: «Տեղեկատվություն չկա»՝ օգտագործված է այն դեպքում, երբ ընկերության կողմից տեղեկատվություն չի տրամադրվել:

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները	2016թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ ²⁴⁰	2017թթ փաստացի ներդրման չափը, ըստ ընկերությունների կողմից լրացված հրապարակային հաշվետվությունների, մլն ՀՀ դրամ
		Տարեկան 4,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 3 տարին մեկ 1,000,000 ՀՀ դրամ՝ աղբյուրների վերանորոգման աշխատանքների մասնակցություն և 5 տարին մեկ 1,000,000 ՀՀ դրամ՝ համայնքի ջրագծերի վերանորոգման աշխատանքների նպատակով		
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 3,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում	Տեղեկատվություն չկա	0
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	Բացակայում են	Կիրառելի չէ	Կիրառելի չէ

Ըստ ընկերությունների ԱՃԹՆ հաշվետվությունների հավաքագրված տվյալների, ընդերքօգտագործողների կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 3.3.4 Ընդերքօգտագործողների կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները 2016-2017թթ.

	Ընդերքօգտագործող ընկերություն	2016թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը	2017թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը
1.	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	8,500,000	Մեղրի	Ֆինանսական	-	57,000,000	Մեղրի	Ֆինանսական	-
2.	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	10,000,000	Մեղրի	Ֆինանսական	-	-	-	-	-
3.	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	2,205,607	Ճոճկան գյուղ	ոչ ֆինանսական	Ճոճկան գյուղի ջրագծի վերանորոգում	500,000	Այրում	Ֆինանսական	-
4.	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	659,955	Շամլուղ	ոչ ֆինանսական	Ախթալա-Շամլուղ միջհամայնքային ճանապարհի մաքրում ձյունից	747,210	Շամլուղ	ոչ ֆինանսական	ճանապարհների մաքրման աշխատանքներ
5.	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	0	-	-	-	0	-	-	-
6.	«Ասսաթ» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
7.	«ԱՏ Մետալս» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
8.	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
9.	«Գեղի Գօլդ» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
10.	«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	-	-	-	-	9,600,000	Գեղամասար	Ֆինանսական	-
11.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	47,900,000	Կապան	Ֆինանսական	-	108,463,740	Քաջարան	Ֆինանսական	
12.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	10,000,000	Քաջարան	Ֆինանսական	-	24,000,000	Կապան	Ֆինանսական	

	Ընդերքօգտագործող ընկերություն	2016թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը	2017թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը
13.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	8,000,000	Մեղրի	Ֆինանսական	-	6,100,000	Մեղրի	Ֆինանսական	
14.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	7,457,000	Սիսիան	Ֆինանսական	-	800,000	Կապան	Ֆինանսական	
15.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100,000,000	Արցախի Հանրապետություն	Ֆինանսական	-	182,663,464	Քաջարան	ոչ ֆինանսական	Քաջարան համայնքում շինարարական, բարեկարգման և համանման այլ աշխատանքների իրականացում կապալառուների միջոցով
16.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	11,181,041	Արծվանիկ	ոչ ֆինանսական	Արծվանիկ համայնքում շինարարական, բարեկարգման և համանման այլ աշխատանքների իրականացում կապալառուների միջոցով	88,460,000	Քաջարան	ոչ ֆինանսական	Քաջարան համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպում կապալառուներ ի միջոցով
17.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	4,200,000	Լեռնաձոր	ոչ ֆինանսական	Լեռնաձոր գյուղում համայնքային այլ ծախսերի համաֆինանսավորում	30,723,887	Քաջարան	ոչ ֆինանսական	Քաջարան համայնքում առողջապահության ոլորտի ֆինանսավորում
18.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	7,500,000	Կապան	ոչ ֆինանսական	Կապան համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպում	65,250,652	Մեղրի	ոչ ֆինանսական	Մեղրի համայնքում շինարարական, բարեկարգման և համանման այլ աշխատանքների իրականացում կապալառուների միջոցով
19.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	24,000,000	Կապան	ոչ ֆինանսական	Կապան համայնքում առողջապահության ոլորտի ֆինանսավորում	34,111,992	Մեղրի	ոչ ֆինանսական	Մեղրու համայնքում պաշտպանության ոլորտի ֆինանսավորում

	Ընդերքօգտագործող ընկերություն	2016թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը	2017թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը
20.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	105,371,487	Մեղրի	ոչ ֆինանսական	Մեղրի համայնքում շինարարական, բարեկարգման և համանման այլ աշխատանքների իրականացում կապալառուների միջոցով	43,023,711	Կապան	ոչ ֆինանսական	Կապան համայնքում շինարարական, բարեկարգման և համանման այլ աշխատանքների իրականացում կապալառուների միջոցով
21.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	5,221,714	Մեղրի	ոչ ֆինանսական	Մեղրի համայնքում համայնքային այլ ծախսերի համաֆինանսավորում	32,782,871	Կապան	ոչ ֆինանսական	Կապան համայնքում առողջապահության ոլորտի ֆինանսավորում
22.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	35,827,155	Սյունիքի մարզ	ոչ ֆինանսական	Սյունիքի մարզում ՀՀ ՊՆ մարտական հենակետերի ամրացման աշխատանքներ	20,500,000	Կապան	ոչ ֆինանսական	Կապան համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպում կապալառուների միջոցով
23.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	9,111,886	Քաջարան	ոչ ֆինանսական	Քաջարան համայնքում առողջապահության ոլորտի ֆինանսավորում	4,200,000	Լեռնաձոր	ոչ ֆինանսական	Լեռնաձոր գյուղում համայնքային այլ ծախսերի համաֆինանսավորում
24.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	45,000,000	Քաջարան	ոչ ֆինանսական	Քաջարան համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպում	2,900,000	Երևան	ոչ ֆինանսական	Սոցիալ-տնտեսական միջոցառումների ֆինանսավորում
25.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	2,233,812	Քաջարան	ոչ ֆինանսական	Քաջարան համայնքում շինարարական, բարեկարգման և համանման այլ աշխատանքների իրականացում կապալառուների միջոցով	1,880,000	Գորիս	ոչ ֆինանսական	Գորիսում անապահով ընտանիքի համար նախատեսված բնակելի տան կառուցման համաֆինանսավորում
26.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	35,880,000	Սյունիքի մարզ	ոչ ֆինանսական	Սյունիքի մարզի ՊՆ ստորաբաժանումների աջակցություն դիզելային	1,442,424	Արծվանիկ	ոչ ֆինանսական	Արծվանիկի մշակույթի տան հիմնանորոգման համաֆինանսավորում

	Ընդերքօգտագործող ընկերություն	2016թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը	2017թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը
					վառելիքով և այլ նյութական ակտիվներով				
27.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	19,361,945	Կապան	ոչ ֆինանսական	Կապանի քաղաքապետարանին նյութական ակտիվների անհատույց տրամադրում (շինանյութ, գույք և այլ)	277,440	Քաջարան	ոչ ֆինանսական	Քաջարան համայնքում համայնքային այլ ծախսերի փոխհատուցման նպատակով նյութական արժեքների տրամադրում
28.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	2,113,335	Սյունիքի գյուղապետարան	ոչ ֆինանսական	Սյունիքի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	7,000,000	Մեղրի	ոչ ֆինանսական	Մեղրու համայնքում առողջապահության ոլորտի ֆինանսավորում
29.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	360,000	Աղվանիի գյուղապետարան	ոչ ֆինանսական	Աղվանիի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	525,000	Լեռնաձոր	ոչ ֆինանսական	Լեռնաձոր գյուղում համայնքային այլ ծախսերի համաֆինանսավորում
30.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	206,668	Աճանանի գյուղապետարան	ոչ ֆինանսական	Աճանանի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	175,000	Սևաքար	ոչ ֆինանսական	Սևաքար գյուղում համայնքային այլ ծախսերի համաֆինանսավորում
31.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	697,503	Արծվանիկ	ոչ ֆինանսական	Արծվանիկի համայնքապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	2,875,000	Արցախի հանրապետություն	ոչ ֆինանսական	ԱՀ ԱԻՆՃին աջակցություն համակարգչային տեխնիկայով
32.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	3,916,255	Գեղի	ոչ ֆինանսական	Գեղի գյուղապետարանին վառելիքի և շինանյութի անհատույց տրամադրում	22,729,492	Սյունիքի Մարզ	ոչ ֆինանսական	Սյունիքի մարզի ՊՆ ստորաբաժանումներին աջակցություն դիզելային վառելիքով և այլ նյութական ակտիվներով
33.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	273,336	Լեռնաձոր	ոչ ֆինանսական	Լեռնաձորի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	-	-	-	-

	Ընդերքօգտագործող ընկերություն	2016թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը	2017թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը
34.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	210,000	Լիճք	ոչ ֆինանսական	Լիճքի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	-	-	-	-
35.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	630,000	Խդրանցի գյուղապետարան	ոչ ֆինանսական	Խդրանցի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	-	-	-	-
36.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	136,668	Նոր Աստղաբերդի գյուղապետարան	ոչ ֆինանսական	Նոր Աստղաբերդի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	-	-	-	-
37.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	630,000	Չափնիի գյուղապետարան	ոչ ֆինանսական	Չափնիի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	-	-	-	-
38.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	175,000	Սևաքարի գյուղապետարան	ոչ ֆինանսական	Սևաքարի գյուղապետարանին վառելիքի անհատույց տրամադրում	-	-	-	-
39.	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	468,623	Քաջարանի քաղաքապետարան	ոչ ֆինանսական	Քաջարանի ԲԿ-ին վառելիքի տրամադրում շտապօգնության աշխատանքների կազմակերպման նպատակով	-	-	-	-
40.	«Թաթսթոուն» ՍՊԸ	400,000	Մեղրի	ոչ ֆինանսական	բանող և մթերատու անասուն	842,590	Մեղրի	ոչ ֆինանսական	Երեխաների համար քաղցրավենիք
41.	«Թաթսթոուն» ՍՊԸ	157,640	Մեղրի	ոչ ֆինանսական	քաղցրավենիք երեխաների համար	-	-	-	-
42.	«Թեղուտ» ՓԲԸ	2,000,000	Շնող	ֆինանսական	-	2,000,000	Շնող	ֆինանսական	-
43.	«Թեղուտ» ՓԲԸ	1,000,000	Շնող	ֆինանսական	-	1,000,000	Շնող	ֆինանսական	-

	Ընդերքօգտագործող ընկերություն	2016թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը	2017թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը
44.	«Թեղուտ» ՓԲԸ	6,214,464	Շնող	ոչ ֆինանսական	ճանապարհների ասֆալտապատում	255,228	Շնող	ոչ ֆինանսական	Շնողի ջրագծի նորոգում
45.	«Լեռ-Էքս» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
46.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	7,000,000	Լոր	ոչ ֆինանսական	-	6,989,500	Արտավան	ոչ ֆինանսական	-
47.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	7,000,000	Շենաթաղ	ոչ ֆինանսական	-	29,823,230	Վայք	ոչ ֆինանսական	-
48.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	6,300,000	Վայք	ոչ ֆինանսական	-	-	-	-	-
49.	«Լիճքվազ» ՓԲԸ	10,083,333	Մեղրի	ոչ ֆինանսական	Աղբատար մեքենա ԳԱՀ 330900-1357-02	27,244,781	Մեղրի	ֆինանսական	-
50.	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	4,430,000	ք ^Ձ Կապան	ֆինանսական	-	115,100,000	Կապան	ֆինանսական	-
51.	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	8,621,750	ք ^Ձ Կապան	ֆինանսական	-	6,000,000	Կապան	ֆինանսական	-
52.	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	640,000	ք ^Ձ Կապան	ֆինանսական	-	8,635,482	Գեղանուշ	ֆինանսական	-
53.	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	501,755	ք ^Ձ Կապան	ֆինանսական	-	-	-	-	-
54.	«Հրաշք Մետաղ» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
55.	«Ղարագույաններ» ՓԲԸ	0	-	-	-	0	-	-	-
56.	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
57.	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
58.	«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	3,150,000	Մեդրաձոր	ֆինանսական	Կիրառելի չէ	4,950,000	Մեդրաձոր	ֆինանսական	-
59.	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	-	-	-	-	399,990	Դաստակերտ	ոչ ֆինանսական	համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական



	Ընդերքօգտագործող ընկերություն	2016թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը	2017թ., ՀՀ դրամ	Համայնք	Նվիրատվության տեսակ	Ապրանքը կամ ծառայությունը
									ծրագրերին մասնակցություն
60.	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
61.	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	-	-	-	-	-	-	-	-
62.	«Սագամար» ՓԲԸ	-	-	-	-	-	-	-	-
63.	«Վայք Գոլդ» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
64.	«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-
65.	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	-	-	-	-	-	-	-	-

3.4 Իրական սեփականատերերի²⁴² բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը

Ա. Իրական սեփականատերերի բացահայտման առկա իրավական կարգավորումները (քաղաքականությունը)

(i) *Իրական սեփականատերերի մասին տեղեկատվություն ներկայացնելու օրենսդրական պարտավորությունը*

Իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված առկա ՀՀ օրենսդրական կարգավորումները թերի են և լիովին չեն բավարարում ԱՃԹՆ ստանդարտի 2.5 կետի պահանջներին: Իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական պահանջներն ընդհանրական են (կիրառվում են բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ) և բխում են բացառապես փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի իրավական կարգավորումներից:

Թեև «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրքը նախատեսում է դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջ (49-րդ հոդված, 2-րդ մաս, 8)-րդ կետ) օգտակար հանաժողովների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմում ներկայացնելիս, այս պահանջը կարող է նպաստել վերջնական շահառուների բացահայտմանը միայն այն դեպքերում, երբ 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձը ֆիզիկական անձ է: Այն դեպքերում, երբ դիմումատու ընկերության մասնակիցներն իրավաբանական անձինք են, նշված օրենսդրական պահանջը փաստացի չի կարող հանգեցնել վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանը:

Այսպես, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին թիվ ՀՕ-80-Ն օրենքի (ընդունված 2008թ. մայիսի 26-ին) (այսուհետ՝ «ՓԼԱՖ օրենք») 9-րդ հոդվածը սահմանում է ընդհանուր կարգավորումը.

«Իրավաբանական անձի պետական գրանցման, կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալը կամ հիմնադիրների, մասնակիցների, անդամների, փայտատերերի, բաժնետերերի կազմը փոփոխելու դեպքում հիմնադիրները (մասնակիցները, անդամները, փայտատերերը, բաժնետերերը և այլք) պարտավոր են իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին (պետական ռեգիստր) ներկայացնել իրավաբանական անձի իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարություն՝ լիազոր մարմնի [ՀՀ կենտրոնական բանկի] սահմանած ձևով, կարգով և ժամկետում: Այդ հայտարարության օրինակը իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը (պետական ռեգիստրը) հարցման դեպքում տրամադրում է լիազոր մարմնին»:

Խնդրո առարկա ձևը, կարգը և ժամկետները սահմանվել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 20-Ն որոշմամբ՝ «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական

²⁴²Սույն ձևակերպումը համապատասխանեցվել է ԱՃԹՆ ստանդարտի հայերեն թարգմանությանը: Հարկ ենք համարում նշել, որ «beneficial owner» բառակապակցության առավել ճշգրիտ հայերեն համարժեքը «իրական շահառու»-ն է:

գրանցում իրականացնող մարմին իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը, հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները հաստատելու մասին» (այսուհետ՝ «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարության ձև») և «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգ»):»):

Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգն ինկորպորացնում է ՓԼԱՖ օրենքում օգտագործվող իրական սեփականատերի սահմանումը (3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի) և ներառում է այն ֆիզիկական անձանց, ովքեր՝

- ▶ իրականում գործում են իրավաբանական անձի անունից կամ նրա օգտին, կամ
- ▶ փաստացի (իրական) հսկողություն են իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի անունից կամ օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը, կամ
- ▶ քվեարկելու իրավունքով տիրապետում են տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, կամ
- ▶ հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, կամ
- ▶ գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Վերոնշյալ անձանց վերաբերյալ տրամադրման ենթակա տեղեկատվությունն է՝ ծննդյան ամսաթիվը, բնակության վայրը, քաղաքացիությունը, անձնագրային տվյալները (անձնագրային տվյալների բացակայության դեպքում տրամադրվում են իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի անձնագրային տվյալները) (կետեր 6 և 7):

Տեղեկատվությունը ենթակա է ներկայացման ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ «Ռեգիստր») հետևյալ դեպքերում՝

- ▶ իրավաբանական անձանց պետական գրանցում,
- ▶ իրավաբանական անձանց կանոնադրության փոփոխություն, լրացում, գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության գրանցում, և
- ▶ (ՍՊԸ-ների դեպքում) մասնակիցների փոփոխության գրանցում:

Հատկանշական է, որ թեև ըստ Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգի՝ վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի Ռեգիստրին վերը սահմանված գործողությունները կատարելու համար դիմումը տրամադրելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում (կետ 3), պրակտիկայում հայտարարության ձևը տրամադրվում է Ռեգիստրի կողմից անմիջապես դիմումը ներկայացնելու պահին: Ավելին, Ռեգիստրն անգամ մերժում է գրանցումն այն դեպքերում, երբ գրանցում

իրականացնող անձի լիազորագրում բացակայում է վերջնական շահառուների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու լիազորության մասին նշում:

Պրակտիկայում խնդրո առարկա կարգավորումները արդյունավետ չեն կիրարկվում և կրում են ձևական բնույթ՝ չնայած այն հանգամանքին, որ օրենսդրությունը նախատեսում է նաև պատասխանատվություն: Թեև ՓԼԱՖ օրենքը խոսում է «իրավաբանական անձի **իրական սեփականատերերի վերաբերյալ**» (ընդգծումը մերն է) հայտարարության մասին՝ հոգնակի թվով, իսկ Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգի համաձայն՝ «*[ե]րկու կամ ավելի իրական սեփականատերերի առկայության դեպքում հայտարարության մեջ լրացվում են համապատասխան թվով իրական սեփականատերերի տվյալները՝ յուրաքանչյուրի համար օգտագործելով նույն հայտարարության ձևը՝ հերթական համարով*» (կետ 10), սակայն պրակտիկայում այս պահանջը չի կիրառվում:

Այսպես, վերոնշյալ կարգի 4-րդ կետի համաձայն «*հայտարարության մեջ իբրև իրական սեփականատեր կարող [են] լրացվել*» (ընդգծումը մերն է) վերը սահմանված կատեգորիաների պատկանող ֆիզիկական անձինք: Հիմնվելով վերոնշյալի վրա, փաստացի, Ռեգիստր որպես կանոն ներկայացվում է տեղեկատվություն միայն մեկ շահառուի վերաբերյալ: Հիմնականում խոսքը գնում է գործադիր մարմնի ղեկավարի մասին, ինչը, բնականաբար, չի արտացոլում իրական սեփականատերերի վերաբերյալ իրական պատկերը:

Նման պայմաններում առկա կարգավորումները չեն կարող բավարարել ԱՃԹՆ պահանջներին:

(ii) *Օրենսդրական կարգավորումների ոչ արդյունավետության պատճառները*

Վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման օրենսդրական կարգավորումների անարդյունավետության առաջնային պատճառներից կարող է լինել պահանջը խախտելու դիմաց պատժամիջոցների բացակայությունը: Այսպես, թեև ՓԼԱՖ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ «*իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալները չներկայացնելու, սխալ (այդ թվում՝ կեղծ կամ ոչ արժանահավատ) կամ թերի տվյալներ լրացնելու դեպքում իրավաբանական անձը ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության*», սակայն նույն օրենքի 30-րդ հոդվածը, որը հենց սահմանում է կոնկրետ պատասխանատվության միջոցները, չի անդրադառնում իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալները չներկայացնելու, սխալ (այդ թվում՝ կեղծ կամ ոչ արժանահավատ) կամ թերի տվյալներ լրացնելու պահանջի խախտմանը:

Կարգավորման անարդյունավետության մեկ այլ պատճառ կարող է լինել տրամադրվող տեղեկատվության ստուգման և դրա նկատմամբ շարունակական վերահսկողության բացակայությունը: Այսպես, ՓԼԱՖ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասության համաձայն, «*[վերջնական շահառուների վերաբերյալ] հայտարարության օրինակը իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը (պետական ռեգիստրը) հարցման դեպքում տրամադրում է լիազոր մարմնին*»: Այսինքն, տրամադրված տեղեկատվությունն ինքնին չի ենթարկվում որևէ վերլուծության Ռեգիստրի կողմից, այլ պարզապես պահվում է այնքան ժամանակ, մինչև ըստ անհրաժեշտության չպահանջվի Կենտրոնական բանկի կողմից: Ի

տարբերություն վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկատվության, նույն ՓԼԱՖ օրենքը նախատեսում է հատուկ կատեգորիայի իրավաբանական անձանց խումբ (ֆինանսական հաստատությունները), ում կողմից տրամադրվող տեղեկատվությունը ենթակա է ստուգման Կենտրոնական բանկի կողմից: Այլ իրավաբանական անձանց (այդ թվում՝ հանքարդյունահանող ընկերությունների) կողմից տրամադրվող տեղեկատվությունը, փաստացի, տրամադրման պահին չի ստուգվում:

Բ. Ակնկալվող օրենսդրական բարեփոխումներ

Իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված պահանջների իմպլեմենտացիայի և համապատասխան օրենսդրական փոփոխությունների պատրաստման գործընթացն անցել է մի քանի փուլ: Նախ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերված տեխնիկական աջակցության միջոցով ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի, ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, լիազոր պետական մարմինների պատասխանատուների և այլ շահագրգիռ անձանց հետ համագործակցելով՝ ներգրավված միջազգային և տեղական խորհրդատուների կողմից պատրաստվել է «Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն»²⁴³:

Վերլուծության արդյունքում արվել են ինստիտուցիոնալ առաջարկություններ, մասնավորապես, բազմաոլորտային մոտեցում, որի համաձայն «*տվյալները համապատասխան դեպքերում պետք է փոխանցվեն ԷԲՊՆ (համաձայն ընդերքի օգտագործման օրենսգրքի փոփոխության) և ՀՀ պետքեզիստր ու Կենտրոնական դեպոզիտարիա: Էթիկայի հանձնաժողովը պետք է իրավունք ունենա տեղեկատվություն ստանալ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասին*»:

Նույն խորհրդատուների կողմից մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը»²⁴⁴, որը հաստատվել է ԲՇԽ-ի²⁴⁵ կողմից:

Արդյունքում, իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված պահանջների իմպլեմենտացիայի և համապատասխան օրենսդրական փոփոխությունների պատրաստման նպատակով (նախագծում օգտագործվում է «իրական սեփականատեր» ձևակերպումը) ՀՀ վարչապետի որոշման հիման վրա²⁴⁶ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: ԱՃԹՆ բազմաշահառու խմբի 2018թ. հուլիսի 31-ին տեղի ունեցած աշխատանքային նիստի ընթացքում զեկույցվեց, որ իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական

²⁴³Վերլուծությունը հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/Legal%20Report%20EITI%20Armenia%20Final%20Report%20Arm%20EXE+.pdf

²⁴⁴Ճանապարհային քարտեզը հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/BO%20Roadmap_ARM.pdf

²⁴⁵ԲՇԽ նիստի արձանագրությունը հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_12_06_%202017.pdf

²⁴⁶ՀՀ վարչապետի որոշում 297-Ա (ընդունված 2018թ. մարտի 27-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-gov.am/decrees/item/18321/>

աշխատանքային խումբը քարտուղարության հետ կազմակերպել է մի շարք աշխատանքային հանդիպումներ և, համաձայն ժամանակացույցի, մշակվել է իրական սեփականատերերի բացահայտման օրենքների նախագծերի փաթեթ, որն արդեն հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ճանաչվել ԱԺ քննարկման համար անհետաձգելի²⁴⁷: Փաթեթով առաջարկվում է լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ ընդերքի օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում:

Ըստ խնդրո առարկա օրենսդրական փոփոխությունների, իրական սեփականատերերի գրանցումն իրականացվելու է Բեգիստրի կողմից: Կիրառվելու է «իրական սեփականատեր» եզրույթի հետևյալ սահմանումը.

իրական սեփականատերը ֆիզիկական անձ է, ով.

- ա) առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության, այդ թվում՝ փայերին, բաժնեմասերին, բաժնետոմսերին կամ քվեարկության իրավունքին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարին,
- բ) վերահսկում է իրավաբանական անձին կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով՝ արտոնյալ բաժնետոմսերի կամ մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայի, այսուհետ՝ բաժնետոմս) կամ այլ արժեթղթերի միջոցով,
- գ) ստանում է իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսը,
- դ) իրավասու է նշանակել կամ ազատել իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց,
- ե) իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ հնարավորություն ունի ազդել իրավաբանական անձի կառավարման վրա, վերահսկել կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը կամ իրավասու է կանխորոշել իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի, օպցիոնի պայմանագրի, բաժնետոմսերի/բաժնեմասերի փոխարկվող պարտքի տրամադրման պայմանագրի և այլ միջոցներով:

²⁴⁷Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-gov.am/sessions/archive/2018/10/10/>

Նախագծով ներկայացվելու է նաև «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը, որը՝ իրավաբանական անձին տիրապետելու կամ վերահսկելու դեպքում համարվում է իրական սեփականատեր՝ անկախ հսկողության մակարդակից և մասնակցության չափից:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը նույնականացվելու է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց, վերջիններիս ընտանիքի անդամների շրջանակի հետ:

Քննարկվում է նաև հետագայում համակարգի էլեկտրոնային կարգով համակցման հնարավորությունը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի՝ հետագայում կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տեղեկատվական բազային, որի միջոցով հանձնաժողովը կկարողանա ստուգել տեղեկատվությունը: Սահմանվել է նաև փոխկապակցված անձանց շրջանակը:

Ըստ նախատեսված օրենսդրական փոփոխությունների փաթեթի, ընդերքօգտագործողները յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը, պետք է Ռեգիստր ներկայացնեն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր (հայտարագրեր)՝ ստորագրությամբ հավաստելով հայտարարագրված տվյալների ճշգրտությունը: Տվյալների արժանահավատության ստուգման նպատակով իրավաբանական անձը ներկայացնելու է նաև սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված:

Իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում հայտարարագրին կցվում են:

Իրական սեփականատերերի հետ կապված կարգավորումների արդյունավետ իմպլեմենտացիայի նպատակով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում առաջարկվում է սահմանել նոր՝ ընդերքօգտագործման իրավունքի կասեցում հասկացությունը: Վերջինս կիրառվում է որպես պատժամիջոց այն դեպքերում, երբ իրավաբանական անձը սահմանված կարգով չի ներկայացնում իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագիրը և չի վերացնում զգուշացման հիմքերը: Ընդհանուր առմամբ, պատժամիջոցների առումով գործելու է զգուշացում, կասեցում, այնուհետև դադարեցում սկզբունքը:

Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դիմում ներկայացնելիս նույնպես իրավաբանական անձը պետք է բացահայտի իր իրական սեփականատերերին: Ավելին, ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն ստանալու համար նույնպես պարտադիր պահանջ կսահմանվի իրական սեփականատերերին հայտարարագրելը, որը չկատարելը կլինի մերժման հիմք: Օրենսգրքում առաջին անգամ, այսպիսով, կսահմանվեն համաձայնության մերժման հիմքեր:

Բոլոր տեսակի թույլտվություններից հրաժարվելու դիմում ներկայացնելիս իրական սեփականատերերի հայտարարագրման մասին տեղեկանքի ներկայացումը նույնպես կսահմանվի որպես պարտադիր պահանջ:

Տվյալները լինելու են հրապարակային՝ բացառությամբ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ օրենսդրությամբ գաղտնի համարվող տեղեկատվության: Հայտարարագրերը ներկայացվելու են մինչև 2019թ. վերջ:

9. Հանքարդյունահանող ընկերությունների սեփականատերերը և սեփականության չափը

ԱՃԹՆ ստանդարտի 2.5-րդ պահանջի (g) կետի համաձայն, ԱՃԹՆ զեկույցը պետք է ներկայացնի ընկերությունների սեփականատերերին և նրանց սեփականության չափի վերաբերյալ տեղեկատվություն: Ստորև աղյուսակում ներկայացված է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպարավական ձև ունեցող հանքարդյունահանող ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը ըստ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգից ընկերությունների մասնակիցների վերաբերյալ կատարվող վճարովի հարցման (ստացված www.e-register.am կայքից):

Աղյուսակ 3.4.1 Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպարավական ձև ունեցող հանքարդյունահանող ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն

Ընդերքօգտագործող	Մասնակից	Մասնակցություն
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	Վարդան Վոլոդիայի Մարգարյան	100%
«Լեռ-Էքս» ՍՊԸ	«Զանգեզուրի Պղնձամոլիբդենի Կոմբինատ» ՓԲԸ	100%
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Սուրեն Վարդանի Այվազյան	28%
	Քասփիան Բաունթի Սթիլ Լիմիթիդ ընկ. ²⁴⁸	72%
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Գլոբալ Մեթալզ (ԱՐՄ) Լիմիթեդ ²⁴⁹	100%
«Մեգո-Գոլդ» ՍՊԸ	«Ջի-Ջի-Սի-Ար Մայնինգ» ՍՊԸ ²⁵⁰	100%
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	«Ջի Փի Էմ Արմենիա Բի Վի» ՄՍՊԸ ²⁵¹	100%
	Սուրեն Վարդանի Այվազյան	40%
	Հրայր Սուրենի Հովհաննիսյան	40%
«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Արտաշես Ֆիլիկոյի Կակոյան	20%
	Արամ Օսիկյան	100%
«Ասաթ» ՍՊԸ	Արամ Օսիկյան	100%
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Տվյալները www.e-register.am կայքում բացակայում են	
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	«Գլոբալ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ ²⁵²	100%

²⁴⁸Ընկերությունը գրանցված է Բրիտանական Վիրջինյան Կղզիներում:

²⁴⁹Ընկերությունը գրանցված է Կիպրոսում:

²⁵⁰Ընկերություն գրանցված է ԱՄՆ-ում Դելավեր նահանգում:

²⁵¹Ընկերություն գրանցված է Նիդերլանդներում:

²⁵²Ընկերության վերաբերյալ տեղեկությունները www.e-register.am կայքում սխալ են գրառված: Որպես հասցե նշված է հետևյալը՝ Հայաստան, քՊՎելինգտոն ԴԵ 19808:

Ընդերքօգտագործող	Մասնակից	Մասնակցություն
«Թաթարոն» ՍՊԸ	Արամ Յուրիկի Սաֆարյան	50%
	Աուրելիո ինվեսթմենթս Լիմիթեդ ընկերություն ²⁵³	30%
	Մետսթրիմ Դի-Էմ-Սի-Սի ²⁵⁴	20%
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	«Ավիատեխնոլոգիա Գրուպ» ՍՊԸ ²⁵⁵	25.1%
	Կարեն Համլետի Հովսեփյան	19.8%
	Համլետ Բալաբեկի Հովսեփյան	15%
	Վարդան Համլետի Հովսեփյան	15%
	«Ավիատեխնոլոգիա» ԳՀՄ ՓԲԸ ²⁵⁶	25.1%
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Գրիգոր Բադիրյան	100%
«Հրաշք Մետալ» ՍՊԸ	Աննա Արամայիսի Սահակյան	100%
«Գեղի Գօլդ» ՍՊԸ	Սուրիկ Սերգեի Խաչատրյան	100%
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Գագիկ Կոլյայի Ծառուկյան	65.8%
	Սամվել Ստյոպայի Ծառուկյան	34.2%
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Վարդան Մարգարյան	100%

Փակ բաժնետիրական ընկերություն կազմակերպարավական ձև ունեցող ընկերությունների բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը հանրորեն հասանելի չէ, քանի որ դրանց բաժնետերերի ռեեստրը վարվում է մասնագիտացված ռեեստրավարների կողմից: Անկախ ադմինիստրատորի կողմից ուղարկվել են հարցումներ ՓԲԸ կազմակերպարավական ձև ունեցող ընկերություններին՝ հայցելով տեղեկատվություն սեփականատերերի վերաբերյալ և ընկերությունների համաձայնությունն այդ տեղեկատվությունը հրապարակելու համար (չնայած օրենսդրական պահանջի բացակայությանը): Հետադարձ կապ հաստատվել է միայն «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ. մասնավորապես, վերջինս հայտնել է դիրքորոշում, որ օրենսդրական պահանջի բացակայության պայմաններում տեղեկատվության տրամադրումը նպատակահարմար չէ: Մնացած ընկերությունների հետ հետադարձ կապ չի հաստատվել: Ուստի «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի, «Սագամար» ՓԲԸ-ի, «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի, «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի, «Լիճքվազ» ՓԲԸ-ի, «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի, «Թեղուտ» ՓԲԸ-ի, «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Ղարագույաններ» ՓԲԸ-ի բաժնետերերի ցանկը չի ներկայացվում: Ակնկալվում է, որ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման օրենսդրական պահանջը ուժի մեջ կմտնի 2020թ.-ից:

²⁵³Ընկերություն գրանցված է ԱՄԷ-ում Դուբայի էմիրությունում:
²⁵⁴Ընկերություն գրանցված է ԱՄԷ-ում Դուբայի էմիրությունում:
²⁵⁵Ընկերություն գրանցված է ՌԴ-ում:
²⁵⁶Ընկերություն գրանցված է ՌԴ-ում:

3.5 ՀՀ աուդիտորական և համահարթեցման գործընթացները, պեղական բյուջե (պահանջ 5.1 և 5.3)

Աուդիտորական գործունեությունը

Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության ոլորտում կարգավորման և վերահսկողության քաղաքականություն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Հայաստանն ընդունել է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները, ինչպես նաև Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների մշակման և ներդրման սկզբունքները, այդ թվում և ստանդարտների և պարտադիր օգտագործման այլ փաստաթղթերի կիրառման համար ուղեցույցները:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի²⁵⁷ համաձայն Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք (ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկները), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները հիմնադիրներին, բաժնետերերին, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ պետական մարմիններին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին, դրանց ուղեցույցներին և փոփոխություններին համապատասխան:

Համաձայն հաշվապահական հաշվառման մասին ՀՀ Օրենքի 24-րդ հոդվածի («Ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնությունը»), խոշոր կազմակերպությունները (որոնց հաշվետու տարվա գործունեությունից հասույթը կամ հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում են մեկ միլիարդ դրամը), պարտավոր են հրապարակել տարեկան հաշվետվությունները: Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման (բացառությամբ բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, որոնք իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում), պարտավոր են տարեկան հաշվետվությունները հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը, իսկ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները՝ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում:

Ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել մամուլում, համացանցում կամ տարածվել գրքույկների տեսքով: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են միայն աուդիտ անցնելուց հետո՝ աուդիտորական եզրակացությամբ, բացառությամբ խոշոր կազմակերպությունների, որոնց ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել

²⁵⁷<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=541>

առանց աուդիտորական եզրակացության: Հավելված 2-ը ներառում է տեղեկատվություն արտաքին աուդիտ անցած հանքարդյունահանող ընկերությունների վերաբերյալ: 2016-2017թթ. 27 մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից 7-ը («Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ, «Գեղի Գօլդ» ՍՊԸ, «Գեոպրոմայնինգ Գօլդ» ՍՊԸ, «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ, «Լեռ-Էքս» ՍՊԸ, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ) անցել են աուդիտ: Սույն 7 ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների հղումները տրամադրված են Հավելված 2-ում:

Աուդիտորական գործունեության իրականացումը ՀՀ-ում կարգավորվում է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով՝ ընդունված 2002թ. դեկտեմբերի 26-ին: Աուդիտը պետք է ներառի աուդիտորական կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության անկախ ստուգում, որի արդյունքում տրվում է աուդիտորական եզրակացություն: Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք արտահայտելու այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան: :

«Աուդիտորական գործունեության մասին»²⁵⁸ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի («Աուդիտի ստանդարտները») համաձայն, աուդիտորների և աուդիտորական ընկերությունների կողմից աուդիտի իրականացման ընթացքում կիրառվում են աուդիտի վերաբերյալ համապատասխան ստանդարտներ: Հայաստանում կիրառվող աուդիտի ստանդարտները հիմնված են Հաշվապահների միջազգային դաշնության կողմից հրապարակված «Աուդիտի միջազգային ստանդարտների և հաշվապահների էթիկայի կանոնագրքի» վրա :

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի («Աուդիտ») համաձայն, աուդիտը կարող է իրականացվել աուդիտի ենթարկվող անձի նախաձեռնությամբ (կամավոր աուդիտ) կամ երբ այն նախատեսված է օրենքով (պարտադիր աուդիտ):

Բացի այդ, «Կուտակային կենսաթոշակների մասին»²⁵⁹ ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, կենսաթոշակային ֆոնդի և նրա կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է <http://www.azdarar.am/> հղմամբ՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել, ինչպես նաև իր կայքում տեղադրել ընկերության ֆինանսական հաշվետվությունները և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»²⁶⁰ ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն, ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտի՝ աուդիտ իրականացնող անձի կողմից: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող այն չափանիշները, որոնց

²⁵⁸<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=69162>

²⁵⁹<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64546>

²⁶⁰<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66322>

համապատասխանելու դեպքում աուդիտ իրականացնող անձը կարող է աուդիտորական ծառայություն մատուցել ընկերությանը:

Գործող օրենսդրության համաձայն, բացառությամբ վերոնշյալ ընդհանուր պահանջների, հանքարդյունաբերական ընկերությունների համար աուդիտ իրականացնելու կամ այլ հաշվետվություններ ներկայացնելու ուղղակի պահանջ գոյություն չունի:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի 3-րդ պարբերության համաձայն, ՀՀ նախարարություններում ներքին աուդիտի համակարգը գործում է նախարարի, ՀՀ կառավարության ենթակա պետական կառավարման այլ մարմիններում՝ մարմնի ղեկավարի, ՀՀ համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ ՀՀ օրենքների հիման վրա ստեղծված այլ պետական մարմիններում՝ տվյալ մարմնի ղեկավարի ենթակայությամբ:

Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ կազմակերպության ղեկավարությանը հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով:

Ընդհանուր առմամբ, նախարարությունների ներքին աուդիտի ստորաբաժանումը՝

- Օժանդակում է նախարարությանը, նրա առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև ենթակա կազմակերպություններին ողջ հանրության առջև հաշվետու լինելու հարցում,
- Նվազեցնում է խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի հավանականությունը,
- Աուդիտի է ենթարկում նախարարության, նրա առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ենթակա կազմակերպությունների գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները, այդ թվում՝ ներքին հսկողության համակարգերը,
- Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտորների վարքագծի կանոնների և հետևյալ սկզբունքների համաձայն՝
 - a. Անկախություն,
 - b. Օբյեկտիվություն,
 - c. Կարողունակություն,
 - d. Անկողմնակալություն,
 - e. Գաղտնիություն:

Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ներքին աուդիտորների համար հասանելի են կազմակերպության գործունեության վերաբերյալ ամբողջական, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, և բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտ իրականացնելու համար:

Միաժամանակ պետք է նշել, որ 2018թ. ընդունված ՀՀ «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, Հաշվեքննիչ պալատը իրավասու է ուսումնասիրել իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

«Հաշվապահական հաշվառման մասին»²⁶¹, «Աուդիտորական գործունեության մասին»²⁶² և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին»²⁶³ ՀՀ օրենքների նախագծերով նախատեսվում է ճշգրտել պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը, ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերությունների ներգրավելուն:

Համաձայն վերը ներկայացված նախագծերի, ակնկալվում է որոշակի փոփոխություններ նաև հանքարդյունաբերության ոլորտում պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների շրջանակում: Ելնելով օրենքի նախագծով պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների նոր չափորոշիչներից՝ կիրառվել են նոր չափորոշիչները և բացահայտվել այն ընկերությունները, որոնք ենթակա են պարտադիր աուդիտի՝ հիմնվելով 2017թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա: Այնուհետև դուրս է բերվել այն ընկերությունների ցանկը, որոնք, ըստ նոր օրենքի, հավանական է, ենթակա դառնան պարտադիր աուդիտի, սակայն նախկինում ենթակա չէին: Կիրառված չափորոշիչները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 3.5.1 Օրենքի նախագծի համաձայն պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների չափորոշիչներ

Տեսակ	Չափանիշներ
Խոշոր կազմակերպություն	Գերազանցել է առնվազն 2-ը <ul style="list-style-type: none"> ▶ հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 10 մլրդ դրամ ▶ հասույթը՝ 20 մլրդ դրամ ▶ աշխատողների թվաքանակը՝ 250
Միջին կազմակերպություն	Չի հանդիսանում փոքր կամ միկրո և չի գերազանցել առնվազն 2-ը <ul style="list-style-type: none"> ▶ հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 10 մլրդ դրամ ▶ հասույթը՝ 20 մլրդ դրամ ▶ աշխատողների թվաքանակը՝ 250
Փոքր կազմակերպություն	Չի հանդիսանում միկրո և չի գերազանցել առնվազն 2-ը <ul style="list-style-type: none"> ▶ հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 2 մլրդ դրամ ▶ հասույթը՝ 4 մլրդ դրամ ▶ աշխատողների թվաքանակը՝ 100
Միկրո կազմակերպություն	Չի գերազանցել առնվազն 2-ը <ul style="list-style-type: none"> ▶ հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 175 մլն դրամ ▶ հասույթը՝ 300 մլն դրամ ▶ աշխատողների թվաքանակը՝ 10

Փոփոխությունների արդյունքում համապատասխան ոլորտի՝ պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ցանկը ներկայացված է ստորև:

²⁶¹<https://www.e-draft.am/projects/1069/about>

²⁶²<https://www.e-draft.am/projects/1070/about>

²⁶³<https://www.e-draft.am/projects/1071/about>



N	Կազմակերպության անվանումը	Տարեկան շրջանառություն ըստ ընկերությունների ԱՃԹՆ հաշվետվությունների, 2017թ., ՀՀ դրամ	Աշխատակիցների թվաքանակ	Ակտիվների մեծություն	Կազմակերպության տեսակը ըստ չափի	Ենթակա՞ է պարտադիր աուդիտի ըստ օրենքի նախագծի (առանց հաշվի առնելու ակտիվների մեծությունը)	Անցել՞ է աուդիտ 2017 թ.	Կարող է ակտիվները մեծությունը հանգեցնել պարտադիր աուդիտի անցկացման
1	«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ	-	47	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Այո	Ոչ
2	«ՖՈՐՉՆ ՌԻԶՈՐՍԻՍ» ՍՊԸ	-	1	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
3	«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ	-	30	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Այո	Ոչ
4	«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	-	1	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
5	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	73,949,928,272	1,199	123,632,204,000	Խոշոր	Այո	Այո	Այո
6	«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ	124,861,657	139	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Այո
7	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	70,774,618,617	1,187	տվյալներ չկան	Խոշոր	Այո	Այո	-
8	«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	15,047,601,174	979	26,885,333,000	Խոշոր	Այո	Այո	-
9	«ՄԱՐՁԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	-	14	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
10	«ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ	-	38	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
11	«ԱԿՏԻՎ ԼԵՆԱԳՈՐԾ» ՍՊԸ	-	1	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
12	«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ	493,428,248	9	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
13	«ՊԱՐԱՄԱՈՒՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	-	5	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
14	«ԶԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	187,297,500,633	3,726	տվյալներ չկան	Խոշոր	Այո	Այո	-
15	«ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ	-	1	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
16	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	-	2	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
17	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	-	222	200,910,697,900	Միջին	Այո	Այո	-
18	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ	-	17	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
19	«ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ	-	4	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
20	«ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ	-	26	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
21	«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ	-	58	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
22	«ՎԱՅՔ ԳՈԼԴ» ՍՊԸ	6,675,000	1	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
23	«ԿԱՊԱՆԻ ԼԵՆԱՀԱՐՍԱՏԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	29,708,940,903	1,084	տվյալներ չկան	Խոշոր	Այո	Ոչ	-
24	«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ	-	11	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Ոչ
25	«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՆՆԱԿԱՐԱՍՏԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	8,740,582,998	387	տվյալներ չկան	Փոքր	Այո	Ոչ	-
26	«ՄԵՂՐԱՋՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	1,271,607,401	179	տվյալներ չկան	Փոքր	Ոչ	Ոչ	Այո
	Ընդհանուր	387,415,744,903	9,368					

Պետական բյուջե**Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի համառոտ բնութագիր**

1997թ.-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի համաձայն²⁶⁴, ՀՀ բյուջետային համակարգը երկու մակարդակի բյուջեների՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների ամբողջությունն է: ՀՀ բյուջետային համակարգը հիմնվում է բյուջեների ինքնուրույնության, բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման ամբողջականության, բյուջեների հրապարակայնության, բյուջեների իրատեսության և այլ հիմնարար սկզբունքների վրա: ՀՀ բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

Բյուջեների կատարումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ համապատասխանաբար պետական և համայնքների բյուջեների ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է: Բյուջեների կատարումն իրականացվում է միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա, որը նախատեսում է բյուջեների բոլոր մուտքերի մուտքագրումը և ելքերի կատարումը՝ պետական լիազորված մարմնի միասնական գանձապետական հաշվով: Բյուջեի եկամուտների միասնականությունը անհնար է դարձնում ճշգրտել որևէ եկամուտի հետագա տեղաբաշխումը:²⁶⁵

Պետական բյուջեի ամենամյա նախագծի մշակման աշխատանքները կատարում է կառավարությունը՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման հիման վրա, օրենքով նախատեսված ժամկետներում: Պետական բյուջեի նախագծի մշակումը բաղկացած է երկու փուլից.

ա) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակում,

բ) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակում:

Պետական բյուջեի նախագիծը օրենքով սահմանված կարգով ներկայացվում է Ազգային ժողով, որտեղ այն քննարկվում և հաստատվում է: Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Համայնքի բյուջեները ձևավորվում են ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի ավագանու կողմից ընդունված համայնքի զարգացման եռամյա ծրագրի հիման վրա: Համայնքային բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը և ներկայացնում համայնքի ավագանու քննարկմանը: Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին: Համայնքի ավագանին համայնքի բյուջեն կարող է հաստատել նաև մինչև պետական բյուջեի հաստատումը: Համայնքի բյուջեի չհաստատվելու

²⁶⁴<https://www.arlis.am/documentview.aspx?DocID=121480>

²⁶⁵ «Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին» օրենքը ամրագրում է միայն այն պահանջը, որ բնապահպանական ծրագրերի գծով պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների, իսկ 2020թ.-ից սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը:

ղեկավարում համայնքի ղեկավարը կարող է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարց բարձրացնել: Եթե համայնքի ավագանին եռօրյա ժամկետում ղեկավարի հրաժարականի մասին որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված:

Պետական բյուջեի նախագիծը ներառում է կառավարության բյուջետային ուղերձը և Պետական բյուջեի մասին օրենքը: Բյուջետային ուղերձը ներառում է սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին կառավարության զեկույցը և պետության սոցիալ-տնտեսական վիճակի առաջիկա երեք տարվա կանխատեսումը: Պետական բյուջեի մասին օրենքը ներառում է պետական բյուջեի եկամուտները և ծախսերը, բյուջեի դեֆիցիտը կամ հավելուրդը և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները: Պետական բյուջեում նախատեսվում է կառավարության պահուստային ֆոնդ, որը տվյալ տարվա պետական բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման աղբյուրն է:

Համայնքային բյուջեների կառուցվածքը ներառում է համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասեր: Ի լրումն, համայնքի բյուջեն ունի պահուստային ֆոնդ, որը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեի չկանխատեսված ելքերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման համար: Բացի համայնքների բյուջեներից, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորում կատարվում է պետական բյուջեից՝ այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին:

Պետական բյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է: Կառավարությունը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: Պետական բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ իր սահմանած կարգով: Պետական բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Ազգային ժողովը: Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը:

Համայնքային բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է, իսկ վերահսկողություն իրականացնող մարմինները համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունն են՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին:

Պետական և համայնքային բյուջեների հրապարակայնությունն ապահովելու համար կառավարությունը և համայնքների ղեկավարները պետական և համայնքային բյուջեների հաստատումից հետո համապատասխանաբար եռօրյա և հնգօրյա ժամկետներում բյուջեները հրապարակում են <http://azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Չնայած նրան, որ 1997թ. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» մասին օրենքը թելադրում է, որ համացանցի և մամուլի միջոցով երաշխավորվի, որ բյուջեների նախագծերի և տարեկան հաշվետվությունների հետ

ծանոթանալ և դրանք ուսումնասիրել ցանկացող յուրաքանչյուր անձ կարողանա դյուրությամբ ձեռք բերել համապատասխան փաստաթղթերը, օրենքը չի պահանջում, որ բյուջեների նախագծերը մինչև ընդունվելը դրվեն հանրային քննարկման կարծիքների և առաջարկությունների համար:

Աղյուսակ 3.5.2 2016-2018թթ. ՀՀ համախմբված բյուջեների չափը՝ սահմանված 2016-2018 թթ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքներով ²⁶⁶

ՀՀ Համախմբված բյուջեն	2016, մլրդ դրամ	2017, մլրդ դրամ	2018, մլրդ դրամ
Եկամուտների գծով	1,223	1,244	1,343
Ծախսերի գծով	1,416	1,394	1,501
Դեֆիցիտը	192	150	157

Սույն երեք տարիներում ՀՀ պետական բյուջեն նախատեսել է որոշ հատկացումներ լեռնարդյունահանման ոլորտին, որոնք ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 3.5.3 2016-2018թթ. պետական բյուջեից լեռնարդյունահանման ոլորտին կատարված հատկացումները

	Հանքային ռեսուրսների, բացառությամբ բնական վառելիքի, արդյունահանմանը կատարված հատկացումներ, հազար ՀՀ դրամ	Լեռնարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար կատարված հատկացումներ, հազար ՀՀ դրամ
2016	20,602	42,400
2017	20,571	120,235
2018	16,926	36,295

Համաձայն բյուջեների կատարման հաշվետվությունների, ինչպես նաև բյուջեների մանրամասն ծրագրերի, հանքային ռեսուրսների, բացառությամբ բնական վառելիքի արդյունահանմանը կատարված հատկացումները ուղղվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն՝ ընդերքի մասին տեղեկատվության տրամադրումը ապահովելու համար: Իրենց հերթին, լեռնարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար կատարված հատկացումները ուղղվել են 1) ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման և շենքերի տեխնիկական վիճակի հետազննությունների և տեխնիկական անձնագրավորման և 2) ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական վերլուծական և տեղեկատվական ծառայությունների համար: Ինչպես նշվել է «Նախնական ուսումնասիրությունում» (Բաժին 6.9, էջ 46), ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը ուղարկվել է հարցում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում պետության մասնակցության մասին պարզաբանումների վերաբերյալ: 2017թ. նոյեմբերի 22-ին Պետական գույքի կառավարման վարչության ղեկավարի

²⁶⁶<https://www.arlis.am/documentview.aspx?DocID=111471>
<https://www.arlis.am/documentview.aspx?DocID=119841>
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126060>

տեղակալը, ի պատասխան սույն հարցմանը, պատասխանեց, որ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում պետական մասնակցությամբ ձեռնարկություններ գոյություն չունեն:

Ֆինանսական համահարթեցում

Ֆինանսական համահարթեցումը Հայաստանի Հանրապետությունում ղեկավարվում է «Ֆինանսական համահարթեցման մասին»²⁶⁷ ՀՀ օրենքով՝ (այսուհետ՝ «Օրենք») ընդունված 2016թ. հոկտեմբերի 20-ին:

Օրենքը ամրագրում է որոշակի ծախսային գործոններ, որոնք կոչված են բնութագրելու տվյալ համայնքի առանձնահատկությունները: Այդ գործոններն են, մասնավորապես՝

- 1) մասշտաբի գործոն,
- 2) տրանսպորտային մատչելիության գործոն,
- 3) համայնքի բարձրադիրության գործոն,
- 4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործոն,
- 5) բնակչության տարիքային կառուցվածքի գործոն:

Այսպես, *մասշտաբի ծախսային գործոնը* արտացոլում է բնակչության քանակի ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Ստորև բերված սանդղակը ցույց է տալիս, թե ինչպես է հաշվարկվում գործոնի արժեքը ըստ համայնքի բնակչության քանակի.

Բնակչության քանակի միջակայք	ՄԳ _i
0-3500 բնակիչ	1.0
3,501-5,000 բնակիչ	2.8
5,001-20,000 բնակիչ	2.0
20,001-150,000 բնակիչ	1.5
150,001-ից ավելի բնակիչ	1.0

Վերոնշյալ սանդղակի համատեքստում **ՄԳ_i**-ն արտացոլում է համայնքի մասշտաբի ծախսային գործոնի արժեքը:

Հաջորդը՝ *տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնն է*, որը ենթադրում է համայնքի հեռավորության ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Նշենք, որ այս գործոնի բանաձևում ներառվում են այնպիսի տարրեր, ինչպիսիք են համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից, մարզկենտրոնից, հեռավորությունը շրջկենտրոնից, ինչպես նաև բոլոր համայնքների միջին հեռավորությունը մայրաքաղաքից:²⁶⁸

²⁶⁷<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94584>
²⁶⁸Բանաձևը և նշանակությունը կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=118597> (հոդված 12)
 208

Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնը ցույց է տալիս բարձրադիրության ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Վերջինս հաշվարկվում է համաձայն համայնքի բարձրադիրության նիշի՝ ըստ հետևյալ սանդղակի.

Համայնքի բարձրադիրության նիշի միջակայք	ԲԳ _i
մինչև 1,700 մ	1.0
1,700-2,000 մ	1.1
2,000 մ -ից ավել	1.25

Վերոնշյալ սանդղակի համատեքստում **ԲԳ_i**-ն արտացոլում է համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի արժեքը:

Հաջորդը՝ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնն է, որը ենթադրում է համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Նշված գործոնի բանաձևում հաշվի է առնվում ինչպես համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի արժեքը, այնպես էլ ընդգրկված բնակավայրերի թիվը:²⁶⁹

Օրենքը նախատեսում է բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնի հաշվարկման կարգը: Այս գործոնի շրջանակներում հաշվի են առնվում այնպիսի տարրեր, ինչպիսիք են համայնքի բնակչության թիվը, համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվը, բոլոր համայնքների 0-16 տարեկան բնակչության թվի հանրագումարը, բոլոր համայնքների կենսաթոշակային տարիքի (63 տարեկանից բարձր) բնակչության թվի հանրագումարը, ինչպես նաև բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարը (ՀՀ բնակչության թիվը)²⁷⁰: Միաժամանակ նշենք, որ օրենքը չի նախատեսում հանքերի շահագործմանը առնչվող որևէ գործոն: 2016թ. ֆինանսական համահարթեցման շրջանակներում վճարվել է 47,127,542 հազար ՀՀ դրամ²⁷¹, իսկ 2017թ.՝ 48,068,316 հազար ՀՀ դրամ²⁷²:

²⁶⁹Նույնը՝ հոդված 14

²⁷⁰Նույնը՝ հոդված 15

²⁷¹http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2016_t_tarekan

²⁷²http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2017_t_tarekan

Հանրային ընկալում և երկխոսություն

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի եկամուտների կայունության և ռեսուրսներից կախվածության հետ կապված հարցերի վերաբերյալ հանրային ընկալումն ու դրանց շուրջ հանրային երկխոսությունը խթանելու բավականին արդյունավետ միջոցներ են հիմնականում հանդիսանում ներկայումս հրապարակված հետևյալ իրավական ակտերը և հաշվետվությունները՝

- ▶ ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք²⁷³ և ՀՀ պետական բյուջեի մասին օրենք²⁷⁴, ֆինանսական համահարթեցման մասին օրենքը²⁷⁵ (ներկայացված են 3.5 բաժնում), «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին»²⁷⁶ ՀՀ օրենքը (ներկայացված են 2.3.3 բաժնում), Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների եռամսյակային և տարեկան հաշվետվությունները²⁷⁷:

²⁷³<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75497>

²⁷⁴<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118144>

²⁷⁵<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94584>

²⁷⁶<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122784>

²⁷⁷

<https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%80>

4

ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

4. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

4.1 Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և շրջանակները

Ընկերությունների վճարումների և պետության եկամուտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը կարող է նպաստել արդյունահանող ճյուղերի կառավարման վերաբերյալ տեղեկացված հանրային քննարկումներին: Համաձայն ԱՃԹՆ ստանդարտի 4 «Եկամուտների հավաքագրումը» պահանջի, անհրաժեշտ է իրականացնել ընկերությունների վճարումների և արդյունահանող ճյուղերից ստացված կառավարության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների համակողմանի համադրում: Այդ նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ՏԿԶՆ, ՀՀ Բնապահպանության նախարարությունը, ինչպես նաև ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից որոշված հանքարդյունահանող ընկերությունները պարտավոր են համակողմանիորեն բացահայտել եկամուտների և վճարումների վերաբերյալ տեղեկատվություն՝ լրացնելով ՀՀ Կառավարության 8 հունիսի 2018թ. N 666-Ն որոշմամբ սահմանված հաշվետվությունը: Անկախ ադմինիստրատորը իրականացնում է եկամուտների և վճարումների վերաբերյալ պետական մարմիններից և ընկերություններից ստացված տեղեկատվության համադրում և ներկայացնում է համադրման արդյունքները և բացահայտված անհամապատասխանությունները ԱՃԹՆ զեկույցում:

4.1.1 ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում համադրվող ընկերությունների ցանկի որոշում

ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման նպատակով հաշվետվություն ներկայացնող ընկերությունների ցանկը որոշվում է ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից: ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի 27.03.2018թ. աշխատանքային նիստի արդյունքում կազմված N²⁷⁸ արձանագրությամբ ընդհանուր համաձայնությամբ հստակեցվել է, որ ԱՃԹՆ-ի զեկույցի համար հաշվետվություններ պետք է ներկայացնեն մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները: Կատարված վերլուծության արդյունքում պարզվել է, որ 150 մլն դրամին համարժեք կամ դրանից ավել հարկեր և վճարումներ (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) շեմ կիրառելիս՝ համադրվող ընկերությունների ցանկում կհայտնվեն այն կազմակերպությունները, որ իրականացրել են ակտիվ գործունեություն և նրանց կողմից վճարված հարկերն ու վճարումները էական են: Համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8 N 666-Ն որոշման՝ սնանկ ճանաչված կազմակերպությունները ազատվում են հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունից: Հաշվետու ընկերությունների ցանկը հստակեցվել է ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրությունում, համաձայն որի, այդ կազմակերպությունները 27-ն են: Հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե 150 միլիոն դրամին համարժեք կամ դրանից ավել հարկեր և վճարումներ (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) կատարող ընկերությունները համարվում են համադրվող ընկերություններ:

²⁷⁸ԱՃԹՆ բազմաշահառու խմբի 2018թ. մարտի 27-ի նիստի արձանագրություն (թիվ 9), հասանելի է (էջ 4) հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_03_%202018.pdf
212

Ստորև ներկայացված աղյուսակները պատկերում են 27 ընկերությունների համար էականության շեմի կիրառումը 2016թ. և 2017թ. կտրվածքով՝ հիմնված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տվյալների վրա: Տեղեկատվական նպատակով աղյուսակների առաջին սյունակում ներկայացված են նաև ՀՀ պետական բյուջե ուղղված եկամտային հոսքերի տվյալները, ըստ ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության:

Աղյուսակ 4.1.1 Էականության շեմի կիրառումը 27 ընկերությունների համար, 2016թ.

N	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ընկերությունների տվյալների, 2016թ., հազար ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների, 2016թ., հազար ՀՀ դրամ	Ընկերության մասնաբաժինը ընդհանուր եկամտային հոսքերում ²⁷⁹ , %	Էականության շեմը գերազանցող
1	«ՋԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	19,274,346	19,245,539	39.09%	Գերազանցում է
2	«ԳԵՈՊՐՈՄՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	11,532,125	11,534,493	23.43%	Գերազանցում է
3	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	9,009,369	8,948,555	18.18%	Գերազանցում է
4	«ԿՊՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	3,681,859	3,775,576	7.67%	Գերազանցում է
5	«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	2,741,496	2,957,245	6.01%	Գերազանցում է
6	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	1,133,214	1,129,452	2.29%	Գերազանցում է
7	«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՆԻՆԱՊՐՍՏԱՍՏՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	694,872	695,411	1.41%	Գերազանցում է
8	«ՄԵՂՐԱՋՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	392,173	391,386	0.80%	Գերազանցում է
9	«ԼԵՆ-ԷՔՍ» ՍՊԸ	160,598	160,598	0.33%	Գերազանցում է
	Ընդամենը եկամտային հոսքեր էականության շեմը գերազանցող ընկերություններից	48,620,052	48,838,257	99.20%	
10	«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ	136,296	137,083	0.28%	
11	«ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ	29,704	54,683	0.11%	
12	«ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ	34,240	35,821	0.07%	
13	«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ	23,626	35,165	0.07%	
14	«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ	27,575	27,576	0.06%	
15	«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ	21,757	24,069	0.05%	
16	«ՄԱՐՁԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	8,872	23,178	0.05%	
17	«ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ	14,328	14,590	0.03%	
18	«ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ	12,327	13,846	0.03%	
19	«ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՍՊԸ	10,293	10,301	0.02%	
20	«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	10,013	10,013	0.02%	
21	«ՖՈՐՉՆ ՌԻԶՈՐՍԻՍ» ՍՊԸ	5,127	5,125	0.01%	
22	«ՊԱՐԱՄԱՌԻՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	18,978	0	0.00%	
23	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ	Ընկերությունը չի ցանկացել մասնակցել			
24	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	Ընկերությունը չի ցանկացել մասնակցել			
25	«ՎԱՅՔ ԳՈԼԴ» ՍՊԸ	Ընկերությունը չի ցանկացել մասնակցել			

²⁷⁹Հաշվարկվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տվյալների հիման վրա

26	«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ	Ընկերությունը չի ցանկացել մասնակցել			
27	«ՀՐԱՇՔ ՄԵՏԱՂ» ՍՊԸ	Ընկերությունը չի ցանկացել մասնակցել			
	Ընդամենը եկամտային հոսքեր Էականության շեմը չանցած ընկերություններից	353,136	391,450	0.82%	
	Ընդամենը եկամտային հոսքեր բոլոր ընկերություններից	48,973,189	49,229,707	100.00%	

Տրված էականության շեմի կիրառման արդյունքում 2016թ. 9 ընկերությունների (այսուհետ՝ «համադրվող ընկերություններ») հարկային և այլ վճարները (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) գերազանցել են 150 մլն ՀՀ դրամը: Համաձայն ՀՀ ՊԵԿ տվյալների, 2016թ. արդյունահանող հաշվետու ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե կատարված ընդհանուր վճարումները (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) կազմում են 49,229,707 հազար ՀՀ դրամ, որից նշված 9 ընկերությունների կողմից կատարված հարկային և այլ վճարումների (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) մասնաբաժինը կազմում է 99.18%-ը (կամ 48,838,257 հազար ՀՀ դրամ)²⁸⁰:

Համաձայն պետական մարմինների կողմից տրամադրված տվյալների, 2016թ. ՀՀ պետական բյուջե և համայնքների բյուջեներ եկամտային հոսքերը համադրվող ընկերություններից (բոլոր տեսակի վճարումները ներառյալ) կազմել են 51,372,195 հազար ՀՀ դրամ, որից 50,037,989 հազար ՀՀ դրամ կազմում են էականության շեմը գերազանցած վճարումները: 2016թ. արդյունահանող հաշվետու ընկերություններից ստացված ընդհանուր եկամտի մեջ համադրվող ընկերություններից ստացված եկամտի մասնաբաժինը կազմում է 99.14%:

Այսպիսով, ԱՃԹՆ ստանդարտի պահանջներին համապատասխան եկամտային հոսքերի էականության գնահատման արդյունքների տվյալներով, 2016թ. ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում ներառվեցին էականության շեմը գերազանցող 9 ընկերություններ՝ իրենց էականության շեմը գերազանցող վճարումների 6 տեսակներով²⁸¹ (50,037,989 հազար ՀՀ դրամ): Այդ հոսքերի մասնաբաժինը արդյունահանող հաշվետու բոլոր ընկերություններից ստացված ընդհանուր եկամտային հոսքերի մեջ կազմում է 96.59% (**Տե՛ս Աղյուսակ 4.3**):

²⁸⁰Վերլուծությունն իրականացվել է ԱՃԹՆ-ի շրջանակներում հաշվետվություն ներկայացրած 22 ընկերությունների տվյալների հիման վրա, քանի որ 27 արդյունահանող ընկերություններից միայն 22-ն էին ցանկություն հայտնել մասնակցել: 2016թ. համար ներկայացված վերոնշյալ թվերը փոքր-ինչ այլ կլինեին, եթե հաշվարկներն իրականացվեին բոլոր 27 ընկերություններից ստացված տեղեկատվության հիման վրա:

²⁸¹Էականության որոշման գործընթացը առավել մանրամասն նկարագրված է 4.1.2 բաժնում:

Աղյուսակ 4.1.2 Էականության շեմի կիրառումը 27 ընկերությունների համար, 2017թ.

N	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ընկերությունների տվյալների, 2017թ., հազար ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների, 2017թ., հազար ՀՀ դրամ	Ընկերության մասնաբաժինը ընդհանուր եկամտային հոսքերում ²⁸² , %	Էականության շեմը գերազանցող
1	«ՋԱՆԳԵՁՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	32,205,703	32,267,617	38.30%	Գերազանցում է
2	«ԳԵՈՊՐՈՄՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	13,833,672	13,842,325	16.43%	Գերազանցում է
3	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	13,170,713	13,830,753	16.42%	Գերազանցում է
4	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	10,490,685	10,490,781	12.45%	Գերազանցում է
5	«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	8,536,358	8,422,965	10.00%	Գերազանցում է
6	«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	2,397,914	2,547,808	3.02%	Գերազանցում է
7	«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	916,994	917,009	1.09%	Գերազանցում է
8	«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ	830,086	830,077	0.99%	Գերազանցում է
9	«ՄԵՂՐԱՁՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	260,287	260,033	0.31%	Գերազանցում է
10	«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ	257,580	257,576	0.31%	Գերազանցում է
11	«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ	159,229	158,329	0.19%	Գերազանցում է
	Ընդամենը եկամտային հոսքեր էականության շեմը գերազանցող ընկերություններից	83,059,220	83,825,273	99.50%	
12	«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ	120,253	127,926	0.15%	
13	«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ	64,913	64,915	0.08%	
14	«ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ	52,647	53,087	0.06%	
15	«ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ	29,922	39,922	0.05%	
16	«ՄԱՐՋԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	9,359	23,974	0.03%	
17	«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ	(135,261)	21,293	0.03%	
18	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ	0	21,113	0.03%	
19	«ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ	14,201	14,299	0.02%	
20	«ՎԱՅՔ ԳՈԼԴ» ՍՊԸ	11,815	11,813	0.01%	
21	«ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՍՊԸ	10,293	10,519	0.01%	
22	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	274	10,442	0.01%	
23	«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	10,006	10,006	0.01%	
24	«ՖՈՐՉՆ ՌԻՁՈՐՍԻՍ» ՍՊԸ	6,088	6,088	0.01%	
25	«ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ	14,089	2,548	0.00%	
26	«ՊԱՐԱՄԱՈՒՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	31,574	0	0.00%	

²⁸² Հաշվարկվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տվյալների հիման վրա

27	«ՀՐԱՇՔ ՄԵՏԱՂ» ՍՊԸ	Ընկերությունը հաշվետվություն չի ներկայացրել:	0	0.00%	
	Ընդամենը եկամտային հոսքեր էականության շեմը չանցած ընկերություններից	240,173	417,944	0.50%	
	Ընդամենը եկամտային հոսքեր բոլոր ընկերություններից	83,299,393	84,243,217	100.00%	

Տրված էականության շեմի կիրառման արդյունքում 2017թ. 11 ընկերությունների (այսուհետ՝ «համադրվող ընկերություններ») հարկային և այլ վճարները (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) գերազանցել են 150 մլն ՀՀ դրամը: Համաձայն ՀՀ ՊԵԿ-ից ստացված տվյալների, 2017թ. պետական բյուջե արդյունահանող հաշվետու ընկերությունների կողմից կատարված ընդհանուր վճարումները (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) կազմում են 84,243,217 հազար ՀՀ դրամ, որից նշված 11 ընկերությունների կողմից կատարված հարկային և այլ վճարումների (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) մասնաբաժինը կազմում է 99.50%-ը (կամ 83,825,273 հազար ՀՀ դրամ):

Ըստ պետական մարմինների կողմից տրամադրված տվյալների, այս 11 համադրվող ընկերությունների կողմից 2017թ. եկամտային հոսքերը (բոլոր տեսակի վճարումները ներառյալ) ՀՀ պետական բյուջե և համայնքների բյուջեներ կազմել են 87,509,493 հազար ՀՀ դրամ, որից 85,708,762 հազար ՀՀ դրամը էական վճարումներ են: Համադրվող ընկերություններից ստացվող եկամտային հոսքերի մասնաբաժինը՝ արդյունահանող հաշվետու ընկերություններից ստացվող ընդհանուր բոլոր տեսակի եկամտային հոսքերի մեջ (88,006,957 հազար ՀՀ դրամ) 2017թ. կամ 99.38%:

Այսպիսով՝ ԱՃԹՆ ստանդարտի պահանջներին համապատասխան եկամտային հոսքերի էականության գնահատման արդյունքների տվյալներով 2017թ. ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում ներառվեցին էականության շեմը գերազանցող 11 ընկերություններ իրենց էական վճարումների 8 տեսակներով (85,708,762 հազար ՀՀ դրամ), որոնց մասնաբաժինը արդյունահանող հաշվետու բոլոր ընկերություններից ստացված ընդհանուր եկամտային հոսքերի մեջ կազմում է 97.39% **(Տե՛ս Աղյուսակ 4.3)**:

4.1.2 ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում եկամտային հոսքերի որոշում

Համաձայն ԱՃԹՆ ստանդարտի 4-րդ պահանջի 4.1 «Հարկերի և եկամուտների համակողմանի բացահայտումը» կետի, ԲՇԽ-ն պարտավոր է սահմանել, թե որ վճարումներն ու եկամուտներն են համարվում էական, որոնք են էականության պատշաճ սահմանումներն ու շեմերը: Նույն կետը պարզաբանում է նաև, որ վճարումներն ու եկամուտները համարվում են էական, եթե դրանց մասին տեղեկատվության բացթողումը կամ սխալ տեղեկատվության հաղորդումը կարող է ազդել ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիության վրա: Սույն պահանջի բավարարման նպատակով՝ մինչև հաշվետվությունների ներկայացման գործընթացի մեկնարկը ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից հստակեցվել է էականության շեմը, որպեսզի յուրաքանչյուր եկամտային հոսք նկարագրվի համապատասխան էականության սահմանումներով և շեմերով: Համաձայն ԱՃԹՆ ԲՇԽ-ի 27.03.2018թ. աշխատանքային նիստի արդյունքում կազմված N9 արձանագրության, արդյունահանվող ճյուղերից ստացվող այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը արդյունահանող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում են 1% և ավելի, էական են և պետք է համադրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում: Որոշումը հիմնված է եղել ԱՃԹՆ ԲՇԽ-ի համար ՀԱՀ-ի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից կատարված նախնական ուսումնասիրության վրա, ըստ որի շեմը առաջարկվել է ԲԴՈ աուդիտորական ընկերության կողմից՝ որպես գործարար սովորույթ, քանի որ չկա հաշվապահական որևէ ստանդարտ կամ չափանիշ:

Էական եկամտային հոսքերի ցանկը, որին անդրադարձ է կատարվելու համադրման գործընթացի շրջանակներում, որոշվել է համաձայն պետական մարմինների (ՀՀ Պետական եկամուտների կոմիտե, ՏԿԶՆ, ՀՀ Բնապահպանության նախարարություն) կողմից դեպի պետական և համայնքների բյուջեներ եկամտային հոսքերի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության (Աղյուսակ 4.2.1 և Աղյուսակ 4.2.2): Աղյուսակ 4.2.1-ը և Աղյուսակ 4.2.2-ը ներառում են արդյունահանող ընկերությունների կողմից եկամտային հոսքերի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը ըստ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից սահմանված հաշվետու ընկերությունների ցանկի:

Աղյուսակ 4.2.1 Պետական և համայնքների բյուջեների եկամտային հոսքեր արդյունահանող հաշվետու ընկերություններից, 2016թ. (պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա)

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2016 թ. եկամտային հոսքեր		Պետական մարմին
		Հազար ՀՀ դրամ	%	
1146 - 714612	Ռոյալթի	23,570,665	45.50%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1111 - 711100	Եկամտային հարկ	11,798,021	22.77%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1141 - 714110	Ավելացված արժեքի հարկ	8,820,267	17.03%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1112 - 711200	Շահութահարկ	4,223,832	8.15%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1151 - 715100, 1422 - 742212, 1145 - 714511	Մաքսատուրք և մաքսավճարներ	1,079,811	2.08%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե

1415 - 741520	Վարձակալական վճարներ	790,951	1.53%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Ընդամենը էականության շեմը գերազանցող հոսքեր		50,283,547	97.06%	
1431 - 743110	Տույժեր	293,544	0.57%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
կիրառելի չէ	Հողի օտարում	266,471	0.52%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
կիրառելի չէ	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	260,866	0.50%	ՀՀ բնապահպանության նախարարություն
1145 - 714522, 1145 - 714522	Տուրքեր	210,090	0.41%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1142 - 714200	Ակցիզային հարկ	116,775	0.23%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1431 - 743110	Տուգանքներ	115,557	0.22%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
կիրառելի չէ	Սոցիալ-տնտեսական ներդրումներ	83,650	0.16%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
1146 - 714612, 1145 - 714523	Բնօգտագործման վճարներ և բնապահպանական վճարներ	70,665	0.14%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1131 - 713121, 1136 - 713611	Գույքահարկ	44,974	0.09%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
կիրառելի չէ	Մշտադիտարկումների իրականացման վճար	27,592	0.05%	ՀՀ բնապահպանության նախարարություն
1131 - 713122	Հողի հարկ	16,499	0.03%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
1145 - 714523	ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ	10,292	0.02%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1145 - 714523	ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ	2 767	0.01%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
կիրառելի չէ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման վճար	2,000	0.00%	ՀՀ բնապահպանության նախարարություն
1431 - 743120, 1161 - 716122	Տուգանքներ՝ ուղղված համայնքների բյուջեներ	41	0.00%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
1431 - 743120, 1161 - 716122	Տույժեր՝ ուղղված համայնքների բյուջեներ	15	0.00%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Ընդամենը այլ (ոչ էական) հոսքեր		1,521,798	2.94%	
Ընդամենը բոլոր հոսքերը		51,805,345	100.00%	

Աղյուսակ 4.2.2 Պետական և համայնքների բյուջեների եկամտային հոսքեր արդյունահանող հաշվետու ընկերություններից, 2017թ. (պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա)

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2017թ. եկամտային հոսքեր		Պետական մարմին
		Հազար ՀՀ դրամ	%	
1146 - 714612	Ռոյալթի	37,575,080	42.70%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1141 - 714110	Ավելացված արժեքի հարկ	16,984,582	19.30%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1111 - 711100	Եկամտային հարկ	14,348,957	16.30%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1112 - 711200	Շահութահարկ	11,810,718	13.42%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1151 - 715100, 1422 - 742212, 1145 - 714511	Մաքսատուրք և մաքսավճարներ	2,035,798	2.31%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1431 - 743110	Տույժեր	1,308,783	1.49%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1431 - 743110	Տուգանքներ	1,089,813	1.24%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1415 - 741520	Վարձակալական վճարներ	865,737	0.98%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Ընդամենը էականության շեմը գերազանցող հոսքեր		86,019,468	97.74%	
1146 - 714612, 1145 - 714523	Բնօգտագործման վճարներ և բնապահպանական հարկեր	794,289	0.90%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
կիրառելի չէ	Շրջակա միջավայրի պահպանության դրամազլխի համալրում	368,484	0.42%	ՀՀ բնապահպանության նախարարություն
կիրառելի չէ	Սոցիալ-տնտեսական ներդրումներ	352,139	0.40%	ՀՀ բնապահպանության նախարարություն
1145 - 714522, 1145 - 714522	Տուրքեր	240,100	0.27%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1142 - 714200	Ակցիզային հարկ	64,734	0.07%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
1131 - 713121, 1136 - 713611	Գույքահարկ	59,060	0.07%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
կիրառելի չէ	Մշտադիտարկումների իրականացման վճար	34,413	0.04%	ՀՀ բնապահպանության նախարարություն
1131 - 713122	Հողի հարկ	23,753	0.03%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
կիրառելի չէ	Հողի օտարում	23,342	0.03%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
1145 - 714523	ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ	20,912	0.02%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2017թ. եկամտային հոսքեր		Պետական մարմին
		Հազար ՀՀ դրամ	%	
1145 – 714523	ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ	5,249	0.01%	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
կիրառելի չէ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման վճար	1,000	0.00%	ՀՀ բնապահպանության նախարարություն
1431 - 73120, 1161 - 716122	Տույժեր՝ ուղղված համայնքների բյուջեներ	13	0.00%	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Ընդամենը այլ (ոչ էական) հոսքեր		1,87,489	2.26%	
Ընդամենը բոլոր հոսքերը		88,006,957	100.00%	

Հաշվի առնելով ԱՃԹՆ ստանդարտի պահանջները, ներառյալ թիվ 13 ուղեցույցը (էականության շեմը, հաշվետվությունը ներկայացնելու շեմը և հաշվետու ընկերությունները սահմանող), ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի 27.03.2018թ. աշխատանքային նիստի արդյունքում կազմված N9²⁸³ արձանագրությունը, եկամուտների՝ ըստ վճարումների տեսակների, տեղեկատվության վերլուծության հիման վրա համապատասխան ընկերությունների համար որոշվել է եկամտի էական (եկամտային ընդհանուր հոսքերում 1 տոկոս և ավելի կազմող) հոսքերի ցանկը, որը պետք է ներառվի Հայաստանի 2016-2017թթ. ԱՃԹՆ-ի զեկույցում՝ համադրման շրջանակներում:

N	2016թ.	2017թ.
1	Ռոյալթի	Ռոյալթի
2	Ավելացված արժեքի հարկ	Ավելացված արժեքի հարկ
3	Եկամտային հարկ	Եկամտային հարկ
4	Շահութահարկ	Շահութահարկ
5	Մաքսատուրք և մաքսավճարներ	Մաքսատուրք և մաքսավճարներ
6	Վարձակալական վճարներ	Վարձակալական վճարներ
7	-	Տույժեր
8	-	Տուգանքներ

Այսպիսով, 2016թ. արդյունահանող ընկերություններից ստացված եկամուտները ըստ վճարումների էականության կազմել են 50,283,547 հազար ՀՀ դրամ, որը կազմում է արդյունահանող ընկերությունների կողմից ստացված ընդհանուր վճարումների 97.06%: Մինչդեռ 2017թ. արդյունահանող ընկերություններից ստացված եկամուտները ըստ վճարումների էականության կազմել են 86,024,901 հազար ՀՀ դրամ, որը կազմում է արդյունահանող ընկերությունների կողմից ստացված ընդհանուր վճարումների 97.74%:

²⁸³ԱՃԹՆ բազմաշահառու խմբի 2018թ. մարտի 27-ի նիստի արձանագրություն (թիվ 9), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_03_%202018.pdf

Աղյուսակ 4.3 Համադրվող ընկերություններից ՀՀ պետական բյուջե և համայնքների բյուջեներ ուղղված եկամուտներն՝ ըստ վճարումների էական տեսակների, 2016թ. և 2017թ. (պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա)

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2016թ. եկամտային հոսքեր համադրվող ընկերություններից		2017թ. եկամտային հոսքեր Համադրվող ընկերություններից	
		Հազար ՀՀ դրամ	%	Հազար ՀՀ դրամ	%
1146 - 714612	Ռոյալթի	23,570,665	47.11%	37,574,813	43.84%
1141 - 714110	Ավելացված արժեքի հարկ	8,811,544	17.61%	16,838,897	19.65%
1111 - 711100	Եկամտային հարկ	11,576,044	23.13%	14,225,225	16.60%
1112 - 711200	Շահութահարկ	4,215,831	8.43%	11,807,947	13.78%
1151 - 715100, 1422 - 742212, 1145 - 714511	Մաքսատուրք և մաքսավճար	1,079,729	2.16%	2,035,678	2.37%
1415 - 741520	Վարձակալական վճարներ	784,176	1.57%	843,020	0.98%
1431 - 743110	Տույժեր	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	1,293,852	1.51%
1431 - 743110	Տուգանքներ	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	1,089,331	1.27%
Ընդամենը էական վճարումներ		50,037,989	100.00%	85,708,762	100.00%

4.1.3 Այլ ոչ հարկային վճարներ

ՀՀ ԱՃԹՆ զեկույցը պատրաստելիս բացահայտվել է էականության շեմը գերազանցող միայն մեկ ոչ հարկային վճարման տեսակ՝ վարձակալական վճար: Վարձակալական վճարների երեք ենթատեսակների (գույքի, փոխադրամիջոցի և հողի) վերաբերյալ տեղեկատվություն է հավաքագրվել ընկերություններից: ՏԿԶՆ-ի շրջանակներում ստացված տեղեկատվությամբ, 2016թ. համայնքների բյուջեներ ուղղված ընդհանուր վարձակալական վճարները հաշվետվություն ներկայացրած 22 ընկերությունների համար կազմել են 790,951 հազար ՀՀ դրամ, որոնցում համադրվող ընկերությունների մասնաբաժինը կազմում է 99.14% կամ 784,176 հազար ՀՀ դրամ: 2017թ. համայնքների բյուջեներ ուղղված ընդհանուր վարձակալական վճարները հաշվետու ընկերությունների համար կազմել են 865,737 հազար ՀՀ դրամ, որոնցում համադրվող ընկերությունների մասնաբաժինը կազմում է 97.38% կամ 843,020 հազար ՀՀ դրամ:

4.1.4 Տվյալների հավաքագրում

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքը մշակում է «Ելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն: Պետական մարմիններից և ընկերություններից տվյալների հավաքագրման գործընթացի

իրականացման նպատակով «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն մշակել է առցանց հաշվետվությունների ներկայացման հարթակ՝ reports.eiti.am/hy:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 7 պահանջի «Հանրային բանավեճը» 7.1-ի կետը պահանջում է, որ ԲՇԽ-ն ապահովի ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիությունը, ակտիվորեն խթանի դրա հրապարակայնությունը, հասանելիությունը հանրությանը և նպաստի հանրային երկխոսությանը: Այս պահանջն իրականացնելու հարցում էական նշանակություն ունի ԱՃԹՆ-ի տվյալների հասանելիության և համադրելիության ապահովումը և բարելավումը: Հաշվետվությունների առցանց համակարգի կիրառման հիմնական առավելությունը հանրության համար տեղեկատվության հասանելիության բարձրացումն է, որն էլ, իր հերթին, պետք է բարելավի ԱՃԹՆ զեկույցի թափանցիկությունը:

ԱՃԹՆ-ի համատեքստում բաց են համարվում այն տվյալները, որոնք կարող են ազատորեն օգտագործվել, վերաօգտագործվել և տարածվել յուրաքանչյուրի կողմից՝ պահպանելով հեղինակային իրավունքները: Բաց տվյալների սկզբունքին համապատասխան ԱՃԹՆ-ի տեղեկատվության հասանելիության ապահովումը կարող է անհատներին, քաղաքացիական հասարակությանը, լրատվամիջոցներին, գործարարներին և գիտակրթական հաստատություններին իրազեկել հանքարդյունաբերության ոլորտի մասին և ձևավորել տեղեկացված բանավեճի հարթակ:

ՀՀ ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականությամբ (2017թ. դեկտեմբեր) սահմանվել են ԱՃԹՆ-ի շրջանակում հավաքագրված տվյալների հրապարակման հիմնական սկզբունքները (տվյալների ամբողջականություն, աղբյուրների ներկայացում, արդիականություն, մատչելիություն, մեքենայաընթեռնելիություն, ոչ խտրական օգտագործում, տվյալների կայունություն, օգտագործման բաց լիցենզիա, անվճար օգտագործում և հետադարձ կապ: Դրանցով պետք է առաջնորդվեն ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը և ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերի իրականացման, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցների հրապարակման, ԱՃԹՆ-ի շրջանակում տեղեկատվության և տվյալների հասանելիության ապահովման ընթացքում, ինչպես նաև պատասխանատու պետական մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին խրախուսեն համապատասխան տեղեկատվություն հրապարակելիս, նույնպես առաջնորդվել բաց տվյալների սկզբունքով:

Էլեկտրոնային հարթակի օգտագործումը պետք է նվազեցնի տվյալների հավաքագրման համար պահանջվող ժամանակը և հաշվետվություններում սխալ տվյալների հավանականությունը: Համակարգում ներդրվել են տեխնիկական սխալների հնարավորինս նվազեցման կարգավորումներ, օրինակ՝ թվանշան կամ տառ լրացնելու սահմանափակում, պարտադիր և ոչ պարտադիր դաշտերի սահմանում, փոխկապակցված դաշտերի լրացման տրամաբանություն և այլն:

Պետական մարմինների և ընկերությունների՝ հաշվետվությունները ստորագրելու լիազորություն ունեցող պատասխանատու անձինք գրանցվում են առցանց հարթակում՝ ընտրացանկից ընտրելով իրենց կազմակերպության կամ պետական մարմնի անվանումը և լրացնելով գրանցման համար պարտադիր բոլոր դաշտերը: «Գրանցվել» հրահանգը սեղմելուց հետո գրանցման ժամանակ նշված էլեկտրոնային հասցեին ավտոմատ նամակ է ուղարկվում՝ հրահանգելով հաստատել էլեկտրոնային 222

հասցեի ճշգրտությունը և ակտիվացնել հաշիվը: Գրանցման վերաբերյալ հաղորդագրություն է ուղարկվում նաև համակարգը վարողին, որը ստուգում է տվյալների հավաստիությունը, հաստատում է գրանցումը՝ տալով մուտքի թույլտվություն: Մուտքի թույլտվության ստացումից հետո պետական մարմիններն ու ընկերությունները կարող են արդեն լրացնել էլեկտրոնային հաշվետվությունները: Էլեկտրոնային հաշվետվությունների ձևաչափերը մշակվել են՝ հիմնվելով Կառավարության N 666-Ն որոշմամբ հաստատված ձևաթղթերի և հրահանգների վրա:

Հանքարդյունաբերական ընկերություններից և պետական մարմիններից տեղեկությունների հավաքագրման գործընթացի հաջորդ փուլը ներառում է ընկերությունների և պետական մարմինների պատասխանատու անձանց կողմից հաշվետվությունների էլեկտրոնային օրինակների լրացումը՝ հաստատելով և վավերացնելով ներդրված տվյալների ճշգրտությունը էլեկտրոնային ստորագրության միջոցով: Այնուհետև ներկայացված հաշվետվությունները հավաքագրվում են CMS պորտալում՝ հասանելի դառնալով Անկախ ադմինիստրատորին: Հաշվետվությունները պետական մարմինների և ընկերությունների պատասխանատու անձանց կողմից էլեկտրոնային ստորագրվելուց հետո այլևս ենթակա չեն խմբագրման: Տվյալների հավաքագրման փուլի ժամանակ Անկախ ադմինիստրատորը տվյալների բազայից Microsoft Excel և PDF ձևաչափերով պատրաստում է համադրվող տվյալներ:

Անկախ ադմինիստրատորը իրականացնում է ներկայացված հաշվետվությունների սկզբնական ստուգում և սահմանված ժամկետում հաշվետվություն հանձնած ընկերությունների ցանկը տրամադրում է ԷԲՊՆ, որը վերահսկում է հաշվետվությունների ներկայացման և ժամկետների պահպանման օրենսդրական պահանջը: Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը, հիմնվելով Անկախ ադմինիստրատորից ստացված տեղեկատվության վրա, վարույթներ է իրականացնում հաշվետու և սահմանված ժամկետներում հաշվետվություն չներկայացրած ընկերությունների նկատմամբ:

Ըստ գործող ստանդարտների, Անկախ ադմինիստրատորից չի պահանջվում կատարել նախնական փաստաթղթերի մանրամասն ստուգում՝ բացթողումները հայտնաբերելու համար: Անկախ ադմինիստրատորը հաշվետու կազմակերպություններից և պետական մարմիններից համապատասխան հարցման արդյունքում ստացված տեղեկատվությունը համարում է համապարփակ և վստահելի, առ այն, որ վերջինս հաստատված է պետական մարմինների ղեկավարների, կազմակերպությունների ղեկավարների կամ գլխավոր հաշվապահների կողմից, կամ վերջիններիս կողմից հաստատման լիազորությամբ օժտված անձանց կողմից, և վավերացված է նրանց էլեկտրոնային ստորագրությամբ:

Վերը նշված անձինք համապատասխան պատասխանատվություն են կրում նաև հարկային վերահսկողության գործընթացի նպատակով Պետական եկամուտների կոմիտեին հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով հարկային հաշվետվություններ ներկայացնելու համար, ինչը նույնպես երաշխավորում է Անկախ ադմինիստրատորին տրամադրված տվյալների ճշտությունը և իրավական հենքին համապատասխանությունը:

Հաշվետու արդյունահանող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 2-ում:

Անկախ ադմինիստրատորը համեմատում է պետական մարմինների և ընկերությունների կողմից ստացված տվյալները՝ հավաքված վերոհիշյալ հաշվետվության ձևաթղթի հիման վրա: Երկկողմանի ստացված տվյալների համեմատության արդյունքում հայտնաբերվում են սկզբնական անհամապատասխանություններ:

Ինչպես ԲՇԽ-ի հետ համաձայնեցվել է մեկնարկային հաշվետվության շրջանակներում, Անկախ ադմինիստրատորը համադրման ենթակա տվյալների հայտնաբերման համար կիրառում է հետևյալ շեմերը.

- ▶ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները պետք է ներառվեն ԱՃԹՆ-ի զեկույցում, իսկ հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե 150 մլն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ (բացառությամբ մաքսային տուրքերի և վճարների) կատարող ընկերությունները համարվում են համադրվող ընկերություններ:
- ▶ արդյունահանող ճյուղերից ստացվող այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը արդյունահանող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում են 1 տոկոս և ավելի, էական են, և պետք է համադրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում:

Անկախ ադմինիստրատորը պատրաստել է համադրման տարբերությունների ձևաթուղթ, որը ներառում է համադրման ենթակա յուրաքանչյուր ընկերության վերաբերյալ ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված նախնական հաշվետվության տվյալները, և պահանջում է ընկերություններից և պետական մարմիններից հաստատել, թե արդյոք լրացուցիչ հաղորդակցման ձևաթղթում նշված թվերը համապատասխանում են յուրաքանչյուր ընկերության, պետական մարմնի կողմից նախապես տրամադրված թվերին: Տեղեկատվության բացերը կամ անհամապատասխանությունների պատճառները պարզելու նպատակով, ԱՃԹՆ ստանդարտի համաձայն, EY ընկերությունն անմիջականորեն կապնվում է համադրվող ընկերությունները և պետական մարմինները ներկայացնող պատասխանատու անձանց հետ: Անկախ ադմինիստրատորը խնդրում է նրանց լրացուցիչ տեղեկություններ տրամադրել համադրման ենթակա եկամտային հոսքերի մասով ներկայացված հայտարարությունների և հաշվարկների վերաբերյալ՝ անհամապատասխանության պատճառը պարզելու նպատակով:

Երկկողմանի ներկայացված ֆինանսական հոսքերում անհամապատասխանությունների բացահայտման դեպքում խորհրդատուն պետք է վեր հանի և բացատրություններ ներկայացնի, երբ համաձայն ԲՇԽ-ի 27.03.2018թ. աշխատանքային նիստի արդյունքում կազմված N9 արձանագրության²⁸⁴ անհամապատասխանության չափը կազմում է ֆինանսական տվյալի 4 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան 1 մլն ՀՀ դրամը: Տվյալ հաշվարկի հիմք է հանդիսանում այն կողմի ներկայացված տվյալը, որն ավելի փոքր է:

²⁸⁴https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_03_%202018.pdf

Երբ Անկախ ադմինիստրատորը բացահայտում է վերոնշյալ չափանիշներին բավարարող անհամապատասխանություններ, CMS հարթակում մերժում է հաշվետվությունները՝ դրանք հետ վերադարձնելով համադրվող ընկերություններին և պետական մարմիններին: Հաշվետվությունների հետ վերադարձի արդյունքում համապատասխան ընկերությունը կամ պետական մարմինը առցանց հարթակում հնարավորություն է ստանում խմբագրման և համապատասխան ճշգրտումներ կատարելու: Կիրառելի դեպքերում շեղումների սահմանաչափը գերազանցող նախնական տարբերությունները ճշգրտվել են՝ ըստ ընկերությունների կողմից տրամադրված լրացուցիչ բացատրությունների:

Ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված տվյալների՝ համադրման արդյունքում առաջացող անհամապատասխանությունների մասին բացատրությունները դասակարգվել և ներկայացվել են Հավելված 7- ում:


Զեկույցի կազմման շրջանակներում առկա էին որոշակի սահմանափակումներ, որոնք կապված էին հաշվետվությունների լրացման և հավաքագրման սեղմ ժամկետների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության առաջին անգամ գործարկման և, համապատասխանաբար, ընկերությունների և պետական մարմինների կողմից հաշվետվությունների ներկայացման փորձի բացակայության հետ: Գործընթացի արդյունավետության վրա ազդեցություն են ունեցել նաև հաշվետվությունների լրացման ընթացքում էլեկտրոնային հարթակի թեստավորումը և փոփոխությունները: Այնուամենայնիվ, նշված նկատառումները ազդեցություն չեն ունեցել հաշվետվությունների և տվյալների համապարփակության վրա՝ Քարտուղարության հետ համագործակցման և սույն գործոնների ազդեցությունը նվազեցնելու նպատակով իրականացված միջոցառումների շնորհիվ: Մասնավորապես, Անկախ ադմինիստրատորի և էլեկտրոնային հարթակի ադմինիստրատորների համագործակցությամբ կատարվել է էլեկտրոնային համակարգի համատեղ թեստավորում և կատարելագործման առաջարկներ, հաշվետու արդյունահանող ընկերություններին տրամադրվել է ընթացիկ աջակցություն՝ հարցերի պարզաբանման միջոցով: Պայմանավորված հաշվետվությունների ձևաչափի՝ առաջին անգամ պրակտիկ կիրառման հետ՝ պետական մարմինները և ընկերությունները ցուցաբերում էին տարբեր մոտեցումներ հաշվետվությունում ներառված տվյալների հավաքագրման համար, մասնավորապես, ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման ժամանակ բաց էին թողնվում ավելացված արժեքի հարկի հետաձգված գումարները, ավելացված արժեքի հարկի դեբետային մնացորդների դեպքում 0-ի փոխարեն բացասական գումարներ էին ներկայացվում և այլն: Այդ հարցերը քննարկվեցին կողմերի հետ տվյալների համադրման փուլում՝ միասնական մոտեցում մշակելու նպատակով, և արտահայտված են հաշվետվությունների ձևաչափի բարելավման վերաբերյալ առաջարկությունների մեջ:

4.2 Համադրման գործընթացի ամբողջականություն

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը մասնակցող 27 հաշվետու արդյունահանող ընկերություններից 26-ն են ներկայացրել 2017թ. հաշվետվություններ, ընդ որում՝ 2 ընկերություն հաշվետվությունները ներկայացրել են հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված վերջնաժամկետից ուշ: 2017թ. հաշվետվություն չներկայացրած ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ և սահմանվել տուգանք, այնինչ հաշվետվությունները ուշ ներկայացրած ընկերություններից մեկի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ և սահմանվել տուգանք, իսկ մյուս ընկերության նկատմամբ միայն վարչական վարույթ է հարուցվել, քանի որ ընկերությունը հաշվետվության ուշացումը պատճառաբանել է տեխնիկական խնդիրներով: Հաշվետվություն չներկայացրած 1 ընկերությունը չի գերազանցում էականության շեմը և համարվում է չհամադրվող՝ համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված 2017թ. տվյալների (0 ՀՀ դրամ), և որևէ ազդեցություն չի ունեցել համադրման գործընթացի վրա:

Ինչ վերաբերում է 2016թ., քանի որ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը ընկերությունների մասնակցությունը կամավորության սկզբունքով էր, ընդհանուր 27 արդյունահանող ընկերություններից միայն 22-ն են մասնակցելու ցանկություն հայտնել և, համապատասխանաբար, ներկայացրել հաշվետվություն:

Համադրվող ընկերություններից բոլորը տեղեկատվության հավաքագրման ընթացքում տեղեկատվություն են տրամադրել իրենց կողմից պետական և համայնքների բյուջեներ փոխանցված բոլոր հարկերի և կատարած վճարումների վերաբերյալ՝ ինչպես 2016թ., այնպես էլ 2017թ.: Ելնելով ստացված տեղեկատվությունից՝ համադրվող ընկերությունների կողմից պետությանը կատարված վճարումները, որոնք 2016 և 2017թթ. համապատասխանաբար կազմել են 50,037,989 և 85,708,762 հազար ՀՀ դրամ, ամբողջությամբ համադրվել են: Նախնական համադրման արդյունքում բացահայտվեցին էական անհամապատասխանություններ պետական մարմիններից ստացված տվյալների՝ 2016թ. ընդհանուր 9 ընկերություններից 8-ի, իսկ 2017թ. համար՝ ընդհանուր 11 ընկերություններից 10-ի միջև (Պատկեր 4.1): Արդյունքում ուղարկվեց երկրորդ հարցումը տեղեկատվության հետագա հստակեցման և ճշգրտման նպատակով:



4.3 Համադրման գործընթացի արդյունքները

Պետական մարմինների նախնական հաշվետվությունների տվյալներով՝ պետական և համայնքների բյուջեներ 11 համադրվող ընկերություններից ստացված եկամուտները կազմել են 47,072,245 հազար ՀՀ դրամ 2016թ., և 82,545,897 հազար ՀՀ դրամ՝ 2017թ., մինչդեռ, ըստ ընկերությունների տրամադրված տվյալների, այդ թիվը կազմում է 49,237,215 հազար ՀՀ դրամ և 72,499,182 հազար ՀՀ դրամ համապատասխանաբար: Չուտ անհամապատասխանությունները կազմել են -4.6% (կամ -2,164,971 հազար ՀՀ դրամ) և 13.86% (կամ 10,046,715 հազար ՀՀ դրամ) 2016թ. և 2017թ. համար համապատասխանաբար: Համախառն գումարային անհամապատասխանությունները կազմել են 7.39% (կամ 3,477,29 հազար ՀՀ դրամ) և 29.64% (կամ 21,490,679 հազար ՀՀ դրամ) 2016թ. և 2017թ. համար, համապատասխանաբար:

Համադրման գործընթացից հետո պետական մարմինների կողմից ներկայացված տվյալներով, պետական և համայնքների բյուջեներ 11 համադրվող ընկերություններից ստացված եկամուտները կազմել են 50,037,989 հազար ՀՀ դրամ 2016թ., և 85,708,762 հազար ՀՀ դրամ 2017թ., մինչդեռ ըստ ընկերությունների տրամադրված տվյալների՝ այդ թիվը կազմում է 49,905,350 հազար ՀՀ դրամ և 84,909,824 հազար ՀՀ դրամ համապատասխանաբար:

Ըստ համադրման արդյունքների և տեղեկատվության հետագա ճշգրտման, անհամապատասխանությունները կազմում են զուտ արտահայտմամբ՝ 0.27% (կամ 132,639 հազար ՀՀ դրամ) 2016թ., և 0.94% (կամ 798,937 հազար ՀՀ դրամ) 2017թ., և 0.38% (կամ 191,033 հազար ՀՀ դրամ) 2016թ., և 1.23% (կամ 1,041,166 հազար ՀՀ դրամ) 2017թ.՝ համախառն գումարային արտահայտմամբ: Յուրաքանչյուր արդյունահանող ընկերության դեպքում հայտնաբերված անհամապատասխանությունները և ճշգրտումների պատճառների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 7-ում:

Առավել հաճախ հանդիպող անհամապատասխանությունները և դրանց ճշգրտման պատճառները հետևյալն էին.

- ▶ Ավելացված արժեքի հարկի հաշվարկման համար ընկերությունները և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն կիրառել էին տարբեր մոտեցումներ: Համադրման գործընթացում հաշվետվությունը լրացնելու ուղեցույցի լրացուցիչ մեկնաբանությունների արդյունքում ընկերություններն ու ՀՀ ՊԵԿ կիրառել են նույն մոտեցումը և կատարել համապատասխան ճշգրտումներ իրենց կողմից ներկայացված նախնական հաշվետվություններում:
- ▶ Որոշ ընկերությունների կողմից նախնական հաշվետվություններում բաց էին թողնվել կամ մասամբ էին ներառվել ստուգման ակտերով սահմանված գումարները:
- ▶ Որոշ ընկերությունների կողմից նախնական հաշվետվություններում բաց էին թողնվել ոչ ռեզիդենտի գծով շահութահարկի գումարները:
- ▶ Մաքսատուրքի և մաքսային վճարների գումարները հաշվարկելիս պատահաբար բաց էին թողնվել որոշ վճարումներ կամ ներառվել էին տվյալ հոդվածին չվերաբերող վճարումներ, օր.¹ ճանապարհային վճարներ, հակազնակցման տուրք:
- ▶ ՏԿՁՆ-ի և/կամ ընկերությունների կողմից որոշ համայնքների գծով վարձակալական վճարները բաց էին թողնվել կամ պատահաբար ներառվել էին տվյալ հոդվածին չվերաբերող վճարումներ:

Համադրման գործընթացի արդյունքում ներկայացված վերջնական հաշվետվություններում ընկերության և ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված տվյալների միջև առկա էին էականության շեղ գերազանցող մի քանի տարբերություններ: Նմանատիպ բոլոր դեպքերը իրենց համապատասխան բացատրություններով նույնպես ներկայացվել են Հավելված 7-ում:

Աղյուսակ 4.4.1 2016թ. պետական և տեղական բյուջեների էական եկամուտների հոսքերի համադրման արդյունքները ըստ տեսակների

Վճարման տեսակ	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ			Վերջնական տվյալներ, հազար ՀՀ դրամ		
	Տրամադրված պետական մարմնի կողմից	Տրամադրված ընկերությունների կողմից	Անհամապատասխանություն	Տրամադրված պետական մարմնի կողմից	Տրամադրված ընկերությունների կողմից	Անհամապատասխանություն
Ռոյալթի	23,570,665	23,506,679	63,986	23,570,665	23,570,665	-
Ավելացված արժեքի հարկ	5,854,984	8,279,406	(2,424,422)	8,811,544	8,664,729	146,815
Եկամտային հարկ	11,576,044	11,579,202	(3,158)	11,576,044	11,580,855	(4,811)
Շահութահարկ	4,215,831	4,216,165	(334)	4,215,831	4,215,31	-
Մաքսատուրք և մաքսավճար	1,072,564	930,654	141,910	1,079,729	1,088,698	(8,969)
Վարձակալական վճարներ	782,156	725,109	57,047	784,176	784,572	(396)
Ընդամենը	47,072,244	49,237,215	(2,164,971)	50,037,989	49,905,350	132,639

Աղյուսակ 4.4.2 2017թ. պետական և տեղական բյուջեների էական եկամուտների հոսքերի համադրման արդյունքները ըստ տեսակների

Վճարման տեսակ	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ			Վերջնական տվյալներ, հազար ՀՀ դրամ		
	Տրամադրված պետական մարմնի կողմից	Տրամադրված ընկերությունների կողմից	Անհամապատասխանություն	Տրամադրված պետական մարմնի կողմից	Տրամադրված ընկերությունների կողմից	Անհամապատասխանություն
Ռոյալթի	32,441,657	36,893,879	(4,452,222)	37,574,813	37,574,813	-
Ավելացված արժեքի հարկ	18,860,194	4,767,668	14,092,526	16,838,897	16,717,686	121,11
Եկամտային հարկ	14,225,225	14,225,902	(677)	14,225,225	14,226,369	(1,144)
Շահութահարկ	11,807,947	12,094,803	(286,856)	11,807,947	11,736,141	71,806
Մաքսատուրք և մաքսավճար	1,997,243	1,893,327	103,916	2,035,678	2,030,360	5,318
Տույժեր	1,230,627	683,542	547,085	1,293,852	693,197	600,655
Տուգանքներ	1,089,331	1,071,458	17,873	1,089,331	1,089,289	42
Վարձակալական վճարներ	893,674	868,602	25,072	843,020	841,971	1,049
Ընդամենը	82,545,898	72,499,181	10,046,717	85,708,763	84,909,826	798,937

Ռոյալթի

Ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված նախնական տվյալների՝ համադրվող ընկերությունների գծով ռոյալթիի գումարը 2016թ. համար կազմել է 23,570,665 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 23,506,679 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 63,986 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 0 ՀՀ դրամ:

Մինչույն ժամանակ, 2017թ. համար, ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված նախնական տվյալներով համադրվող ընկերությունների գծով ռոյալթիի գումարը կազմել է 32,441,57 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 36,893,879 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների տվյալների միջև նախնական անհամապատասխանությունը կազմել է (4,452,222) հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 0 ՀՀ դրամ:

հազար ՀՀ դրամ

2016թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	23,570,665	-	23,570,665
Ընկերությունների կողմից տրամադրված	23,506,679	63,986	23,570,665
Անհամապատասխանություններ	63,986	(63,986)	-
2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	32,441,657	5,133,156	37,574,813
Ընկերությունների կողմից տրամադրված	36,893,879	680,934	37,574,813
Անհամապատասխանություններ	(4,452,222)	4,452,22	-

Ավելացված արժեքի հարկ

ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված նախնական տվյալներով, համադրվող ընկերությունների գծով ավելացված արժեքի հարկի գումարը 2016թ. համար կազմել է 5,854,984 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 8,279,406 հազար ՀՀ դրամ:

ՀՀ ՊԵԿ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է (2,424,422) հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո՝ 146,815 հազար ՀՀ դրամ:

Մինչույն ժամանակ, 2017թ. համար, ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված նախնական տվյալներով, համադրվող ընկերությունների գծով ավելացված արժեքի հարկի գումարը կազմել է 18,860,194 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 4,767,668 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների տվյալների միջև նախնական անհամապատասխանությունը կազմել է 14,092,526 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո 126,644 հազար ՀՀ դրամ:

հազար ՀՀ դրամ

2016թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված Ընկերությունների կողմից տրամադրված	5,854,984	2,956,560	8,811,544
Անհամապատասխանություններ	(2,424,422)	2,571,237	146,815
2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված Ընկերությունների կողմից տրամադրված	18,860,194	(2,021,297)	16,838,897
Անհամապատասխանություններ	4,767,668	11,950,018	16,717,686
Անհամապատասխանություններ	14,092,526	(13,971,315)	121,211

Եկամտային հարկ

Ըստ ՀՀ ՊԵԿ տրամադրված նախնական տվյալներով, համադրվող ընկերությունների գծով եկամտային հարկի գումարը 2016թ. համար կազմել է 11,576,044 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 11,579,202 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է (3,158) հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է (4,811) հազար ՀՀ դրամ:

Մինչույն ժամանակ 2017թ. համար, ՀՀ ՊԵԿ տրամադրված նախնական տվյալներով համադրվող ընկերությունների գծով եկամտային հարկի գումարը կազմել է 14,225,225 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 14,225,902 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների տվյալների միջև նախնական անհամապատասխանությունը կազմել է (677) հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է (1,144) հազար ՀՀ դրամ:

հազար ՀՀ դրամ

2016թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	11,576,044	-	11,576,044
Ընկերությունների կողմից տրամադրված	11,579,202	1,653	11,580,855
Անհամապատասխանություններ	(3,158)	(1,653)	(4,811)
2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	14,225,225	-	14,225,225
Ընկերությունների կողմից տրամադրված	14,225,902	466	14,226,369
Անհամապատասխանություններ	(677)	(466)	(1,144)

Շահութահարկ

ՀՀ ՊԵԿ տրամադրած նախնական տվյալներով՝ համադրվող ընկերությունների գծով շահութահարկի գումարը 2016թ. համար կազմել է 4,215,831 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 4,216,165 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է (334) հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո՝ 0 ՀՀ դրամ:

Մինևույն ժամանակ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրած նախնական տվյալներով՝ համադրվող ընկերությունների գծով շահութահարկի գումարը 2017թ. համար կազմել է 11,807,947 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 12,094,803 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ և ընկերությունների տվյալների միջև նախնական անհամապատասխանությունը կազմել է (286,856) հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 71,806 հազար ՀՀ դրամ:

հազար ՀՀ դրամ

2016թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	4,215,831	-	4,215,831
Ընկերությունների կողմից տրամադրված	4,216,165	(334)	4,215,831
Անհամապատասխանություններ	(334)	334	-
2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	11,807,947	0	11,807,947
Ընկերությունների կողմից տրամադրված	12,094,803	(358,663)	11,736,141
Անհամապատասխանություններ	(286,856)	358,663	71,806

Մաքսավճար և մաքսատուրք

ՀՀ ՊԵԿ տրամադրած նախնական տվյալներով, համադրվող ընկերությունների գծով մաքսավճարի և մաքսատուրքի գումարը 2016թ. համար կազմել է 1,072,564 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 930,654 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 141,10 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո՝ (8,969) հազար ՀՀ դրամ:

Մինչույն ժամանակ, ՀՀ ՊԵԿ տրամադրած նախնական տվյալներով համադրվող ընկերությունների գծով մաքսավճարի և մաքսատուրքի գումարը 2017թ. համար կազմել է 1,997,243 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 1,893,327 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ և ընկերությունների տվյալների միջև նախնական անհամապատասխանությունը կազմել է 103,916 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 5,318 հազար ՀՀ դրամ:

հազար ՀՀ դրամ

2016թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	1,072,564	7,165	1,079,729
Ընկերությունների կողմից տրամադրված	930,654	158,044	1,088,698
Անհամապատասխանություններ	141,910	(150,879)	(8,969)
2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	1,997,243	38,435	2,035,678
Ընկերությունների կողմից տրամադրված	1,893,327	137,033	2,030,360
Անհամապատասխանություններ	103,916	(98,598)	5,318

Վարձակալական վճարներ

ՏԿՁՆ տրամադրած նախնական տվյալներով, համադրվող ընկերությունների գծով վարձակալական վճարների գումարը 2016թ. համար կազմել է 782,156 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 725,109 հազար ՀՀ դրամ: ՏԿՁՆ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 57,047 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է (396) հազար ՀՀ դրամ:

Մինչույն ժամանակ 2017թ. համար, ՏԿՁՆ կողմից տրամադրած նախնական տվյալներով, համադրվող ընկերությունների գծով վարձակալական վճարների գումարը կազմել է 893,674 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 868,602 հազար ՀՀ դրամ: ՏԿՁՆ-ի և ընկերությունների տվյալների միջև նախնական անհամապատասխանությունը կազմել է 25,072 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 1,049 հազար ՀՀ դրամ:

հազար ՀՀ դրամ

2016թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՏԿՁՆ կողմից ներկայացված	782,156	2,020	784,176
Ընկերությունների կողմից տրամադրված	725,109	59,463	784,572
Անհամապատասխանություններ	57,047	(57,443)	(396)
2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՏԿՁՆ կողմից ներկայացված	893,674	(50,654)	843,020
Ընկերությունների կողմից տրամադրված	868,602	(26,631)	841,971
Անհամապատասխանություններ	25,072	(24,023)	1,049

Տույժեր

Տվյալ եկամուտների հոսքը գերազանցել է էականության շեմը միայն 2017թ. համար: Ըստ ՀՀ ՊԵԿ տրամադրած նախնական տվյալների, համադրվող ընկերությունների գծով տույժերի գումարը 2017թ. համար կազմել է 1,230,627 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 683,542 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 547,085 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 600,655 հազար ՀՀ դրամ, որը գերազանցում է անհամապատասխանությունների պարզաբանման էականության շեմը: Նմանատիպ անհամապատասխանությունը հիմնականում պայմանավորված է ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված լրացուցիչ տույժերի գումարներով, որոնց հետ ընկերությունները համաձայն չեն: Տույժերի գծով անհամապատասխանությունները ըստ ընկերությունների համապատասխան բացատրություններով ներկայացվել են Հավելված 7-ում:

հազար ՀՀ դրամ

2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	1,230,627	63,225	1,293,852
Ընկերությունների կողմից տրամադրված	683,542	9,655	693,197
Անհամապատասխանություններ	547,085	53,570	600,655

Տուգանքներ

Տվյալ եկամուտների հոսքը գերազանցել է էականության շեմը միայն 2017թ. համար: Ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրած նախնական տվյալների, համադրվող ընկերությունների գծով տուգանքների գումարը 2017թ. համար կազմել է 1,089,331 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 1,071,458 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 17,873 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 42 հազար ՀՀ դրամ:

հազար ՀՀ դրամ

2017թ.			
	Նախնական տվյալներ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	1,089,331	-	1,089,331
Ընկերությունների կողմից տրամադրված	1,071,458	17,831	1,089,289
Անհամապատասխանություններ	17,873	(17,831)	42

5

ԱՃԹՆ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. ԱՃԹՆ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1 Առաջարկներ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման գործընթացի բարելավման վերաբերյալ

ԱՃԹՆ-ի զեկույցի արդիականության պահպանում

Հաջորդող ԱՃԹՆ զեկույցների մշակման գործընթացի պլանավորում և կառավարում, մասնավորապես.

- ▶ ԱՃԹՆ զեկույցի շրջանակները և տեխնիկական առաջադրանքների պատրաստման և հաստատման վերջնաժամկետը պետք է լինի առնվազն մինչև ընթացիկ տարվա առաջին եռամսյակի վերջը
- ▶ Մրցույթի անցկացումը և Անկախ ադմինիստրատորի ընտրությունը պետք է իրականացվի ոչ ուշ, քան ընթացիկ տարվա մայիսի վերջը:

2016-2017թթ. ԱՃԹՆ-ի վավերացման գործառույթները

ԱՃԹՆ-ը խորհուրդը որոշել է, որ առաջին վավերացման գործընթացը Հայաստանում կմեկնարկի 2019թ. սեպտեմբերի 9-ին: Սահմանված ժամկետը պահպանելու համար ԲՇԽ-ն պետք է ապահովի ԱՃԹՆ-ի ստանդարտի և աշխատանքային ծրագրի շրջանակներում բոլոր անհրաժեշտ գործողությունների, որոշումների և հնարավոր շեղումների համապատասխանորեն փաստաթղթավորումը:

Իրական սեփականատերեր

ԲՇԽ-ն և Ազգային քարտուղարությունը պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն իրական սեփականատերերի բացահայտմանը: Ներկայում ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան իրական սեփականատերերի վերաբերյալ համապարփակ և հանրայնորեն հասանելի տվյալների բազա չկա: Ավելին, հանքարդյունահանող ընկերությունների կողմից լրացված հաշվետվության ձևերում բացակայում են համապատասխան հարցադրումները:

ԱՃԹՆ-ը ստանդարտի շրջանակներում ծրագրային մակարդակի հաշվետվությանը անցում կատարելու պատրաստություն

Միջազգային քարտուղարության որոշումը սկիզբ է դրել ԱՃԹՆ-ի ստանդարտը կիրառող երկրներում ԱՃԹՆ-ի տարեկան զեկույցում զետեղված տեղեկատվության՝ ըստ նախագծերի բացահայտման գործընթացի:

Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ընկերությունների գերակշռող մեծամասնությունը ունի միայն մեկ թույլտվություն (արդյունահանման պայմանագիր) և

ներգրավված չէ տնտեսության այլ ճյուղերում: Հետևաբար, նախագծերի մեծամասնությունից պետության եկամուտները մեծապես հանրամատչելի են, և յուրաքանչյուր նախագծից ստացված արդյունքը՝ ակնհայտ: Այսպիսով՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ Հայաստանում գործող հաշվետվությունների ներկայացման գործընթացը փաստացի համապատասխանում է նախագծի մակարդակով վերջինիս ֆորմատին:

Այս հանգամանքները զգալի հեշտացնում են նախագծի մակարդակով հաշվետվության ձևերի անցման գործընթացը, սակայն ԲՇԽ-ից և հանքարդյունահանող ընկերություններից պահանջվում է պատշաճ պատրաստություն (օրենսդրության փոփոխություն, ձևանմուշներ և այլն):

Ընդերքօգտագործման թույլտվությունների հիման վրա իրականացվող վճարներն են՝ (i) բնապահպանական հարկը (մինչև 2018թ. Հարկային օրենսգրքի փոփոխությունը՝ բնապահպանական վճար), (ii) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարը, (iii) մշտադիտարկումների իրականացման վճարը, (iv) բնօգտագործման վճարները, այդ թվում՝ ոռոգման, և (v) ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրքը:

Ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդրման ավելի մանրամասն վերլուծություն ներկայացված է 5.6 բաժնում:

5.2 Առաջարկներ՝ հաջորդող տարիների հաշվետվությունների ձևաչափերի լրամշակման համար

Ընդերքօգտագործողի կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության ձևը

N	Դաշտ	Մեկնաբանություն
1.	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը	Համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, աուդիտորական հաշվետվությունը կազմվում է աուդիտ իրականացնող անձի նախաձեռնությամբ կամ պայմանագրով նախատեսված դեպքերում: Միաժամանակ, համաձայն նույն օրենքի 16-րդ հոդվածի աուդիտորական հաշվետվությունն առևտրային գաղտնիք պարունակող փաստաթուղթ է: Ուստի առաջարկվում է նշված կետը վերաշարադրել հետևյալ կերպ. Ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը:
2.	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը	Խորհուրդ ենք տալիս հարցը ձևափոխել հետևյալ կերպ՝ «Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը, փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը կամ, հաշվետվության տպագիր մամուլում հրապարակված լինելու դեպքում, վերջինիս էլեկտրոնային պատճենը»:
3.	Վարձակալության վճարներ	«Հաշվետու տարում վճարված» վարձակալության վճար դաշտի ձևակերպումը փոխարինել «Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)» ձևակերպմամբ, ինչպես նշված է համայնքի ղեկավարի կողմից տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տրամադրվող հրապարակային ձևում:
4.	Սոցիալ-տնտեսական ներդրում	Սոցիալ-տնտեսական ներդրում դաշտում ավելացնել «Վճարման ամսաթիվ (յուր. վճարման դեպքում)» և «Վճարումը հավաստող փաստաթղթի համարը, ամսաթիվը» դաշտերը, ինչպես նշված է համայնքի ղեկավարի կողմից տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տրամադրվող հրապարակային ձևում:

5.	-	Այլ աղբյուրներից տվյալների բացակայության դեպքում, խորհուրդ ենք տալիս հաշվետվության ձևաչափին ավելացնել հարցադրումներ ընկերության իրական սեփականատերերի վերաբերյալ:
6.	«Ավելացված արժեքի հարկ» և «Ակցիզային հարկ»	Տվյալների հավաքագրման գործընթացը դյուրացնելու նպատակով տարանջատել և առանձնացված տողերով ներկայացնել մաքսային մարմնից և պետական եկամուտների կողմից ստացված հարկերին վերագրվող տվյալները:
7.	«Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)»	Հաշվի առնելով, որ 2018թ.-ից գործում է միասնական հարկային համակարգ՝ խորհուրդ ենք տալիս հաշվետվության ձևաչափից և ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշման ձևակերպումից դուրս բերել փաստացի վճարներին վերաբերող սյունները և ավելացնել տող՝ «Միասնական հաշվին կատարված վճարում՝ ըստ վճարման ժամանակաշրջանի»:
8.	-	Ուղեցույցում խորհուրդ ենք տալիս պարզաբանել հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված գումարը ներկայացնելու կարգը, որպեսզի այն ընդգրկի հարկային հաշվարկով հաշվարկված հարկային պարտավորության (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի դեպքում՝ զրո), մաքսային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության և հարկային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության հանրագումարը: Ընդ որում, հաշվետու տարվա հաշվարկում պետք է ներառվեն միայն տվյալ տարվա ընթացքում վճարման ենթակա հայտարարագրված հետաձգված ԱԱՀ գումարները:
9.	«Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում»	Սույն դաշտը հրապարակային հաշվետվությունների այլ աղյուսակներում հաշվետու տարում կատարված վճարումների վերաբերյալ տեղեկատվության լրացման սկզբունքին համապատասխանեցնելու համար առաջարկում ենք «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար» փոխարինել «Հաշվետու տարում շրջակա միջավայրի

		պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարումը»:
10.	Շահութահարկ	Խորհուրդ ենք տալիս առանձնացնել Ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարների համար դաշտեր:
11.	-	Խորհուրդ ենք տալիս պարզաբանում ավելացնել, որպեսզի ընդերքօգտագործողների կողմից հրապարակային հաշվետվությունում ներառված հարկերի և վճարների ճշգրտված հաշվարկի առկայության դեպքում հրապարակային հաշվետվության մեջ ներառել վերջին ճշգրտված հաշվարկի տվյալները:
12.	-	Խորհուրդ ենք տալիս հաջորդ տարվա զեկույցում ներառել հարց արտահանման կամ վաճառքի դեպքում խտանյութի/համաձուլվածքի կարգի կամ որակի (միջինում) վերաբերյալ:
13.	-	Հաշվետվության ձևաչափերում ներառել հարց ընկերությունների աշխատակիցների՝ ըստ մարզերի բաշխվածության վերաբերյալ:
14.	-	Հաշվետվության ձևաչափերում ներառել հարց հանքավայրերի արդյունահանման տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ:

**Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող
հրապարակային հաշվետվության ձևը**

N	Դաշտ	Մեկնաբանություն
1.	«Հարկեր և վճարներ» աղյուսակ	<p>Առաջարկում ենք քննարկել և վերանայել հաշվետվության ձևը և, համապատասխանաբար, որոշման մեջ նշել յուրաքանչյուր հարկատեսակի տվյալների ներկայացման պարբերականությունը, և, համապատասխանաբար, տվյալների լրացման համար առանձնացված դաշտերի քանակը: Ստորև ներկայացնում ենք նկատառումներից մի քանիսը՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Շահութահարկ՝ 1 տող 2. Ավելացված արժեքի հարկ՝ 12 տող 3. Ակցիզային հարկ՝ 12 տող 4. Ռոյալթի՝ 1 տող
2.	Շահութահարկ	Ավելացնել ենթադաշտ՝ Ոչ ռեզիդենտների համար վճարվող շահութահարկ:
3.	<p>Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված;</p> <p>Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների);</p> <p>Հաշվետու տարում հաշվանցված</p>	Քանի որ կարող է առկա լինել ժամանակահատվածային տարբերություն վճարման և հաշվարկման և/կամ հաշվանցման միջև, պետք է հստակեցվի համապատասխան ժամանակահատվածը, որին վերագրելի են հարկերը: Հետևաբար, առաջարկում ենք սույն դաշտերում ավելացնել «բացված ըստ հաշվետու ժամանակաշրջանի» բառակապակցությունը:
4.	«Ավելացված արժեքի հարկ» և «Ակցիզային հարկ»	Սույն տողերում առանձնացնել դաշտեր՝ մաքսային մարմինների կողմից հաշվարկված գումարները առանձին կերպով լրացնելու նպատակով:
5.	-	Ուղեցույցում խորհուրդ ենք տալիս պարզաբանել հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված գումարը ներկայացնելու կարգը, որպեսզի այն ընդգրկի հարկային հաշվարկով հաշվարկված հարկային պարտավորության (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի դեպքում՝ զրո), մաքսային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության և հարկային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության հանրագումարը: Ընդ որում, հաշվետու տարվա հաշվարկում պետք է ներառվեն միայն տվյալ տարվա ընթացքում վճարման ենթակա հայտարարագրված հետաձգված ԱԱՀ գումարները:

6.	Արտահանումը ըստ արտադրատեսակների	Ուղեցույցում խորհուրդ ենք տալիս ճշտել տեղեկատվության տրամադրման կարգը՝ արտահանման վերաբերյալ տվյալները ներկայացնելով ըստ արտահանման երկրի:
7.	Տույժեր և տուգանքներ	<p>Խորհուրդ ենք տալիս ավելացնել լրացման դաշտ, որ կհստակեցնի, թե որ հարկի կամ վճարի գծով է նշանակված տույժը և տուգանքը:</p> <p>Ստուգման ակտի, ուսումնասիրության կամ արձանագրության մասին տեղեկությունների բացակայության դեպքում՝ պարտադիր դաշտում առաջարկում ենք նշել իրավախախտման ամսաթիվը:</p>
8.	Մաքսատուրք, մաքսավճար, մաքսային մարմինների կողմից գանձվող ճանապարհային հարկ (վճար)	Առաջարկում ենք դիտարկել մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների ազդեցությունը եկամտային հոսքերի վրա, այդ վճարների՝ հաշվետվության մեջ ներառելու նկատառումներով, այդպես օրինակ. «ՊԵԿ վճարվող տուրքերի տվյալների մեջ հաշվի առնել հակազնակցման վճարները և օդային ավազան վնասակար նյութերի արտանետման բնապահպանական վճարները:

**Բնապահպանության նախարարության կողմից ներկայացվող հրապարակային
հաշվետվության ձևը**

N	Դաշտ	Մեկնաբանություն
1.	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	Խորհուրդ ենք տալիս ընդհանրացնել Բնապահպանության նախարարության և ընկերությունների համար նախատեսված հաշվետվությունների ձևաչափերը: Առաջարկում ենք Բնապահպանության նախարարության հաշվետվության ձևաչափում հեռացնել «Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» և «Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» հարցերը:
2.	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը	Առաջարկում ենք հեռացնել վճարումների ամսաթվերին վերաբերվող հարցը:
3.	Մշտադիտարկումների իրականացման վճար	Խորհուրդ ենք տալիս ընդհանրացնել Բնապահպանության նախարարության և ընկերությունների հաշվետվությունների ձևաչափերը: Առաջարկում ենք հեռացնել Բնապահպանության նախարարության հաշվետվությունների ձևաչափում «Վճարման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» հարցը:
4.	-	Առաջարկում ենք հաջորդ տարվա համար հաշվետու մարմինների ցանկում ավելացնել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը՝ տույժերի և տուգանքների մասին տեղեկատվության տրամադրման նպատակով:
5.	«Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում»	Հրապարակային հաշվետվությունների այլ աղյուսակներում հաշվետու տարում կատարված վճարումների վերաբերյալ տեղեկատվության լրացման սկզբունքին համապատասխանեցնելու համար առաջարկում ենք «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համարվ փոխարինել «Հաշվետու տարում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարումը»:

5.3 Առաջարկներ՝ տվյալների հավաքագրման առցանց համակարգի հետ կապված խնդիրների շտկման համար

N	Դաշտ	Մեկնաբանություն
1.	Համադրման արդյունքում ի հայտ եկած շտկումներ	Խորհուրդ ենք տալիս ավելացնել պարտադիր լրացման դաշտ, որ կպարունակի հրապարակային հաշվետվությունների աղյուսակներում համադրման արդյունքում ի հայտ եկած շտկումների պատճառի հակիրճ նկարագրությունը:
2.	Էլեկտրոնային համակարգի օգտագործողի ուղեցույց	Խորհուրդ ենք տալիս մշակել և կայքում հասանելի դարձնել օգտագործողների կողմից տեխնիկական բարդույթների վերաբերյալ ուղեցույց, որ կպարունակի կայքում գրանցում անցնելու, անձնական տվյալները վերականգնելու, հաշվետվության դաշտերը լրացնելու, պահպանելու և էլեկտրոնային ստորագրություն կիրառելու հետ կապված հաճախ հանդիպող հարցեր:
3.	Հաշվետվության դիտում	Առաջարկում ենք հրապարակային հաշվետվություն տրամադրողների համար ստեղծել հնարավորություն նախքան էլեկտրոնային ստորագրությամբ հաշվետվությունը հաստատելը՝ այն Excel տարբերակով ևս արտահանել և պահպանել:
4.	Արտահանվող Excel հաշվետվություններ	Խորհուրդ ենք տալիս յուրաքանչյուր հարկատեսակի F և G աղյուսակում արտահանվող «Վճարումներ» դաշտը փոխարինել «Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված» և «Հարկային հաշվարկը (ճշգրտված հաշվարկը) ներկայացնելու ամսաթիվը» դաշտերով:
5.	PDF արտահանվող հաշվետվությունների տվյալների ձևաչափ	Խորհուրդ ենք տալիս հաշվետվության աղյուսակներում սյուների հերթականությունը առավել համապատասխանեցնել հրապարակային հաշվետվությունների ձևերին:
6.	Excel արտահանվող հաշվետվությունների տվյալների ձևաչափ	Խորհուրդ ենք հաշվետվության աղյուսակները մշակել բովանդակությանը համապատասխան էլեկտրոնային ձևաչափ կիրառելով, օրինակ. հարկի հաշվեգրման համար՝ թվային ձևաչափ:

5.4 Առաջարկներ պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցության կապակցությամբ՝ հաջորդ տարի հնարավոր անհամապատասխանություններից խուսափելու համար

Խորհուրդ ենք տալիս հաշվետվության լրացման վերջնաժամկետից առնվազն 1-2 ամիս առաջ ձևավորել աշխատանքային խումբ, որ կներառի աշխատակիցներ և՛ հարկերի, և՛ մաքսային վճարների համար պատասխանատու բաժիններից:

Խորհուրդ ենք տալիս հարկային մարմնի կողմից ընդերքօգտագործողներին պարբերաբար հասանելի դարձնել հարկերի գծով առկա մնացորդների, և հաշվարկված տույժերի ու տուգանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

5.5 ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի համառոտ ակնարկ և առաջարկներ

ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիրը բաղկացած է առանցքային 6 կետերից, որոնք վերաբերում են Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում առկա հիմնական մարտահրավերներին և խոչընդոտներին.

- ▶ Տեղեկատվության հասանելիության և ժամկետայնության ապահովում.
- ▶ Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում.
- ▶ Հայաստանի օրենսդրական դաշտի վերանայում, հնարավոր բացթողումների և ԱՃԹՆ-ի ստանդարտի հետ անհամապատասխանությունների բացահայտում.
- ▶ Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն և պատասխանատու հանքարդյունաբերության ձևավորման նպատակով միջազգային լավագույն փորձի և ԱՃԹՆ-ի հետ ներդաշնակեցման ճանապարհային քարտեզի մշակում.
- ▶ Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում.
- ▶ ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան համապարփակ զեկույց:

Առաջարկում ենք դիտարկել և անհրաժեշտության դեպքում իրականացնել ԱՃԹՆ-ի 2019թ. զեկույցի նախնական ուսումնասիրություն:

Բաց տվյալների քաղաքականության շրջանակներում առաջարկում ենք աշխատանքային ծրագրում քայլեր ձեռնարկել պետական համակարգերում ԱՃԹՆ-ի համար համապատասխան տվյալների համակարգված բացահայտման վերաբերյալ՝ տվյալների արդիականությունը, որակը և հասանելիությունը ապահովելու նպատակով:

5.6 Առաջարկներ Հայաստանում ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդրման վերաբերյալ

ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.7-րդ պահանջը (տրոհման մակարդակ) սահմանում է.

«Բազմաշահառու խումբը պարտավոր է համաձայնության գալ հրապարակվող տվյալների ապագրեգացման աստիճանի վերաբերյալ: Պահանջվում է, որ ԱՃԹՆ-ի տվյալները ներկայացվեն՝ ըստ առանձին ընկերության, պետական կազմակերպության և եկամտային հոսքի: Պահանջվում է հաշվետվությունների ներկայացում ծրագրի մակարդակով՝ պայմանով, որ այն համահունչ լինի Միացյալ Նահանգների արժեթղթերի և բորսաների հանձնաժողովի կանոններին և Եվրոպական միության առաջիկայում ներկայացվելիք պահանջներին»:

2018թ. հուլիսի 30-ի ԲՇԽ-ի նիստի ընթացքում (արձանագրություն N 10) որոշում ընդունվեց, որ 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակներում որպես ծրագիր կդիտարկվի ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը: Համաձայն ԲՇԽ-ի որոշման՝ Անկախ ադմինիստրատորից առաջին զեկույցում ստացված վերլուծության և առաջարկների հիման վրա կքննարկվեն ծրագրերի մակարդակով ներկայացվող հոսքերը:

2017թ. սեպտեմբերին հրապարակված ԱՃԹՆ-ի 29-րդ ուղեցույցը («Ըստ ծրագրերի հաշվետվություններ ներկայացնելու, ներառյալ հաշվետվությունների ձևաչափի, վերաբերյալ մեթոդական ուղեցույց 29»), պարզաբանում է, որ ԲՇԽ-ին խորհուրդ է տրվում կատարել հետևյալ հարցերի ուսումնասիրություն.

- (i) «Ծրագիր» եզրույթի ի՞նչ սահմանումներ են օգտագործվում այլ իրավական համակարգերում,
- (ii) Ի՞նչ տեսակի իրավական գործիքներ են երկրում կարգավորում արդյունահանման հետ կապված գործառույթները,
- (iii) Արդյո՞ք էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր են երկրում,
- (iv) «Ծրագիր» եզրույթի փաստաթղթավորումը:

Համապատասխան հարցերին անդրադարձ է կատարվել ստորև:

1. «Ծրագիր» եզրույթի սահմանումն այլ իրավական համակարգերում

Ուղեցույց 29-ը բերում է «նախագիծ» եզրույթի օրենսդրական սահմանման երկու օրինակ, որոնք նախատեսված են Եվրոպական միության հաշվապահական դիրեկտիվով և Կանադայի արդյունահանող ոլորտի թափանցիկության միջոցառումների մասին ակտը: Եվրոպական միության հաշվապահական դիրեկտիվի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «ծրագիրը» սահմանվում է հետևյալ կերպ.

«Օպերացիոն գործառնություններ, որոնք կարգավորվում են մեկ պայմանագրով, լիցենզիայով, վարձակալության, կոնցեսիայի կամ նմանադիպ այլ իրավական համաձայնագրերով և հիմք են հանդիսանում պետությանը կատարվող վճարների համար: Այնուամենայնիվ, եթե մի շարք նմանադիպ պայմանագրեր էականորեն փոխկապակցված են, դրանք միասին կհամարվեն մեկ ծրագիր»:

Կանադայի արդյունահանող ոլորտի թափանցիկության միջոցառումների մասին ակտը ներառում է «Ծրագիր» եզրույթի հետևյալ սահմանումը.

«Օպերացիոն գործառնություններ, որոնք կարգավորվում են մեկ պայմանագրով, լիցենզիայով, վարձակալության, կոնցեսիայի կամ նմանադիպ այլ իրավական համաձայնագրով և հիմք են հանդիսանում պետությանը կատարվող վճարների համար: Այնուամենայնիվ, եթե մի շարք նմանադիպ պայմանագրեր էականորեն փոխկապակցված են, դրանք միասին կհամարվեն մեկ ծրագիր: «էականորեն փոխկապակցված» լինել նշանակում է կազմել օպերացիոն և աշխարհագրական առումներով ինտեգրացված պայմանագրերի, լիցենզիաների, վարձակալությունների կամ կոնցեսիաների ամբողջություն կամ փոխկապակցված համաձայնություններ, որոնք ունեն էականորեն նման պայմաններ, կնքված են կառավարության հետ և հիմք են հանդիսանում վճարային պարտավորությունների համար»:

Հայաստանում նման սահմանման ներդրման համար խոչընդոտը նրանում է, որ իրավական գործիքները, որոնք կարգավորում են արդյունահանման գործունեությունը, վճարային պարտավորությունների ձևավորման հիմքը չեն (բացառությամբ որոշ բնապահպանական ընդերքօգտագործման վճարների, ինչպիսիք են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման վճարը և մշտադիտարկումների իրականացման համար վճարը), որի արդյունքում բարձրանում է Հայաստանում որևէ նմանատիպ սահմանման կիրառման իրատեսականության և արդյունավետության հարցը (ստորև ավելի մանրամասն):

2. ՀՀ-ում արդյունահանման գործառնությունները կարգավորող իրավական գործիքների տեսակները

Իրավական գործիքների վերաբերյալ Ուղեցույց 29-ը հստակեցնում է.

«Իրավական գործիքները կարող են լինել ամենապարբեր տեսակների, ներառյալ՝ պայմանագրեր, կոնցեսիաներ, արտադրանքի կիսման համաձայնություններ և այլ համաձայնագրեր, ինչպես նաև լիցենզիաներ, վարձակալություններ, տիրույթներ և թույլտվություններ, որոնք կարգավորում են նավթի, գազի և օգտակար հանածոների շահագործման իրավունքները: Խորհուրդ է տրվում, որպեսզի ԲՇԽ-ն սահմանի գոյություն ունեցող գործիքների տեսակների ցանկ, որոնք պետք է մաս կազմեն «ծրագիր» եզրույթի սահմանման»:

Այսպիսով՝ Ընդերքի մասին օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման իրավունքը շնորհվում է հետևյալ գործիքների միջոցով.

- ▶ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն,
- ▶ լեռնահատկացման ակտ,
- ▶ ընդերքօգտագործման պայմանագիր:

Արդյունահանման թույլտվությունը, ի թիվս այլոց, սահմանում է թույլտվության տրման ամսաթիվը, ժամկետը, տրամադրված պաշարների քանակն ըստ կարգերի, հանքի տարեկան արտադրականությունը, ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները, օգտակար հանածոյի և ուղեկից բաղադրիչների անվանումը: Համապատասխան փորձաքննություններ անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, հանքարդյունահանման պայմանագիրը և լեռնահատկացման ակտը կցվում են ընդերքօգտագործման թույլտվությանը և համարվում են վերջինիս անքակտելի մասը:

Լեռնահատկացման ակտը հավաստում է ընդերքի որոշակի տեղամասում ընդերքօգտագործման գործողություններ իրականացնելու բացառիկ իրավունքները:

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը, լեռնահատկացման ակտը և համապատասխան փորձաքննություններ անցած նախագիծը միասին հանքարդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթեր են:

Ուղեցույց 29-ը պարզաբանում է. «Արտադրության կիսման ռեժիմի պայմաններում ծրագիրը, որպես կանոն, պայմանագիրն է, որը հիմք է հանդիսանում վճարային պարտավորությունների համար: Հարկային/ռոյալթի ռեժիմի պայմաններում, ծրագիրը, որպես կանոն, լիցենզիան է, որից բխում են վճարային պարտավորությունները»: Ուղեցույցում այնուհետև նշվում է, որ «ԲՇԽ-ները պետք է առաջնորդվեն այն ելակետային սկզբունքով, որ ծրագրային մակարդակի վճարները պետք է ներկայացվեն այն իրավական համաձայնության առնչությամբ, որը պետությանն ուղղված վճարային պարտավորությունների հիմքն է»:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող ռեժիմը բացահայտորեն հարկային/ռոյալթի ռեժիմ է, սակայն «ծրագրային մակարդակի» կապումն օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության հետ տեխնիկապես անօգուտ կլինի, քանի որ ռոյալթիների հաշվարկման բազան մատակարարված խտանյութի, ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված

ցանկացած վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունն է, այլ ոչ թե պայմանագրերը կամ թույլտվությունները:

3. Արդյո՞ք էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր են Հայաստանում

Ուղեցույց 29-ի համաձայն՝ էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը նրանք են, որոնք թույլ են տալիս մի քանի իրավական համաձայնագրերի խմբավորումը մեկ ծրագրի շրջանակներում, այն դեպքերում, երբ առկա են բոլոր հետևյալ չափանիշները՝ իրավական համաձայնագրերը թե՛ գործառնական, թե՛ աշխարհագրական առումով ինտեգրված են և ունեն էականորեն համանման պայմաններ:

Սակայն միակ ընկերությունը, որն այս պահին ունի մեկից ավել հանքարդյունահանման պայմանագիր, «ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ-ն է (գրանցման համար: 264.110.06348, ՀՎՀՀ: 00079433), որը, սակայն, խոշոր հարկատուների 2018թ.-ի առաջին եռամսյակի ցուցակում զբաղեցրել է ընդամենը 752-րդ տեղը: 2018թ.-ի առաջին կեսի արդյունքներով այն անգամ չի հայտնվել առաջին 1000 խոշոր հարկատուների ցուցակում:

Բացի այդ, շուկայում առկա է միայն մեկ ընկերություն՝ «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն (գրանցման համար՝ 42.110.01460, ՀՎՀՀ: 03516447), որը հանքարդյունահանման հետ միասին ներգրավված է նաև այլ ձեռնարկատիրական գործունեության մեջ: Այնուամենայնիվ, վերջինիս կողմից կատարված առնվազն ողյաթի վճարումներն ակնհայտորեն տարբերակելի են բյուջետային այլ պարտավորություններից:

Հիմնվելով վերոգրյալի վրա՝ մենք եզրակացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության պարագայում էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր չեն:

4. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում ներկայումս առկա է «ծրագիր» եզրույթի սահմանման անհրաժեշտություն

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «ծրագիր» եզրույթի սահմանման նպատակները (ըստ ԱՃԹՆ-ի²⁸⁵)՝ մենք եզրակացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության պարագայում ներկա պահին «ծրագիր» եզրույթի սահմանման հրատապ անհրաժեշտություն առկա չէ:

Ուղեցույց 29-ը սահմանում է հետևյալ նպատակները.

«Ծրագրային մակարդակում վճարումների հանրային բացահայտումը հնարավորություն է տալիս հանրությանը գնահատելու, թե որքանով է պետությունը ստանում է այն, ինչ պետք է ստանար յուրաքանչյուր արդյունահանման ծրագրից՝ համեմատելով ծրագիրը կարգավորող պայմանները փաստացի վճարումների վերաբերյալ տվյալների հետ: Ընդունող համայնքների պարագայում դա կարող է նպաստել արդյունահանման ծրագրի դրական կողմերի բացահայտմանը: Նշվում է նաև, որ ծրագրային մակարդակի հաշվետվողականությունը կարող է օգնել պայքարել նաև հարկերից խուսափելու և թաքցնելու դեպքերի դեմ՝ տրամադրելով լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու գնագոյացման պրակտիկաների վերաբերյալ: Այն կարող է օգնել կառավարություններին կատարել եկամուտների առավել ճշգրիտ կանխատեսումներ»:

Եզրակացությունը հիմնված է հետևյալ նկատառումների վրա.

- ▶ Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների գերակա մեծամասնությունն ունի ընդամենը մեկ թույլտվություն (հանքարդյունահանման պայմանագիր) և ներգրավված չէ արտադրության որևէ այլ ոլորտներում, ուստի ծրագրերի մեծամասնությունից գոյացող պետական եկամուտները հասարակությանը տեսանելի են, և յուրաքանչյուր ծրագրից գոյացող արդյունքներն, ըստ էության, ակնհայտ են:
- ▶ Էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր չեն Հայաստանի Հանրապետությունում,
- ▶ Չնայած, Հայաստանն ունի հարկային/ռոյալթիի ռեժիմ, ռոյալթիի հաշվարկման բազան մատակարարված խտանյութի իրացման շրջանառությունն է և ոչ թե պայմանագիրը (կամ թույլտվությունը):

Մինչև հանքարդյունաբերության շուկայում էական փոփոխությունները, Հայաստանում հաշվետվողականությունն ինքնըստինքյան ծրագրային մակարդակի վրա է: Սակայն սա բնականաբար չի բացառում, որ առաջատար հանքարդյունահանողներից մեկի կողմից կարող է ձեռք բերվել երկրորդ թույլտվություն: Ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդնումը այդ դեպքում կպահանջի օրենսդրական զգալի փոփոխություններ, քանի որ ներկայիս կարգավորումների պայմաններում պետական եկամուտների տրոհումը ծրագրային մակարդակում անհնարին է: Այդ փոփոխություններն, ի թիվս այլոց, պետք է անդրադառնան ռոյալթիների հաշվարկման բազային և կապակցեն դրանք հանքարդյունահանման պայմանագրերի հետ (ինչպես նաև փոփոխեն այդ պայմանագրերի օրինակելի ձևերը), ներդնեն ծրագրերի առանձին հաշվապահական հաշվառման պահանջներ և այլն:

Նախքան դա Ուղեցույց 29-ով²⁸⁶ առաջարկված սահմանումը չի կարող ընդունվել: Գործող օրենսդրության պայմաններում ԲՇԽ-ի կողմից կարող է ընդունվել և արձանագրվել միայն կրճատված ձևակերպում.

«Հայաստանում ծրագիրը սահմանվում է որպես օպերացիոն գործառնություններ, որոնք կարգավորվում են մեկ թույլտվությամբ և հանքարդյունահանման պայմանագրով»:

Անգամ այդ պարագայում լուծումներ պետք է սահմանվեն «ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ-ի և «ՄՈՒԼՏԻ-ԳՐՈՒՊ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի հաշվետվողականության պարտավորությունները մեղմացնելու նպատակով:

²⁸⁶Ուղեցույց 29-ը առաջարկում է հետևյալ սահմանումը.

«[Պեղությունում], ծրագիրը սահմանվում է որպես օպերացիոն գործառնություններ, որոնք կարգավորվում են մեկ [պայմանագրով, համաձայնագրով, կոնցեսիայով, լիցենզիայով, վարձակալությամբ, թույլտվությամբ, տրոհումով և այլ] և կազմում է կառավարությանն ուղղված վճարային պարտավորությունների հիմք»:

5.7 Առաջարկներ և մեկնաբանություններ ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ֆինանսական հոսքերի վերաբերյալ

ԲՇԽ-ն, հիմք ընդունելով նախնական ուսումնասիրությունը և այլ վերլուծություններ, 2018թ. մարտի 27-ի նիստում²⁸⁷ որոշում կայացրեց ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ֆինանսական հոսքերի վերաբերյալ: Անկախ ադմինիստրատորի՝ նշված ֆինանսական հոսքերի վերաբերյալ առաջարկությունները և վերլուծությունը ներկայացված են ստորև:

Ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության կարգավորումները (պահանջ 4.3)

Հասարակայնորեն հասանելի տեղեկատվության համաձայն (ներառյալ հանքարդյունաբերական պայմանագրերը), Անկախ ադմինիստրատորը ենթակառուցվածքների համար մատակարարումների և ապրանքափոխանակության կարգավորումների որևէ առկայություն չի հայտնաբերել Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտում: Սակայն, պայմանագրերից մի քանիսով նախատեսված են ճանապարհաշինարարական և նմանատիպ այլ պարտավորություններ, որոնք սոցիալական պարտավորությունների մասն են կազմում:

Փոխադրումներից ստացվող եկամուտներ (պահանջ 4.4)

Համաձայն ԲՇԽ-ի որոշման և տեխնիկական առաջադրանքի, Անկախ ադմինիստրատորը չի վերլուծել տրանսպորտային եկամուտներին վերաբերող ֆինանսական հոսքերը, որոնք Հայաստանում կարող են առկա լինել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Անկախ ադմինիստրատորը հարցման միջոցով ուսումնասիրություն է իրականացրել 2016-2017 թթ. գրեթե ամբողջական ծավալային արտադրանքն ապահովող բոլոր ընկերությունների վերաբերյալ: Ուսումնասիրությունը հիմնականում ուղղված էր նախնական տեղեկատվություն ստանալու ընկերությունների կողմից օգտագործվող բեռնափոխադրման միջոցների և ներգրավված կողմերի փոխհարաբերությունների վերաբերյալ: Հարցման արդյունքները կարելի է ամփոփ ներկայացնել հետևյալ կերպ՝

- ▶ արտադրանքի ներքին փոխադրումը և արտահանումը իրականացվում է ավտոմեքենաների և երկաթուղու միջոցով: Երկաթուղով փոխադրման դեպքում, հիմնականում, արտադրանքը Երևանից է փոխադրվում, որտեղ մինչ այդ հասնում է ավտոմեքենաների միջոցով;
- ▶ ընկերությունների մեծ մասը համագործակցում է մեկ բեռնափոխադրման ծառայություններ մատուցող ընկերության հետ, սակայն, որոշ ընկերությունների դեպքում, կարող են ներգրավված լինել 3-4 մատակարար;

²⁸⁷https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_03_%202018.pdf

- ▶ ընկերություններն անմիջական փոխհարաբերություններ չունեն երկաթուղային փոխադրումներ իրականացնող ընկերության հետ: Համագործակցությունը իրականացվում է միջնորդ ընկերությունների միջոցով;
- ▶ որոշ դեպքերում բեռնափոխադրման ծառայությունները հոգում է արտադրանքը գնող ընկերությունը:

Անկախ ադմինիստրատորը առաջարկում է հաջորդ ԱՃԹՆ զեկույցի պատրաստման համար Նախնական ուսումնասիրության մեջ ներառել տրանսպորտային եկամուտների վերլուծական ուսումնասիրություն կամ փորձել նախնական տեղեկատվություն հավաքագրել համապատասխան հարցում ներառելով ԱՃԹՆ-ի շրջանակներում լրացվող հաշվետվությունների մեջ:

Հաշվի առնելով, որ ներկայումս երկաթուղային համակարգի կոնցեսիոն կառավարումն իրականացվում է մեկ ընկերության կողմից, որպես նախնական առաջարկ կարելի է վերլուծել երկաթուղային ճանապարհով հանքային հումքի տեղափոխման արդյունքում պետության ուղղակիորեն ստացված եկամուտները՝ միաժամանակ հաշվի առնելով ներգրավված ընկերությունների պետական կամ մասնավոր բնույթը, ինչպես նաև առևտրային գաղտնիքի բացահայտման և բոլոր կողմերից համադրելի տվյալների հավաքագրման հետ կապված հնարավոր սահմանափակումները:

Պետական ձեռնարկություններին կատարված և դրանցից ստացված վճարումներ, քվազի-ֆիսկալ ծախսեր (պահանջ 6.2)

ԱՃԹՆ-ի 6.2 պահանջի համաձայն «եթե հանքարդյունաբերության ոլորտներում պետական մասնակցությունը հանգեցնում է էական եկամուտների վճարման, ԱՃԹՆ կիրարկող պետությունները պետք է իրենց քվազի-ֆիսկալ ծախսերի վերաբերյալ տեղեկատվության մեջ ներառեն պետական մասնակցությամբ ձեռնարկությունների բացահայտումները»:

Քվազի-ֆիսկալ ծախսերը ներառում են այնպիսի կառուցակարգեր, որոնց պարագայում պետական մասնակցությամբ ձեռնարկություններն իրականացնում են սոցիալական ծախսեր, ինչպիսիք են սոցիալական ծառայությունների վճարումները, վառելիքի սուբսիդիաները, պետական պարտքի սպասարկման վճարները և այլն:

Ինչպես նշվել է «Նախնական ուսումնասիրությունում» (Բաժին 6.9, էջ 46), ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը ուղարկվել է հարցում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում պետության մասնակցության մասին պարզաբանումների վերաբերյալ: 2017թ. նոյեմբերի 22-ին Պետական գույքի կառավարման վարչության ղեկավարի տեղակալը, ի պատասխան սույն հարցմանը, պատասխանեց, որ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում պետական մասնակցությամբ ձեռնարկություններ գոյություն չունեն: Այսպիսով, սույն ոլորտում պետական ձեռնարկությունների և քվազի-ֆիսկալ ծախսերի բացակայությունը, ԱՃԹՆ-ի 6.2 պահանջը Հայաստանի համար դարձնում է ոչ կիրառելի:

5.8 Առաջընթացը պատասխանատու հանքարդյունաբերության ոլորտում

2017թ. մայիսի 5-ի ԲՇԽ-ի աշխատանքային նիստի ընթացքում առաջարկ արվեց ստեղծել ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով զբաղվող աշխատանքային խումբ: Խումբը ստեղծվեց է 2017թ. երրորդ եռամսյակի ընթացքում, իսկ 2018թ. հուլիսի 31-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ընթացքում վերանայվեց ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով զբաղվող աշխատանքային խմբի կազմը (Հավելված 11): Սույն խումբը մշակել է պատասխանատու հանքարդյունաբերության ներդրման ճանապարհային քարտեզի նախագիծ, որը քննարկվելու է 2018թ. դեկտեմբերի 5-ին կայանալի աշխատանքային նիստի ընթացքում:

Պատասխանատու հանքարդյունաբերության ներդրման ճանապարհային քարտեզի նախագծում առաջարկվում է մինչև 2019թ. մարտի 30-ը մշակել «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթ պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը կամ շրջանակը տալու համար: Առաջարկվում է նաև մասնակցել հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծության աշխատանքներին՝ հանքերի իրական տնտեսական ներուժը և տնտեսական կառավարման արդյունավետության աստիճանը գնահատելու և հանքի ներդրումը ազդակիր համայնքի զարգացման գործում զարգացնելու նպատակով: Ի լրումն վերոնշյալի, առաջարկվում է 2019թ. մասնակցել հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատման աշխատանքներին՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով և մինչև 2020թ. մասնակցել հանքարդյունաբերության ոլորտի այնպիսի ռազմավարության մշակմանը, որը կնպաստի երկրի երկարաժամկետ կայուն զարգացմանը: Վերջապես, առաջարկվում է տանել ընթացիկ աշխատանքներ պետական մարմինների հետ շրջանառվող և նոր իրավական ակտերի նախագծերի մշակման նպատակով:

ՀՀ-ում ԱՃԹՆ իրագործելու և պատասխանատու հանքարդյունաբերության ներդրումը խրախուսելու նպատակով ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը ԲՇԽ-ի համար իրականացրել է պատասխանատու հանքարդյունաբերության որոշակի խնդիրներին առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերի վերլուծություն, որի շրջանակներում ուսումնասիրվել են հանքարդյունաբերական ծրագրերի տնտեսական գնահատումը, շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) գործընթացը և շրջակա միջավայրի, համայնքներում հանրային առողջության և աշխատանքային անվտանգության մասին հաշվետվությունների ներկայացման/մշտադիտարկման գործընթացները: Պատասխանատու հանքարդյունաբերության ներդրմանը խոչընդոտող բացահայտված ինստիտուցիոնալ օրենսդրական բացերը հետևյալն են՝

1. Թեպետև ՀՀ օրենսդրության տարբեր ոլորտներում առկա են ներդրումային ծրագրերի գնահատման որոշակի մեխանիզմներ, սակայն դրանք միասնական, կենտրոնացված և հստակ ամրագրված չեն, առկա չէ ծրագրերը ծախս-օգուտ գործիքով գնահատելու պարտադիր պահանջ և եթե նույնիսկ ծրագրերը գնահատելիս այս կամ այն գերատեսչությունը կիրառում է նշված գործիքը, ապա դրա արդյունքները հրապարակային չեն,

2. Չնայած ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով և «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է ՇՄԱԳ իրականացնելու պահանջ, ՀՀ կառավարությունը դեռևս չի հաստատել ՇՄԱԳ իրականացնելու մեթոդիկան: Ըստ էության, տնտեսվարողն ինքն է որոշում ՇՄԱԳ-ի իրականացման մեթոդաբանությունը, չափորոշիչները և ընթացակարգը,
3. Բացի դրանից, օրենսդրության մեջ առկա որևէ դրույթ, որը սահմանում է ՇՄԱԳ փորձաքննության եզրակացության իրավական կարգավիճակը,
4. Եզրակացվել է, որ չկան հստակ ամրագրված առողջապահական մոնիթորինգի տեսակներ և պարզ չէ կապը մոնիթորինգի արդյունքների կիրառման հետագա քայլերի հետ:

Անկախ ադմինիստրատորը խորհրդակցություններ է իրականացրել ԲՇԽ-ի անդամների հետ պատասխանատու հանքարդյունաբերության բաղադրիչի վերաբերյալ ակնկալիքների սահմանման և մեկնաբանման նպատակով, ինչպես նաև սույն ոլորտում 2016-2017թթ.-ին առաջընթացի արձանագրման համար: Վերջինիս իրագործման համար պատրաստվել և ԲՇԽ անդամներին է ներկայացվել համապատասխան հարցաթերթ (Հավելված 9 և 10): Հիմք ընդունելով հարցաթերթի լրացման արդյունքում ստացված պատասխանները՝ առկա են ներքոշարադրյալ եզրակացությունները.

1. ԲՇԽ-ի անդամները ծանոթ են պատասխանատու հանքարդյունաբերության գաղափարին, սակայն մինչ օրս առկա չէ ՀՀ-ում վերջինիս իրագործման տեսլականը;
2. Ըստ ԲՇԽ անդամների, Պատասխանատու Հանքարդյունաբերությունը պետք է հանգուցալուծի առաջնահերթորեն բնապահպանական, սոցիալական և առողջապահական խնդիրները;
3. Սույն նպատակների իրագործման համար, անհրաժեշտ է.
 - ▶ Թափանցիկության ապահովումը հանքարդյունաբերության ոլորտում,
 - ▶ Հանքարդյունաբերական գործունեության էական խնդիրների վերաբերյալ խորհրդակցություններին բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը,
 - ▶ Օրենսդրության բարեփոխումը («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք և «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ինչպես նաև ՀՀ Ընդերքի մասին օրենք) բարելավելով բնապահպանական կարգավորման մեխանիզմները հանքարդյունաբերության ոլորտում՝ հիմնվելով միջազգային փորձի վրա,
 - ▶ Ծախսերի վերլուծության մեխանիզմի ներդրումը,
4. Ըստ ԲՇԽ անդամների, առաջիկա հինգ տարիների ընթացքում կարձանագրվի Պատասխանատու հանքարդյունաբերության էական առաջընթաց. Կառավարությունը պետք է առաջնորդի Պատասխանատու Հանքարդյունաբերության ներդրման գործընթացը, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև մյուս շահագրգիռ կողմերի (սոցիալական հասարակություն, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողներ, տեղական համայնքներ) հետարքրքրությունները,
5. Պատասխանատու հանքարդյունաբերությանն ուղղված Կառավարության քաղաքականությունը պետք է հիմնված լինի մի քանի առանցքային տարրերի վրա,

- ▶ Ֆինանսական պատժամիջոցներ,
 - ▶ Վարչական գործիքներ և վերահսկողություն (ստուգումներ, հաշվետվություններ և այլն),
 - ▶ Ֆինանսական խթաններ (արտոնյալ վարկեր, հարկային արտոնություն և այլն);
 - ▶ Իրազեկում և կազմակերպության սոցիալական պատասխանատվություն (բիզնեսի ինքնակարգավորումը հասարակական կարծիքի ազդեցության ներքո),
6. Նշվել է նաև, որ Հայաստանում վերջին երկու տարիների ընթացքում այս ուղղությամբ զգալի առաջընթաց է գրանցվել: Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության հաստատումը սկիզբ է դրել ԱՃԹՆ ստանդարտի մշակմանը և ներդրմանը: Ստանդարտը ներառում է Պատասխանատու հանքարդյունաբերության հետ կապված հիմնախնդիրների հիմնական մասը: ԱՃԹՆ-ի ստանդարտը լավ սկզբնաղբյուր է հանդիսանում Պատասխանատու հանքարդյունահանման մեջ Հայաստանի հետագա առաջընթացի համար:

6 ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐԿԱԾ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

6. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԱՃԹՆ գեկույցի պատրաստման ընթացքում Անկախ ադմինիստրատորի կողմից վեր են հանվել մի շարք օրենսդրական բացեր և հակասություններ, որոնք համառոտ ներկայացված են ստորև՝

1. Չնայած ՀՀ սահմանադրական դատարանի կողմից հայտնաձև հստակ դիրքորոշմանն առ այն, որ բնօգտագործման վճարների առնչությամբ առաջացող հարաբերություններն իրենց էությանմբ մասնավոր իրավական հարաբերություններ են, ռոյալթիների վճարման մասով ՊԵԿ-ի կողմից իրականացվող ստուգումների և վարչական ակտերի միջոցով դրանց գանձման պրակտիկան, ինչպես նաև այդ ակտերի վիճարկման գործընթացը բացահայտորեն շարունակում է մնալ հանրային-իրավական տիրույթում, իսկ օրենսդրության մեջ առկա, Սահմանադրական դատարանի կողմից ընդգծված, հակասություններն այդպես էլ չեն շտկվել Օրենսդրի կողմից: Արդյունքում՝ ընդերքօգտագործողների կողմից սխալ հաշվարկված ռոյալթիների առնչությամբ ՊԵԿ-ն ընդունում է վարչական ակտեր:
2. Չնայած ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման և օտարման առնչությամբ առկա հստակ կարգավորումներին, ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի/բաժնետոմսերի առուվաճառքը որևէ կարգավորման և վերահսկողության չի ենթարկվում ԷԲՊՆ-ի կողմից:
3. Օրենսդրությունում բացակայում են ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը մերժելու հիմքերը:
4. Ակնհայտ պրակտիկ խնդիրն են առաջանում ընդերքօգտագործողների համար այն պատճառով, որ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը որևէ կերպ չի երաշխավորում այդ իրավունքի իրացման համար անօտարելի այլ իրավունքների (ջրօգտագործման իրավունք, հողի օգտագործման իրավունք) ձեռքբերման համար:
5. Թեև տեղական համայնքներն ընդերքօգտագործողների կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների առաջնային շահառուներն են, սակայն օրենսդրությունը որևէ հստակ մեխանիզմ չի արձանագրում ընդերքօգտագործողների սոցիալ-տնտեսական պարտավորությունների շրջանակի ձևավորման և հստակեցման գործընթացում համայնքը ներկայացնող ՏԻ մարմինների մասնակցության համար:
6. Թեև Օրենսգիրքն արձանագրում է, որ աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը կազմվում է «օրենսդրությամբ սահմանված կարգով», սակայն փաստացի աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի իրականացման կարգ, միջոցառումների ծավալի որոշակիացման ընթացակարգեր, ինչպես նաև նման միջոցառումների իրականացման

նկատմամբ վերահսկողություն և արդյունավետության գնահատման չափանիշներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն:

7. Մի շարք օրենսդրական բացեր առկա են դրամագլխին կատարվող վճարների կարգավորումների համատեքստում: Մասնավորապես՝ Օրենսգիրքը որևէ կերպ չի սահմանում ո՛չ բնապահպանական աշխատանքների ծավալների, ո՛չ ընդերքօգտագործողի կողմից դրանց իրականացված լինելու որոշման չափանիշներ, ո՛չ շրջակա միջավայրին պատճառված վնասների գնահատման չափանիշներ: Ռեկուլտիվացիոն վճարների բազային չափ գործող ընդերքօգտագործման պայմանագրերի զգալի մասում սահմանված չէ, որի արդյունքում առաջանում է իրավական անորոշություն. օրենսդրությունը հղում է կատարում պայմանագրերին (ինչպես նաև նախագծերին/ծրագրերին), իսկ պայմանագրերով որևէ պարտավորություն փաստացի արձանագրված չէ, այլ միայն հղում է կատարվում «օրենսդրությամբ սահմանված չափ»-ին և «վճարման կարգ»-ին:
8. Իրավական անորոշություններ են առկա այն ընդերքօգտագործման պայմանագրերի պարագայում, որոնք կնքվել են ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաների վերաձևակերպման արդյունքում: Հաշվի առնելով, որ 2002-2012թթ. գործած նախորդ Ընդերքի մասին օրենսգիրքը չէր նախատեսում հանքի փակման ծրագիր ներկայացնելու օրենսդրական պահանջ, վերաձևակերպված թույլտվություններից շատերի պարագայում հանքի փակման ծրագրերը բացակայում են: Ուստի՝ բացակայում է մշտադիտարկումների նախահաշվային արժեքը, ինչպես նաև աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը և փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների ծրագիրը: Պայմանագրերից մի քանիսի պարագայում «Հանքի փակման ծրագիր» վերտառությամբ հավելված 2-ը սահմանում է բացառապես աշխատուժի սոցիալական մեղմացման և հանքի ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական միջոցառումներ իրականացնելու պարտականություն (առանց դրանց էության հստակեցման), իսկ մշտադիտարկումների վճարների առնչությամբ որևէ նշում առկա չէ: Մի խումբ պայմանագրերի պարագայում էլ «հանքի փակման ծրագիր» վերտառությամբ 2-րդ հավելվածում, որտեղ խոսվում է սոցիալական մեղմացման միջոցառումների մասին, հավելվածի վերջում ներկայացված է նաև միջոցառումների ցանկ՝ աղյուսակի տեսքով, որոնք բովանդակային առումով սոցիալական չեն, այլ էկոլոգիական:

Շնող համայնքին Թեղուտ ՓԲԸ կողմից վճարման ենթակա գույքահարկ

Ողջունելի է, որ գրանցման բացի պարագայում ընկերությունը պատրաստակամորեն վճարումներ է կատարել համայնքի բյուջե, սակայն թե՛ վճարման չափերի որոշման և թե՛ սահմանված կանոնակարգերի պահպանման տեսանկյունից, անհրաժեշտ է խնդրին տալ ինստիտուցիոնալ լուծում: ԱՃԹՆ-ի տեսանկյունից սա հատկապես կարևոր է այն առումով, որ գույքահարկի մասով այդ դեպքում առկա է շեղում ֆինանսական հոսքերի սահմանված գործընթացից:

Այս ենթատեքստում Անկախ ադմինիստրատորը առաջարկում է իրականացնել համապատասխան հարցումներ կամ վերլուծություն պարզելու արդյո՞ք վերը նշված խնդիրը, ինչպես նաև կիրառված համապատասխան մոտեցումները առկա են մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող այլ ընկերությունների մոտ և ինչպես են արձագանքում նման խնդիրներին համապատասխան համայնքների ղեկավարները և ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները:

Ջբաղվածությունը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Բացահայտվել է, որ ընկերությունների հաշվետվություններից դուրս բերված մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների ընդհանուր թիվը տարբերվում է ՀՀ ՎԿ-ի տրամադրած նույն տեղեկատվությունից: Մասնավորապես, ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների տրամադրած տվյալների, 2016 և 2017թթ. սույն ընկերություններում աշխատել է համապատասխանաբար 9.2 և 9.3 հազար, իսկ ՎԿ-ի համաձայն, համապատասխանաբար 8.8 և 9.2 հազար մարդ: Ընկերությունների և ՎԿ-ի տված պարզաբանումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ այս տարբերությունը պայմանավորված է եղել տեղեկությունների հավաքագրման մեթոդաբանությամբ: Մասնավորապես, ՀՀ ՎԿ-ի կազմած զբաղվածության վիճակագրությունը հենվել է տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության վրա մինչդեռ ընկերությունների զբաղվածության ցուցանիշը իրենից ներկայացրել է աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը հաշվետու տարվա կտրվածքով (հաշվետու տարվա 12 ամիսների միջին ցուցակային թվաքանակների միջինը):

Արտադրություն մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

ՎԿ-ի և ընկերությունների կողմից տրամադրված տեղեկատվությունը 2016-2017 թթ. Հայաստանում պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալների վերաբերյալ արտացոլել են տարբերվող ցուցանիշներ: Այս տարբերությունները ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում.

	Արտադրության ծավալները համաձայն ՎԿ-ի տրամադրած տվյալների, տոննա		Արտադրության ծավալները համաձայն ընկերությունների տրամադրած տվյալների, թմտ	
	2016	2017	2016	2017
Պղնձի հանքաքար և խտանյութ	388,534	428,500	428,743	459,273
Մոլիբդենի խտանյութ	10,662	11,542	638	2,303
Ցինկի հանքաքար և խտանյութ	7,891	9,640	8,901	10,869

ՎԿ-ից և մետաղական արդյունահանող ընկերություններին ուղարկված հարցումների արդյունքները թույլ են տալիս պարզաբանել, որ ծավալների ցուցանիշների միջև տարբերությունը

պայմանավորված է բնահրային չափիչների կիրառման մեթոդաբանական և փորձագիտական տարբեր մոտեցումներով:

Արտահանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Պարզվել է, որ ՀՀ ՎԿ-ի արձանագրած պղնձի հանքաքարի և խտանյութի, ինչպես նաև մոլիբդենի խտանյութի, ընդհանուր դրամային արժեքը չի համապատասխանում մետաղական արդյունահանող ընկերությունների հաշվետվություններից դուրս բերված նույն արժեքների հետ: Մասնավորապես, ՀՀ ՎԿ-ն արձանագրել է պղնձի հանքաքարի և խտանյութի 571.5 մլն և մոլիբդենի խտանյութի 8,6 մլն ԱՄՆ դոլարի արժողությամբ արտահանում, իսկ ընկերությունների հաշվետվություններում համապատասխան ցուցանիշները կազմել են 484.3 և 9.0 մլն ԱՄՆ դոլար: Ընկերություններից և ՎԿ-ից ստացված մեկնաբանությունների հիման վրա պարզվել է, որ ցուցանիշների տարբերությունը կապված է մեթոդաբանական տարբեր լուծումների հետ, որոնք կիրառվում են ընկերությունների և ՎԿ-ի կողմից: Տարբերության պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ ընկերությունների ներքին շուկայում իրացրած արտադրատեսակները նույնպես արտահանվում են այլ ընկերությունների կողմից, որի արդյունքում, փաստացի արտահանված ապրանքը չի արտացոլվում մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների հաշվետվություններում:

Ի լրումն, թվերի տարբերության ևս մեկ պատճառ է հանդիսացել այն, որ որոշ ընկերություններ արտահանման վաճառքի վերաբերյալ գործարքը արձանագրել են այն պահին, երբ ապրանքը լքել է իրենց պահեստը, սակայն դրա ինչ-որ մասնաբաժին՝ կախված արտահանմանը վերաբերող մի շարք գործոններից, հնարավոր է, մնացել է Հայաստանում գտնվող այլ պահեստներում մինչև իրական արտահանման փաստի արձանագրումը: Սրա արդյունքում, յուրաքանչյուր տարում արտացոլված ընդհանուր արտահանման որոշակի հատվածը կարող է ընկերությունների կողմից արձանագրվել նախորդող կամ հաջորդող տարիների հաշվետու տվյալներում:

Հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված եկամուտներ
Օրենսդրական կարգավորումների շրջանակներում առկա են որոշակի թերացումներ, որոնք վերաբերում են ներքոշարադրյալ փաստերին.

- ▶ առկա չէ օրենսդրական հստակ կարգավորում «ազդակիր համայնք»-ի որոշման կանոնների և ուղենիշների վերաբերյալ;
- ▶ առկա չէ կարգավորում հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող գործունեության հետևանքով համայնքին հասցված վնասի գնահատման և համապատասխան ծրագրերի և վերջիններիս ուղղված հաշվետվությունների ներկայացման պարտադիր լինելու վերաբերյալ;
- ▶ առկա չէ օրենսդրական կարգավորում օրենքով նախատեսված բնապահպանական վճարների գումարի բնապահպանական ծրագրերին հասցեագրվող գումարների նվազագույն և առավելագույն սահմանափակումների արդյունավետության վերաբերյալ;

- ▶ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում նշվում են մետաղական հանքաքար արդյունահանող ընդամենը 4 ընկերություն;
- ▶ առկա չէ որևէ հանրամատչելի չափանիշ՝ կապված յուրաքանչյուր համայնքին տրվող դոտացիաների չափի հետ;
- ▶ առկա չէ պարտավորություն ծրագրերի կատարման հաշվետվությունների հրապարակման վերաբերյալ:

Հավելվածներ

**ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿ**

Գերատեսչություն	Կոնտակտային անձ, պաշտոն
Վիճակագրական կոմիտե	Աշոտ Անանյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ
	Նաիրա Մանդայան, ՀՀ վիճակագրական կոմիտեի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ
ՏԿԶՆ	Կարեն Բակոյան, ՏԿԶՆ աշխատակազմի տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի պետ
	Փառանձեմ Դարբինյան, տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի առաջատար մասնագետ
Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	Արմեն Եգանյան, ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետ
	Սամվել Պարանյան, ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Առողջապահության նախարարություն	Արտավազդ Կանյան, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն
	Քրիստինա Գյուրջյան, ՀՀ ԱՆ աշխատակազմի հանրային առողջության բաժնի պետ
Առողջապահական տեսչական մարմին	Աշոտ Հարությունյան, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչություն պետ
	Գարիկ Պողոսյան, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչություն գլխավոր մասնագետ
Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	Անուշավան Այվազյան, ԷԲՊՆ աշխատակազմի ընդերքի գործակալության պետի պաշտոնակատար

	Շուշանիկ Քերոբյան, նույն գործակալության երկրաբանության, նորմատիվամեթոդական և վերլուծության բաժնի պետ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	Կարապետ Կարապետյան, ԱԻՆ փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության տեխնաժին վթարների բաժնի պետ, փ/ծ գնդապետ
	Սիրանուշ Բադալյան, արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչության արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ
Արդարադատության նախարարություն	Ռոզա Բաղդասարյան, ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային սպասարկման գրասենյակների համակարգման բաժնի պետի պաշտոնակատար
	Տաթևիկ Սարուխանյան, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջատար մասնագետ
Ֆինանսների նախարարություն	Օրի Ալավերդյան, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
Բնապահպանության նախարարություն	Թամարա Նուրիջանյան, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնտեսագետ
	Կարեն Եպիսկոպոսյան, Ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության ընդերքի պահպանության քաղաքականության բաժնի առաջատար մասնագետ
Պետական եկամուտների կոմիտե	Հասմիկ Խաչատրյան, Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն Լուսինե Մկրտչյան ՀՀ ՊԵԿ կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ Սուրեն Մովսիսյան ՀՀ ՊԵԿ մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչության, մաքսային գանձումների հաշվառման բաժնի պետ Աշխեն Պապոյան ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության տեղեկատվության փոխանակման և կառավարման բաժնի պետ Էլիզաբեթ Մամիկոյան, ՀՀ ՊԵԿ նախագահի օգնական, աշխատանքային խմբի ղեկավար Լուսինե Այվազյան, ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության

	<p>տեղեկատվական համակարգերի փոփոխությունների կառավարման և ազդեցությունների գնահատման բաժնի գլխավոր հարկային տեսուչ</p>
<p>Բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p>	<p>Արմեն Մովսիսյան, Ռիսկերի գնահատման և վերլուծության վարչության պետ</p>

ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Կազմակերպության անվանումը	Կազմակերպությունում իրականացվե՞լ է արտաքին ֆինանսական աուդիտ 2016թ. համար	Ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը 2016թ. համար	Կազմակերպությունում իրականացվե՞լ է արտաքին ֆինանսական աուդիտ 2017թ. համար	Ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը 2017թ. համար
1	«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	Այո	https://issuu.com/narekegjazaryan/docs/summary_acmc_2016_local_fs_armenian	Այո	https://yadi.sk/i/IzMhKa3-3Yd44m
2	«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ	Այո	Հղումը բացակայում է	Այո	https://www.azdarar.am/announcements/org/129/00396391/
3	«ԳԵՊՐՈՍԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	Այո	Հրապարակվում է մամուլում	Այո	Հրապարակվում է մամուլում
4	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Այո	Գործք ամսագիր	Այո	https://www.azdarar.am/announcements/org/161/00390630/
5	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	Այո	www.vallex.com	Այո	www.vallex.com
6	«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ	Այո	ԳՈՐԾԸՆԹԱՑ թերթ 215 համար 14/06/2017	Այո	https://www.azdarar.am/announcements/org/129/00390617/
7	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Այո	https://www.lydianarmenia.am/images/2017/FS_Lydia_Armenia_CJSC_2016_eng_final.pdf	Այո	https://www.lydianarmenia.am/img/uploadFiles/990b18daa90666bb3b46FS_LydiaArmeniaCJSC_2017_eng_Final_signed.pdf
8	«ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
9	«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ	Ոչ	-	Ոչ	-
10	«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Ոչ	-	Ոչ	-
11	«ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
12	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
13	«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
14	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-

N	Կազմակերպության անվանումը	Կազմակերպությունում իրականացվել է արտաքին ֆինանսական աուդիտ 2016թ. համար	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը 2016թ. համար	Կազմակերպությունում իրականացվել է արտաքին ֆինանսական աուդիտ 2017թ. համար	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը 2017թ. համար
15	«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
16	«ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ	Ոչ	-	Ոչ	-
17	«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Ոչ	-	Ոչ	-
18	«ՀՐԱՇՔ ՄԵՏԱՂ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
19	«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	Ոչ	-	Ոչ	-
20	«ՄԱՐՁԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
21	«ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
22	«ՄԵՂՐԱՁՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
23	«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՅԵՌՆ ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
24	«ՊԱՐԱՄԱՈՒՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	Ոչ	-	Ոչ	-
25	«ՎԱՅՔ ԳՈԼԴ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
26	«ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-
27	«ՖՈՐՉՆ ՌԻԶՈՐՍԻՍ» ՍՊԸ	Ոչ	-	Ոչ	-

ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ, ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՉԱՓԵՐԸ ԸՍՏ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության, 2016 թ., ՀՀ դրամ			Ըստ Բնապահպանության նախարարության, 2016թ., ՀՀ դրամ				
			Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին փաստացի վճարված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ
1	«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5	428 690 000	26 027 607	-	428 689 820	26 027 600	-	142 386 270	3 833 300
2	«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	190 968 000	32 466 000	-	190 981 500	26 388 000	-	-	2 250 000
3	«ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	3 700 000	379 880	-	11 620 000	379 880	-	3 262 520	607 350
4	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	-	-	-	1 698 800	144 400	-	688 020	-
5	«ԱՏ-ՄԵՏԱԼԱ» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	119 920 000	15 989 333	-	119 919 500	15 681 780	-	33 669 710	-
6	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	-	-	-	2 440 000	82 960	-	531 920	-
7	«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	-	-	-	58 597 000	1 717 498	-	-	-
8	«ԳԵՈՊՐՈՍԱՅՆԻՆԳ ԳՈՒԼԴ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20	901 700 000	58 957 300	58 957 300	901 700 000	58 957 300	58 957 300	135 255 000	135 255 000
9	«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՉԱՄՈԼԻԲԴԵՆԱՅ ԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	45 206 750	1 829 800	5 489 400	51 206 800	1 813 570	5 489 400	18 250 450	2 076 920
10	«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ	Թիվ Պ-458,Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11	241 245	241 245	-	5 830 733	247 120	1 839 595	1 615 970	-



N	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության, 2016 թ., ՀՀ դրամ			Ըստ Բնապահպանության նախարարության, 2016թ., ՀՀ դրամ				
			Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին փաստացի վճարված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ
11	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	-	2 953 000	2 953 000	20 841 300	2 953 000	2 953 000	20 841 300	20 671 000
12	«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	-	-	-	31 278 420	1 107 780	-	15 769 560	100 000
13	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26	1 864 926 000	121 938 000	121 938 000	1 864 926 000	121 938 000	121 938 000	279 738 000	281 349 760
14	«ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	32 500 000	1 453 947	-	5 285 700	187 220	-	1 541 730	2 190 000
15	«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	105 000 000	-	-	-	-	-	-	-
16	«ՀՐԱՇՔ ՄԵՏԱՆ» ՍՊԸ	Թիվ Պ-542,2016թ. հունիսի 15	-	-	-	-	-	-	-	-
17	«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	9 891 560	233 511	-	9 891 560	233 550	-	-	-
18	«ՄԱՐՋԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	-	-	-	7 853 000	290 170	-	3 209 140	1 179 000
19	«ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	-	-	-	3 070 670	435 000	-	3 070 670	2 325 000
20	«ՄԵՂՐԱՁՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	3 385 140	307 740	307 740	3 385 200	307 740	430 000	1 738 740	1 986 700
21	«ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	16 916 000	1 561 152	1 561 152	-	-	1 561 152	-	7 420 150
22	«ՄՈՒԼՏԻ ԳՈՌԻՊ» ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	6 315 000	233 381	-	-	-	-	-	-
23	«ՊԱՐԱՄԱՈՒՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12	-	-	-	-	-	-	-	-
24	«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20	46 500 450	1 001 440	-	46 500 450	1 001 440	-	20 656 960	7 621 000
25	«ՎԱՅՔ ԳՈԼԴ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	-	-	-	6 826 533	241 780	-	1 749 320	517 000



N	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության, 2016 թ., ՀՀ դրամ			Ըստ Բնապահպանության նախարարության, 2016թ., ՀՀ դրամ				
			Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվա նախորդող տարվա հետևմբերի 31-ի դրությամբ
26	«ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	2 616 800	171 100	-	2 616 700	171 100	-	1 419 100	342 200
27	«ՖՈՐՉՆ ՌԻԶՈՐՍԻՍ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	1	1 028 460	1 028 460	27 829 000	1 028 460	1 028 460	11 373 570	4 288 840

N	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության, 2017 թ., ՀՀ դրամ			Ըստ Բնապահպանության նախարարության, 2017թ.				
			Հաշվարկման բազային չափը.	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվա նախորդող տարվա հետևմբերի 31-ի դրությամբ
1	«ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5	428 690 000	26 027 607	-	428 689 820	26 027 600	-	168 413 870	3 833 300
2	«ԱԽԹԱԼԱՅԻ Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	190 968 000	32 466 000	-	190 981 500	32 466 000	-	26 388 000	2 250 000
3	«ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	3 700 000	379 880	-	11 620 000	379 880	-	3 642 400	607 350
4	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	-	-	-	1 698 800	144 400	-	832 420	-
5	«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	119 920 000	15 989 333	-	119 919 500	15 681 780	-	49 351 490	-
6	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	-	-	-	2 440 000	82 960	-	614 880	-
7	«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	-	-	-	58 597 000	1 717 498	-	10 507 050	-



ԱՃԹՆ զեկույց



8	«ԳԵՈՊՐՈՍԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20	901 700 000	58 957 300	58 957 300	901 700 000	58 957 300	58 957 300	194 212 300	194 212 300
9	«ԶԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԳԻԵՆԱՅ ԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	548 751 230	101 747 623	101 747 623	548 751 230	101 747 623	101 747 623	101 747 620	7 566 320
10	«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ	Թիվ Պ-458,Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11	241 245	241 245	-	5 830 733	247 120	-	1 863 090	1 839 570
11	«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	-	2 953 000	2 953 000	20 841 300	2 953 000	2 953 000	20 841 300	23 624 000
12	«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	-	-	-	31 278 420	1 107 780	-	16 877 340	100 000
13	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26	1 864 926 000	121 938 000	121 938 000	1 864 926 000	121 938 000	121 938 000	401 676 000	403 731 870
14	«ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	32 500 000	1 453 947	-	5 285 700	187 220	-	1 728 950	2 190 000
15	«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՅՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	105 000 000	-	-	-	-	-	-	-
16	«ՀՐԱՇՔ ՄԵՏԱՂ» ՍՊԸ	Թիվ Պ-542,2016թ. հունիսի 15	-	-	-	415 700	11 780	-	74 120	-
17	«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	9 891 560	233 511	-	9 891 560	233 550	-	1 717 020	-
18	«ՄԱՐՋԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	-	-	-	7 853 000	290 170	-	3 499 310	1 179 000
19	«ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	-	-	-	3 070 670	435 000	-	3 070 670	2 325 000
20	«ՄԵՂՐԱՉՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	3 385 140	307 740	307 740	3 385 200	307 740	-	2 046 280	2 416 700
21	«ՄՈԼԻԲԳԻԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	16 916 000	1 561 152	1 561 152	-	-	1 561 152	-	8 982 000
22	«ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆ ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	6 315 000	233 381	-	6 315 000	233 381	-	3 514 430	1 180 630
23	«ՊԱՐԱՄԱՌՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12	-	-	-	25 176 600	891 680	-	10 018 250	3 776 490
24	«ՍԱԿԱՄԱՐ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20	46 500 450	1 001 440	-	46 500 450	1 001 440	-	7 834 800	7 621 000
25	«ՎԱՅՔ ԳՈԼԴ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	-	-	-	6 826 533	241 780	-	1 991 100	517 000
26	«ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	2 616 800	171 100	-	2 616 700	171 100	-	1 590 200	342 200
27	«ՖՈՐՉՆ ՌԻԶՈՐՍԻՍ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	1	1 028 460	1 028 460	27 829 000	1 028 460	1 028 460	12 402 030	5 317 300

ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ 2016-2017ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ և ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Մարզի, համայնքի անվանումը	2016թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումների	
	Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
ք.Երևան		-
ՀՀ Լոռու մարզ		52,270
ք. Ախթալա	Ընդամենը ք. Ախթալա	4,588
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	3,212
	Ախթալա համայնքի Սարահարթ թաղամասի Աբովյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ	3,212
	<i>Առողջապահական միջոցառումներ</i>	1,376
գ. Օձուն	Ընդամենը գ. Օձուն	47,682
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	39,766
	Օձուն համայնքի 2-րդ, 3-րդ և 8-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	39,766
	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	7,916
ՀՀ Սյունիքի մարզ		32,462
ք. Քաջարան	Ընդամենը ք. Քաջարան	15,619
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	12,369
	1. Վակուումային ավլող-մաքրող <<փոշեկուլ>> մեքենայի ձեռք բերում	11,000
	2. Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն	1,369
	<i>Առողջապահական միջոցառումներ</i>	3,250
ք. Կապան	Ընդամենը ք. Կապան	6,276
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	6,276

Մարզի, համայնքի անվանումը	2016թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումների	
	Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
	Կապան քաղաքային համայնքի Ա.Մանուկյան փողոցի մայթերի ծառատնկման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	6,276
	Առողջապահական միջոցառումներ	
գ.Լեռնաձոր	Ընդամենը գ. Լեռնաձոր	5,843
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	5,843
	Լեռնաձոր գյուղի գործող սելավատարի մաքրում	865
	25մ. Երկարությամբ նոր սելավատարի կառուցում	4,977
	Առողջապահական միջոցառումներ	-
բ.Ազարակ	Ընդամենը բ.Ազարակ	3,340
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝</i>	-
	Առողջապահական միջոցառումներ	3,340
գ.Կարճևան	Ընդամենը գ.Կարճևան	1,384
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝</i>	-
	Առողջապահական միջոցառումներ	1,384
ՀՀ Արարատի մարզ		4,042
բ. Արարատ	Ընդամենը բ. Արարատ	4,042
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	4,042
	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում	350
	Արտեզյան խորքային հորի նորոգման և գործարկման կամ կոնսերվացված հորի գործարկման աշխատանքներ	3,692
	Առողջապահական միջոցառումներ	-
ՀՀ Կոտայքի մարզ		975
բ. Չարենցավան	Ընդամենը բ. Չարենցավան	975
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	975
	<<Դինովա>> կամ համարժեք տեսակի աղբարկղների ձեռքբերում և տեղադրում	975
	Առողջապահական միջոցառումներ	-

Մարզի, համայնքի անվանումը	2016թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումների	
	Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
Ընդամենը		89,749

Մարզի, համայնքի անվանումը	2017թ. բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների	
	Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
ք.Երևան		-
ՀՀ Լոռու մարզ		111,667
ք. Ալավերդի	Ընդամենը ք. Ալավերդի	29,757
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	20,830
	1. Համայնքի կանաչապատ տարածքների վերականգնում և ընդլայնում	4,000
	2. Հենապատերի վերանորոգում	12,000
	3. Աղբարկղների ձեռքբերում և տեղադրում	2,000
	4. Հեղեղատարների մաքրում	2,830
	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	8,927
գ. Աբրոի	Ընդամենը գ. Աբրոի	24,903
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	22,053
	1. Համայնքի 2-րդ և 3-րդ փողոցների ասֆալտապատում	13,903
	2. ՀՀ «Զափրելաձոր-Աբրոի» ոռոգման ջրագծի հիմնանորոգում	4,000
	3. Մանկապարտեզի շենքի վերանորոգում	4,150
	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	2,850
գ. Հաղպատ	Ընդամենը գ. Հաղպատ	3,155
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	2,209
	1. Համայնքի աղբահանության կազմակերպում, աղբի տեղափոխում Ալավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	2,209
		<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>
գ. Օձուն	Ընդամենը գ. Օձուն	19,806
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	13,612
	1. Համայնքի 7-րդ, 8-րդ /մասնակի/ և 13-րդ փողոցների լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքներ	13,612
		<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>
Գ Վ Յ Գ Վ Ի	Ընդամենը գ. Հազվի	30,051

Մարզի, համայնքի անվանումը	2017թ. բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների	
	Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
	Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	30,051
	Հագվու միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում:	30,051
	Առողջապահական միջոցառումներ՝	-
գ. Ճոճկ ան	Ընդամենը գ. Ճոճկան	1,192
	Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	-
	Առողջապահական միջոցառումներ	1,192
գ. Մեծ Այրում	Ընդամենը գ. Մեծ Այրում	682
	Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	416
	1. Համայնքի աղբահանության կազմակերպում, աղբի տեղափոխում Ալավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	416
	Առողջապահական միջոցառումներ	266
գ. Շնող	Ընդամենը գ. Շնող	2,120
	Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	1,500
	Շնող համայնքի հեղեղափարների մաքրում	1,500
	Առողջապահական միջոցառումներ	620
ՀՀ մարզ	Սյունիքի	18,311
ք. Քաջարան	Ընդամենը ք. Քաջարան	8,400
	Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	7,820
	1. Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում	3,300
	2. Էկոլոգիական կրթություն և տեղեկատվություն	1,430
	3. Մթնոլորտային օդի պահպանություն	2,016
	4. Կենցաղային թափոնների կառավարման բարելավում	1,074
Առողջապահական միջոցառումներ	580	
ք. Կապան	Ընդամենը ք. Կապան	8,875
	Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	8,875
	Կապան համայնքի Ա. Մանուկյան փողոցի մայթերին ծառատնկման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	8,875
	Առողջապահական միջոցառումներ	-
ք. Ագա լակ	Ընդամենը ք. Ագարակ (Մեղրի)	1,036
	Բնապահպանական միջոցառումներ՝	-

Մարզի, համայնքի անվանումը	2017թ. բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների	
	Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
	<i>Առողջապահական միջոցառումներ</i>	1,036
ՀՀ մարզ	ՀՀ Տավուշի մարզ	7,666
ք. Այրում	Ընդամենը ք. Այրում	5,323
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	4,079
	Այրում քաղաքի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում Հաղթանակ համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	600
	Արճիս գյուղի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	637
	Դեղձավան գյուղի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	173
	Դեբեդավան գյուղի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում Բագրատաշեն համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	341
	Լճկաձոր գյուղի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	255
	Ոռոգման ջրագծի անցկացում	1,110
	Հաղթանակ գյուղի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	723
	Պտղավան գյուղի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում Բագրատաշեն համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	240
	<i>Առողջապահական միջոցառումներ</i>	1,244
ք. Նոյեմբերյան	Ընդամենը ք. Նոյեմբերյան	1,833
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	1,833
	Բերդավան գյուղի այգու և խաղահրապարակի սան. մաքրում և բարեկարգում	1,119
	Բերդավան գյուղի աղբահորի և շրջակա տարածքի սան. մաքրում և բարեկարգում	200
	Բերդավան գյուղի սելավատարի մաքրում	100
	Բերդավան գյուղի շրջակա տարածքի մաքրում տարվա մեջ երկու անգամ	414
	<i>Առողջապահական միջոցառումներ</i>	-
գ. Կողբ	Ընդամենը գ. Կողբ	510
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	510
	Չորական համայնքի աղբահանության կազմակերպում, և աղբի տեղափոխում համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	510
	<i>Առողջապահական միջոցառումներ</i>	-



Մարզի, համայնքի անվանումը	2017թ. բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների	
	Անվանումը	Գումարը /հազ. դրամ/
Ընդամենը		137,644

ՀԱՎԵԼՎԱԾ 5՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՁևՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐՈՒՄՆԵՐ, 2016-2017ԹԹ.

	Ընկերության անվանում	Ֆիզիկական անձանց թիվը		Կատարծ նվիրատվության, նվիրաբերության կամ օտարման չափը, ՀՀ դրամ	
		2016	2017	2016	2017
1.	«Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ	18	23	10,202 475	8,203,790
2.	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	0	4	0	1,250,000
3.	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	0	0	0	0
4.	«Ասսաթ» ՍՊԸ	Տեղ. չկա	0	Տեղ. չկա	0
5.	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	0	0	0	0
6.	«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ	Տեղ. չկա	0	Տեղ. չկա	0
7.	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Տեղ. չկա	0	Տեղ. չկա	0
8.	«Գեղի Գօլդ» ՍՊԸ	0	0	0	0
9.	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	88	92	14,751,100	26,547,637
10.	«Ղարագյուլյաններ» ՓԲԸ	0	0	0	0
11.	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	777	438	3,710,726	9,993,088
12.	«ԼեՆ-ԷՔՍ» ՍՊԸ	0	0	0	0
13.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	104	18	49,422,802	4,723,258
14.	«Լիճքվագ» ՓԲԸ	0	0	0	0
15.	«Մարջան Մայնինգ Քոնփանի» ՍՊԸ	0	0	0	0
16.	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	7	5	4,141,175	2,810,225
17.	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	0	0	0	0
18.	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	0	0	0	0
19.	«Մուլտի Գրոպ Կոնցեռն» ՍՊԸ	Տեղ. չկա	0	Տեղ. չկա	0

	Ընկերության անվանում	Ֆիզիկական անձանց թիվը		Կատարծ նվիրատվության, նվիրաբերության կամ օտարման չափը, ՀՀ դրամ	
		2016	2017	2016	2017
20.	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	0	0	0	0
21.	«Սագամար» ՓԲԸ	0	0	0	0
22.	«Թաթսթոուն» ՍՊԸ	0	0	0	0
23.	«Թեղուտ» ՓԲԸ	0	0	0	0
24.	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	0	0	0	0
25.	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Տեղ. չկա	0	Տեղ. չկա	0
26.	«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ»	4	11	5,713,000	10,171 000
27.	«Հրաշք Մետաղ» ՍՊԸ	Տեղ.չկա	0	Տեղ. չկա	0
Ընդամենը		998	591	87,941,278	63,698,998

ՀԱՎԵԼՎԱԾ 6՝ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՖԻԿՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Բաժին 2.1 Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ ընտեսության մեջ

Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի համախառն ավելացված արժեքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Համախառն ավելացված արժեք – մլն ՀՀ դրամ	89,251	102,847	114,327	102,687	102,553	107,718	130,836	176,989
ՀՆԱ մասնաբաժինը, %	2.6%	2.7%	2.7%	2.3%	2.1%	2.1%	2.6%	3.2%

Բաժին 2.2: Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ

Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը զբաղվածության մեջ

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ընդհանուր զբաղվածություն	1185.2	1176.1	1172.8	1163.8	1133.5	1072.6	1006.2	1011.7
Ընդհանուր արդյունաբերություն	120.6	128.7	123	131.9	131	120.8	121.4	132.9
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործում	11	10,4	10	9,4	7.9	9,3	8,8	9.2

Բաժին 2.3 Պետության ստացած եկամուտները մետաղական հանքարդյունաբերության ոլորտից և դրանց բաշխումը

Մերադական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պեպական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2016թ.

	Մասնաբաժին
Հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից հաշվարկված վճարումները	4.40%
Պետական բյուջեի այլ եկամուտներ	95.60%
Ընդամենը	100%

Մերադական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պեպական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2016թ.

	Մասնաբաժին
Հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից հաշվարկված վճարումները	7.10%
Պետական բյուջեի այլ եկամուտներ	92.90%
Ընդամենը	100%

Մեքադական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պեքական բյուջեի նկարմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2016թ., մլն ՀՀ դրամ

Պետության եկամուտները	
Ռոյալթի	23,571
Եկամտային հարկ	11,824
ԱԱՀ	9,030
Շահութահարկ	4,224
Մաքսատուրքեր և վճարներ	1,083
Տուգանքներ	509
Ընդերքօգտագործման արտոնավճար	230
Այլ	633
Ընդհանուր	45,619

Մեքադական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պեքական բյուջեի նկարմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2017թ., մլն ՀՀ դրամ

Պետության եկամուտները	
Ռոյալթի	37,575
Եկամտային հարկ	14,363
ԱԱՀ	16,995
Շահութահարկ	11,811
Տուգանքներ	2,036
Ակցիզային հարկ	1,04
Տուգանքներ	240
Այլ	2,983
Ընդհանուր	76,488

Մեքադական հանքաքար արդյունահանող ընկերությունների պեքական բյուջեի նկարմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2016թ., մլն ՀՀ դրամ

Հաշվարկված ընդհանուր հարկեր և վճարներ, մլն ՀՀ դրամ	
«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	19,493
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	11,701
«Թեղուտ» ՓԲԸ	9,449
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	3,929
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	3,448
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	1,323
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	699
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	395
«Լեռ-Էքս» ՍՊԸ	214
«Սագամար» ՓԲԸ	137
Այլ	312
Հաշվարկված ընդհանուր հարկեր և վճարներ	51,100

Մերադական հանքաքար արդյունահանող ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2017թ., մլն ՀՀ դրամ

	Հաշվարկված ընդհանուր հարկեր և վճարներ, մլն ՀՀ դրամ
«Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	32,583
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	14,315
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	2,592
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	11,282
«Թեղուտ» ՓԲԸ	14,114
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	9,263
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	952
«Սագամար» ՓԲԸ	258
«Լեռ-Էքս» ՍՊԸ	265
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	831
Այլ	594
Հաշվարկված ընդհանուր հարկեր և վճարներ	87,048

2.4 Արտադրությունը, պաշարները, արտահանումը և ներքին իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Պղնձի խտանյութի արտադրությունը՝ 2016-2017թթ., ըստ Վիճակագրական կոմիտեի

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Պղնձի խտանյութի արտադրություն, տոննա	118,105	127,744	155,545	184,494	192,273	315,599	388,534	428,500

2012-2017 թթ. պղնձի միջազգային միջին տարեկան գինը

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Պղնձի գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/տոննա	7,539	8,871	8,015	7,322	6,862	5,494	4,863	6,166
Պղնձի խտանյութի արտահանում, հազար տոննա	118	128	156	184	192	316	389	429

Մոլիբդենի խտանյութի արտադրություն, 2010-2017 թթ., տոննա՝ ըստ Վիճակագրական կոմիտեի

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Մոլիբդենի խտանյութի արտադրություն, տոննա	8 583	9 455	10 677	11 635	11 807	10 440	10 662	11 542

2012-2017թթ. մոլիբդենի միջազգային միջին տարեկան գինը

	2012	2013	2014	2015	2016	2017
Մոլիբդենի գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/տոննա	27,311	21,963	24,565	14,311	13,991	15,398
Մոլիբդենի խտանյութի արտահանում, հազար տոննա	11	12	12	10	11	11

Ցինկի խտանյութի արտադրությունը, 2010 – 2017թթ., տոննա՝ ըստ Վիճակագրական կոմիտեի

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ցինկի խտանյութի արտադրությունը, տոննա	14,361	15,588	16,215	15,950	14,709	11,319	7,891	9,640

2010-2017թթ. ոսկու միջազգային միջին տարեկան գինը

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ոսկու գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/ տրոյական ունցիա	1225	1572	1669	1411	1266	1160	1251	1257

2010-2017թթ. ցինկի միջազգային միջին տարեկան գինը

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ցինկի գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/տոննա	2187	2213	1965	1941	2165	1943	2098	2891
Ցինկի խտանյութի արտահանում, հազար տոննա	14	16	16	16	15	11	8	10

Խտանյութի արտահանում (հազար տոննա)՝ ըստ Վիճակագրական կոմիտեի

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Թանկարժեք մետաղների հանքաքար և խտանյութ	0	1	1	1	1	1	0
Ցինկի հանքաքար և խտանյութ	16	15	17	18	14	14	9
Պղնձի հանքաքար և խտանյութ	116	118	131	173	185	309	397

խտանյութի արտահանում (մլն ԱՄՆ դոլար)՝ ըստ Վիճակագրական կոմիտեի

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Թանկարժեք մետաղների հանքաքար և խտանյութ	1	0	25	0	33	32	33	2
Մոլիբդենի խտանյութ	0	1	1	1	1	1	0	1
Ցինկի հանքաքար և խտանյութ	16	15	17	18	14	14	9	10
Պղնձի հանքաքար և խտանյութ	116	118	131	173	185	309	397	475
Պղնձի հանքաքարի և խտանյութի տեսակարար կշիռը արտահանվող հանքաքարի մեջ	86.3%	86.6%	84.7%	90.2%	89.8%	93.5%	96.2%	97.2%

Պղնձի հանքաքարի և խտանյութի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ՝ ըստ Վիճակագրական կոմիտեի

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Պղնձի հանքաքար և խտանյութ	211	261	228	280	236	317	357	571
Հանքարդյունաբերական այլ արտադրանք	20	27	52	24	55	49	44	27
Տնտեսության այլ ճյուղեր	811	1047	1101	1175	1256	1119	1391	1625
Պղնձի հանքաքարի և խտանյութի տեսակարար կշիռը Հայաստանի ընդհանուր արտահանման մեջ	20.2%	19.5%	16.5%	18.9%	15.2%	21.3%	19.9%	25.7%

Մոլիբդենի խտանյութի արտահանումը ըստ երկրների 2016թ.

	Տեսակարար կշիռ
Նիդեռլանդներ	98.8%
Ավստրիա	1.2%
Ընդհանուր արտահանում 2016թ.	100%

Մոլիբդենի խտանյութի արտահանումը ըստ երկրների 2017թ.՝ ըստ ընկերությունների

	Տեսակարար կշիռ
Նիդեռլանդներ	65.4%
Ավստրիա	34.6%
Ընդհանուր արտահանում 2017թ.	100%

Ցինկի հանքաքարի և խտանյութի արտահանումը ըստ երկրների 2016թ.՝ ըստ ընկերությունների

	Տեսակարար կշիռ
Բելգիա	100%
Ընդհանուր արտահանում 2016թ.	100%

Ցինկի հանքաքարի և խտանյութի արտահանումը ըստ երկրների 2017թ.՝ ըստ ընկերությունների

	Տեսակարար կշիռ
Բելգիա	91%
Կորեայի Հանրապետություն	9%
Ընդհանուր արտահանում 2017թ.	100%

Թանկարժեք մեդաղների հանքաքարի և խտանյութի արտահանումը ըստ երկրների 2016թ.' ըստ ընկերությունների

	Տեսակարար կշիռ
Չինաստան	98%
Բելգիա	2%
Ընդհանուր արտահանում 2016թ.	100%

Թանկարժեք մեդաղների հանքաքարի և խտանյութի արտահանումը ըստ երկրների 2017թ.' ըստ ընկերությունների

	Տեսակարար կշիռ
Չինաստան	98%
Իրանի Իսլամական Հանրապետություն	1.94%
Ռուսաստանի Դաշնություն	0.06%
Ընդհանուր արտահանում 2017թ.	100%

ՀԱՎԵԼՎԱԾ 7՝ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

2016թ. համար տվյալների համադրման արդյունքներ և կատարված ճշգրտումների մեկնաբանություն

Ընկերության անվանումը	Ներկայացված պետական մարմնի կողմից (նախնական հաշվետվություն)	Ներկայացված ընկերության կողմից (նախնական հաշվետվություն)	Ներկայացված պետական մարմնի կողմից (վերջնական հաշվետվություն)	Ներկայացված ընկերության կողմից (վերջնական հաշվետվություն)	Պետական մարմնի և ընկերության կողմից ներկայացված տվյալների միջև վերջնական տարբերություն	Վերջնական տարբերության տեսարար կշիռը ըստ ընկերության համապատասխան ցուցանիշի	Ճշգրտման պատճառ
Ռոյալթի							
«ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ	1,142,149	1,072,385	1,142,149	1,142,149	0	0.00%	Ընկերությունը նախնական հաշվետվությունում ռոյալթիի գծով ստուգման ակտի գումարը ներառել էր մասնակի, որը համադրման արդյունքում ճշգրտվել է:
«ՄԵՂՐԱՋՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ	179,796	185,574	179,796	179,796	0	0.00%	Ընկերությունը 2017թ. անցկացված և 2016թ. վերաբերող ստուգման ակտի տվյալները 2016թ. հաշվետվության մեջ: Համադրման արդյունքում ստուգման ակտում ներառված 5,778 հազար ՀՀ դրամ ռոյալթիի գումարը ընկերությունը բացառեց 2016թ. հաշվետվությունից:
Ավելացված արժեքի հարկ							
«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ	1,692,381	3,890,355	1,692,381	1,704,372	(11,991)	-0.71%	Հաշվետվությունը լրացնելու ուղեցույցի լրացուցիչ մեկնաբանությունների արդյունքում, ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման մոտեցումը ընդհանրացվել է, որի արդյունքում ընկերությունը վերանայել է իր կողմից ներկայացված ԱԱՀ գումարի մեծությունը:



